N 2333
9057

ՎԱՀԱՆ ԲԱՑԲՈՒՐԴԵԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ԱՌԵՒՏՈՒՐԸ ԵՒ ԻՐԱՆԱՀԱՑՈՒԹԻՒՆԸ 17 - ՐԴ ԴԱՐՈՒՄ

1996 ԹԵՀՐԱՆ

ДУБЛЕТ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴԵԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՒՏՈՒՐԸ ԵՒ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ 17 - ՐԴ ԴԱՐՈՒՄ

Ա II 86405

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1996 ԹԵՀՐԱՆ

* نام کتاب : نقش ارامنهٔ ایرانی در تجارت بین الملل (تا پایان سده ۱۷ میلادی)

* مؤلف : پروفسور واهان بایبوردیان

* ناشر : مؤلف

* گرافیست : چاپ جدید

* لیتوگرافی : لیتوگرافی جدید

* چاپ : چاپ جدید

* تیراژ : ۵۰۰۰ جلد

* کلیه حقوق برای مؤلف محفوظ است.

قیمت فروش ۷۵۰۰ ریال

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԻ ՄԵԾԱՑՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՒՏՐՈՒՄ.....5

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԼԵՒԱՆՏԵԱՆ ԱՌԵՒՏՈՒՐԸ 17-ՐԴ ԴԱՐՈՒՄ.....62

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԵՒ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԵՒՏՈՒՐԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ.....96

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԻՐԱՆԱՀԱՅ ԽՈՋԱՆԵՐԻ ԱՌԵՒՏՈՒՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ XVII ԴԱՐՈՒՄ.....139

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԵՐԻ ԱՌԵՒՏՈՒՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ, ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԵՒ ՀԱՐԱՒ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՍԻԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ.....194

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.....233

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԻ ՄԵԾԱՑՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՒՏՐՈՒՄ

Մարդկութեան պատմութեան ամենավաղ ժամանակներից սկսած Հայաստանի տարածքի վրայով իրագործւում էր աշխոյժ առեւտրափոխանակութիւն Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ: Հայկական բարձրավանդակը խաղում էր Արեւմուտքի համեմատաբար ցածր զարգացած շրջանները հին արեւելեան քաղաքակրթութեան կենտրոնների հետ կապող օղակի դեր: Միջեղային փոխանակութեանն ու առեւտրին զարկ տւող գործօններից մէկն էր հանդիսանում Հայաստանի աշխարհագրական վերին աստիճանի յարմար դիրքը, ինչպէս նաեւ այն, որ նա շրջապատւած էր մշակութային-տնտեսական բարձր մակարդակ ունեցող երկրներով:

Արդէն երկրորդ հազարամեակի սկզբին Հայաստանը եւ յատկապէս նրա հարաւային եւ հարաւ-արեւմտեան մասը ընդգրկւած էր միջազգային առեւտրի մէջ:

Իրանական Աքեմենեանների դարաշրջանում «Արքայական ճանապարհի» միջոցով արմէնները մերձակայ եւ սերտ շփումների մէջ էին գտնւում իրանական բարձր մշակոյթ ունեցող աշխարհի եւ Փոքր Ասիայի ու Միջագետքի խոշոր առեւտրական կենտրոնների հետ:[1]

Մեծ Հայքը անկախ պետութիւն հռչակելուց յետոյ Արտաշատ մայրաքաղաքը շուտով դառնում է Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ համաշխարհային առեւտրական կապերի կարեւոր յենակէտերից մէկը: Իր հիմնադրումից մօտ մէկ դար յետոյ, Լուկուլլոսի Հայաստան կատարած արշաւանքի ժամանակ (մ.թ.ա. 69-68 թ.թ.) Արտաշատն արդէն ունէր խոշոր եւ հարուստ քաղաքի համբաւ: Իզուր չէ, որ Պլուտարքոսը այն անւանում է «Հայաստանի կարթագէն»:

Տիգրան երկրորդի կառավարման տարիներին (մ.թ.ա. 95-56 թ.թ.) Մեծ Հայքը վերածւեց հելլէնիստական աշխարհի առաւել հզօր պետութեան: Նրա հսկողութեան տակ անցան համաշխարհային

առեւտրի գլխաւոր ցամաքային ճանապարհները: Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ առեւտրափոխանակութեան մէջ Հայաստանը սկսեց խաղալ առաջատար դեր:

66 թւականին Տրդատ առաջինը Հռոմում հանդիսաւոր պայմաններում թագադրւում է որպէս հայոց արքայ: Դրանով Հայաստանում հիմք է դրւում Արշակունիների հարստութեանը: Մօտ կէս դար խաղաղութիւնը երկու հզօր ախոյեանների՝ Հռոմի եւ Պարթեւստանի միջեւ համարեա չէր խախտւում, որը խիստ բարերար ազդեցութիւն էր ունենալու համաշխարհային առեւտրի համար: Տրդատ առաջինի նախաձեռնութեամբ վերսկսւում է Հռոմեական արշաւանքների ժամանակ կործանւած Արտաշատի վերակառուցումը: Դա քաղաքական եւ առեւտրատնտեսական մեծ նշանակութիւն ունեցող մի գործ էր, որովհետեւ Հեռաւոր Արեւելքից եկող առեւտրական կարաւանները շարունակում էին կանգ առնել Արտաշատում եւ այնտեղից իրենց ճանապարհը ընթանում էր դէպի Սեւ Ծովի ափերը կամ Միջագետքի վրայով Միջերկրականի նաւահանգիստները:

Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ միջազգային առեւտրում Հայաստանը իր Արտաշատ մայրաքաղաքով կրկին դառնում էր տարանցիկ առեւտրի խոշորագոյն կենտրոն, քանի որ Միջին Ասիայից եւ Մերձկասպեան ծովափից եկող մայրուղին բացի Հայաստանից չունէր այլ ճանապարհ: Այդ մայրուղին հատում անցնում էր ողջ Հայաստանի տարածքը՝ արեւելքից մինչեւ արեւմուտք:

Մեծ Հայքի թագաւորութիւնը, որը սեպի պէս խրւած էր երկու աշխարհակալ պետութիւնների՝ Հռոմէական կայսրութեան եւ Պարթեւստանի միջեւ, անուշադիր մեծապէս շահելու էր միջազգային առեւտրի այն աննախընթաց աշխուժացումից, որ նկատւում էր մեր թւարկութեան առաջին երկու դարերում: Դրանով է բացատրւում տնտեսական եւ մշակութային այն բուռն վերելքը, որ նկատւում էր Մեծ Հայքում, Փոքր Հայքում եւ Պոնտոսում: Դրա ակնառու ցուցանիշ է հանդիսանում այն, որ մէկը միւսի յետեւից բարձրանում էին նոր քաղաքներ՝ Նիկոպոլիսը, Նեոկեսարիան, Սեբաստիան, Վաղարշապատը, Մծուրքը եւ այլն: Աւելի ու աւելի էին բարգաւաճում Հայաստանի հին քաղաքները՝ Արտաշատը, Երւանդաշատը, Զարեհաւանը (Թաղկոտն գաւառում), Նախճաւանը, Զարիշատը (Աղիովիտ գաւառում), Տիգրանակերտը, Արշամաշատը, Վանը եւ Արզնը:

Նոյնիսկ այն բանից յետոյ, երբ 163 թ. հռոմեացի զօրավար Ստատիոս Պրիսկոսը կրկին կործանեց Արտաշատը, Հայաստանը նախկինի պէս շարունակում էր պահպանել իր առաջնակարգ դերը Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ առեւտրում:

Հռոմէական կայսրութեան անկումից եւ Բիւզանդական պետութեան ստեղծումից յետոյ համաշխարհային առեւտրական յարաբերութիւնները ոչ միայն անկում չապրեցին, այլ էլ աւելի զարգացան: Նորաստեղծ կայսրութեան առեւտրատնտեսական կեանքում բացառիկ կարեւոր դեր սկսեց խաղալ Բոսֆորի ափերին հիմնադրուած նրա մայրաքաղաքը՝ Կ.Պոլիսը, որին այսուհետեւ վիճակուած էր Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ խաղալու ոսկէ կամրջի դեր:

Հայաստանը, որը նոյնպէս ընկած էր համաշխարհային կարաւանային առեւտրի մեծ ճանապարհների վրայ, ծառայում էր որպէս տարանցիկ առեւտրի հանգոյց Արեւելքից՝ Չինաստանից, Մի՛ջին Ասիայից, Հնդկաստանից արեւմուտք արտահանուող ապրանքների համար:

Հայաստանի խաղացած այդ դերը առանց էական ընդմիջումների, շարունակւեց աւելի քան եօթ դար, ընդհուպ մինչեւ վեցերորդ դարի վերջը:

Վեցերորդ-եօթերորդ դարերում, չնորհիւ այն բանի, որ նախարարական Հայաստանը յամառ պայքարի չնորհիւ կարողացաւ պահպանել իր ներքին ինքնուրոյնութիւնը, երկրում սկսւեց նոր տնտեսական ծառայման շարժում, որի դրսեւորումներից մէկն էր հանդիսանում նաեւ նրա աւելի սերտ ընդգրկումը միջազգային առեւտրի մէջ: Հայաստանում ծնունդ առան նոր քաղաքային կենտրոններ, որոնցում առեւտուրը աւելի ու աւելի էր կենտրոնանում հայ վաճառականների ձեռքերում:

VI-VII դարերում Հայաստանում նկատւող տնտեսական եւ մշակութային վերելքին, արաբական արշաւանքների ժամանակ փոխարինելու եկաւ համընդհանուր անկումը: Հայաստանը արաբական տիրապետութեան առաջին ժամանակաշրջանում կորցրեց միջազգային առեւտրում իր ունեցած նախկին տեղը: Դրա հիմնական պատճառը կայանում էր նրանում, որ Արաբական խալիֆաթի եւ Բիւզանդիայի միջեւ գոյութիւն ունեցող անհաշտ թշնամանքը եւ անընդմէջ պատերազմները բացառում էին Հայաստանի վրայով իրականացւող առեւտուրը:

Սակայն IX դարից սկսած Հայաստանում վերստին նկատւում

է մշակութային-տնտեսական վերելք, որի հիմքը հանդիսացել է միջազգային առեւտրի զարգացումը: Պէտք է սակայն նշել, որ Բագրատունեաց Հայաստանի վրայով կատարւում էր ոչ միայն միջազգային ապրանքափոխանակութիւն, այլեւ զուտ հայկական ապրանքների արտահանում ու վաճառք: Սա անշուշտ վկայում է այն մասին, որ նշւած ժամանակաշրջանում Հայաստանի աւատական երկրագործական տնտեսութիւնը արդէն մտել էր միջազգային առեւտրական շրջանառութեան մէջ:

XI դարում սկսւեց կենտրոնական Ասիայի վաչկատուն ցեղերի գաղթը դէպի Առաջաւոր Ասիա, որի հետեւանքով Հայաստանը ենթարկւեց անասելի աւերածութեան ու քայքայման: Բնական է, որ այս պայմաններում միջազգային առեւտրում Հայաստանը այլեւս չէր կարող խաղալ այն առաջնակարգ դերը, որ ունէր Բագրատունիների շրջանում: [1, էջ 18] Այլեւս իր հայրենիքում չգտնելով գործունէութեան ասպարէզ, հայ վաճառականութեան զգալի մասը ապաստան է գտնում այլ երկրներում: Առեւտրի շահաւէտ իր դիրքով հայերին առանձնապէս ձգում էր Ղրիմը:[2]

Սելջուկեան արշաւանքների ժամանակ եւ նրանից յետոյ լեւանտեան առեւտրի խոշոր կենտրոններում ծնունդ առան հայ գաղութներ, որոնք մեծապէս նպաստեցին նրան, որ հայ վաճառականների համաշխարհային կապերը չընդհատւեն: XI-XIII դարերում եւ աւելի ուշ հայերի առեւտրական գաղութներ ստեղծւեցին նաեւ հեռու ու մօտիկ բազմաթիւ երկրներում՝ Վրաստանում, Միջին Ասիայում, Չինական Թուրքեստանում, բուն Չինաստանում, Վոլգայի վրայ Բուլգար քաղաքում, Ախսարայում, որտեղից նրանք ազատ առեւտուր էին կատարում Ոսկէ Հորդային ենթակայ հսկայածաւալ տարածքներում, Սեւծովեան քաղաքներում եւ այլն:

Բուն Հայաստանի քաղաքային կենտրոնների առեւտրական դասը անմիջական կապերի մէջ էր գտնւում տարբեր երկրներում նոր ծնւող կամ զօրեղացող հայկական գաղութների հետ:

Ինչպէս յայտնի է 1080 թ. Միջերկրական ծովի հիւսիսարեւելեան ափերին, Տաւրոս եւ Ամանոս լեռնաշղթաների միջեւ ծնունդ առաւ նոր հայկական պետութիւն՝ Կիլիկիայի թագաւորութիւնը կամ «Մովային Հայաստանը», որը գոյատեւեց գրեթէ երեք հարիւրամեակ (1080-1375): Այն դարձաւ արեւելքի երկրների «դուռը»: Կիլիկեան թագաւորութեան ձեռքերում սկսեց կենտրոնանալ ոչ միայն Մերձաւոր Արեւելքի ցամաքային առեւտրի

նշանակալից մասը, այլեւ ծովային առեւտուրը: Այսպիսով, եթէ մինչ այդ Հայաստանը մասնակցում էր միայն միջազգային ցամաքային կարաւանային առեւտրին, ապա այժմ նա ընդգրկւեց նաեւ ծովային առեւտրի մէջ: Ի դէպ, Կիլիկիայի հայկական պետութիւնը ունեցել է որոշակի մասնակցութիւն նաեւ միջազգային ծովային իրաւունքի զարգացման գործում: Նա մասնակցել է առաջին միջազգային ծովային օրէնսգրքերի ձեւաւորմանը եւ ազգային օրէնսդրութեան ու միջազգային պայմանագրերի առաջադիմական նորմերի մշակմանը, որով նշանակալիօրէն նպաստել է ազատ ծովագրնացութեան սկզբունքի հաստատմանը:

Կիլիկիայի հայկական պետութեան անկումից յետոյ հայ վաճառականները գլխաւորապէս հաստատւեցին Ղրիմում: XIII-XV դարերում Ղրիմում հայերն այնքան բազմաքանակ էին ու տնտեսապէս զօրեղ, որ օտարները թերակղզու հարաւ-արեւելեան մասը կոչել են «Մովային Հայաստան» (Armenia Maritima). Հռոմի պապ Եւգենիոս IV-ի կոնդակում այն անւանւած է նաեւ Մեծ Հայաստան:

Մինչեւ 1475 թ., այսինքն թուրք-օսմանների կողմից Ղրիմի գրաւումը, Ղրիմահայ վաճառականները մրցակիցներ չունէին Լեւանտի ու Արեւելքի միջեւ կատարւող ցամաքային կարաւանային առեւտրում: Դա պայմանաւորւած էր առաջին հերթին նրանով, որ XIII դարի երկրորդ կէսին համարեա ողջ Ասիան գտնւում էր մոնղոլական տիրապետութեան տակ եւ Եւրոպայի վաճառականները ասիական ապրանքներ ձեռք բերելու համար ստիպւած էին դիմել կարաւանային առեւտրով զբաղւող ղրիմահայ վաճառականների օգնութեանը:[3]

Վիլիամ Ռուբրուքը, որը XIII դարի կէսերին դէպի արեւելք կատարած ճանապարհորդութեան ընթացքում այցելել էր նաեւ Մոնղոլիա, վկայում է, որ հայ վաճառականները յաճախակի լինում էին այդ երկրում: Որ մոնղոլների մայրաքաղաք Ղարաղորումում եւ Մանկու խանի օրդուում միշտ էլ գտնւում էին բազմաթիւ հայ վաճառականներ, որոնք օգտւում էին մոնղոլական խանի հովանաւորութիւնից: [4, էջ 7, 182]:

Ղրիմում հայ վաճառականները իրագործում էին նաեւ Ռուսաստանի հարաւային շրջանների արտադրանքը դէպի ծովեզերք փոխադրելու գործը, որը այնուհետեւ յանձնում էր իտալական, մանաւանդ Ջենովական, Վենետիկեան եւ Պիզայի նաւերին: Այնուհետեւ իտալացիներից ձեռք բերելով նաւերով բերւած

արեւմտեան ապրանքները, դրանք իրենց կարաւաններով ղրիմահայ վաճառականները տեղափոխում էին Ասիայի խորքերը:

Նրանք գործօն կապերի մէջ են գտնուել նաեւ Լեհաստանի, Հունգարիայի, Թուրքիայի, Կովկասի, Իրանի, Մերձ Բալթեան երկրների, Անգլիայի, Ֆրանսիայի, Պորտուգալիայի եւ բազմաթիւ այլ եւրոպական ու ասիական երկրների հետ: Խոշոր վաճառաշահ կենտրոններում ղրիմահայ վաճառականները ունեցել են նաեւ առեւտրական գործակալներ:

Կաֆայի անկումից յետոյ (1475 թ.) սեւծովեան առեւտրի մէջ ջենովացիները կորցրին իրենց նախկին կշիռը: Այսուհետեւ Ղրիմի հայ վաճառականները դառնում էին կապող օղակ արեւելեան Եւրոպայի եւ Արեւելքի միջեւ: Նրանք կարաւաններով արեւելեան ապրանքները հասցնում էին Լւով, որտեղ դրանք գտնում էին գնորդներ յանձինս տեղի, ինչպէս նաեւ Կրակովի, Գդանսկի, Նիւրենբերգի եւ այլ վաճառականների:

XIII-XIV դարերում միջազգային առեւտրի մէջ մեծանում է նաեւ իրանական քաղաքների դերը: Մասնաւորապէս առեւտրական խոշոր կենտրոն է դառնում Թաւրիզը: Նրա, որպէս միջազգային կշիռ ունեցող առեւտրական կենտրոնի, դերը մեծացաւ յատկապէս այն բանից յետոյ, երբ Հուլաղու խանը աւերեց Բաղդադը (1258 թ.), որն հանդիսանում էր Թաւրիզի առեւտրական լուրջ մրցակիցը:[6] Թաւրիզը վերակառուցեց եւ առեւտրական ու քաղաքական խոշոր կենտրոն դարձաւ Ղազան խանի օրօք (1295-1304 թ.): Ի դէպ, այդ ժամանակւանից սկսած Հնդկաստանի առեւտրի ճանապարհը Միջերկրական ծովից ուղղուեց դէպի Սեւ ծով: Թաւրիզում (հայկական գրականութեան մէջ Դաւրէժ, Գանձակ Շահաստան եւ այլն) գոյութիւն ունէր սուար հայկական բնակչութիւն, այդ թւում նաեւ առեւտրական դաս («ղովլաթաւորներ» կամ «խոջաներ»): Իտալացի ճանապարհորդ Մարկո Պոլօն վկայում է, որ հայերը Թաւրիզում կազմում էին մի խոշոր զանգած: Այդ վաճառաշահ քաղաքի հայ առեւտրական դասը ուղղակի կամ անուղղակի կերպով ներգրաւուած էր համաշխարհային ապրանքափոխանակութեան մէջ: Կոստանդնուպոլսի, Տրապիզոնի եւ Կաֆայի վրայով եւրոպական ապրանքները կարաւաններով հասցնում էին Թաւրիզ, իսկ այնտեղից ուղարկւում Իրանի խորքերը եւ Մերձաւոր ու Միջին Արեւելքի այլ երկրներ: Բացի այդ գլխաւոր առեւտրական ուղուց, գոյութիւն ունէր նաեւ մէկ այլ ճանապարհ, որը սկսւում էր կամ Կիլիկիայում եւ կամ Սիրիայում եւ ձգւում էր մինչեւ Թաւրիզ

գլխաւորապէս երկու ուղղութիւններով. առաջին, Կիլիկիայից Ուրֆայի, Մերդինի, Բիթլիսի, Խոյի ճանապարհով դէպի Թաւրիզ եւ երկրորդ Բէյրութից Հալեպի վրայով դարձեալ դէպի Թաւրիզ: [4, էջ 60]:

XIII դարի վերջին եւ XIV դարի սկզբին միջազգային առեւտրի համար յատկապէս կարեւորագոյն նշանակութիւն էր ձեռք բերել Այաս-Թաւրիզ առեւտրական ճանապարհը, որը «Արեւմտեան մեծ ճանապարհի» հետ համատեղ հանդիսանում էր համաշխարհային առեւտրի գլխաւոր ուղիներից մէկը: Ֆլորենտացի վաճառական Բալդուչչի Պեգոլոտտիի մօտ (XIV դարի սկիզբ) բերուած է առեւտրական այդ ուղու նկարագրութիւնը: Կարելի է ենթադրել, որ այդ ճանապարհով առեւտուր անող վաճառականների զգալի մասը հայեր էին:

Թաւրիզից բացի հիւսիս-արեւմտեան Իրանում ծնունդ առաւ մէկ այլ առեւտրական կենտրոն եւս՝ Սուլթանիէ քաղաքը, որը կառուցեց XIII դարի վերջին եւ XIV դարի սկզբին իշխան Արղունի (1284-1291) եւ նրա հետնորդների օրօք: Խաչալական աղբիւրներից յայտնի է դառնում, որ Հուլաղուիդների տիրապետութեան շրջանում ջենովական եւ վենետիկեան վաճառականները Հայաստանի վրայով կարաւանային առեւտուր էին անում ինչպէս Թաւրիզի, այնպէս էլ Սուլթանիէի հետ, այդ քաղաքներում ունենալով նաեւ իրենց առեւտրական գրասենեակներն ու նոյնիսկ հիւպատոսութիւնները:

XIV դարի առաջին կէսին աշխուժանում է միջազգային ապրանքափոխանակութիւնը Հայաստանի հարաւային շրջանների, մասնաւորապէս Ալաշկերտի հովտի, Մանազկերտի եւ Արճեշի վրայով: Սակայն հուլաղուիդների դինաստիայի թուլացման ու անկման հետեւանքով Հայաստանի հարաւային շրջանները զրկուեցին միջազգային առեւտրական իրենց նշանակութիւնից: Այդ շրջանների տնտեսական վերելքին կործանիչ հարուած հասցրեցին Լենկ-Թէմուրի աւերիչ արշաւանքները:

Անին ու Կարսը, որոնք նախկինում յայտնի էին իրենց միջազգային կապերով, XIV դարում այլեւս նշանակալից որեւէ դեր չէին խաղում: Այդ ժամանակ Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ կատարուող առեւտրի ամենարանուկ ուղին անցնում էր Աստրախանով եւ Կասպից ծովի վրայով: Արեւելեան մետաքսն ու համեմունքները տարւում էին Աստրախան, ապա Ազով ու Ղրիմի ծովափնեայ քաղաքները, իսկ այնտեղից նաւերով տեղափոխում

էին Վենետիկ, Ջենովա եւ իտալական այլ քաղաքներ:

Միջազգային տարանցիկ առեւտրի այդ հիմնական ուղեգծի բոլոր կարեւոր հանգրաններում ստեղծուել էին հայկական գաղթավայրեր, իսկ հայ վաճառականները կարեւոր դեր էին կատարում այդ առեւտրի մէջ [8, էջ CV-CVII]:

Սակայն XIV դարի կէսերից Ոսկէ Հորդայի եւ իլխանութեան մէջ մղուող արիւնահեղ պատերազմների հետեւանքով առեւտրական այդ ուղեգիծը դարձաւ անապահով: 1395 թ., երբ Լենկ-Թէմուրը գրաւեց ու կործանեց Աստրախանը, դրանով իսկ վճռական հարուած հասցուեց նաեւ այդ առեւտրական խոշոր կենտրոնի վրայով կատարուող առեւտրին:

Այս իրադարձութիւնները իրենց բացասական անդրադարձներն ունեցան նաեւ Հայաստանի վրայով կատարուող առեւտրի վրայ: Ըստ էութեան քաղաքական հեղհեղուկ վիճակը, իլխանների թագաւորութեան տրոհումից յետոյ բազմաթիւ մանր տիրապետութիւնների ու աւատական խմբաւորումների միջեւ բռնկած փոխադարձ արիւնոտ պայքարը, ամենուրեք ծայր առած կամայականութիւններն ու բռնութիւնները, առեւտրական ճանապարհների անապահովութիւնը եւ այլն համարեա իսպառ դադարեցրին կարաւանային շարժումը Հայաստանի վրայով:

Անշուշտ XIV դարում եւ աւելի ուշ արեւելքի երկրների կողմից բազմիցս փորձեր էին կատարւում կրկին վերականգնելու նախկին ժամանակների համեմատութեամբ ընդհատուած առեւտրական կապերը արեւմուտքի հետ: Սակայն այդ փորձերը յաջողութեամբ էին պսակւում միայն ժամանակաւորապէս, որովհետեւ համարեա չդադարող պատերազմների, տարբեր դինաստիաների (Զորանեաններ, Ջելաիրեաններ, Թիմուրեաններ, Ղարա-Կոիունլու եւ Աղ-Կոիունլու Թուրքմեններ) անընդհատ փոփոխութեան եւ առհասարակ քաղաքական անկայունութեան պատճառով Հայաստանի կարաւանային ճանապարհների վրայ չէր յաջողւում վերականգնել միջազգային առեւտրի ծաղկման համար այնքան անհրաժեշտ տեղաշարժելու անվտանգութիւնը:

XV դարում Փոքր Ասիայում, Բալկաններում եւ Հիւսիսային Աֆրիկայում Թուրքական նուաճումները եւ յատկապէս 1453 թ. Կ.Պոլսի գրաւումն ու բիւզանդական կայսրութեան վերջնական անկումը Եւրոպայի արեւելեան առեւտրի համար իսկական աղէտ եղան: Սուլթանի տիրապետութեան տակ անցաւ Ադրիատիկ ծովի ու Հունգարիայի սահմաններից մինչեւ Պարսից Մոց հասնող

առեւտրական ուղին: Իսկ Տրապիզոնի կայսրութեան (1461 թ.) եւ սուլթան Բայազետ Բ-ի կողմից Ղրիմի նուաճումից յետոյ (1475 թ.) Մեւ ծովը ուղղակի վերածւեց թուրքական «ներքին լճի»: Այս բոլորը արեւմտեան աշխարհը զրկում էր Արեւելքի հետ շփումներ ունենալու հնարաւորութիւնից [9, էջ 105: 10 էջ, 348-349]. Խափանւեց նաեւ Եւրոպան Արեւելքի հետ կապող միջազգային առեւտրական ուղին: Արեւմուտքի վաճառականները զրկւեցին փոքր Ասիայի, Սիրիայի ու Հայաստանի վրայով Մինչեւ Արեւելքի, Հնդկաստանի ու Չինաստանի հետ առեւտրա-տնտեսական կայուն կապեր ունենալու հնարաւորութիւնից: Մինչդեռ այդ նոյն ժամանակ եւրոպական երկրներում սկսած տեւական տնտեսական վերելքը հրամայական պահանջ էր առաջադրում ապահովել հումքի հարուստ աղբիւրներ եւ վաճառահանման կայուն շուկաներ:

Օսմանեան սուլթանների տնտեսական քաղաքականութիւնը աչքի էր ընկնում ծայրայեղ կամայականութեամբ: «Եանիչերիները վատ էին կողմնորոշւում առեւտրական հարցերում եւ անպարկեշտ կողոպուտների թուրքական մեթոդները իտալական վաճառականներին հասցնում էին յուսահատութեան»: [11, էջ 360] Վենետիկցիները ստիպւած էին կամ հսկայական մաքսատուրքեր վճարել եւ կամ ընդմիշտ հեռանալ Մերձաւոր Արեւելքի ու Էգէեան ծովի իրենց առեւտրական յենակէտերից, իսկ Ջենովացիները ուղղակի վռնդւեցին օսմանեան տիրոյթների սահմաններից: Այսպիսով Եւրոպան կտրւեց արեւելեան շուկաներից: Փակւեց նաեւ այսպէս կոչւած «մետաքսի ճանապարհը», առեւտրական այն մեծ ուղին, որը Մինչեւ Ասիայից եւ Իրանից, Հայաստանի վրայով տանում էր դէպի Մեւ ծով: Դա այն ուղին էր, որի վրայով Եւրոպան ստանում էր մետաքս եւ մետաքսի հումք: Միւս ճանապարհը, որը կոչւում էր «համեմների ճանապարհ» եւ գալիս էր ծովով Հնդկաստանից մինչեւ Եգիպտոս, վտանգւեց դարձեալ նոյն թուրքերի տիրապետութեամբ, որ հաստատւեց Եգիպտոսում: [12, էջ 83] Հետեւելով իր նախորդի՝ սուլթան Բայազետ Բ-ի օրինակին, սուլթան Սելիմ Եաւուզը (ահեղ) շարունակեց արաբական երկրների նուաճումը եւ գրաւեց Սիրիան, Պաղեստինը եւ Արաբիան: Այսպիսով մերձաւոր արեւելեան ողջ առեւտուրն ընկաւ թուրք-օսմանների հսկողութեան տակ:

Անչուշտ եւրոպական առեւտրական պետութիւնները եռանդուն փորձեր էին կատարում Արեւելքի հետ խափանւած ճանապարհը բացելու ուղղութեամբ: 1571 թ. երբ Վենետիկի, Իսպանիայի եւ Ջենովայի միացեալ նաւատորմները Լեպանտոյի ծովածոցում

ոչնչացրին թուրքական ռազմական նաւատորմիղը, մի պահ Արեւմուտքում յոյսեր արթնացան Կոստանդնոպոլսի մօտակայ ազատագրման, հետեւաբար նաեւ դէպի Արեւելք տանող առեւտրական ճանապարհների բացւելու վերաբերեալ: Սակայն այդ յոյսերին վիճակւած չէր իրականանալ: Թուրքիան կրկին ուշքի եկաւ եւ նախկինի պէս եւրոպացիների առջեւ փակում էր ճանապարհը դէպի Հնդկաստան, հեռաւոր Արեւելք ու Չինաստան:

Սակայն Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ այդ հակաբնական խզումը չէր կարող տեւական բնոյթ կրել: Վերընթաց զարգացման ուղի բռնած Արեւմուտքը կենսականօրէն զգում էր Արեւելքի հետ առեւտրատնտեսական կապեր ունենալու պահանջը: Արեւմուտքի երկրներում սկսած տեւական տնտեսական վերելքը, որ հետեւանք էր դրամատիրական կարգերի բուռն զարգացման, հրամայական պահանջ էր առաջադրում ապահովել հումքի հարուստ աղբիւրներ եւ վաճառահանման կայուն շուկաներ:

Այս պարագաներում Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ միջնորդ վաճառականների հանդէս գալը դառնում էր կենսական անհրաժեշտութիւն: Այդ դերը նշանակալից չափով իր վրայ վերցրեց վերընթաց զարգացում ապրող հայ առեւտրական խոշոյական դասը, որը շուտով ձեռք բերեց այնպիսի կշիռ, որ XVI դարի վերջին եւ ողջ XVII դարի ընթացքում մրցակիցներ չունէր Լեւանտի եւ Միջին ու Հեռաւոր Արեւելքի տարբեր երկրների միջեւ իրագործւող միջմայրցամաքային առեւտրի բնագաւառում:[13]

Անտարակոյս դրան նպաստող կարեւորագոյն հանգամանքներից մէկն այն էր, որ ինչպէս Իրանում իշխող Սէֆեան պետութիւնը, այնպէս էլ Օսմանեան Թուրքիան կենսականօրէն շահագրգռւած էին արեւելք-արեւմուտք առեւտրական կապերի զարգացմամբ: Հետամուտ լինելով իրենց համար ռազմական փառքի ստեղծմանը եւ նոր տարածքներ նւաճելուն՝ այդ պետութիւնները չէին խորշում նաեւ առեւտրից, որը նրանց բերում էր հսկայական եկամուտներ: Թուրք պատմաբան Խալիլ Ինալջիքը այդ առթիւ գրում է, որ օսմանեան սուլթանները ձգտում էին իրենց բաժինը ստանալ ոչ միայն իրանական հում մետաքսի առեւտրից, այլեւ կենտրոնական ու Միջին Ասիայի, Հնդկաստանի ու Չինաստանի հետ կատարւող առեւտրափոխանակութիւնից: [14, էջ 210-211]

Ստեղծւած իրադրութեան պայմաններում Եւրոպայի համար այլ երկընտրանք չկար, բացի ծագումով արեւելքցի միջնորդ վաճառականների օգնութեանը դիմելը: Դրա հնարաւորութիւնը

պայմանաւորուած էր նրանով, որ այդ վաճառականները գտնւում էին օսմանեան տիրապետութեան ներքոյ եւ նրանց առեւտուրը եկամտաբեր էր սուլթանական գանձարանի համար: Այսպիսով հայ վաճառականների համար վերստին առեւտրական լայն գործունէութիւն ծաւալելու հնարաւորութիւն էր ստեղծւում: Ընդ որում, եթէ սեւծովեան ուղու երթեւեկութեան ժամանակ հայերը հանդէս էին գալիս առաւելապէս Վենետիկի եւ Ջենովայի առեւտրականների գործակցի դերում, ապա այժմ նրանք սկսում են գործել որպէս ինքնուրոյն միաւոր: Նոր պայմաններում նրանց անսպասելի մուտքը համաշխարհային շուկա զարմացրել է ժամանակակիցներին: Արտայայտելով այդ տրամադրութիւնները, գերմանացի փիլիսոփա Կանտը գրել է. «Մէկ այլ քրիստոնեայ ժողովրդի՝ հայերի մօտ տիրապետում է ինչ-որ առանձնայատուկ բնոյթի առեւտրական ոգի: Նրանք զբաղւում են փոխանակութեամբ, հետիոտն ճանապարհորդելով Ջինաստանի սահմաններից մինչեւ Գէրմեական ափի Կոբսօ հրուանդանը: Դա վկայում է այդ խելամիտ ու աշխատասէր ժողովրդի առանձնայատուկ ծագման մասին, որը հիւսիս-արեւելքից հարաւ-արեւմուտքի ուղղութեամբ կտրում անցնում է համարեա ողջ հին աշխարհը եւ կարողանում է սիրալիր ընդունելութիւն գտնել այն բոլոր ժողովուրդների կողմից, որոնց մօտ լինում է այցելութեամբ: [15, էջ 572-573]

Հայ վաճառականական դասի անսպասելի ուժեղացման պատճառները բազմապիսի ու բազմազան էին: Նախ, նշւած շրջանում Հայաստանի զոյգ հատւածներում շարունակւում էր հայկական աւատականութեան վերջին շառաւիղների նկատմամբ հալածանքների ու ֆիզիկական բնաջնջման վաղեմի քաղաքականութիւնը: Նրանց հողերը անցել էին թուրքական քոչւորական ու կիսաքոչւորական ցեղերի վերնախաւի ձեռքը: Հայ աշխարհիկ աւատատէրերը, որպէս քաղաքական ուժ դուրս էին մղւած պատմական ասպարէզից եւ ստիպւած էին զբաղւել առեւտրով: Հայ աւատատէրերի որոշ ներկայացուցիչներ իրենց հողերի ու արտօնութիւնների պահպանման նպատակով ընդունում էին մահմեդականութիւնը:

Այսպիսով շարժուն կապիտալը դառնում էր հայ աւատական դասի կենսագործունէութեան ամենատարածուն բնագաւառը: Հիրաւի, արեւելքի բռնատիրութեան պայմաններում առեւտուրը «միակն էր, որ բաց էր մնում նրա (հայի Վ.Բ.) առջեւ այս աշխարհի մէջ փառքի, վայելքի, տիրապետութեան հնարաւորութիւն էր տալիս

որոշ չափով»: [12, էջ 160] «Զրկելով իրենց քաղաքներից ու գիւղերից, հողերից ու երիսարներից, ճոխերից ու հարկատուներից՝ հայ աւատատէրերից շատերը գաղթեցին երկրից, ձուլեցին եկեւոր նւաճողների մէջ կամ ոչնչացան խպառ: Նրանց մի մասը առեւտրական գրաղմունքների մէջ որոնեց անձնական ապահովութեան ու բարեկեցութեան երաշխիքը: Կային, վերջապէս, այնպիսիները, որոնց ասպետական զրահն ու սուրը փոխեցին եկեղեցական փիլոնի ու բուրվառի հետ: [17, էջ 455]

Նոր Ջուղայեցի մատենագիր Ստեփանոս Դաշտեցին այդ նոյն հարցի մասին տալիս է հետեւեալ բացատրութիւնը, «Ազգն մեր սակս ոչ ունելոյ զհանգիստ կամ զտեղի ո՞ւր դիցեն զգլուխս իւրեանց, եւ այս ի կողմանէ գերչաց եւ ընդ իշխանութեամբ գրաւոցացն մերոց, որոց աղագաւ ոչ կարելով ի գործ արկանել զզինուորութիւն, զնօտարութիւն կամ յայլ խմն ծառայութիւն ի դրունս արքունեաց, նաեւ ոչ տալով նոցա զդադար առ ի նեղելոյ եւ յափշտակելոյ, կամելով եւս խանգարել զարուեստ ամենայն խորհելով ի մէնջ յայլոց աղագաւ անճարակս եղեալք յոչ ուստեքէ գտանել զհնարս կեցութեան՝ հետեւեցան արհեստի վաճառականութեան , եւ այսպէս ցիր ու ցան եղեալ շրջիմք երեսօք բօթօրակի գնդի աշխարհս:» [18]

Մոնղոլական արշաւանքների ժամանակ եւ նրանից յետոյ ողջ Մերձաւոր Արեւելքում տեղի ունեցող քաղաքական վայրիվերումների հետեւանքով հայ միջնադարեան քաղաքները կործանուեցին կամ քաղաքական արհաւիրքների հետեւանքով քայքայուեցին ու հասան ծայր չքաւորութեան: «Հայաստանի հողը ասիական բարբարոսութեան շնչից խպառ խոպանացած էր, անհնարին դարձնելով քաղաքական ու քաղաքային կեանքի փոքրիշատէ ազատ ու խաղաղ առաջընթացութիւնը...» [12, էջ 12-13]

Այս պարագաներում, երբ մայր հայրենիքում առեւտրատնտեսական գործունէութեան եւ մշակութային առաջադիմութեան պայմանները ծայր աստիճանի սահմանափակուեցին եւ կամ դարձան համարեա անհնարին, կարեւոր նշանակութիւն ձեռք բերեցին Հայաստանից դուրս գտնուող հայ գաղութներն ու գաղթօջախները, մանաւանդ այնպիսիները, որոնք հիմնուում եւ առանձնապէս զարգանում են XVI դարից յետոյ իբրեւ հայ վաճառականների առեւտրական գրասենեակների տեղեր»: [12]

Այսպիսով XVI դարում պատմութեան թատերաբեմ է բարձրանում միջազգային առեւտրով զբաղուող հայ «Խոջայական» դասը, որի գործունէութիւնը միաժամանակ խամրել էր Առաջաւոր

Ասիայում տեղի ունեցած քաղաքական վայրիվերումների, առեւտրական ճանապարհների անապահովութեան եւ մի շարք այլ պատճառներով: Այսուհետեւ հայ վաճառականները դառնում են Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ միջազգային առեւտրի միջնորդներ, այլեւս մրցակիցներ չունենալով ցամաքային ճանապարհների վրայ:

Խոջան պարսկերէն բառ է, նշանակում է «տէր», «իշխան», «տանուտէր» կամ պարզապէս «հարուստ»: «Խոջա ասածդ նշանակում է հարստութիւն եւ առատութիւն, ոչ միայն դրամի եւ գանձի, այլեւ մատուցած ծառայութեան, առաքինութեան եւ մտածելակերպի: Այս պատճառով պարսիկները բոլոր իրենց գրողներին եւ առաքինութեամբ աչքի ընկած մարդկանց սովորութիւն ունեն կոչել Խոջա տիտղոսով», - գրում էր XVII դարի հեղինակներից մէկը: [19] Ժամանակակիցները մեծարում էին խոջաներին «երեւելիք», «փառաւորք», «մեծաշուք», «մեծահանդեսք», «արքայամաջլիս», «մուսահիպք» (գրուցակից), «համափիայաք» (բաժակակից) եւ այլ մակդիրներով:[2] Արեւելեան Հայաստանից այս նոյն խմաստներով խոջա բառը անցել ու տարածուել է նաեւ Թուրքիայում, որտեղ նոյնպէս տեղացի հայ վաճառականներին կոչել են խոջա:

Արեւելեան Հայաստանում, յատկապէս Նախիջեւանի եւ Ղափանի շրջաններում, առաջ են գալիս բազմաթիւ վաճառականական գիւղեր ու աւաններ, որոնցից յատկապէս նշանաւոր էին Արաքսի ձախ ափին տեղաւորուած հայ քաղաքներ Ջուղան; Աստապատը, Վանանդը, Բիստը, Ագուլիսը, Շոռոթը, Նախիջեւանը, Շահկերտը, Օրգուբադը, Ագարակը, Ցղնան, Դաշտը, Մեղրին, Երնջակը, Դաստակը, Կալերը, Ջահուկը, Խոշկաշէնը եւ այլն [21, էջ 27], ինչպէս նաեւ Սիւնիքը (Ղափան), Արցախը, Արարատեան դաշտի քաղաքները (յատկապէս Երեւանը) եւ այլն: Առհասարակ առեւտրով հրապուրւելը ընդգրկել էր Ջուղա(*)-Դաշտ (Ագուլիս)-Մեղրի-Սիսեան գծի բոլոր շրջանները:[12, էջ 234-235]

Վերոյիշեալ վայրերը արագօրէն վերածւում են միջազգային տարանցիկ կարաւանային առեւտրի կարեւորագոյն հանգուցակէտերի: Յատկապէս աչքի էր ընկնում Ջուղան, որը դարձել էր Արեւելքի շուկաները Արեւմուտքի հետ կապող կարեւոր հանգուցակէտ: «Զգիտենք, թէ ինչ էր նրա անցեալը խոր հնութեան մէջ, -գրում է Լէօն, - բայց XV-XVI դարերից նա սկսում է փայլել հայ երկնակամարի վրայ իբրեւ հայրենիք գարմանալի վաճառականներ, որոնք ոչ միայն հետաքրքրական էջեր են մտցնում միջազգային

(*) Մի բնի ընթերցող՝
Արաքս գետի ափին գտնուող «ՋՈՒԼՖԱ»-ի պատմական անունը եղել է «ՋՈՒՂԱ»:
Գրականութեան մէջ այն դիւաստակւում է «ՀԻՆ ՋՈՒՂԱ» անունով: Այն լսէնք է չփոթել
Մարահանի Ջուղայի հետ, որը ընդունւած է անուանել «ՆՈՐ ՋՈՒՂԱ»: (Վ.Բ.)

Ա 86405

առեւտրի պատմութեան մէջ, այլեւ հանդիսանում են մի շատ խոշոր, նմանը չունեցող հասարակական-կուլտուրական տարր, որի կատարած դերը հայ կեանքի զարգացման մէջ անհունապէս մեծ է»: [12, էջ 234-235]

Ջուղան գտնւում էր չոր, ապառաժոտ, համարեա անմատչելի մի լանջի վրայ: Նա չունէր տեղական գիւղատնտեսական ռեսուրսներ: XVII դարի մի անգլիացի ճանապարհորդ հաղորդում է, որ ջուղայեցիները ստիպւած էին բացի գինուց բոլոր աննդամթերքները բերել դրսից: [22, էջ 496-497] Նրա բնակչութիւնը երբեք չի գերազանցել 10-12 հազարից: Ունէր մօտ 2000 տուն եւ 7 եկեղեցի: Նկատի ունենալով Ջուղայի հարստութիւնը եւ նրա նշանակութիւնը, հայկական աղբիւրներում այն յաճախ անւանում են «պարծանք հայոց ազգիս»: Առաքել Դաւրիժեցին հիացմունքով է նկարագրում նրա չլացնող հարստութիւնը: Ջուղան «... էր մեծ եւ երեւելի չէնն այն ի ժամանակին յայնմիկ ի մէջ արեւելեայ աշխարհիս...» [23, էջ 12]. որի հետքերը կարելի է տեսնել նոյնիսկ մինչեւ այսօր:

Ղարա-Կոխունու թուրքմէն իշխողները Ագուլիսին, Ջուղային եւ հայաբնակ մի շարք այլ վայրերի շնորհել էին «խասութեան» իրաւունք, որով դրանք ազատւում էին տեղական աւատատէրերից ունեցած կախումից եւ անմիջապէս ենթարկւում էին փաղիշահին: Այս քաղաքականութեան միջոցով թուրքմէն նւաճողները ձգտում էին իրենց պատւար դարձնել հայ իշխող տարրերին, մելիքներին, առեւտրականներին, եկեղեցականներին: [17, էջ 429] 1453 թ. Ղարա-Կոխունու Ջհանշահի կողմից տրւած հրովարտակում, որտեղ խօսւում է Ջուղայից ստացւող հարկերի ու տուրքերի մասին, ակնարկ անգամ գոյութիւն չունի նրանց առեւտրական գործարքների դիմաց գանձւող հարկերի մասին: [24, էջ 237]

«Ջուղան, - գրում է Լէոն, - մի փոքրիկ առանձնացած, իր զուգակիցը չունեցող վաճառականական ինքնավար համայնք էր խոջաների վարչութեան տակ: Ջուղային առանձին կարեւոր առեւտրական նշանակութիւն տալիս էր նրա աշխարհագրական դիրքն այն մեծ ճանապարհի վրայ, որ կապում էր Միջին Ասիան, Իրանը Սեւ Ծովի արեւելեան աւազանի եւ Կովկասի մեծ ճանապարհների հետ: Ջուղայի առջեւ է, որ Արաքսի աջ ափը ներկայացնում է յարմարութիւն, որ հիւսիսից եկող միջազգային ճանապարհը շարունակէ իր ուղղութիւնը դէպի Թաւրիզ՝ մեծ առեւտրական շահաստանը եւ դէպի այլ կողմեր: Ջուղան այսպիսով

դառնում է մի մեծ կայան այդ ճանապարհի վրայ, ապրանքների մի մեծ պահեստանոց»: [25, էջ 57]

Սակայն հաղորդակցութեան այս յարմարութիւնը, անշուշտ միակ պայմանը չէր, որ Ջուղան դարձնում էր նշանաւոր առեւտրական կենտրոն: Ջուղայեցիների մօտ նկատւում էր մի զարմանալի առեւտրական ջիղ, որը իրաւամբ, հանդիսանում էր մի արտակարգ ու բացառիկ երեւոյթ հայ իրականութեան մէջ, որը ստացել է «Ջուղայեցիութիւն» անւանումը: «... Ջուղայեցին ոչ միայն առեւտուր անելու տաղանդ ունէր, այլեւ այդ առեւտրի համար նպաստաւոր պայմաններ ստեղծելու շնորհք ունէր: Ասիական սանձարձակ բարբարոսութիւնների կրկէսում խաղաղ կուլտուրական աշխատանքի իրաւունքներ ձեռք բերել, - այս աւելի խոշոր մեծագործութիւն էր, քան կարաւաններով Հիմալայներից մինչեւ Եւրոպա չափելը: Այս մեծ նաճումը Ջուղայեցին անում էր ոչ թէ, իհարկէ, զէնքի զօրութեամբ, այլ խելքով, ճարպկութեամբ, յենւած իր ամենամեծ ուժի՝ դրամի վրայ: [12, էջ 238]

«Ջուղայեցիութիւնը» այնպիսի համապարփակ հասկացողութիւն էր, որ յաճախ ջուղայեցիներ անւան տակ հանդէս էին գալիս նաեւ հարեւան գաւառների ու քաղաքների՝ Ագուլիսի, Սիսեանի, Նախիջեւանի եւ այլն հայ վաճառականները:

Ջուղան հանդիսանում էր միջազգային առեւտրի կարեւորագոյն կենտրոն: Նա դարձել էր Արեւելքի շուկաները Արեւմուտքի հետ կապող անփոխարինելի հանգուցակէտ: Այդ դերում նա յատկապէս սկսում է աչքի ընկնել Կոստանդնուպոլիսը թուրքերի կողմից գրաւելուց եւ Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ առեւտրատնտեսական կապերի խզումից յետոյ:

Իրանի Ղարա-Կոյունլու եւ Ադ-Կոյունլու տիրակալները մեծագոյն շահագրգռւածութիւն էին դրսեւորում իրենց տիրապետութիւնների վրայով Եւրոպա-ասիական առեւտրի զարգացման ուղղութեամբ, որը նրանց գանձարանին բերում էր խոշոր եկամուտներ: [28, էջ 43] Այդ պատճառով նրանք եռանդուն կերպով խրախուսում էին Իրանի, Անդրկովկասի եւ նոյնիսկ Թուրքիայի հայ վաճառականների միջնորդ առեւտուրը Արեւելքի եւ Արեւմուտքի երկրների միջեւ: Թուրքմէն տիրակալների այդ հովանաւորողական քաղաքականութեան շնորհիւ կարճ ժամանակամիջոցի ընթացքում արեւելահայ վաճառականները, ջուղայեցիների գլխաւորութեամբ, վճռական դիրքեր ձեռք բերեցին Իրանի եւ Անդրկովկասի արտաքին

առեւտրում: Սակայն Օսմանեան Թուրքիան, որը մշտապէս թշնամական քաղաքականութիւն էր իրագործում իր արեւելեան հարեւանի նկատմամբ, պատրաստելով կործանիչ հարուած հասցնել նրան եւ տէր դառնալ Իրանի լայնատարած հողերին եւ նրանց վրայով անցնող խիստ եկամտաբեր առեւտրական ճանապարհներին, ամէն կերպ կասեցնում էր Իրանի արտաքին առեւտուրը եւրոպացիների հետ: Դրանից մեծապէս տուժում էին նաեւ վերջիններս: Ի վիճակի չլինելով մեն-մենակ դիմագրաւելու օսմանցիների առաջխաղացմանը դէպի Եւրոպա, եւրոպական տէրութիւնները եռանդուն կերպով սկսում են փնտրել դաշնակիցներ՝ հակաթուրքական զինակցութիւն կուելու համար: Նրանց ենթադրութեամբ Օսմանեան կայսրութեան դէմ մղուող պայքարում Իրանը կարող էր լինել իրենց բնական դաշնակիցը:

Վենետիկի հանրապետութիւնը, որի առեւտրական շահերը առաւել շատ էին տուժել թուրքերի վարած քաղաքականութեան հետեւանքով, իրար հետեւից Աղ-Կոխունլու Ուզուն-Հասանի (1453-1477) մայրաքաղաք Թաւրիզ էր ուղարկում դեսպանութիւններ: Այսպէս, որպէս Վենետիկի հանրապետութեան դեսպաններ Իրանում բանակցութիւններ էին վարում Կատերինօ Զենոն (1471-1474), Ջոզէֆօ Բարբարոն (1471-1478) եւ Ամբրոսիոս Կոնտարինին (1473-1477):

Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ միջազգային առեւտրով զբաղուող իրանահայ վաճառականները, որոնց շահերը նոյնպէս տուժել էին փոքր Ասիայի վրայով անցնող առեւտրական ճանապարհների վրայ օսմանցիների սահմանած հսկողութեան հետեւանքով, կամովին ընդգրկւում են Իրանում իշխող Աղ-Կոխունլուների եւ Վենետիկի հանրապետութեան միջեւ սկզբնաւորուող քաղաքական բանակցութիւնների ոլորտը: [27] Անտարակոյս, դրա դրդապատճառներից էր նաեւ այն, որ Հայաստանի վրայ ծանրօրէն իշխում էր օսմանեան լուծը, եւ հայ առեւտրական կապիտալի ներկայացուցիչները, բնականաբար, չէին կարող այդ փաստի նկատմամբ դիտողի դերում մնալ: Հայ եկեղեցական գործիչների մէջ կային մարդիկ, որոնք զինակցում էին թուրքմէն ցեղապետներին՝ հայ եկեղեցական իշխանութիւնը բարձրացնելու յոյսով: Սրանց շարքում կային նոյնիսկ մարդիկ, որոնք օգտագործում էին այդ զինակցութիւնը հայերի քաղաքական ինքնորոշման հեռանկարների իրագործման ակնկալութեամբ: [17, էջ 434-436]

Ցայտնի է, որ 1469 թ. Ուզուն-Հասանը Իտալիա է ուղարկում

լայն լիազօրութիւններով օժտուած մի դեսպանութիւն, որի կազմում առաջին դէմքերից էր իրանահայ մեծահարուստ վաճառական խոջա Միրաքը: [28, էջ 187] Ուզուն Հասանը նրան յանձնել էր Վենետիկի դուժին հասցէագրուած մի նամակ, որտեղ թւարկելով իր տարած յաղթանակները, յոյս էր յայտնում, որ իր ցամաքային զօրքերի ու վենետիկեան ծովային ուժերի օգնութեամբ կարելի կլինի Թուրքերին քշել կամ Եւրոպա, կամ Ասիա:

Խոջա Միրաքի դեսպանութիւնը Վենետիկ է ժամանում 1470 թ. Փետրուարին: Այստեղ ներկայանալով հանրապետութեան կառավարութեանը, դեսպանութեան անդամներն առաջարկում են զինակցութիւն եւ պատւաւոր դաշնակցութիւն կնքել Թուրքիայի եւ Եգիպտոսի սուլթանի դէմ, պայմանով, որ վենետիկցիները չթերանան իրենց նաւատորմով յարձակելու նրանց վրայ: [4, էջ 158].

Պատասխան նամակում Վենետիկի դուժը շնորհակալութիւն էր յայտնում Ուզուն Հասանին իր որդու գլխաւորութեամբ դէպի Ղարաման (Իկոնիայի եւ Կիլիկիայի շրջանում) 40 հազարանոց բանակ ուղարկելու կապակցութեամբ, միեւնոյն ժամանակ վերապահում անելով, որ այդ զօրքերը քիչ են յաջողութեան գրաւական ունենալու համար:

Խոջա Միրաքը եւ դեսպանութեան անդամներն այնուհետեւ մեկնում են Հռոմի պապի եւ Նեապոլի թագաւորի մօտ, նրանց եւս առաջարկելով նոյնպիսի դաշինք: Այդ բանակցութիւններից յետոյ թէեւ յայտարարուեց, որ Վենետիկի հանրապետութեան, Նեապոլի թագաւորութեան, Հռոմի պապի, Հունգարիայի, Աղ-Կոյունլուների պետութեան, Ղարամանիայի (Եւրոպական աղբիւրներում յիշատակւում է Կարամանիա ձեւով) եւ Կիպրոսի (Լուսինեանների պետութեան) մասնակցութեամբ ստեղծուել է հակա օսմանեան լիգա [29, 28], սակայն այն հանդիսացաւ մեռելածին մի մանուկ եւ մնաց միայն թղթի վրայ:

Թէեւ առանձին էտապներում Վենետիկի եւ Աղ-Կոյունլու պետութեան ռազմական համագործակցութիւնը Թուրքերի դէմ նշանաւորուեց մի շարք յաղթանակներով (Կիլիկիայում, Փոքր Ասիայում եւ այլն) սակայն ընդհանուր առմամբ այն ի վիճակի չեղաւ հանգեցնելու կայուն ռազմական դաշինքի կնքմանը:

1473 թ. Օգոստոսին Դերջանի ճակատամարտում Ուզուն Հասանը դաժան պարտութիւն կրեց Թուրքերից: Այդ պարտութիւնը խիստ բացասական ազդեցութիւն ունեցաւ նրա պետութեան համար, որը սկսեց արագօրէն ենթարկուել կազմալուծման:

Անգուսպ տարրերը սանձից արձակուեցին:

Բնականաբար նման իրավիճակի առաջին զոհերն էին հանդիսանալու այլադաւան ունեւոր տարրերը: Եւ 1486 թ. Մարտի 24-ին Խոջա Միրաքը Թաւրիզում զոհ է դառնում ընչաքաղց տեղական տիրակալների անզուսպ ագահութեանը, որոնք սպանում են 80-ամեայ Ծերունուն:

Մխանգամայն հասկանալի է, որ այս կարգի դաժանութիւնները ի վիճակի չէին այդ քայքայող պետութեան մէջ վաճառականական դասի, առաւել եւս քրիստոնեայ հայ վաճառականութեան համար, ստեղծել արդիւնաւէտ գործունէութեան կայուն երաշխիքներ:

Դեռեւս XV դարի սկզբին Ատրպատականի հիւսիս-արեւելեան շրջաններում աննախընթաց կերպով մեծացաւ Սէֆեան աւատատէրերի ազդեցութիւնը: Արդէն դարի երկրորդ կէսին ղզլբաշները Սէֆեանների գլխաւորութեամբ Ատրպատականում պայքար ծաւալեցին Աղ-Կոյունլու եւ Ղարա-Կոյունլու թուրքմէնական դինաստիաների դէմ, ձգտելով Իրանում հաստատել իրենց տիրապետութիւնը: Այդ պայքարը եռանդուն աջակցութիւն էր գտնում թուրքմենական քոչոր ազնւականութեան իշխանութիւնից դժգոհ մանր ու միջին աւատատէրերի, ինչպէս նաեւ վաճառականութեան, այդ թւում նաեւ հայ առեւտրական դասի եւ նրա հետ կապւած հոգեւորականութեան կողմից, որոնք շահագրգռւած էին միջաւատական երկպառակտութիւնների վերացման, կենտրոնական իշխանութեան ամրապնդման եւ կարաւանային ճանապարհների անվտանգութիւնն ապահովելու հարցերում:

Օգտագործելով իր հակառակորդների միջեւ գոյութիւն ունեցող երկպառակութիւնները, Սէֆեան չէյխերից մէկի՛ Հայդարի որդի Իսմայիլը սկզբում ջախջախեց Սէֆեանների ոխերիմ թշնամիներից մէկին՝ Ֆարուխեասարին, իսկ այնուհետեւ 1501-1502 թ. Աղ-Կոյունլու սուլթան Ալւենդի զօրքերին: 1502 թ. Իսմայիլը իրեն յայտարարեց Իրանի շահ, հիմք դնելով կառավարող մի նոր հարստութեան,որը կոչւեց Սէֆեան կամ Սեֆեւեան: 1503 թ. նա ջախջախեց սուլթան Մուրադ Աղ-Կոյունլուին եւ գրաւեց կենտրոնական ու արեւմտեան Իրանը: Այնուհետեւ շարժւելով դէպի արեւելք, շահ Իսմայիլը 1510 թ. ջախջախեց ուզբեկական ցեղերի առաջնորդ, Մուհամմեդ Շէյբանի խանի զօրքերին եւ գրաւեց ողջ Խորասանը, ինչպէս նաեւ ընդհուպ մինչեւ Ամու-Դարեա ընկած հողերը:

Իրանի նոր տիրակալը՝ շահ Իսմայիլը (1502-1524) իր գահակալութեան առաջին իսկ օրերից հայ վաճառականական դասի նկատմամբ դրսեւորում էր բարեացակամ վերաբերմունք: Հայկական աղբիւրներում նրա այդ հակումը բացատրւում է նրանով, որ դեռեւս մինչեւ իր գահակալութիւնը Աղ-Կոյունլու փաղիշահները եւ Շիրւանշահերի կառավարիչները ցանկանում էին որսալ ու ոչնչացնել գահի այդ վտանգաւոր հակառակորդին: Նրա կեանքի այդ ամենավտանգաւոր պահին հայ վաճառականները հասնում են օգնութեան եւ թաքցնում Ախթամարի հայ հոգեւորականութեան մօտ: Հետագայում դաժանօրէն հետապնդելով իր քաղաքական հակառակորդներին եւ նրանց դաւանած սունիի աղանդը, երախտապարտ շահը իրր թէ ամէն կերպ հովանաւորում ու արտօնութիւններ էր շնորհում հայ առեւտրական ու հոգեւոր դասին:

Այս պատմութիւնը, որն իրօք ունի իրական պատմական հիմք, անշուշտ բանալի չի հանդիսանում հաւաստի բացատրութիւն տալու համար հայ վաճառականական դասի նկատմամբ երիտասարդ շահի շեշտւած բարեացակամ վերաբերմունքին: Պարզապէս լինելով շրջահայեաց ու հեռատես քաղաքական գործիչ, շահ Իսմայիլը յաւուր պատշաճի գնահատում էր հայ վաճառականական եւ հոգեւոր դասի դերը իր նորաստեղծ պետութեան տնտեսական ու քաղաքական հեռահար ծրագրերի տեսակէտից:

Սէֆեան պետութիւնը արագօրէն դառնում էր Մերձաւոր Արեւելքում եւ Անդրկովկասում տնտեսական եւ քաղաքական առաջնութիւն ձեռք բերելու պայքարում Թուրքիայի հիմնական ախոյեանը: Նախ յաջողութեամբ շարունակւում էր նրա նւաճողականութիւնը: 1507 թ. Սէֆեանները գրաւեցին Հայաստանը, իսկ 1508 թ. Բաղդադը եւ Արաբական Իրաքը: Այնուհետեւ մինչեւ հետամուտ լինելով իր համար ռազմական փառքի ստեղծմանը, շահը միաժամանակ ձգտում էր առեւտրի բնագաւառում եւս նեղել իր ախոյեանին: Շահը անձամբ բնաւ չէր խորշում առեւտրից: Նա ոչ միայն ինքն էր հանդէս գալիս որպէս ձեռներէց առեւտրական, այլեւ աշխատում էր խրախուսել առեւտուրը իր պետութեան մէջ: Շահ Իսմայիլ Իրը իր առջեւ նպատակ էր դրել հսկողութիւն սահմանել Առաջաւոր Ասիայի ստրատեգիական հանգոյցների, ինչպէս եւ Հնդկաստանից ու Միջին Ասիայից դէպի լեւանտեան նաւահանգիստները տանող առեւտրական ուղիների նկատմամբ:

Ժամանակակից թուրք պատմաբան Խալիլ Ինալչիքը նշում է,

որ Հայն բոլոր ուղիները, որոնցով իրանական մետաքսը արտահանուում էր Եւրոպա, անցել էր Թուրքերի ձեռքը: Զբաւարարւելով սոսկ առեւտրական ճանապարհների վրայ ունեցած հսկողութեամբ, Թուրքերը XVI դարում փորձեր էին կատարում գրաւել եւ իրենց տիրոյթներին միացնել հիւսիսային Իրանի մետաքս արտադրող այնպիսի կենտրոններ, ինչպիսիք էին Շիրւանը եւ Գիլեանը»: [30, էջ 4]

Նոյն հեղինակը զարգացնում է նաեւ այն միտքը, որ Թուրքիան ձգտում էր իր բաժինը ստանալ ոչ միայն իրանական հում մետաքսի առեւտրից, այլեւ կենտրոնական Ասիայի, Հնդկաստանի ու Չինաստանի հետ կատարւող առեւտրափոխանակութիւնից: [14, էջ 210-211]

Սակայն Օսմանեան կայսրութեան այս նկրտումները հանդիպում էին Սէֆեանների կատաղի դիմադրութեանը: Նրանք Իրանի մետաքսառատ շրջանները իրենց հսկողութեան տակ պահելու հարցը համարում էին կեանքի ու մահու խնդիր: Սէֆեան շէյխերի ձեռքում էր գտնւում Գիլեանի մետաքսի մենաշնորհը: Տիրանալով այդ մետաքսառատ շրջանին, նրանք այնուհետեւ ձեռք կարկառեցին Շիրւանի մետաքսին՝ բազմիցս պատերազմելով Շամախիում նստող շիրւանշահերի հետ: Այսպէս, դեռեւս 1488 թ. Արդաբիլում իշխող զզլբաշների ցեղապետը՝ Շէյխ Սէֆին յարձակում գործեց Շամախու վրայ, սրի քաշելով այդ քաղաքի մարդկանց [31, էջ 1160]. 1519 թ. Սէֆեանները գրաւեցին մետաքսառատ շրջաններից մէկը՝ Վրաստանը, որից յետոյ հնազանդեցրին նաեւ Շիրւանի խանութիւնը:

Այսպէս 1538-1539 թ.թ. Շիրւանը կրկին ապստամբեց շահ Թահմազի դէմ: Այս անգամ շարժումը ղեկավարում էր արդէն իր մահկանացուն կնքած շիրւանշահի Ֆարուխ Եասար որդին՝ Շահրոխը: Ապստամբութիւնը արեան մէջ խեղդեց շահ Թահմազի եղբայրը՝ Ալխազ Միրզան: Շիրւանի ազնուականական դասի ընտրանին, մօտ 600 մարդ, անխնայ սրի քաշւեցին: Ի տրիտուր իր կատարած կարեւոր գործի, Ալխազ Միրզան ստացաւ Շիրւանը որպէս անձնական տիրոյթ: [32, էջ 572] Իր հակառակորդների դէմ մղած պատերազմներում շահ Թահմազը այնուհետեւ իրեն ենթարկեց նաեւ մետաքսաբեր միւս շրջանները՝ Շաքին, Գանձակը եւ Արցախը: Գիտակցելով առեւտրի նշանակութիւնը պետութեան տնտեսական, քաղաքական ու ռազմական հզօրացման գործում, շահ Թահմազն աշխատում էր դիւրութիւններ ստեղծել ներքին առեւտրի ծաւալման համար: Նրա հրամանով կարաւանային առեւտրի

կայաններում փորում էին ջրհորներ, կառուցում քարաւանսարաներ, անողոք պայքար էր մղում աւազակախմբերի, ինքնապաստան ու սանձարձակ ցեղապետերի դէմ եւ այլն:

Այդ առթիւ ուշագրաւ տեղեկութիւններ է յայտնում Զաքարիա Սարկաւագը «Եւ ուղղեաց զամենայն կարգս քաղաքական, զմոթս, զկապիճս, զչափ ու կշիռս եւ զամենայն արուեստաւորս, զկրպակս, զպանդոկս եւ որ յայլ ինչ քաղաքի լինի առեւտուր ի գնել եւ ի վաճառել եւ զանուղիղսն կորուսանէր մահուամբ: Եւ ոչ կարէր թիւրել, զի չարամահ առնէին» [33, էջ 10-16]

Շահի հրամանով 1564 թ. վերացուեցին նաեւ ուղեհարկերը (դամղա):

Եթէ մետաքսի խնդիրը լուծելու հարցը երկրի ներսում համեմատաբար հեշտ յարդարող խնդիր էր, ապա արտաքին առումով այն պահանջում էր խոշոր ջանքեր: Այդ դժուարութիւնը յաղթահարելու համար իր սկզբնաւորման առաջին իսկ օրերից Սէֆեան պետութիւնը ստիպած էր մարտնչել օսմանցիների կենտրոնացած ու հզօր պետականութեան դէմ, որը երկաթեայ ձեռքով եւ արթուն հսկում էր դէպի Արեւմուտք տանող կարաւանային առեւտրական ճանապարհների վրայ, միաժամանակ անզուսպ ձգտում դրսեւորելով շարժւելու դէպի Արեւելք եւ տէր դառնալու մետաքսին, իր ժամանակի այդ փափուկ ոսկուն:

Գերագանցապէս ահա այս հողի վրայ 1514 թւականից ծայր են առնում թուրք-իրանական պատերազմները, որոնք առանձին ընդմիջումներով շարունակւում են մօտ մէկ ու կէս դար:

Պատերազմող կողմերը ձգտում էին տիրանալ Արաբական Իրաքին, Հայաստանին, Ատրպատականին, Անդրկովկասին ու Դաղստանին, հաստատել իրենց տիրապետութիւնը Հայաստանի եւ Իրանի վրայով անցնող առեւտրական ճանապարհների վրայ, իրենց ձեռքը վերցնել մետաքսի արտադրութեան հիմնական կենտրոնները հիւսիսային Իրանում ու Անդրկովկասում եւ այլն:

Այդ պատերազմների ժամանակ, բնականաբար, կասեցւում էր հայ վաճառականութեան առեւտուրը եւ վաճառականական դասի համար ստեղծւում էր կեանքի եւ գոյքի ծայրահեղ անապահովութեան վիճակ: Այսպէս, օրինակ, հայկական յիշատակարաններից մէկում կարդում ենք, որ շահ Խուդաբանդէի (1578-1587) տիրամէկում կարդում ենք, որ շահ Խուդաբանդէի տիրապետութեան օրօք, երբ թուրք-օսմանները արշաւեցին դէպի Անդրկովկաս, այդ խառնակ շրջանում առաւել շատ տուժեցին ջուղայեցիները, որոնք ստիպած էին լքել իրենց քաղաքն ու փախչել

Ագուլիս։ «Արդ նորոգեցաւ սուրբ աւետարանս ի թին Հայոց ույզ (1584)։ Գերի էր ի ձեռն այլազգեաց. ես Ջուղայեցի խոջա գրումս առի վերստին... ի թագաւորութեան շահի Խուդաբանդային, ի հայրապետութեան էջմիածնեայ Տէր Գրիգոր կաթողիկոսին, ի տանուտէրութեան Ջուղայի Մալա Պետրոսին։ Խիստ դառն ժամանակ էր։ Ջուղայ փախել էր Ագուլիս, եւ ես խոջա Գրումս առի սուրբ աւետարանս եւ ետու Սուրբ Աստծոյին վախ։» [21, էջ 31]

Այսպիսով իր ձեւաւորման ու զարգացման հէնց սկզբնական շրջանից «խոջաների» դասը ստիպած էր գործել ծայրահեղ դժուարին պայմաններում։ XVI դարի սկզբից Հայաստանի զոյգ հատուածներում էլ տիրում էր աղէտալի վիճակ։ Հայ ժողովրդի բնօրրանը դարձել էր ռազմական գործողութիւնների թատերաբեմ Մերձաւոր արեւելքի հզօրագոյն տէրութեան՝ Օսմանեան Թուրքիայի եւ Առաջաւոր Ասիայում քաղաքական առաջնութեան ձգտող Սէֆեան Իրանի միջեւ։

Հայաստանի տարածքում վայկատուն ցեղերի էթնիկական նուաճողականութիւնը ուղեկցւում էր նստակեաց բնակչութեան զանգւածային ջարդերով։ Գերեվարութիւնների, տարագրութիւնների եւ ամէն տեսակի բռնութիւնների հետեւանքով հայ բնակչութիւնը դուրս էր մղւում հայրենի բնօրրանից։

Հայ վաճառականները եւս ժամանակի չփոթ վիճակից եւ տեւական հալածանքներից ու ծանր հարկապահանջութիւնից ազատուելու ցանկութեամբ, լքելով իրենց հայրենիքը, երեք թեւերով հեռացել են։ Հիւսիս-արեւմտեան ուղղութեամբ անցել են Իտալիա, գլխաւորապէս Վենետիկ եւ Լիւոնոն, ինչպէս նաեւ Հոլանդիա։ Ուղղւելով դէպի Արեւելք, նրանք անցել են Իրան, Հնդկաստան եւ մինչեւ Հեռաւոր Արեւելք։ Դէպի հարաւ ընտրել են Հալեպը, մասամբ հաստատւելով նաեւ Զմիւռնիայում։ [34, էջ 286]

Այսպիսով առեւտրով զբաղւելը հայ ժողովրդի համար մի կողմից դառնում էր գոյութիւնը պահպանելու եւ հարստութիւն կուտակելու միջոց, իսկ միւս կողմից նպաստում էր Հայաստանի հայաթափ լինելուն։

Հայաստանի տնտեսական ու քաղաքական մասնատուածութեան պայմաններում երկրի զոյգ հատուածներում էլ գոյութիւն չունէին քիչ թէ շատ ուժեղ իշխանութիւններ, որոնք ի վիճակի լինէին համախմբելու ժողովրդին եւ դառնալու ազգային անկախութեան յենարաններ։ Իսկ ազգային եկեղեցին, որը պետականութիւնից զուրկ ժողովրդի համար սովորաբար դառնում

է ազգի բնական առաջնորդ, 16-րդ դարում նույնպէս ի վիճակի չէր ազգային հաւաքականութեան անունից հակադրելու օտար նաճողներին, մանաւանդ որ այդ շրջանում խաթարւել էր հայ ազգային-եկեղեցական կազմակերպութեան միասնութիւնը: Հայ առեւտրական դասը, որի շահերը տուժել էին Հայաստանում տեղի ունեցող գործողութիւններից, սկսեց դժգոհութիւն դրսեւորել իր գործունէութեան ազատութիւնը կաշկանդող օտար ծի նկատմամբ: Որքան նա հարստանում էր ու ձեռք բերում նիւթական ուժ, այնքան աւելի ցայտուն էին դրսեւորւում նրա այդ տրամադրութիւնները: Հայ խոջայութիւնն աստիճանաբար սկսում է հետաքրքրութիւն դրսեւորել նաեւ սեփական ժողովրդի քաղաքական կեանքի նկատմամբ, յատկապէս մտահոգւելով նրա իրաւագուրկ վիճակով: [36, էջ 98]

Թուրք-իրանական պատերազմները ոգեւորիչ ներգործութիւն ունեցան եւրոպական տէրութիւնների վրայ, որոնք նոր յոյսեր սկսեցին փայփայել, թէ վերջապէս հասել է Արեւելքից եւ Արեւմուտքից օսմանցիներին կրակէ օղակով սեղմելու ժամը: Նորից իրանա-եւրոպական հակաթուրքական դաշինք կնքելու հարցը դարձաւ օրակարգի հրատապ խնդիր: Ցայտնի է, օրինակ, որ Վենետիկի հանրապետութիւնը Եւրոպա ժամանած հայ վաճառականների միջոցով տեղեկութիւններ էր հաւաքում Իրանում հիմնադրւած նոր պետութեան մասին: Այսպէս, երբ 1503 թ. Մուրատ հիմնադրւած նոր պետութեան մասին: Այսպէս, երբ 1503 թ. Մուրատ Անկիւրացին Թաւրիզից ժամանում է Վենետիկ, հանրապետութեան սենատը նրանից աշխատում է տեղեկութիւններ քաղել Սէֆեան պետութեան եւ նրա մղած պատերազմների վերաբերեալ: [28, էջ 204-205]

Դա Վենետիկի համար կենսական անհրաժեշտութիւն ունեցող խնդիր էր, որովհետեւ Կոստանդնուպոլսի անկումից յետոյ Վենետիկեան հանրապետութիւնը պարբերաբար պատերազմներ էր մղում Օսմանեան Թուրքիայի դէմ: «Իտալական միւս խոշոր կենտրոնների պէս XV դարի կէսերից ի վեր հետզհետէ կորցնելով միջազգային առեւտրի մէջ ունեցած իր իշխող դիրքը այդ պատերազմների միջոցով Վենետիկն ապարդիւն ջանք էր թափում վերականգնելու Մերձաւոր Արեւելքում կորցրած իր կշիռը եւ կասեցնելու Միջերկրականի վրայով տեղի ունեցող առեւտրի ճակատագրական վայրէջքը: [17, էջ 66-67]

Իր հերթին Սէֆեան պետութիւնը հիանալի գիտակցում էր, որ դժւար է միայնակ պայքարել մի այնպիսի ահարկու թշնամու դէմ,

ինչպիսին Օսմանեան կայսրութիւնն էր: Այդ պատճառով այն եւս յանձինս եւրոպական պետութիւնների փնտրում էր դաշնակիցներ: Դեռեւս շահ Իսմայիլը բանակցութիւններ սկսեց Վենետիկի հետ, փորձելով նրա հետ կնքել հակաթուրքական դաշինք: [36, էջ 276]

Հայ վաճառականները կամովին ընդգրկւում էին այդ բանավարութիւնների մէջ, հետապնդելով առաւելապէս ազգային շահեր: Բանը նրանում էր, որ 16-րդ դարում վերստին արծարծւում էր Արեւմուտքի քրիստոնեայ պետութիւնների օգնութեամբ Հայաստանն ազատագրելու գաղափարը: 1547 թ. Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը գումարեց յատուկ խորհրդաժողով, որը որոշում է պատւիրակութիւն ուղարկել Արեւմուտք՝ Հայաստանի վիճակի բարւոքման շուրջը բանակցութիւններ վարելու: Հայկական կղերը փորձել է խորհրդաժողովի գումարման նախաձեռնութիւնը վերագրել իրեն: Մինչդեռ իրականում այն պատկանում էր հայ առեւտրական կապիտալի ներկայացուցիչներին: «Այսպիսով մի դիւանագիտական առաքելութիւն հնարաւոր դարձնողն ընդհանրապէս հայ առեւտրական կապիտալն էր եւ մասնաւորապէս նրա արեւելեան խոշոր ճիւղը, խոջայական կապիտալը...» գրում է Լէոն: [26, էջ 116]

1562 թ. Միքայէլ Սեբաստացի կաթողիկոսը որոշում է Արեւմուտք ուղարկել մի նոր պատւիրակութիւն՝ Արգար Թոխաթեցու գլխաւորութեամբ: Ակներեւ է որ Արգարը եւ իր գործակիցները մերձաւոր կապեր ունէին ոչ միայն հայ եկեղեցական խաւերի, այլեւ հայ խոջայական վերնաշերտի հետ: [17, էջ 69]

Հարկ է նշել, որ հայ վաճառականների քաղաքական ակնկալութիւններն Արեւմուտքի տէրութիւններից պատահական չէին նաեւ այն պատճառով, որ հայ առեւտրավաշխառուական կապիտալը սերտ համագործակցութեան մէջ էր եւրոպական կապիտալի հետ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հայ ազատագրական միտքը ամենից վաղ ծնունդ է առել առեւտրական բուրժուազիայի՝ խոջայութեան շրջանում: Հէնց այս դասն է, որ ասոիճանաբար համակւելով հայ բնաշխարհն ազատագրելու տրամադրութիւններով, սկսում է տոն տալ նաեւ այդ նպատակով ձեռնարկւող բանակցութիւններին: [35, էջ 99]

Եւրոպական պետութիւնների հետ բանակցութիւններ վարելու համար Սէֆեաններն աւելի յաճախ դիմում էին իրանահայ վաճառականներին: «Թուրքիայի դէմ պայքարելու համար կարիք

զգալով մի շարք եւրոպական տէրութիւնների աջակցութեանը Սէֆեաններն այդ նպատակով հաճոյքով օգտւում էին քրիստոնեայ դիւանագիտական գործակալների՝ հայ վաճառականների ու հոգեւորականների ծառայութիւններից: [38, էջ 182]

Յայտնի է, օրինակ, որ արդէն 1506 թ. Կոստանդնուպոլսում դատում եւ գլխատում են Էջմիածնի նեւիրակներին՝ Սէֆեանների օգտին լրտեսութեան մեղադրանքով: Ղ. Ալիշանը բերում է բազմաթիւ փաստեր, որոնք վկայում են, որ, օրինակ, Հին Ջուղայի վաճառականները կատարում էին շահի դիւանագիտական յանձնարարութիւնները: [28, էջ 372]

Իր հերթին Վենետիկի հանրապետութիւնը Սէֆեանների հետ դիւանագիտական յարաբերութիւններում յաճախակի դիմում էր հայ վաճառականների ծառայութիւններին: Այսպէս, Վենետիկի հանրապետութեան արխիւային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 1571-1572 թ.թ. շահ Թահմասպ Բ-ի մօտ ուղարկւած Վենետիկեան դեսպան Վինչենցո դ'Ալեսսանդրին իր բանակցութիւնների ժամանակ օգտւում էր Ջուղայեցի վաճառականների աջակցութիւնից: [29, էջ 31, 33-34] Այդ վաճառականների գլխաւորներից Միրիջանը եւ Մարութան Վենետիկի դեսպաններին յայտնում են, որ վաճառականի անւան տակ Վենետիկ են մեկնել իրենց երկու ներկայացուցիչները, որոնք ունեն գաղտնի առաքելութիւն: Մասնաւորապէս նրանց յանձնարարւած էր Վենետիկի հանրապետութեանը հաղորդել, որ պարսից շահը պատրաստւում է օսմանցիների դէմ պատերազմի եւ որ Թուրքիայի մզկիթներում աղօթում են, որպէսզի թուրքերի եւ պարսիկների միջեւ եղած հաշտութիւնը չխախտի, որպէսզի իրենց նաւատորմը նոր փորձանքի չենթարկւի քրիստոնեաների կողմից: [37, էջ 386]

Սակայն հայ վաճառականների բանավարութիւնները աւարտեցին ապարդիւն, որովհետեւ այդ շրջանում իրանաեւրոպական քաղաքական դաշինքի կնքումը վիճակւած չէր կեանքում կենսագործւելու: Կարեւորը այն էր, որ այդ բանավարութիւնների ժամանակ հայ վաճառականները աւելի մօտիկից էին ծանօթանում Եւրոպայի շուկայական պայմաններին, նրանցում արեւելեան ապրանքների պահանջարկին, ծանօթանում էին Եւրոպայում ընդունւած առեւտրի ձեւերի հետ, համագործակցութեան մէջ էին մտնում եւրոպական առեւտրական ընկերութիւնների ու վարկաւորող հաստատութիւնների հետ եւ վերջապէս կապեր էին հաստատում եւրոպական պետութիւնների

կառավարող շրջանների հետ, որն այնքան անհրաժեշտ էր նրանց առևտրական գործառնությունների ծաւալման համար: Արդէն XVI դարի կէսերից Ջուղայի վաճառականների առևտրական գործունէութեան սահմանները տարածւում էին Հնդկաստանից, Չինաստանից, Հեռաւոր Արևելքից, Հարաւ-Արևելեան Ասիայից, Կենտրոնական ու Միջին Ասիայից մինչեւ Լեւանտ եւ Արեւմտեան Եւրոպայի երկրներ: Նրանց էր պատկանում նաեւ Իրանի հում մետաքսի արտահանման առաջնութիւնը դէպի Լեւանտի առեւտրական կենտրոնները:

Անգլիական այսպէս կոչած «Մոսկովեան» ընկերութեան ծառայող Արթուր Էդուարդսը վկայում է, որ XVI դարում միայն Ջուղան Հալեպ էր արտահանում տարեկան 400-500 ջորու բեռ մետաքս եւ այնտեղից բերում էր 800-1000 ջորու բեռ անգլիական եւ վենետիկեան մահուդ: [39, էջ 46] Այդ նոյն ընկերութեան մէկ այլ ծառայող՝ Լօրենս Չեպմէնը, վկայելով որ Սէֆեան պետութիւնից մետաքսը սիրիական Հալեպ եւ Տրիպոլի քաղաքներն էր բերւում հայերի կողմից, նշում է, որ ջուղայեցիները երբեմն այդ քաղաքներն էին բերում մինչեւ 1000 ջորու բեռ մետաքս: [39, էջ 45] Նման վկայութիւններ մենք գտնում ենք նաեւ XVII դարի անգլիացի ուղեգիր Ջոն Քարտրայտի մօտ: Մասնաւորապէս նրանից տեղեկանում ենք, որ ջուղայեցիները միայն Շիրւանից տարեկան 500, իսկ երբեմն նոյնիսկ 1000 ուղտաբեռ հում մետաքս էին հանում Հալեպ: [40, էջ 601] Բուրսայում Մեդիչիների եւ Ֆլորենտինեան միւս տների ներկայացուցիչը 1501 թ. նշում էր, որ Իրանից ամէն տարի Բուրսա են ժամանում մեծ քանակութեամբ մետաքսով բեռնւած կարաւաններ: Նրա հաշւետուութիւններից երեւում է, թէ ինչպիսի անհամբերութեամբ էին վաճառականները սպասում այդ կարաւանների ժամանելուն եւ ինչպիսի արագութեամբ էին գնում բերւած ապրանքները: Վաճառականները ստանում էին առատ վարձատրութիւն, քանի որ Իտալիայում մետաքսի իւրաքանչիւր ֆարդելլոն (մօտ 150 կիլոգրամ) բերում էր 70-80 դուկատ մաքուր եկամուտ:

Ջուղայեցի վաճառականները հանդէս էին գալիս այն աստիճանի կազմակերպւած ձեւով, որ անգլիացիները ստիպւած էին խոստովանել, որ «վենետիկցիների եւ հայերի ընկերութեան միջեւ առեւտուրը ամբողջութեամբ խափանելը անհնարին է:» Ղազւինից Լոնդոն՝ անգլիական առեւտրական կենտրոնի հասցէով գրւած նամակում Լօրենս Չեպմէնը նշում էր, որ այդ բանը թերեւս

հնարաւոր կլինի իրականացնել, եթէ «դուք միջոցներ գտնէք հայերից տարեկան ընդունելու 100 հակ եւ փոխարէնը նրանց վճարելու դրանց արժէքի մէկ երրորդը դրամով, իսկ մնացածը կտորեղէնով՝ քրսէյով կամ մետաքսեայ կտորներով»[4, էջ 411]

XVI դարի վերջին Մերձաւոր ու Միջին Արեւելքի երկու հզօրագոյն պետութիւնները՝ Օսմանեան Թուրքիան եւ Սէֆեան Իրանը շարունակում էին պատերազմները, փորձելով գէնքի օգնութեամբ լուծել իրենց համար կենսական նշանակութիւն ունեցող ռազմական, քաղաքական, տնտեսական, տարածքային եւ գաղափարական մի շարք հարցեր: 1532-1534, 1548, 1553 թ.թ. ընթացքում թուրքական զօրքերը բազմիցս ներխուժեցին Սէֆեանների տիրոյթները: 1576 թ. շահ Թահմասպ Բ-ի (1524-1576) մահից յետոյ, օգտուելով Սէֆեան պետութեան ներսում ծայր առած ներքին խռովութիւններից եւ 1577 թ. յունուարին աւարտելով պատերազմը Հաբսբուրգների գերմանական կայսրութեան հետ, Թուրքիան 1578 թ. հերթական յարձակում ծաւալեց Իրանի դէմ: Պատերազմը էլ աւելի խթանեց զգլրաշական ազնուականութեան տարբեր խմբաւորումների միջեւ վաղուց ի վեր ծայր առած երկպառակտութիւնները: 1576 թ. գահ բարձրացաւ շահ Իսմայիլ Բ-ը, որին նրա հայրը, շահ Թահմասպը քսան տարի շարունակ բանտարկած էր պահում կահկահէ կոչած ամրոցում: Կարճ եղաւ նրա գահակալութիւնը: 1578 թ.-ին նրան թունաւորեցին: Իսմայիլին փոխարինեց նրա եղբայրը՝ անկամ ու հիւանդոտ Մուհամմեդը, որին տալ էին «Խուդաբանդէ» (Աստծոյ ծառայ) մականունը: Վերջինս Սէֆեան գահի վրայ նստեց մինչեւ 1587 թ.:

Ծայրահեղ ծանր վիճակ էր ստեղծւել նաեւ Իրանի ներքին կեանքում: Այդ երկրի աւատական տնտեսութիւնը, հոգի հարկային քաղաքականութեան հետեւանքով ապրում էր լուրջ ճգնաժամ: Համարեա անընդմէջ տեղի էին ունենում միջաւատական երկպառակտութիւններ, բռնկում էին գիւղացիների եւ արհեստաւորների ապստամբութիւններ, ծայրամասային աւատատէրերի խռովութիւններ, քոչւորական ցեղերի զինւած ելոյթներ եւ այլն: Տնտեսական ճգնաժամը յատկապէս բացասաբար ազդեց երկրի ներքին եւ արտաքին առեւտրի վրայ: Կարեւորագոյն առեւտրական ճանապարհները դէպի արեւմուտք՝ Հալեպ եւ դէպի հարաւ՝ Պարսից ծոցի Հորմոզ նաւահանգիստը միանգամայն լքւած էին: Գանձարանը լրիւ դատարկ էր: Պետութիւնը կանգնած էր ոչ միայն տնտեսական կրախի, այլեւ պետական փլուզման եզրին:

1578 թ. Ռումլու եւ Ուսթաջլու թուրքալեզու հզօր ցեղերի առաջնորդների ճնշման հետեւանքով շահ Սուլթան Մուհամմեդ Խուդաբանդէն գահը զիջեց իր 17-ամեայ կրտսեր որդուն՝ շահ Աբբաս Իին (1587-1629), որը Իրանի պատմութեան մէջ մտել է «Շահ Աբբաս Մեծ» անունով:

1590 թ. Մարտի 21-ին Կոստանդնուպոլսում Սէֆեան պետութիւնը ստիպւած էր Օսմանեան Թուրքիայի հետ ստորագրել հաշտութեան ծանր պայմանագիր, ըստ որի Արեւելեան Վրաստանը, Արեւելեան Հայաստանը, ողջ Ատրպատականը, բացառութեամբ Արդեբիլի եւ Թալիշի, ինչպէս նաեւ Լօրեսթանի մի մասը անցնում էին Թուրքիային: [41, էջ 231] Երիտասարդ շահը խաղաղ դադարն օգտագործեց երկրի ռազմական եւ վարչական համակարգը վերակառուցելու եւ արեւելեան շրջանները գրաւած ուզբեկներին վռնդելու համար, որոնք լուրջ ոտնձգութիւններ էին կատարում Սէֆեան պետութեան սահմանների նկատմամբ: 1594 եւ 1597 թ.թ. նա երկու խոշոր արշաւանք կազմակերպեց դէպի Խորասան: Հերաթի մօտ տեղի ունեցած ճակատամարտում կրելով դաժան պարտութիւն, ուզբեկները ստիպւած էին հեռանալ Խորասանից: Այնուհետեւ երեք տարի անց ղզլբաշական բանակը գրաւեց Մերվը, իսկ 1602 թ. նաեւ Բալխը:

Մի քանի տարի շահը ձեռնամուխ եղաւ ներքին ապստամբութիւններն ու տեղական աւատատէրերի միջավայրական երկպառակութիւնները ճնշելուն, ինչպէս նաեւ երկրի կենտրոնացմանն ու տնտեսութեան ամրապնդմանը: Նա երկաթեայ կամքով ու անողոք դաժանութեամբ հնազանդեցրեց պետութեան ծայրամասերի անհնազանդ աւատատէրերին, որոնք մշտական կապերի մէջ էին իր թշնամիների՝ Օսմանեան Թուրքիայի, ուզբեկական խանութիւնների, Պորտուգալիայի, մասամբ նաեւ Ռուսաստանի հետ:

Տեղական աւատատէրերի կենտրոնախոյս ձգտումների դէմ պայքարելու նպատակով նրանց տիրոյթների հաշւին մեծացուցին պետական (դիւանի) եւ շահական (խասէ) հողերի չափերը: Շահը ձգտում էր սահմանափակել ղզլբաշական եւ այլ թուրքական ցեղերի ռազմական ազնւականութեան ազդեցութիւնը եւ ուժեղացնել քաղաքացիական բիւրոկրատիայի եւ շիիթական հոգեւորականութեան կշիռը պարսկական տարրերին շահին ենթակայ պետական ապարատի մէջ ներգրաւելու ճանապարհով: [42, էջ 81] Բացի այդ, Աբբաս Իը առաջ էր քաշում եւ երբեմն բարձր պաշտօններ էր շնորհում օտարազգի ծագում ունեցող եւ մասնաւորապէս հայ եւ

վրացի ծնողներից սերած զոլամներին, որոնք պարտադիր կերպով հանդիսանում էին մանկուց մահմեդականութիւնն ընդունած դաւանափոխներ:

Շահը կազմակերպեց նաեւ 15 հազարանոց մի հեծելազօր, որը դարձեալ հաւաքագրւում էր մահմեդականացած քրիստոնեաներից: Նրա մէջ մեծ թիւ էին կազմում վրացիներն ու հայերը, որոնց մանկահասակաբի միջոցով վաղ մանկութիւնից ընդգրկում էին յատուկ դպրոցներ: Այդ զինւորներին կոչում էին «զուլ», ասել է ծառայ, ստրուկ, իսկ նրանց հրամանատարին անւանում էին «զուլլար-աղասի»: Շահ Աբբասի ժամանակ «զուլլար-աղասիների» շրջանում ամենաբարձր դիրք էր գրաւում անւանի զօրահրամանատար, ծագումով հայ Այլահվերդի խանը: Հայ զոլամներից էին նաեւ Ղարչխա խանը, Շիրւանի բեկլարբէգ Իւսուֆ խանը եւ ուրիշներ: [43, էջ 17]

Շահը ստեղծեց նաեւ 12 հազարանոց հրացանակիրների («թուֆանգչի») մի հետեւակ զօրամաս, որը հաւաքագրւում էր թուրքական ենիչերիների օրինակով: Բացի այդ, անգլիացի էնտոնի Շիրլիի օգնութեամբ ձուլեցին թնդանօթներ, որով եւ հիմք դրեց Շիրլիի օգնութեամբ ձուլեցին թնդանօթներ, որով եւ հիմք դրեց պարսկական հրետանուն: Աբբաս Ի-ի իրագործած ռազմական բարեկարգումը նւազեցրեց աւատական աշխարհազօրերի նշանակութիւնը եւ թուլացրեց քոչւոր զզլբաշական եւ այլ թուրքական ցեղերի ռազմական ազնւականութեան քաղաքական դերը: Այսպիսով զզլբաշական ռազմա-քոչւորական ազնւականութիւնը, որին մինչ այդ պատկանում էր առաջատար դեր, մղւեց երկրորդ պլան:

Շահի ջանքերով պետութեան մէջ նման դեր սրուհետեւ սկսեց խաղալ պարսկական քաղաքացիական բիւրոկրատիան, որը սերտօրէն կապւած էր խոշոր վաճառականութեան վերնախաւի հետ:

Այսպիսով հենւելով պետութեան իրանական տարրի վրայ, շահ Աբբաս Ի-ը հիմք դրեց այսպէս կոչւած «Իրանականութեան» քաղաքականութեանը: [44, էջ 14]

Շահը աշխատում էր իր համար յենարան ստեղծել նաեւ պետութեան մէջ բնակւող ազգային փոքրամասնութիւններից, այդ թւում նաեւ հայերից: [44, էջ 18] Իզուր չէ, որ Յովհաննէս արեղա գրիչը (1609 թ.) շահ Աբբաս Ի-ին անւանում է «բարեկամ հայոց ազգի»: [45]

1608 թ. շահը Սէֆեան պետութեան մայրաքաղաքը Ղազւինից

տեղափոխեց Իրանի խորքը՝ պարսկական էթնոսով շրջապատված Սպահան քաղաքը: Դրանով նա ոչ միայն ցանկանում էր ամրապնդել կենտրոնական նահանգների տնտեսական ու քաղաքական նշանակությունը, այլեւ հետապնդում էր ռազմա-ստրատեգիական եւ առեւտրա-տնտեսական հեռուն գնացող նպատակներ: Նա Սպահանը վերածեց երկրի քաղաքական ու առեւտրական ակտիվության կենտրոնի: Այսուհետեւ բոլոր կարաւանները, որոնք շարժվում էին հիւսիսից հարաւ եւ արեւելքից արեւմուտք, պէտք է հատէին կենտրոնական դիրք ունեցող այս քաղաքը:

Սպահանը նաեւ իրանական հին քաղաքակրթության աչքի ընկնող կենտրոններից էր եւ չափազանց մօտ էր գտնվում առաւելապէս պարսկական էթնիկական տարր ունեցող այնպիսի քաղաքներին, ինչպիսիք էին Եազդը, Քաշանը եւ Շիրազը: Սէֆեանների նոր մայրաքաղաքում իրանական տարրը պէտք է խաղար ղեկավար դեր:

Անտարակոյս շահ Աբբասի վերոյիշեալ բարեփոխումները յարաբերականօրէն բարենպաստ պայմաններ էին ստեղծում երկրի տնտեսության, մասնաւորապէս առեւտրի ու արհեստների վերընթաց զարգացման համար: Գիտակցելով, որ պետության ուժը խարսխված է երկրի հարստության վրայ, այդ «վաճառական թագաւորը» [25, էջ 61] մեծ ուշադրություն սկսեց դարձնել առեւտրի զարգացման վրայ: Նա զբաղվում էր ճանապարհների եւ քարաւանատների շինարարությամբ, աշխատում էր պայմաններ ստեղծել կարաւանների անվտանգ երթեւեկության համար եւ այլն: Այդ բոլորը հանգեցրեց ապրանքա-դրամական յարաբերությունների աճին, ներքին շուկայի որոշ ընդլայնմանը եւ ներքին ու արտաքին առեւտրի զարգացմանը:

Ամրապնդելով իր պետությունը, շահը միաժամանակ նախապատրաստվում էր նոր պատերազմի Օսմանեան Թուրքիայի դէմ: Նա ուշի-ուշով հետեւում էր իր ախոյեանի ներքին ու արտաքին կեանքում ծաւալվող իրադարձություններին: Այդ ժամանակ Թուրքիան ապրում էր ծանր ներքին քաղաքական ճգնաժամ, XVI դարի վերջերից թեւակոխելով իր վայրէջքի ու անկման շրջանը: [46] Օսմանեան կայսրության հզօրությունը սասանել էր նաեւ Եւրոպայում ռազմական անյաջողությունների, միջազգային երկպառակտությունների եւ ջելալիների ապստամբությունների հետեւանքով, որոնք XVI դարի վերջին եւ XVII դարի

սկզբին ընդգրկել էին համարեա ողջ Անատոլիան, սպառնալով տարածուել նաեւ միւս շրջաններում: Բուն երկրում անիշխանութեան հետեւանքով միայն երկու փաշայութիւններ էին ճանաչում Բ. Դուռն իշխանութիւնը: [47, թ. 34]

Թուրքիայի հետ առաջիկայ պատերազմի հաւանականութիւնը շահ Աբբաս Իին ստիպում էր փնտրել դաշնակիցներ: XVI դարի 90-ական թուականներից նա սկսում է դեսպանութիւններ ուղարկել Եւրոպա եւ առաջին հերթին այն երկրները, որոնց անմիջականօրէն սպառնում էր Թուրքերի եւ նրանց վասալ Ղրիմի խանի ներխուժման վտանգը, կամ որոնց շահերը մեծապէս տուժել էին Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ առեւտրական ճանապարհների վրայ Թուրքերի տիրապետութեան հետեւանքով: [48] Աւելի յաճախակի, քան Սէֆեան նախկին շահերը, Աբբաս Իը սկսում է իրանա-եւրոպական բանակցութիւնների ժամանակ օգտագործել հայ բանագնացներին: Բանն այն է, որ Օսմանեան տիրապետութիւնն Անդրկովկասում յատկապէս ծանր հետեւանքներ ունեցաւ միջազգային առեւտրի հետ կապւած հայ վաճառականութեան համար՝ կասեցնելով նրանց ազատ երթեւեկութիւնը Թուրքիայի առեւտրական ճանապարհների վրայով: Հայ խոջաների դժգոհութիւնը կրկնապատկւում էր նաեւ այն պատճառով, որ շահի իշխանութեան օրօք, «Իսաս» ճանաչւած հայ վաճառականական քաղաքներ ու աւաններ Ջուղան, Ագուլիսը, Մեղրին, Շուռոթը, Աստապատը եւ այլն, որոնք ունէին մի շարք արտօնութիւններ ու իրաւունքներ, Թուրքիայի կողմից զրկւեցին դրանցից: Բնականաբար, այս պայմաններում հայ վաճառականութիւնը որոշակի յոյսեր էր կապելու հակաթուրքական դաշինք կնքելու փորձերի հետ՝ աշխատելով իր լուման ներդնել այդ գործում: Այսպէս, 1597 թ. որպէս Էջմիածնի նուիրակ, իրականում որպէս շահի դիւանագիտական յանձնակատար, Եւրոպա է ուղեւորւում Յակոբ Մարգարեան Ամդեցին: Թէ ինչպիսի լիազօրութիւններով էր նա օժտւած, յայտնի չէ, սակայն աղբիւրներից երեւում է, որ նրա առաքելութիւնը խիստ գաղտնի էր: 1597 թ. Յունիսի 22 եւ 23-ին Վենետիկի հանրապետութեան իշխանութիւնների կողմից հարցաքննութեան ժամանակ նա յայտնում է, որ իրեն Եւրոպա է ուղարկել շահ Աբբասը եւ որ Իրանից մեկնելուց յետոյ եղել է վրաց Ալէքսանդր եւ Սիմոն իշխանների մօտ, որոնք իրեն նամակներ են տուել ուղղւած Հռոմի պապին ու «առ դեսպան կայսերը ի Հռոմմ», եւ որ ինքը «թղթեր» ունի նաեւ վրաց պատրիարքից: Չխօսելով այդ «թղթերի» բովանդակութեան մասին, Յակոբ Ամդեցին միայն ասում

է, թէ իր խնդիրն է դրանք յանձնել հասցէատէրերին եւ սպասել պատասխանի։ Ընդ որում, նա չի թաքցնում, որ «ուրիշ անգամ այլ ասոնցմէ եւ Սանդա Սեւերինայի կարդինալէն թուղթեր տարած եմ առ Շահն եւ առ իշխանս եւ պատրիարքն վրաց»։ [28, էջ 353-354]

Յակոբ Ամդեցին նաեւ յայտնում է, որ իրեն նամակ յանձնած վերոյիշեալ անձիք աղաչեցին, որ պապը «աղօթք ընէ՝ որ կարենան թշնամւոյն դէմ երթալ, միանգամայն եւ կու սպասեն՝ որ արեւմտեայք նախ յաղթութիւն մի ընեն, որ իրենք ալ վստահանան»։ [28, էջ 354]

1599 թ. Յուլիսի 9-ին շահ Աբբասը Եւրոպա ուղարկեց Հուսէյն Ալի-Բէկ Բայաթի դեսպանութիւնը, որին ուղեկցում էր անգլիացի էնտոնի Շերլին։ Դեսպանութիւնն աւարտւեց կատարեալ ձախողմամբ։ [49, էջ 58] Դա ճնշող տպաւորութիւն գործեց շահի վրայ եւ նրան ստիպեց այնուհետեւ եւրոպական երկրների հետ բանակցութիւններում աւելի յաճախակի օգտւել հայ վաճառականների եւ հոգեւորականութեան ծառայութիւններից։ 1593-1606 թ.թ. թուրքաւստրիական պատերազմի շրջանում Իրանի եւ եւրոպական տէրութիւնների միջեւ աչխոյժ բանակցութիւններ էին տեղի ունենում։ Շահ Աբբասը 1600-1604 թ. Եւրոպա ուղարկեց մի քանի դեսպանութիւն։ [50, էջ 10-11] 1603 թ. Վենետիկ ուղարկւած դեսպանութեան կազմում կային երեք ջուղայեցի վաճառականներ։ [29, էջ 44, 47, 192]

Համոզւելով, որ Եւրոպա ուղարկւած դեսպանութիւնները առայժմս չեն կարող արդիւնաւէտ լինել, շահը տենդօրէն սկսեց նոր պատերազմի նախապատրաստութիւններ տեսնել Օսմանեան կայրութեան դէմ։ Ընդ որում, այդ նպատակով նա աչխատում էր իր կողմը գրաւել պատերազմի հաւանական թատերաբեմում գտնւող աւատական դասի ներկայացուցիչներին։ Այդ առթիւ Առաքել Դավրիժեցին գրում է. «...Բազումք ոմանք յաչխարհէս Ատրպատականի իշխանք եւ կողմնակալք մահմետականք եւ քրիստոնեայք, գնացեալ էին առ թագաւորն Պարսից, վասնզի յոյժ չարաչար նեղութեամբ նեղէին զնոսա ազգն օսմանցւոց ծանր հարկապահանջութեամբ, եւ կեղեքմամբ զրկէին եւ կողոպտէին, եւ հաւատոյ կուռեճութիւն (խստութիւն) առնէին, եւ այլ բազում տառապանօք չարչարէին, ոչ միայն զազգս Հայոց, այլեւ զազգն վրաց եւ զմահմետականաց, եւ վասն այնր նեղութեան գնացին առ թագաւորն Պարսից, զի թերեւս նովաւ դիւրութիւն գտցեն զեղծեալք ի ծառայութենէն Օսմանցւոց»։ [23, էջ 15]

Շահ Աբբաս Իր, որը նախապատրաստւում էր մեծ պատերազմի Թուրքիայի դէմ, սիրով ընդունում էր նրանց,

արժանացնելով մեծամեծ պատիւների եւ շնորհելով բազմապիսի իրաւունքներ ու արտօնութիւններ:

«Եւ պատճառ գնալոյ սոցա առ շահն այս էր, - գրում է Առաքել Դավրիժեցին, -զի հաւաստեաւ եւ ստոյգ գիտէին, թէ շահն պատրաստեալ է գալ յաշխարհս Հայոց... Եւ է պատճառ Դիզակեցւոց եւ դաշտեցւոց գնալն՝ ծանր հարկապահանջութիւնն, կեղեքելն եւ կողոպտելն եւ կուռեճութիւն առնելն եւ անխնայ սպանանելն զքրիստոնեայսն»: [23, էջ 15 եւ հտ.]

Իրան գաղթածների մէջ մեծ թիւ էին կազմում նաեւ մեծահարուստ հայ վաճառականները, որոնք նոյնպէս դրսեւորում էին շեշտուած զգոյշութիւն թուրքական իշխանութիւնների նկատմամբ:

Շահը յատուկ կարեկցական շնորհների արժանացրեց նաեւ փախստականների մէջ գտնուող էջմիածնի Դաւիթ եւ Մելիքսէթ կաթողիկոսներին, Հաւուց թառի Մանուէլ եպիսկոպոսին, Գեղարդի Աստուածատուր եպիսկոպոսին եւ հայկական եկեղեցու այլ բարձրաստիճան սպասաւորների, որոնք ճարահատեալ «ի հանապազորդեան անհանգստութեանց իւրեանց» 1603 թ. փախուստի դիմեցին իրենց պաշտօնավայրերից եւ ապաստան գտան շահի մօտ: Վերջինս իրենց պաշտօնավայրերից եւ ապաստան գտան շահի մօտ: Վերջինս փախստականներից տեղեկութիւններ էր հաւաքում «զեղանակ կառավարութեանն Օսմանցւոց, զվիճակ բնակչաց Հայաստանի եւ զամենայն հանգամանս այնր սահմանի»: Շահը «զայնպիսի աղմկեալ վիճակ Հայաստանի եւ զտաղտկութիւն սրտից բնակչաց այնր՝ բարեդէպ ժամանակ համարէր ինքեան արշաւելոյ ի վերայ Օսմանցւոց»: [51, էջ 10-11]

Օգտուելով Թուրքիայի ներքին քաղաքական ծանր վիճակից շահ Աբբաս Իը խախտեց 1590 թ. Թուրք-իրանական հաշտութեան պայմանագիրը եւ 1603 թ. սեպտեմբերի 14-ին ռազմական գործողութիւններ սկսեց Օսմանեան Թուրքիայի դէմ:

Պարսկական զօրքերը մուտք գործեցին Ատրպատական եւ Սեպտեմբերի 28-ին գրաւեցին Թաւրիզը: Այնուհետեւ վերցնելով Նախիջեւանը, նրանք շրջապատեցին Երեւանը, որտեղ ամրացել էր Թուրքական զօրամասը: Միաժամանակ շահը զօրքեր ուղարկեց Թուրքերի իշխանութեան տակ գտնուող այլ բնակավայրերն ու քաղաքները գրաւելու համար: Առաքել Դավրիժեցին հաղորդում է, որ ասպատակութեան ենթարկեցին Գանձակը, Արծկէն, Արճէշը, Վանը, Մանազկերտը, Ալաշկերտը, Կարինը, Կաղզվանը, Բասէնը, Խնուսը եւ նրանց շրջակայ գաւառները: [23, էջ 29-30]

Պարսիկների կողմից Երեւանը վերցնելուց յետոյ (1604 թ. յունիսին) Թուրքերն, որն այդ ժամանակ կարողացել էր վերջ տալ ներքին երկպառակտութիւններին, շահ Աբբասի զօրքերի դէմ ուղարկեց մի մեծ բանակ Ջղալ-Օղլի Սինան փաշայի գլխաւորութեամբ: 1604 թ. աշնանը թուրքական զօրքերը մուտք գործեցին Մշօ դաշտը եւ սկսեցին շարժւել դէպի Երեւան: Կշռելով ուժերի յարաբերակցութիւնը, շահ Աբբասը որոշեց նահանջել դէպի Թաւրիզ: Հէնց այդ ժամանակ նրա մօտ հասուցացաւ իր գրաւած հողերը «մեռեալ գօտու» կամ «այրւած հողի» վերածելու եւ հայ բնակչութեանը դէպի Պարսկաստանի խորքերը տարագրելու ծրագիրը, որի առաջին օրինակները տւել էին դեռեւս Աղ-Կոխնլու Ուզուն Հասանը եւ Սէֆեան շահ Թահմասպ Իր:

Նախապէս զօրամասեր ուղարկւեցին Կարս եւ մօտակայ շրջանները, որպէսզի «ռումերի (թուրքական) զօրքերի ճանապարհին քանդեն ու ոչնչացնեն բոլոր բնակավայրերը, դաշտերում չթողնեն հացի ու անասնակերի հետքեր, այդ շրջանների ռայաթ-այլազաւաններին (հայերին) տեղափոխեն այս կողմը (Իրան) եւ ոչ մի բանի առջեւ կանգ չառնեն կողոպտելու ու ոչնչացնելու համար այն մարդկանց, որոնք բարեացակամ վերաբերւելով ռումերի նկատմամբ, չեն ցանկանայ արտագաղթել»: [41, էջ 463]

Սէֆեան զօրքերին հրամայւած էր տեղահանել ինչպէս մահմեդական, այնպէս էլ քրիստոնեայ բնակչութեանը, սակայն տեղահանւածների հիմնական զանգւածը կազմեցին հայերը: Առաքել Դավրիժեցին վկայում է, որ «ոչ թէ գմի կամ գերկու գաւառս վարեաց ի պարսկաստուն, այլ զրազումս: Եւ սկսեալ ի սահմանացն Նախչուանու եւ անցեալ ընդ Եղեգաձոր, առ եդերբ Գեղամայ, եւ Լօռւոյ, եւ զՀամզաշիման գաւառն, զԱպարան, զՇարաբխանէն, զՇիրակուան, զՋարիշատ, եւ մասն ինչ ի գեղօրէիցն Կարսայ եւ զձորն Կաղզվանու բնաւին, եւ բովանդակ զերկիրն Ալաշկերտու , եւ զգեղօրայսն Մակուայ, եւ զերկիրն Աղբակու եւ զՍալմաստու, եւ զԽոյայ եւ զՈրմի եւ որ ինչ պանդուխտք եւ զարիպականք մնացեալք էին ի քաղաքն եւ ի գեղօրայսն Թարվիզու, զդաշտն Արարատու բովանդակ, եւ զԵրեւան քաղաք, զերկիրն Ղրխրուլաղայ, զՄաղկունուց ձոր, զԳառնու ձորն, զՈւրծաձորն:Եւ յառաջ քան զայս՝ զգաւառն Կարնոյ, եւ զԲասենու, եւ զԽնուսայ, եւ զՄանազկերտու, եւ զԱրծկէոյ, եւ զԱրճոյ, եւ զԲերկրու, եւ զՎանայ, աւարով եւ գերութեամբ բերեալ էին յԵրեւան, եւ ընդ սոսա քշեցին եւ տարանն»: [23, էջ 52-53]

Հայաստանից քշված բնակչութեան քանակը պատկերացնելու համար բաւական է ասել, որ միայն Արծկէից գերւած հայերի թիւը 23 հազար էր, չհաշուած սպանւածները: Ըստ Ա. Դավրիժեցու, Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստանից տեղահանւած հայ բնակչութեան թիւը հասնում էր 300 հազարի: [23, էջ 52-53] Նրանց մեծ մասը խեղդւեց Արաքսի ջրերում կամ ճանապարհներին ոչնչացաւ զրկանքներից:

Դավրիժեցին չի նշում, թէ Իրանում այդ գաղթականութիւնը որ քաղաքներում տեղաւորւեց: Նա միայն յիշատակում է, որ «զամենեսեան վարեալ քշեցին յաշխարհն Պարսից»:

Հ. Տէր Յովհաննեսեանը, առաջնորդւելով իր ձեռքի տակ եղած աղբիւրներով, ենթադրում է, որ նրանց մի մասը բնակեցւել է Քաշանում, Ղազւինում, Գիլանում, Խնդելիում եւ այլուր: Որպէս ապացոյց նա վկայակոչում է Մովսէս Եպիսկոպոսի 1762 թ. յունւարի 12-ի կոնդակը, ուղղւած յիշեալ վայրերի հայ բնակչութեանը:

«Շնորհք առաքելական եւ նամակ պահպանողական ի վերայ Մերազուն եւ հայկատոհմ համայնից ժողովրդականաց որք էք ի Քաշան՝ ի Ղազւին՝ ի Գիլան՝ ի Անզալի, ի Դարբանդ, եւ որք շուրջ զդոքօք մեծամեծ եւ մանրամասնեայ գեղորայք իցեն», - ասւում է այդ կոնդակում: [61, էջ 30]

Իրանում հայ գաղթականութեան սփռման աշխարհագրական սահմանները չէին սահմանափակւում դրանով:

Սակայն տարագրւածների հիմնական զանգւածը այնուամենայնիւ տեղաւորւեց Իրանի կենտրոնական շրջաններում եւ հէնց դրանում էր կայանում շահի այդ վիթխարի մտայղացման բուն էութիւնը: Բանը նրանում է, որ կազմակերպելով հայերի զանգւածային բռնագաղթը կամ այսպէս կոչւած «Մեծ սուրգունը», շահ Աբբաս Իր հետապնդում էր ինչպէս ռազմա-ստրատեգիական ու քաղաքական, այնպէս էլ տնտեսական նպատակներ:

Ռազմա-ստրատեգիական նպատակը միանգամայն պարզ էր՝ անապատի վերածել այն տարածքները, որոնցով անցնելու էր թուրքական բանակը: Նրա ենթադրութեամբ դա ոչ միայն կդժւարացնէր հակառակորդի զօրքերի առաջխաղացումը, այլեւ ապագայում նշանակալիօրէն կապահովէր Իրանի սահմանային շրջանների անվտանգութիւնը: Քաղաքական նպատակը նոյնքան յստակ էր. թուլացնել պետութեան ոչ իրանական էթնոս ունեցող շրջանները: Աւելի համապարփակ ու ընդգրկուն էին հետապնդւող

տնտեսական նպատակները. նախ շահը ձգտում էր մարդկային նոր գանգուածների հաշվին զարգացնել Իրանի նոսր բնակչութիւն ունեցող կենտրոնական շրջանները եւ ապա զարկ տալ երկրի առեւտրա-տնտեսական կեանքին:

Ձեռնարկելով իր մասշտաբներով այդ վիթխարի գաղթը, Արբաս Իբ հիանալի հասկանում էր, որ Իրանում նշանակալից թիւով առեւտրական ու արհեստաւորական բնակչութեան բնակեցումը դրական ներգործութիւն կունենայ ուրիշ երկրների հետ ապրանքափոխանակութեան աճի վրայ եւ կնպաստի Իրանի, մասնաւորապէս նրա կենտրոնական նահանգների, տնտեսական զարգացմանը: [42, էջ 82]

Վերջապէս հայ վաճառականական դասի օգնութեամբ Իրանի տիրակալը ձգտում էր զարկ տալ երկրի ճգնաժամի մէջ գտնուող տնտեսութեանը եւ մասնաւորապէս ծաղկեցնել լճացում ապրող երկրի արտաքին առեւտուրը ասիական եւ եւրոպական երկրների հետ: Նրա նուիրական երազանքն էր միջագգային առեւտրի կենտրոնը Զուլայից տեղափոխել Իրան, իսկ մետաքսի կարաւանային ուղիները անց կացնել իր մայրաքաղաք Սպահանի վրայով դէպի Պարսից ծոց: Այդ ծրագրի իրագործումով շահ Արբասը մտադիր էր նաեւ տնտեսական հարուած հասցնել իր ախոյեան Օսմանեան Թուրքիային, նրան զրկելով իրանական հում մետաքսի արտահանումից գանձուող հակայական մաքսատուրքերից: Հէնց այդ նպատակին հասնելու ձգտումն էր, որ շահին մղեց անապատ դարձնել այն բոլոր երկրամասերը, որոնք ընկած էին Էրզրում-Թաւրիզ առեւտրական ճանապարհի վրայ, որի վրայ կատարուող աշխոյժ առեւտրի հասոյթների մեծ մասը մտնում էին Օսմանեան գանձարան:

Իրանը մետաքսի միջագգային առեւտրի կենտրոն դարձնելու համար շահը դիմում էր ամենածայրահեղ միջոցների: Այսպէս, նա բռնագաղթի ժամանակ Անդրկովկասից 40 հազար հայ գիւղացիների, 12 հազար վրացիների եւ 7 հազար հրեաների գաղթեցրեց Իրանի մետաքսաբեր շրջաններից մէկը՝ «Դրախտանման Մազանդարանն», որը հանդիսանում էր իր անձնական տիրոյթը՝ այնտեղ մետաքսի արտադրութեամբ զբաղելու համար: [52, I, էջ 99-108] Սակայն նրանց համար այդ երկրամասը հանդիսացաւ գերեզման գաղջ օդի եւ հիւանդոտ կլիմայի պատճառով: Բացի այդ, շահի հրամանով, հետեւելով թուրքերի օրինակին, կախեցում ոչնչացուցին թթի բոլոր ծառերը, որպէսզի վերջ տրի վրաց շերամապա-

հուլթեանը: Դրանով շահը նպատակ ունէր ոչ միայն տնտեսական հարուած հասցնել Թուրքիային, այլեւ ձեռք բերել քաղաքական օգուտներ, որովհետեւ մետաքսի առեւտուրը, որը կազմում էր Վրաստանի արտաքին առեւտրի հիմքը, ամրացնում էր վրացիների՝ Մոսկովեան պետութեան հետ ունեցած կապերը:

Շահ Աբբասի վերոյիշեալ քաղաքականութիւնը առանձնակի ցայտունութեամբ դրսեւորուեց Հին Ջուղան քանդելու եւ նրա բնակիչներին Սպահան տեղափոխելու գործում:

Հարկ է նշել, որ իր գահակալութեան առաջին իսկ տարիներից շահ Աբբաս Իր ջուղայեցի վաճառականներին վերցրել էր իր հովանաւորութեան տակ: Այդ մասին է վկայում Խոջա Նազարի անունով 1592 թ. տրուած հրամանագիրը, որտեղ շահը հրամայում էր «իր պետութեան բոլոր ծառաներին» արգելք չհանդիսանալ նրա առեւտրին եւ առհասարակ չխառնուել նրա առեւտրական գործերին»: [61, էջ 158-159]

Ենթադրւում է, որ ինչպէս Ագուլիսը, Երնջակի շրջանի հայկական գիւղերը (Քրնա, Ապարաներ եւ այլն) այնպէս էլ Ջուղան համարւում էին անձեռնմխելի եւ «հաս» բնակավայրեր, այսինքն գտնւում էին շահի անձնական խնամակալութեան ու հովանաւորութեան ներքոյ եւ անմիջականօրէն նրան էլ մուծում էին հարկեր ու տուրքեր: Հարկահաւաքները իրաւունք չունէին մուտք գործել նրանց բնակավայրերը, նրանք ազատւած էին շահական արքունիքի համար պարբերաբար կազմակերպւող տղայահաւաքներից եւ այլն: Ընդ որում վերոյիշեալ բնակավայրերը իրենց այդ իրաւունքներին տիրացել էին շահ Աբբաս Իի մօտ պապական դեսպանների միջնորդութեան շնորհիւ: [21, էջ 30]

Երբ 1590 թ. թուրք-իրանական պայմանագրով Ջուղան անցաւ Օսմանեան Թուրքիային, շահը զրկւեց Ջուղայի առեւտրական կապիտալը ի շահ իր երկրի արտաքին առեւտրի օգտագործումից: Դա չօշափելի հարուած հասցրեց նաեւ իր գանձարանին: Մինչդեռ միջազգային առեւտրով զբաղւող ջուղայեցի խոջաների առեւտուրը Թուրքիայի տարածքի վրայով սուլթանական գանձարանին բերում էր խոշոր եկամուտներ:

Այս բոլորը յուշում էր շահին, որ Անդրկովկասից Իրան նահանջելիս անթոյլատրելի է Ջուղան թողնել իր հակառակորդի ձեռքերում: Աւելին, պետական շահը պահանջում էր քանդել ու ամայացնել այն, իսկ հայ խոջաներին գաղթեցնել Իրան: Այսպէս կանխորոշւեց Ջուղայի ճակատագիրը: Շահ Աբբասը 1605 թ.

հրամայեց իր զօրահրամանատար Թահմաս-կուլի բէգին Ջուղա քաղաքի բնակչութեանը գաղթեցնել Սպահան եւ մինչեւ հիմք այրել ու աւերել Ջուղան»: [23, էջ 57 եւ հմ].

Շահը Սէֆեան պետութեան կենտրոնական շրջաններ տեղափոխեց մօտ 10 հազար հայ ընտանիքներ: Նրանց մէջ Ջուղայեցիներից բացի կային երեւանցիներ, ագուլիսցիներ, դաշտեցիներ, նախիջեւանցիներ, թաւրիզցիներ եւ այլն: [63] Գաղթեցուած բնակչութեանը իրանական հողի հետ կապելու համար շահը նրանց յատկացրեց արտօնութիւններ ու իրաւունքներ:

Վկայելով այդ մասին, Խաչատուր Խիզանցի գրիչը, օրինակ, գրում էր. «Բայց գոհութիւն Տեառն որ հանց համարձակ կու պաշտեն զՔրիստոս Աստուած այս գերի անկեալ ազգս Հայոց, որ ամենայն տեղիս եկեղեցիս չինեցին, եւ պայծառապէս զարդարեցին, եւ ժամկոչն զժամն հանց բարձր գոչէ ձայնիւ, որպէս զՏաճկաց մօլայն այլ առաւել, եւ զմեռեալքն թաղեն խաչայամաւ եւ շուռնառով, բարձր ձայնիւ շարականաւ եւ հանց համարձակութեամբ աւհրենն զՋուրն յաւուր յայտնութեան Փրկչին, որպէս ի ժամանակս Լուսաւորչին եւ Տրդատայ թագաւորին»: [45, No 321]

Սակայն շահը առանձնակի բարեացակամ քաղաքականութիւն էր վարում Ջուղայեցիների նկատմամբ: 1605 թ. յատուկ հրովարտակով նա Սպահանի հարաւային մասում, Զաենդերուդ գետի աջ ափին, շահապատկան «խասսէ» հողերից նրանց յատկացրեց մի ընդարձակ տարածութիւն բնակավայր կառուցելու համար, որը ի յիշատակ աւերւած Ջուղայի ստացաւ Նոր Ջուղա անւանումը: Իրաւամբ, այս քաղաքը շուտով վերածւեց գաղութային հայ կապիտալի ամենամեծ ու ամենաուժեղ կենտրոնի՝ գրեթէ մի ամբողջ դարի ընթացքում: [25, էջ 66]

Եթէ Նոր Ջուղան հիմնադրելու ժամանակ նրա բնակչութիւնը, առանձին բացառութիւններով, միայն հին Ջուղայեցիներ էին, ապա հետագայում այն դարձաւ Իրան գաղթեցւած եւ առեւտրով զբաղւող բնակչութեան բնակավայր, մի տեսակ զուտ առեւտրական քաղաք: Նոր Ջուղայի հիմնադրումից յիսունմէկ տարի անց, շահ Աբբաս II-ի ժամանակ այնտեղ կառուցեցին «Երեւան» եւ «Թաւրիզ» կոչւած նոր թաղամասեր, որտեղ բնակութիւն հաստատեցին այդ քաղաքներից գաղթեցւած անւանի վաճառականները: [51, էջ 277, 281]

Նոր Ջուղան իր հիմնադրման առաջին իսկ օրերից շահ Աբբասից ստացաւ մի շարք իրաւունքներ ու արտօնութիւններ:

Մասնաւորապէս հայ խոջայական դասը, որը կազմում էր Իրանի վաճառականական դասի ընտրանին, ձեռք բերեց տնտեսական, քաղաքական եւ իրաւական բնոյթի մի շարք լայն առանձնաշնորհումներ, ընդհուպ մինչեւ իր ազգային ու կրօնական առանձնայատկութիւնները պահպանելու ու զարգացնելու իրաւունքը, մի հանգամանք, որն ըստ էութեան անօրինակ երեւոյթ էր մահմեդական մի երկրի համար: [54, էջ 40]

Շահը Ջուղայեցիներին իրաւունք տուեց պահպանելու այն բոլոր արտօնութիւնները, որոնք կապուած էին «խաս» իրաւունքի հետ: Նրանք ճանաչուեցին նաեւ որպէս շահապատկան ապրանքներ վաճառող «թաղերդ-է խասս-է շերիֆ» վաճառականներ, այսինքն օգտուում էին շահի առանձնաշնորհեալ վաճառականների իրաւունքներից: [55, էջ XV-XVI]

Ընդօրինակելով Թուրքերին, շահ Աբբասը Նոր Ջուղայի հայ խոջաներին տուեց նոյն դիրքը, որպէսին Թուրքիայում ունէին նրանց ժամանակակից հայ «չելեպիները»:

Ջուղայեցիները ստացան նաեւ ազատ քաղաքացիութեան արտօնութիւն: «Ի տապանքարինս ոմանց ականաւոր տոհմականաց Ջուղայու գրեալ կայ բառս «ազատ», թերեւս վասն յայտնելոյ ապագայից թէ ազատ քաղաքացի էին յԱսպահան եւ ոչ իբրեւ գերի: Այլ այդ արտօնութիւն՝ Ջուղայեցւոց տեսանի գլխաւորապէս տուեալ»: [51, էջ 45-46]

Աբբաս Բ-ի հիջրեթի 1014 թ. (1605 թ.) ջամադի ալ-ուլեա ամսի հրամանագիրը վկայում է, որ Սէֆեան պետութեան մէջ Ջուղայեցիները ճանաչւում էին ոչ միայն որպէս ազատ քաղաքացի, այլեւ իբրեւ հիւր, որը նրանց տալիս էր լրացուցիչ արտօնութիւններ: Դա նշանակում էր, որ նոր Ջուղայեցիների վրայ չպիտի նայել որպէս օտարականների:

Շահը հրապարակեց նաեւ մի շարք յատուկ հրամանագրեր (ֆիրմաններ), որոնք Ջուղայեցիներին պաշտպանում էին տեղական իշխանութիւնների հալածանքներից: Այդ հրամանագրերում պահանջւում էր Նոր Ջուղայի բնակչութեան նկատմամբ վերաբերել այնպէս, ինչպէս վերաբերւում է ինքը՝ շահը, այսինքն բարեացակամօրէն: [51, էջ 46-47]

Նոր Ջուղային տրամադրւում էր նաեւ ինքնավարութեան իրաւունք, այդ թւում նաեւ առանց իրանական իշխանութիւնների միջամտութեան քալանթար, այսինքն քաղաքապետ ընտրելու իրաւասութիւն: Ֆրանսիացի դէ-Շինոնը, որը XVII դարի կէսերին

այցելել էր Նոր Ջուղա վկայում է. «Շահը այդ փոքրիկ հանրապետութեան կառավարումը տրամադրել էր հայ խոջա Սաֆարին, իսկ յետոյ էլ նրա եղբօրը, այնինքն այժմեան կառավարչի հօրը՝ խոջա Նազարին»: [56, էջ 78]

Նոր Ջուղայում հայերին իրաւունք էր վերապահւած դատական վէճերը լուծել տեղում, այպէս կոչւած գլխաւոր դատաւորի կողմից, որը սովորաբար ընտրւում էր համայնքի ազդեցիկ վաճառականներից: [57, էջ 121]

Հայերի եւ պարսիկների միջեւ դատական վէճերի ժամանակ յաճախ շահ Աբբասի հրամանով դատական իշխանութիւնները դատավճիռ էին կայացնում յօգուտ հայերի: [51, էջ 46-47] Շահը յաճախ Սպահանի շրջանից քշում էր տեղի մահմեդականներին եւ նրանց շարժական ու անշարժ գոյքը յանձնում հայ բնակչութեան ունեւոր, առաւելապէս խոջայական վերնախաւին:

Ամբոխից հայ վաճառականների անձի եւ գոյքի պաշտպանութեան համար շահ Աբբասը հրապարակեց մի հրամանագիր, ըստ որի հային սպանողը դատապարտւում էր մահւան: Այլ կերպ ասած հայերը վերցւում էին պետական հովանաւորութեան տակ: [58, էջ 121]

Ցայտնի է, որ շահ Աբբաս I-ի տնտեսական քաղաքականութեան ընթրող կողմերից մէկը բնակչութեան հարկային լծի թեթեւացումն էր: Դեռեւս 1598 թ. ուզբեկների դէմ յաղթական պատերազմից յետոյ շահը նշանակալիօրէն թեթեւացրեց Իրանի կենտրոնական նահանգի՝ Պարսկական Իրաքի բնակչութիւնից գանձւող հարկերը: Նման կարգի արտօնութիւնները տարածւեցին նաեւ ջուղայեցիների վրայ: Մասնաւորապէս թեթեւացւեց նրանցից գանձւող գլխահարկը՝ խարաջը: Ֆրանսիացի Ժան Բապտիստ Տաւերնիէյի վկայութեամբ, շահը հարուստ եւ անւանի ջուղայեցիներին տրամադրեց այնպիսի իրաւունքներ, որոնցից օգտւում էին միայն մեծատոհմիկ ու ազնւազարմ անձինք կամ բարձրաստիճան իրանական պաշտօնեաները: [59, էջ 616, 627] Հայկական աղբիւրներում, օրինակ, յիշատակւում է, որ Նոր Ջուղայի քալանթարներ (քաղաքագլուխներ) խոջա Նազարը եւ խոջա Սարգիսը հանդիսանում էին «Համախոհ եւ խորհրդակից թագաւորի»: [51, էջ 48] Պատահական չէ, որ խոջա Սարգիսին նոյնիսկ մեծարել են «Հայոց թագաւոր» անւանումով: Նրա գերեզմանաքարի վրայ քանդակւած են եղել հետեւեալ խօսքերը.

Ա՛խ իմ անմման խոջա, որ էիր հայոց թագաւոր,

Անումա Մարգիրազ կոչի՝ սրընթաց զօրեղ դատաւոր,
Խերօք, քո ճարտար լեզուէտ զարմանար ամէն թագաւոր,
Շատ իշխան քո տեսուա փափագ, ահեղատես իշխան փառաւոր:

Մէկ այլ աղբիւրի համաձայն, խոջա Մարջան անունով ազդեցիկ վաճառականներից մէկը գրաւում էր Սէֆեան կառավարութեան ֆինանսական գերատեսչութեան գլխաւոր կառավարչի պաշտօնը: [60, էջ 23]

Ժամանակակիցների վկայութիւններում գտնում ենք բազմաթիւ փաստեր այն մասին, որ Նոր Ջուղայի անւանի ու ազդեցիկ խոջաները չափազանց մօտ էին կանգնած շահին եւ արքունիքին, ընդորում դա բնորոշ էր ոչ միայն շահ Աբբաս I ժամանակաշրջանին, այլեւ նրա հետնորդ մի քանի շահերի օրօք: Այսպէս, քարմելիթեան միաբանութեան անդամ Ֆրա Թիմասը Սպահանից Հռոմ գրած 1629 թ. սեպտեմբերի 18-ի նամակում յայտնում էր, որ Սէֆեան գահի վրայ նստած նոր շահը՝ Սէֆի Բը (1629-1642) «իրեն ցոյց է տալիս որպէս բոլոր քրիստոնեաների նկատմամբ բարեացակամօրէն տրամադրուած թագաւոր: Նա բազմիցս գնացել է խոջա Նազարի եւ Ջուղայի ուրիշ երեւելիների տները նրանց հետ ճաշելու: Ճշմարիտ է, որ նրանք դրամական նւէրներ են արել եւ շարունակում են անել, ինչպէս նաեւ այլ նւէրներ մատուցել շահին»: [62, I, էջ 308]

Անգլիացի Թոմաս Հերբերտը վկայում է, որ երբ ինքը 1628 թ. ապրիլի 10-ին անգլիական դեսպանութեան հետ հասաւ Սպահանի մօտակայքը, դիմաւորողների մէջ էին ի թիւս վեզիրի եւ Սպահանի սուլթան Մելիքմ Բէգի նաեւ «հայ իշխան» խոջա Նազարը չորս հազար ձիաւորների եւ անհաշիւ հետեւակների շքախմբով: Մի քանի օր անց, ապրիլի 15-ին խոջա Նազարը իր տանը ընդունում է անգլիական դեսպանին: Վերջինս գունեղ կերպով նկարագրում է այդ շքեղ ընդունելութիւնը, ի միջի այլոց նշելով, որ խոջա Նազարի տան բաժակներն ու գաւաթները բոլորը մաքուր ոսկուց էին: [57, էջ 121-123]

Մէկ այլ եւրոպացի՝ Ադամ Օլեարիուսը, որը գերմանական դեսպանութեան կազմում 1637 թ. սեպտեմբերին այցելել էր Սպահան, իր օրագրութեան մէջ յիշատակում է, որ իրենց ընդունող շահական շքախմբի մէջ էին նաեւ «Մարգիրազ բէգը, հայոց կառավարիչը, ընկերացած իր երկու եղբայրների՝ Էլիազ բէգի եւ Վաթանի հետ»: Այնուհետեւ նա հաղորդում է, որ գերմանական

դեսպանութեան եւ անձամբ դեսպան Բրուկմանի պատուին Սարգիրազ բէգը իր տանը կազմակերպում է մեծաշուքնդ եւ բազմաթախս արքայավայել մի խնջոյք: Իր հերթին 1637 թ. հոկտեմբերի 1-ին գերմանական դեսպանը կազմակերում է ընդունելութիւն, որին մասնակցում էին նաեւ Մոսկվայի դեսպանը, «հայերի կառավարիչը» Սարգիրազ բէգը եւ իր երկու եղբայրները, անգլիացի եւ ֆրանսիացի վաճառականների գլխաւորները, օգոստինեան եւ քարմելիթեան միաբանութիւնների մխիթարեանները եւ այլն: [61, էջ 275-278, 281-282]

Անձամբ ինքը՝ շահ Աբբասը, չէր խորշում լինել Նոր Ջուղայեցիների տներում, մասնակցել նրանց տօնախմբութիւններին եւ նոյնիսկ նրանց մասնակից դարձնել իր արքայական ճաշասեղանների: [23, էջ 65]

Նոր Ջուղայի Ամենափրկչեան վանքի թանգարանում պահւում է մի հրովարտակ, տրուած հիջրեթի 1052 թ. (1642) շահ Աբբաս II-ի (փոքր կոչուածի) կողմից, որտեղ ասւում է, որ քանի որ խոջա Սարգիրազը արժանացել է արքայական բարձր շնորհների, իր թագադրութեան առթիւ շահը նրան է նուիրում մի գառ կապան եւ մի վերարկու, միաժամանակ հրամայելով, որ արքունի նէրը տանող պաշտօնեային խոջա Սարգիրազը պէտք է տայ 12 թուման որպէս աքքալոյսի վճար: [60, էջ 32]

Այդ ժամանակների համար դա խոշոր գումար էր: Շահի կողմից իր հպատակներին «նէրներ» մատուցելու այդ ձեւը մի միջոց էր երկրի մեծատուններից դրամ կորզելու համար:

Այնուամենայնիւ ինչո՞ւ էր Աբբաս Իը այդպիսի լայն արտօնութիւններ ու իրաւունքներ շնորհում ջուղայեցի վաճառականներին, որոնք ոչ միայն ճնշուած, իրաւազուրկ ազգի ներկայացուցիչներ էին, ռայաներ, այլեւ այլադաւան քրիստոնեաներ: Անտարակոյս առաջին հերթին նրան այդ քայլին էր մղում Իրանի պետական շահը: Հնոյնիսկ ահարկու բռնակալներն էլ չէին մոռանում, որ մի երկրի բարօրութիւնը յաղթական պատերազմների մէջ չէ, այլ ծաղկած արդիւնաբերութեան եւ առեւտրի մէջ: Առեւտուրն իր զարգացման համար պահանջում է խաղաղ կեանք, ապահով հաղորդակցութիւն եւ այլ այսպիսի հեշտացնող եւ շահաւէտ դարձնող պայմաններ: [12, էջ 75-76] Շարդենի վկայութեամբ շահ Աբբաս Իը գտնում էր, որ առեւտուրը երկրի հարստացման ու բարեկեցութեան միակ ճանապարհն է:

XVII դարի սկզբներին Իրանը դեռեւս թոյլ էր ընդգրկած

եւրոպական պետութիւնների առեւտրական շահերի շրջանակների մէջ, իսկ եւրոպացի վաճառականները համամասնաբար թոյլ մասնակցութիւն ունէին Սէֆեան Իրանի արտաքին առեւտրի մէջ: Մինչդեռ Իրանը կենսականորէն շահագրգռուած էր այդ երկրների հետ առեւտրական յարաբերութիւններ հաստատելու մէջ: Ուստի Իրանի տիրակալները մեծ յոյսեր էին կապում միջազգային առեւտրով զբաղուող հայ վաճառականների հետ: Հէնց դա էր պատճառը, որ հայ խոջաները ոչ միայն վայելում էին Սէֆեան շահերի հովանաւորութիւնը, այլեւ ինչ որ չափով ճանաչւում էին որպէս տիրող դասակարգի ներկայացուցիչներ: Իրանի առեւտրամնոտեսական շահերը ստիպում էին շահին, որպէսզի նա կրօնական հարցերում եւս հանդուրժողականութիւն դրսեւորի հայերի նկատմամբ: Ֆրանսիացի ճանապարհորդ Տուրնֆորը վկայում է, որ շահը հայերին չէր ստիպում ընդունել մահմեդականութիւնը, քանի որ նրանց քրիստոնեայ լինելը հեշտացնում էր առեւտրական յարաբերութիւնները եւրոպական երկրների հետ: [62, էջ 158]

Ժամանակակից հայ գործիչները հիանալի գիտակցել են շահ Աբբասի «քրիստոնեասիրութեան» բուն պատճառները: Այսպէս, Առաքել Դաւրիժեցին շահ Աբբաս Իին անւանելով «վիշապ անզնդային», հայերի նկատմամբ նրա հանդուրժողական վերաբերմունքի իսկական պատճառները բացատրում է իր անձնական օգուտների համար նրանց օգտագործելու շահագրգռութեամբ: [23, էջ 25, 199]

Կարճ ժամանակ պահանջւեց հայ վաճառականական դասի հետ կապած Սէֆեան շահերի քաղաքական նկատառումների գործնական իրականացման համար: Դեռեւս շահ Աբբաս Իի տիրապետութեան շրջանում շնորհիւ Նոր Ջուղայի, պետութեան մայրաքաղաքի Սպահանը դարձաւ միջազգային առեւտրի խոշոր բազոյն կենտրոն: Չինաստանից, Հնդկաստանից, կենտրոնական Ասիայից, Արաբիայից, Թուրքիայից եւ Եւրոպայից այստեղ էին հոսում զանազան ապրանքներ [63, էջ 100].

Այսպիսով, 17-րդ դարի սկզբներից հայ առեւտրական բուրժուազիայի մի ստւար հատւածը, պատմական աննպաստ պայմանների հետեւանքով, ստիպւած էր զբաղել հայրենի բնաշխարհից դուրս:

Երախտապարտ խոջաները շուայլօրէն պատասխանում էին շահերի տրամադրած արտօնութիւնների դիմաց, գանձարանին բերելով հսկայական եկամուտներ: Պատահական չէ, որ շահ Աբբաս

Էը սիրում էր ասել «Մէկ հայը ինձ վճարում է աւելի շատ հարկեր, քան տասը մահմեդականը»:

Իրանի տնտեսական կեանքը աշխուժացնելու եւ պետական գանձարանի հասոյթները աւելացնելու նպատակով շահը դիմում էր բազմապիսի միջոցառումների. նա, օրինակ, կազմակերպեց մանուածագործարաններ, որտեղ ձրի հարկադրական աշխատանք էին կատարում մեծ քանակութեամբ արհեստաւորներ, [64, էջ 74] բացի հում-մետաքսից պետական մենաշնորհ յայտարարեց ակնահանքերն ու մետաղահանքերը, դրամահատութիւնն ու դրամափոխութեան գործը եւ այլն: Սակայն առանձնակի եռանդով նա աշխատում էր զարկ տալ արտաքին առեւտրին եւ յատկապէս հում մետաքսի արտահանութեանը, որը հնարաւորութիւն էր տալու ոչ միայն հարստացնել գանձարանը, արտասահմանում Իրանի համար ձեռք բերել անհրաժեշտ ապրանքներ, այլեւ տնտեսական հաւած հասցնել իր քաղաքական ախոյեանին՝ Օսմանեան կայսրութեանը, նրան զրկելով մետաքսի առեւտրից ստացուող հսկայական հասոյթներից: Շահը ենթադրում էր, որ իրանական լաւորակ եւ առաւել էժան մետաքսը կարճ ժամանակամիջոցի ընթացքում ի վիճակի կլինի մրցակցել թուրքական մետաքսի հետ եւ դրանով իսկ հնարաւոր կլինի հաւած հասցնել արեւմուտքի երկրների հետ թուրքական մետաքսի առեւտրին:

Այս նպատակներին հասնելու ճանապարհին միակ դժուարութիւնը, սակայն, դէպի Լեւանտեան շուկաներն ու եւրոպական երկրներ մետաքսի արտահանման գործի կազմակերպումն էր, որովհետեւ XVII դարի սկզբին օտարերկրեայ վաճառականների այցելութիւններն Իրան կրում էին թուլացիկ բնոյթ: Իսկ բուն իրանական վաճառականները (պարսիկներ, հրեաներ եւ այլն) առաւելապէս զբաղւում էին ներքին առեւտրով [65, էջ 283] եւ հազւադէպ էին մեկնում եւրոպական երկրներ: Շահի բազմաթիւ փորձերը, նրանց ներգրաւելու նաեւ արտաքին առեւտրի մէջ, չտուեցին ցանկալի արդիւնքներ: Աւելին, նրանք չարդարացրին շահի յոյսերը: [59, էջ 623] Նոյնիսկ շահի հպատակ բազմաթիւ վաճառականներ Եւրոպայում շահապատկան մետաքսի վաճառքից յետոյ այլեւս չէին վերադառնում Իրան, դրամը վատնելով կանանց վրայ եւ վարելով ցօփ ու շռայլ կեանք: [66, էջ 84] Ըստ երեւոյթին նման դէպքերը այն աստիճանի յաճախակի բնոյթ էին կրում, որ Վենետիկի սենատը ստիպած էր հրաւիրել շահի ուշադրութիւնը: [21, էջ 83]

Առաւել եւս Եւրոպայում մահմեդականների նկատմամբ վերաբերւում էին անվստահութեամբ, իսկ երբեմն նաեւ թշնամանքով, որը ծայրահեղորէն դժւարացնում էր նրանց տեղաշարժերը տեւալ երկրի ներսում եւ մէկ երկրից միւսը:

Այս դժւարին վիճակից դուրս գալու համար շահ Արբասը յանձնարարեց իր մօտ ծառայութեան անցած անգլիացի Էնտոնի Շիրլիին, որին նա անւանում էր «մերոգ Անտոնիո» մեկնել Եւրոպա, գերմանական կայսր Ռուդոլֆի, Հռոմի պապի, Վենետիկի դոժի եւ իսպանական թագաւորի մօտ եւ նրանց յայտարարել եւրոպական վաճառականների համար Իրանի սահմանների բաց լինելու մասին, փորձել կնքել առեւտրական պայմանագրեր եւ այլն: [67] Ընդհանրում շահը կարգադրել էր անգլիացուն կանգ չառնել շռայլ խոստումների առջեւ եւ անպայման հասնել նրան, որպէսզի եւրոպական տարբեր ազգերի վաճառականները ներգրաււեն իրանական առեւտրի մէջ: [68, էջ 177] Էնտոնի Շիրլիի կարեւորագոյն առաքելութիւններից մէկն էր նաեւ Իրանի եւ եւրոպական պետութիւնների միջեւ հակաթուրքական ռազմական դաշինքի կնքումը կամ նրա հնարաւորութեան չօչափումը: Դեսպանութիւնը, որի կազմի մէջ ընդգրկւած էր նաեւ արքունիքին մօտ կանգնած Հոսէյն Ալի բէգ Բայաթը, (վերջինս ձեւականորէն նշանակւած էր դեսպանութեան ղեկավարի պաշտօնում) 1599 թ. ուղեւորւեց Եւրոպա: Սակայն դեսպանութեան կազմի մէջ ընդգրկւած տասնութ պարսիկներից համարեա ոչ ոք չվերադարձաւ Իրան: [69] Դեսպանութեան երեք քարտուղարները՝ Ալի Կուլի խանը, Բոնայէդ բէգը եւ Օրուջ բէգը դաւանափոխ լինելով մնացին Իսպանիայում, ընդունելով Դոն Ֆիլիպ, Դոն Դիեգօ եւ Դոն Ժուան (կամ Խուան) անուններ, իսկ դեսպանութեան մի քանի ծառայողներ մնացին Հռոմում, որոնք ճիզվիթների կողմից նոյնպէս դաւանափոխ եղան եւ ընդունեցին կաթոլիկութիւնը: [70, էջ 96-97, 135-136]

Չնայած եւրոպական տարբեր երկրներում դեսպանութեան վարած եռանդուն բանակցութիւններին, նրա գործունէութիւնը ապարդիւն:Դա ճնշող տպաւորութիւն գործեց շահի վրայ: Շօչափելի արդիւնքներ չտեսին նաեւ շահի փորձերը բուն Իրանում օտարերկրեայ վաճառականներին ու առեւտրական ընկերութիւններին իրանական առեւտրի մէջ ներգրաւելու ուղղութեամբ: Դրա գլխաւոր պատճառը կայանում էր նրանում, որ XVII դարի սկզբին Իրանը դեռեւս լիարժէք կերպով ընդգրկւած չէր Եւրոպայի առեւտրա-տնտեսական շահերի շրջանակների մէջ եւ

եւրոպական վաճառականները դիպուածից-դիպուած էին այցելում Իրան: Նման պարագաներում շահ Աբբաս Իը ընտրութիւն կատարելու հնարաւորութիւն չունէր:

Իր լայնահուն առեւտրա-տնտեսական ծրագրերը եւ մասնաւորապէս իրանական հում մետաքսը միջագգային շուկաներ հանելու գործը իրականացնելու համար նա ստիպուած էր դիմել Իրան գաղթեցուած հայ վաճառականութեան ծառայութիւններին: Ընդորում այդ գործի համար նկատի էր առնում ոչ միայն միջագգային առեւտրի ընդգաւառում նրանց ունեցած հակայական փորձը, այլեւ այն, որ Օսմանեան կայսրութեան տարածքով տեղաշարժուելիս նրանք հանդիպում էին համեմատաբար հանդուրժողական վերաբերմունքի, քան չիա պարսիկները, իսկ Եւրոպայում նրանց ընդունում էին որպէս քրիստոնեայ-դաւանակիցներ: Իզուր չէ, որ Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդէնը յատուկ շեշտում էր, որ «այդ հայերին շահը բերեց իր մայրաքաղաքը որպէս հպատակներ, որոնք բոլորից լաւ էին յարմարուած առեւտուր անելու ինչպէս թուրքերի, այնպէս էլ քրիստոնեաների հետ, քանի որ առաջինները նրանց ատում էին ոչ այնքան, որքան պարսիկներին, իսկ երկրորդները նրանց դաւանակիցներն են»:

Իսկ Ժան Բապտիստ Տավերնիէն գրում էր. «Շահ Աբբասն իր հայեցքն ուղղեց հայերին, որոնք իր մտադրութիւնը իրականացնելու համար իրեն աւելի յարմար էին թւում: Ըմբռնեց, որ առոյգ ու հոգնութեան դիմացող մարդիկ են, երկար ճամբորդութիւններ անելու ընդունակ, թէ շատ ժուժկալ էին կերուխումի մէջ եւ խնայասէր, եւ թէ քանի որ քրիստոնեայ էին՝ աւելի դիւրութեամբ կարող էին առեւտուր անել ամբողջ քրիստոնեայ աշխարհի հետ: [59, էջ 72-73] Անգլիացի Թոմմաս Հերբերդը եւս վկայում է, որ պետութիւնը ամէն կերպ հովանաւորում էր հայերի մասնաւոր նախաձեռնութիւնը եւ օգտագործում նրանց առեւտրական ունակութիւնները՝ արքունիքին պատկանող մետաքսի վաճառահանումը իրականացնելու համար: [71, էջ 263-265, 388-389]

Գաղթեցուած եւ ունեզրկուած հայ վաճառականութիւնը ոտքի կանգնեցնելու եւ նրանց առեւտրական գործունէութիւնը սատարելու նպատակով սկզբնական շրջանում շահը ջուղայեցի վաճառականներին յատկացնում էր անտոկոս դրամական վարկեր եւ ապրանքներ, որը նրանց հնարաւորութիւն էր տալիս արագօրէն

վերականգնել իրենց նախկին առեւտրական կապերը:

Պիետրո դելլա Վալլէի վկայութեամբ, հէնց որ շահական աստիճանաւորները նահանգներից հում մետաքսը տեղափոխում էին մայրաքաղաք, շահը իր մօտ էր կանչում առաւել փորձած ջուղայեցի վաճառականներին եւ նրանց յանձնելով մի քանի տասնեակ հակ հում մետաքս, ուղարկում էր եւրոպական երկրներ, այն վաճառահանելու համար: Ընդորում Եւրոպայում հում-մետաքսի միջազգային գներին քաջածանօթ իրանաբնակ եւրոպացի փորձագէտները նախապէս գնահատում էին իւրաքանչիւր հակ հում մետաքսի արժէքը: [72, էջ 417]

Շահի կողմից փոխատուութեան ձեւով ջուղայեցիներին յատկացուած մետաքսի արժէքը նրանք վճարում էին ոչ թէ կանխիկ ձեւով, այլ ճանապարհորդութիւնից վերադառնալուց յետոյ: [69, էջ 54]

Ղ. Ալիշանի կողմից հրապարակուած փաստաթղթերում հանդիպում ենք շահի կողմից նման յանձնարարութիւններով Եւրոպա ուղարկուած ջուղայեցի վաճառականների անունների: Այդ փաստաթղթերից մէկում ասւում է. «1608 թ. օգոստոսի 14-ին ոմն Յովհաննէս Մարտիրոսի որդի, ջուղայեցի, շահի կողմից ապրանքներով ուղարկուած էր Կ. Պոլիս, որտեղ նա այնուհետեւ իր ապրանքները տարաւ Վենետիկ: 1609 թ. Սեպտեմբերին ջուղայեցի վաճառականների մէկ այլ խումբ՝ Անդրիասի որդի Տէր Գաբրիէլը, Տէր Սահակի որդի Գալարէգը եւ Ալի բէգի որդի խոջա Ուլուղը նաւերով մեկնեցին Վենետիկ 13 հակ հում մետաքսը վաճառելու համար: [37, էջ 419]

Մետաքսի եւ իրանական այլ ապրանքների արտահանումն ու վաճառքն ապահովելու համար շահը ամէն կերպ խրախուսում էր հայ վաճառականների ջանքերը՝ յայտնաբերելու նոր, ազատ շուկաներ: [73, էջ 377]

Շահական կառավարութեան եւ հայ առեւտրական դասի միջեւ ստեղծւում էր շահերի միասնութիւն, մի տեսակ դաշինք, որը ձեռնտու էր երկու կողմերին էլ: Կառավարութիւնը խոջաների համար ստեղծում էր առեւտրի բարենպաստ պայմաններ, իսկ վերջիններս էլ իրենց առեւտրով մեծ եկամուտներ էին բերում շահական գանձարանին:

Պիետրո Դելլա Վալլէն դիպուկ նշում է, թէ ջուղայեցիք պարսից թագաւորի համար այն են, ինչ որ ջենովացիները իսպանական թագաւորի համար, առանց թագաւորի նրանք չեն կարող ապրել, ինչպէս եւ թագաւորն առանց նրանց: [72, էջ 263]

Հայ վաճառականական դասին տրամադրված շահական լայն առանձնաշնորհումները, ինչպես նաեւ առեւտրի համար ստեղծված բարենպաստ պայմանները Նոր Ջուղայի խոջայությանը հնարաւորություն տուին աննախընթաց չափերով ծաւալել իրենց առեւտրա-տնտեսական գործունէությունը եւ մասնաւորապէս Իրանի արտաքին առեւտուրը: Այդ բոլորի հետեւանքով մետաքսի առեւտրի միջազգային կենտրոնը տեղափոխուեց Նոր Ջուղա հայաքաղաքը, որի խոջաները դարձան պետական մենաշնորհ հռչակած «շահլուղ» (արքունի) մետաքսի վաճառահանման խոշորագոյն կոնտրագենտներ:

Այսպիսով Արեւելեան Հայաստանի բնակչութեան բռնի զանգւածային արտագաղթը Իրան, պատերազմների հետեւանքով հայ ժողովրդի այդ բնօրրանի ամայացումը ունեցաւ այն հետեւանքը, որ այդ երկրամասի առեւտրա-տնտեսական կեանքը կտրուկ խամրեց: Ուստի հայ առեւտրական բուրժուազիան, ամէն տեսակի գործարար տարրերը, ինչպես նաեւ գործունէութեան հսկայական եռանդ կուտակած հայ մտաւորականութիւնը այսուհետեւ իրենց գործունէութեան ասպարէզ կարող էին դարձնել գաղթաշխարհը, որոնց մէջ հայութեան կեանքում բացառիկ կարեւոր դեր էր խաղալու իրանահայ գաղութը եւ մասնաւորապէս Նոր Ջուղայի գաղթօջախը:

1629 թ. շահ Աբբաս Ի-ի մահը էական փոփոխութիւններ չմտցրեց Հայ առեւտրական դասի նկատմամբ Սէֆեան կառավարութեան քաղաքականութեան մէջ: Իր նախորդի օրինակով նոր շահը՝ Սէֆի Ի-ը (1629-1642) նրանց նկատմամբ շարունակում էր վարել աւանդական հովանաւորողական քաղաքականութիւն, որի դրդապատճառների մասին Ֆրանսիացի Գաբրիէլ Շինոնը արտայայտւում էր հետեւեալ կերպ. «Կառավարութիւնը հովանաւորում էր խոշոր հայ վաճառականութեանը եւ խրախուսում նրա առեւտուրը, նպատակ ունենալով օգտագործել նրա փորձն ու առեւտրական լայն կապերը երկրից հում մետաքսը արտահանելու եւ վաճառելու համար»: [74, էջ 226]

Նոր շահը ոչ միայն պահպանեց հայ վաճառականութեան նախկին արտօնութիւններն ու իրաւունքները, այլեւ յատկացրեց նոր առանձնաշնորհումներ: Այսպէս, 1633 թ. նա հրապարակեց մի նոր հրամանագիր, որտեղ հրամայում էր պետութեան բոլոր մաքսային ատիճանաւորներին, նահանգների կառաւարիչներին, ճանապարհային պահակներին եւ այլն չնեղել հայ վաճա-

ռականներին, նրանց ցուցաբերել ամէն տեսակի աջակցութիւն, արգելք չհանդիսանալ երկրի ներսում նրանց տեղաշարժերին եւ ոչ մի դէպքում նրանցից չգանձել մաքսատուրքեր: [76, էջ 22] Բացի այդ, շահը պահպանեց Նոր Ջուղայի նկատմամբ շահ Աբբաս Իի կողմից սահմանուած ցածր տուրքեր գանձելու շնորհը: Այսուհետեւ եւս այդ քաղաքը օգտուելու էր սահմանափակ հարկային իմունիտետից: Ադամ Օլեարուսի վկայութեամբ, որպէս հարկ ջուղայեցիները շահին վճարելու էին տարեկան ընդամենը 200 թուման: Սահմանուած կարգի համաձայն այն պետութեան գանձարանն էին մուծելու Նոր Ջուղայի դարուղա Խոսրով Սուլթանը եւ քալանթար Սէֆերաս (Սարֆրազ) բէգը: [76, էջ 73 1] Նոյն Ադամ Օլեարիուսը տեղեկութիւններ է հաղորդում այն մասին, որ Սէֆի Իի կառավարման տարիներին շահական շքախմբի կազմում Նոր Ջուղայի անուանի վաճառականները յաճախ մասնակցում էին զանազան հանդիսութիւնների: Նրա վկայութեամբ, օրինակ, երբ գերմանական դեսպանորդները Սպահանում տեսան «իշխանական խնջոյք», ի թիւս ռուսական դեսպանորդի, անգլիական Օստ-Հնդկական ընկերութեան մի քանի կարեւոր դէմքերի, ֆրանսիացի դիւանագէտների, իսպանական աւգուստինեան միաբանութեան միսիոներների եւ իտալական քարմելիթեան միաբանների այդ խնջոյքին շահի հրաւէրով ներկայ էին նաեւ Նոր Ջուղայի կառավարիչը եւ նրա երկու եղբայրները: [76, էջ 718]

Շահ Աբբաս Իի կողմից սահմանուած մետաքսի պետական մենաշնորհը շահի կեանքի վերջին տարիներին այլեւս չէր արդարացնում իրեն: Շահի պալատական պատմիչ Իսկանդար Մունշիի վկայութեամբ այն հանդիսանում էր ընչաքաղց ու անյագ շահական աստիճանաւորների ֆարաշահումների ու շորթումների աղբիւր, որը առաջ էր բերում մետաքս արտադրող գիւղացիութեան դժգոհութիւնը: [77, էջ 130] Պատահական չէ, որ դեռեւս շահ Աբբասի կենդանութեան օրօք Գիլանի նահանգում անընդհատ բռնկում էին ապստամբութիւններ [78, էջ 226-228]. Ուստի Սէֆի Իը, գահը ժառանգելուց յետոյ անմիջապէս շտապեց ֆիրման հրապարակել հում մետաքսի պետական մենաշնորհը վերացնելու մասին:

Մետաքսի ազատ առ ու վաճառքի սահմանումը խիստ ձեռնտու էր հայ վաճառականներին, նախ այն պատճառով, որ այսուհետեւ նրանք առանց միջնորդների, անմիջական եւ ուղղակի կապ կարող էին պահպանել մետաքս արտադրողների հետ: Ջուղայեցիները դադարեցին լինել «շահական» հում մետաքսի

արտահանութեան գծով շահի պաշտօնական գործակալներ եւ սկսեցին զբաղուել հում մետաքսի արտահանութեամբ սեփական նախաձեռնութեամբ, այն գնելով անմիջական արտադրողներից եւ արտահանելով որպէս սեփական ապրանք: Բացի այդ, քանի որ հում մետաքսի մի զգալի մասը գիւղացիները յանձնում էին շահական կամ տեղական աւատական վարչութեանը հարկերի ու տուրքերի ձեւով, ուստի հայ վաճառականները, որոնք մեծաքանակ ձեւով գնում էին այդ մետաքսն ու արտահանում երկրից, ըստ էութեան հանդէս էին գալիս որպէս աւատական ռենտա իրացնող գործակալներ:

Հասկանալի է նաեւ, որ մետաքսի պետական մենաշնորհի վերացումը հարուածում էր հայ խոջաների հիմնական մրցակիցներին՝ անգլիական վաճառականներին: Վերջիններիս համար չափազանց դժուար էր կանոնաւոր կապեր պահպանել Իրանի հիւսիսում գտնուող մետաքսի արտադրութեան կենտրոնների հետ եւ բացի այդ, շահական կառավարութեան հետ կնքած պայմանագրերի համաձայն անգլիացիները պարտաւոր էին մետաքսի գնումներ կատարել միայն արքունիքից եւ ոչ թէ ազատ շուկայից: Պատահական չէ, որ շահ Սէֆի Բ կողմից մետաքսի պետական մենաշնորհի վերացումից յետոյ անգլիացիները կտրուկ կրճատեցին մետաքսի արտահանումները Իրանից, իսկ 1641 թուականից սկսած համարեա խսպառ դադարեցրին այն , սպասելով իրենց համար աւելի բարենպաստ ժամանակների:

Ինչ վերաբերում է հոլանդացիներին, թէեւ վերջիններս աւելի ճկուն գտնուեցին եւ կարողանում էին իրենց առեւտրական քաղաքականութեան ընդգաւառում վարպետօրէն խուսանաւել, մետաքսը ձեռք բերելով միաժամանակ ե՛ւ արքունիքից ե՛ւ ազատ շուկայից, սակայն դա նոյնպէս չտուեց ցանկալի արդիւնքներ, որովհետեւ նրանց համար եւս մեծ դժուարութիւններ կային մետաքսի արտադրութեան շրջանների հետ կանոնաւոր կապեր պահպանելու եւ մետաքսը անմիջական արտադրողներից ձեռք բերելու հարցում: Այդ պատճառով հոլանդացիները ստիպւած էին դիմել հայ վաճառականների ծառայութիւններին, որոնք այսուհետեւ դառնում էին միջնորդներ մետաքս արտադրողների եւ հոլանդացիների միջեւ: [73, էջ 392] Այսպիսով ստեղծուեց մի իրավիճակ, երբ հոլանդական վաճառականները այլեւս չէին կարող հաւակնել հում մետաքսի արտահանման մենաշնորհը իրենց ձեռքը վերցնելու վաղուց ի վեր փայփայած ծրագրերին եւ հարկադրւած էին զիջել

իրենց դիրքերը հայ վաճառականներին:

Միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառականները իրենց առևտրական գործառույթների ժամանակ չփոխում էին ամենատարբեր երկրների ու ժողովուրդների հետ: Գրիգոր Դարանաղցին գրում է, որ ջուղայեցիները, օրինակ, լինում էին «ընդ ամենայն երեսս երկրի», «ի Հնդիկս ներքինս եւ Եթիոպիա, եւ յեգիպտոս, եւ յամենայն աշխարհս Ֆրանգաց, եւ ի Կոստանդինուպոլիս, եւ յամենայն աշխարհն Թրակացւոց եւ Մոսկոֆայ եւ Վրկանաց, եւ ընդ ամենայն աշխարհն Թուրքաց եւ Քրդաց եւ Քաղդէացւոց եւ ամենայն Պարսկաստանաց, եւ արեւելեայս՝ մինչեւ ի Զինն եւ Մաչինն, ի Թօնն եւ ի Թօնճան, եւ յԱնգլիան, եւ յամենայն աշխարհքն Տաթարաց եւ Ափխազաց, մինչեւ ի Ծագս աշխարհաց անծանօթիցս»: [79, էջ 457-458]

Իսկ Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովում» թեւարկում են այն քաղաքներն ու նահանգները, ուր առևտրական գործերով այցելում էին հայ, մասնաւորապէս ջուղայեցի վաճառականները. Իրանում եւ Անդրկովկասում Սպահան, Մաշադ, Թաւրիզ, Ռեշտ, Գիլան, Մազանդարան, Գասկաւ, Քեսման, Լահիջան, Գանջա, Ղարաբաղ, Շիրւան, Շամախի: Մինչեւ Ասիայում, Աֆղանստանում ու հիւսիսային Հնդկաստանում Բալխ, Բուխարա, Ղանդահար, Ղազնի, Փեշավար, Քաբուլ, Քաշմիր եւ այլն:

Արաբական երկրներում Արաբստան (արաբական թերակղզի) Բասրա, Բաղդադ, Մոսուլ, Հալէպ: Թուրքիայում Կ.Պոլիս, Բուրսա, Ատրանա (Ադանա Վ.Բ.), Իզմիր, Թոքատ, Էրզրում: Աֆրիկայում Հաբեշստան:

Եւրոպայում Մեսինա, Ալիկոռնա (Լիվորնո), Վենետիկ, Ջենովա, Մարսէլ, Ամստերդամ, Դանցիգ, Մոսկով, լեհ ու մաղար (Հունգարիա), Ալման (Գերմանիա), Ֆռանկստան (Ֆրանսիա), Ընկլիթեռ (Անգլիա), Սպանիա, «Նենկի դունիա» (Ամերիկա) եւ այլն:

«Որ յարեւելից գնամք ի յարեւմուտս, - գրում է Կոստանդ Ջուղայեցին,- կայցուք առաջ Մլթան, Լահուռ, Սարհնդն, Ջահանապատ, Աքսարապատ, Խուրջայ եւ Հնդուան, Բանկալայ, Բիատ, Փաթանայ, Բնարիս, Մօվ, Ղազիփուռ, Ջալառփուռ, Շահգաղփուռ, Խէրաբատ, Դարեաբատ, Դօվլաթաբադ, Սրինջ, Բէրամփուռ, Սուրաթ, Գուջրաթ, Ովրանկարադ, Շագառն, Հեյդարաբադ, Մուշլիբանդար, Ֆէգու, Հաւայ (որ է Փեկուայ թագաւորին փայլ թախտն), Բուխանդ, Խաթայ եւ Խուեայ, Ջիրապատ, Քօչին, Սէյլան, Մալագայ, Ջաքաթրայ, որ ոմանք

Բաթավիայ ասեն, Թռնատի, Ամբուռն, Մուքասար, Թիմուռն, Սլհոռն, Մանիլայ, Շարինով»: [80. 51, էջ 159-160]

Բնական է, որ աշխարհի տարբեր ծագերում առեւտուր անող հայ խոջաները կարիք ունէին ոչ միայն առեւտրական տեղեկատուների, ինչպիսին էր օրինակ Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովը», այլեւ աշխարհագրական քարտէզների: 1666 թ. յայտնի տպագրիչներ Թովմա եւ Ղուկաս Վանանդեցիները հրատարակում են մի «Համատարած աշխարհացոյց», որի մասին իրենք գրում են. «Բայց եւս քան զեւս առաւելապէս պիտանանայ վաճառականաց՝ մանաւանդ հայկազարմից, որք ի մէջ ասիական եւ արեւելեան ազգաց, այսու գոնեա անուամբ փառաւորք եւ հնարագետք երեւին, զի ամենայն ազգաց ընդունելիք եւ յոչ սակաւուց սիրելիք. ընդ ամենայն աշխարհ զանքոյթ երթեւեկութիւն ունելով զամենայն երկիր առ ոտն հարկելով յաճախեն: [81, էջ 2-3]

Խոջաներն իրենց առեւտրով ոչ միայն հարստացնում էին շահական գանձարանը, այլեւ իրենք էին կուտակում հսկայական հարստութիւն: Շրջանառութեան մէջ գտնւող նրանց կապիտալները հասնում էին միլիոնների: Տավերնիէի վկայութեամբ Ջուղայեցի խոջաներից մէկը մահից յետոյ թողել էր մօտ 40 միլիոն թուման հասնող հարստութիւն: [59, էջ 418-419]

Խթանո՞ւմ էր արդեօք Նոր Ջուղայի առեւտրական բուրժուազիայի տնտեսական հզօրութեան մեծացումը նրանց քաղաքական ակտիւացմանը, թէ ոչ: Այս հարցին սովորաբար տրւել է բացասական պատասխան: Մասնաւորապէս յայտնւել է այն տեսակէտը, որ հայ առեւտրական կապիտալի առաջամարտիկը հանդիսացող Նոր Ջուղայի խոջայութիւնը հայ ժողովրդի քաղաքական շահագրգռութիւններից հեռու կանգնած, ապաքաղաքական հակումներ ունեցող մի զանգւած էր, որն աւելի շուտ բռնում էր տիրողների նկատմամբ խոնարհ համակերպութեան ճանապարհը, քան ճակատ տալիս իր ժողովրդի ազատագրման համար: Աւելին, նշւել է, որ առհասարակ գաղթավայրերի հայ առեւտրական բուրժուազիան XVII դարում բացասական վերաբերմունք է ունեցել սեփական ժողովրդի ազատագրական մտորումների նկատմամբ: (Տես 25) Միայն XVIII-XIX դարերի ընթացքում, թեւակոխելով զարգացման առեւտրաարդիւնաբերական ոլորտը, աստիճանաբար սկսում է հետաքրքրութիւն դրսեւորել դէպի հայ ժողովրդի ազգային-քաղաքական խնդիրները:

Նոյնիսկ մեծավաստակ պատմաբան, ակադեմիկոս Ա.Գ.

Յովհաննէսեանը, իր տեսադաշտից դուրս թողնելով մի շարք իրողութիւններ, գրում է. «Քաղաքենի արտօնուած մի դաս էր այդ, որի հասարակական մորալը որոշւում էր համբիչի ցուցանիշներով, մարդիկ, որոնք, գլուխ խոնարհելով տիրողների առաջ, ջանում էին ճանապարհ հարթել դէպի իրենց բարեկեցութիւնը, անտարբեր դէպի ազգակիցների չարքաշ ու նեղ օրը: Այս կարգի առեւտրականները լիակատար հիմք ունէին խուսափելու յատկապէս ազգային քաղաքականութեան ստորջրեայ ժայռերից եւ պահանջւած դէպքում փողի օգնութեամբ նաւեցել անձնական հանգստութիւն: [17, էջ 458]

Նոր Ջուղայի հայ խոջայութեան ազգային-քաղաքական անգործութիւնն ու կրաւորականութիւնը ցոյց տալու նպատակով սովորաբար վկայակոչւել է XVII դարի հայագէտ Յոհ. Շրեօղերի «Արամեան լեզուին գանձ» աշխատութեան մէջ բերւած եւրոպացի ոմն Ֆրանչեսկոյի եւ Նոր Ջուղայից առեւտրական գործերով Ամստերդամ ժամանած խոջա Սաֆարի երկխօսութիւնը, որտեղ եւրոպացին չօշափում է նաեւ հայ ժողովրդի քաղաքական դրութեան հարցը: Սակայն խոջա Սաֆարը, ինչպէս երեւում է երկխօսութիւնից, խուսափել է այդ նիւթից, նոյնիսկ յայտարարելով, որ հայերը քաղաքական հարց չունեն եւ չեն ցանկանում ունենալ. «Ուղորդ այ, մեր ազգն էսօր էլ դինջ այ քանց մեր թագաւորաց վախտին. զարա կուիւ չի գնալ, ու ամէն ազգի հետ ազատ երւմուտ ունի»: [82, էջ 338-339] Լէոն առեւտրական խոջայի արտայայտած այդ միտքը մեկնաբանում է հետեւեալ կերպ. «Հային հարկաւոր էլ էէ սեփական թագաւոր, եթէ ունենայ այդպիսի բան, պիտի պատերազմի գնայ, մինչդեռ այժմ նա կուիւ չի գնում եւ ազատ առեւտուր է անում բոլոր ազգերի հետ»: [26, էջ 171]

Անկասկած, XVII դարում հայ տիրապետող դասակարգի շրջանում նման մտայնութիւնը բաւականին մեծ տարածում է ունեցել: Նոյնիսկ XVIII դարում հայ հոգեւորականներից մէկը՝ Գէորգ Մխիթիմեանը, ճիշտ է այլ դրդապատճառներով, սակայն կրկնելով խոջա Սաֆարին, գրում էր. «... Արեւելեան քրիստոնեայք թէպէտ առանց թագաւորութեան են, սակայն առաւել երջանկութիւն եւ անդորրութիւն ունեն, քան գնոսա, որք ընդ թագաւորութեամբ են»: [83, էջ 102]

Սակայն նման տեսակէտները չեն կարող ընդհանրական լինել Նոր Ջուղայի առեւտրական կապիտալի բոլոր ներկայացուցիչների համար:

Բազմաթիւ փաստեր հերքում են Նոր Ջուղայի խոջայութեան

քաղաքական կրաւորականութեան տեսակէտը: Աւելին, 17-րդ դարի սկզբներից մեծանում էր նրա կշիռը համազգային գործերում, կամ աւելի ճիշտ, նա իր ձեռքն է վերցնում հայ ազգային կեանքի ղեկավարութիւնը: Համահայկական նշանակութիւն ունեցող բազմաթիւ հարցեր լուծւում են ջուղայեցիների գիտութեամբ եւ նրանց միջոցներով:

«Ջուղան մի մեծ հեղինակութիւն դարձաւ եւ առանց նրա համաձայնութեան չէր կարող վճռւել ոչ մի նշանաւոր ազգային գործ: Էջմիածինը ենթարկւած էր նրան, կաթողիկոսի ընտրութեան գործում առաջին ձայնը պատկանում էր Ջուղային»: [84, էջ 194] 17-րդ դարի կէսերին Հայաստանում երկար տարիներ քարոզչական գործունէութիւն ծաւալած կաթոլիկ միսիոներ Փիրոմալլին շեշտել է այն մեծ ազդեցութիւնը, որ ունեցել են ջուղայեցիները հայ եկեղեցու կեանքում: Նրանք, ըստ Փիրոմալլիի «Ի վիճակի են ըստ իրենց ցանկութեան պաշտօնազրկել որեւէ վարդապետի, եպիսկոպոսի կամ նոյնիսկ կաթողիկոսի»: [85, էջ 119]

Ինչպէս յայտնի է, 17-րդ դարի երկրորդ տասնամեակից սկսած Էջմիածինը վերածւում էր ազգային-ազատագրական գաղափարների կենտրոնի: Պատահական չէ, որ հայ առեւտրական բուրժուազիան նեցուկ հանդիսացաւ նրա այդ ձգտումներին, միաժամանակ կանգնելով հայկական լուսաւորչական եկեղեցու ինքնուրոյնութեան, նրա դաւանանքի ու հնամենի աւանդութիւնների պաշտպանութեան դիրքերի վրայ:

Սէֆեան պետութեան կողմից խոջայական վերնաշերտի համար ստեղծւած բացառիկ դրութիւնը հասկանալի է դարձնում նաեւ «հայ այդ մեծատունների իրանասիրական դիրքաւորումը»: [17, էջ 104] Զարմանք է մոռանալ նաեւ, որ հայ խոջաները տնտեսական սերտ կապերի մէջ էին Սէֆեանների իշխող վերնախաւերի հետ եւ, վերջին հաշւով, նրանց բարեկեցութիւնը կախւած էր Իրանի առեւտրական քաղաքականութիւնից, որ խոջաների առեւտուրը հէնց սպասարկում էր իրանական աւատատէրերին: «Հայ առեւտրականներն արտահանում էին եւ վաճառում արդիւնավճար ունոտայի, հարկերի ու տուրքերի ձեւով Ֆեոդալների ամբարներում կուտակւած յաւելեալ արդիւնքը եւ մատակարարում նրանց արտասահմանեան շուկաներում գնւած (գլխաւորապէս չքեղութեան) ապրանքներ»: [17, էջ 155] «Ինքնաս հայ «խոջայական կապիտալը» նոր արտադրական յարաբերութիւնների արդիւնք չէր, նշում է Աշոտ Յովհաննիսեանը: Հայ խոջան իր հարստութիւնը

կուտակում էր ֆեոդալիզմի հետ միաձուլած առևտրական եւ վաշխառուական կապիտալի շրջանառութեան ճանապարհով եւ հասկանալի է, որ նա հանդէս չէր գալիս ֆեոդալական իշխող կարգերի անտագոնիստի դերում: Սրանով էլ պայմանաւորուած էր ոչ միայն նրա տնտեսական պրակտիկան, այլեւ նրա ազգային-քաղաքական ծայրայեղ չափաւորութիւնը»: [17, էջ 456]

Այս ամէնը իրողութիւն է: Սակայն իրողութիւն է նաեւ այն, որ իրանահայ վաճառականութիւնը գտնւում էր երկակի դրութեան մէջ: Որպէս առեւտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչներ, նրանք կողոպտում էին ժողովրդին, սակայն իրենք էլ ենթակայ էին ազգային ու կրօնական ճնշման:

Ուստի հայ առեւտրական դասը ստիպւած էր միշտ զգոյշ ու աջալուրջ լինել եւ իրեն դրսեւորել որպէս քաղաքական չեզոք տարր: Ֆրանսիացի Շարդէնը, օրինակ, վկայում է, որ Նոր Ջուղայի խոջաները, որոնք իրազեկ էին Ցակոբ Ջուղայեցի կաթողիկոսի բանակցութիւններին՝ Հռոմի հետ, քրիստոնեայ պետութիւնների օգնութեամբ Հայաստանի ազատագրման վերաբերեալ, երկիւղի մէջ էին, թէ իրանական պետութիւնը կարող է վրէժխնդիր լինել: [88, էջ 18-17] Նման երկիւղներն անհիմն չէին, մանաւանդ որ Իրան բռնագաղթւած հայերի մէջ քիչ չէին նաեւ մարդիկ, ովքեր տրտնջում էին Սէֆեան պետութեան դաժանութիւններից եւս ու երազում էին «ֆրանկների» օգնութեամբ ազատագրւել ոչ միայն թուրքական, այլեւ իրանական լծից: [17, էջ 104]

Նոր Ջուղայի խոջայութիւնը 17-րդ դարի սկզբներից սկսեց կարեւոր դեր խաղալ նաեւ հայ ժողովրդի ազգային-մշակութային առաջադիմութեան գործում: Դեռեւս 16-րդ դարի վերջերին հին Ջուղայեցի վաճառականների նիւթական օժանդակութեամբ Մարսէյլում Յովհաննէս Տերզնցին հրատարակում է մի շարք գրքեր: Աւելի ուշ Նոր Ջուղայում եւ բողոքական Հոլանդիայում ստեղծւում է հայկական տպագրութիւն: Հայ իրականութեան մէջ գրատպութիւնը եւս ինքնանպատակ չէր: Այն ունէր ազգային-քաղաքական երանգ եւ գալիս էր նպաստելու հայ ազատագրական շարժմանը: Այդ տպարանների գործունէութիւնը ֆինանսաւորող Նորջուղայեցի խոջաների համար գիրքը միայն վաճառքի ապրանք չէր, այլ հզօր միջոց՝ հայ առեւտրական կապիտալի ներկայացուցիչների փայփւած քաղաքական իդեաները կենսագործելու համար: Պատահական չէ, որ Ամստերդամում լոյս են տեսնում հայ դասական պատմագրութեան գլուխգործոցը՝ Խորենացու «Հայոց

պատմութիւնը», ինչպէս նաեւ Առաքել Դավրիժեցու «Պատմութիւնը»: Այդ հրատարակութիւնների նպատակն էր հայրենասիրական ոգով կրթել ու դաստիարակել այն հայ երիտասարդներին, որոնք, ինչպէս գրում էր Թովմա Վանանդեցին, «գտնուում են խաւարի մէջ եւ ապրում են բռնակալական լծի տակ»:

Այսպիսով, ակներեւ է, որ 17-րդ դարում գրատպութիւնը եւս արտայայտում էր հայ ժողովրդի վերելք ապրող ազատագրական ձգտումները եւ արտացոլում օտար լուծը թօթափելու նրա քաղաքական իղձը:

Մի կողմից առեւտրով զբաղող հայ վաճառականութեան մշտական շփումները եւրոպական տարբեր ժողովուրդների հետ հասկանալի է, որ անհետեւանք չէին մնում: Առաջին հերթին դրանք չէին կարող չազդել հայ վաճառականութեան մտահորիզոնի վրայ: Յատկապէս Եւրոպայից նրանք իրան էին ներմուծում ու հայ բնակչութեան մէջ իրացնում ոչ միայն եւրոպական ապրանքներ, այլեւ Եւրոպայում տարածուած գաղափարներ:

Կարեւոր է նաեւ շեշտել, որ եթէ նշուած դարաշրջանում հայ եկեղեցականներն առաջուայ պէս հայ ժողովրդի ազատագրումը շարունակում էին ակնկալել Հռոմից, ապա Նոր Ջուղայի խոջայութիւնը մերժում էր «Ֆրանկների» միջոցով ազատագրելու խաբուսիկ ցնորքը: Այդ մասին մենք բազմաթիւ փաստեր ենք գտնում երկու հատորանոց ստւարածաւալ «Քարտէլիթների տարեգրութիւնում»: (Տես 52) Կան այդ հանգամանքը փաստող բազմաթիւ այլ տեղեր եւս: Այսպէս, երբ 1613 թ. Մելիքսէթ կաթողիկոսը, առանց Նոր Ջուղայի խոջաների համաձայնութեան, պաշտօնական նամակ է ուղարկում Հռոմ, որտեղ պատրաստակամութիւն էր յայտնում ընդունելու Հռոմի պապի գերագահութիւնը, խոջաներն անմիջապէս համոզում են շահին ձերբակալել կաթողիկոսին, որպէսզի չեղեալ յայտարարի նրա որոշումը: [87, էջ 44] Այնուհետեւ, 1607 թ. կաթոլիկ միսիոներների հրահրումով շահ Աբբաս Իր հրաման է արձակում Էջմիածնի եկեղեցին քանդելու եւ նրա քարերն ու սրբազան մասունքները Սպահան տեղափոխելու վերաբերեալ, որպէսզի այնտեղ կառուցի մի տաճար: [23, էջ 212-213] Անշուշտ, այդ որոշման նպատակն էր հարուած հասցնել հայ ազգային եկեղեցու հիմքերին: Սակայն Նոր Ջուղայի խոջաների եւ մասնաւորապէս քալանթար (քաղաքապետ Վ.Բ.) խոջա Նազարի վճռական բողոքի հետեւանքով, շահը որոշում է յետ կանգնել իր մտքից: [4] [51, I, 52-56]

Արեւմտեան Եւրոպայի երկրներում, բախւելով իրենց ազգային ու կրօնական զգացումների ոտնահարման փաստերի հետ, [88, էջ 46-48] եւ ենթարկւելով անօրինական հալածանքների, ջուղայեցի վաճառականները թշնամաբար էին տրամադրւում ոչ միայն միւսօներների ու կաթոլիկ եկեղեցու, այլեւ այդ հալածանքների կազմակերպիչ արեւմտաեւրոպական տէրութիւնների դէմ:

ԳԼՈՒԽ II

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԼԵՒԱՆՏԵԱՆ ԱՌԵՒՏՈՒՐԸ 17-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Միջին դարերում եւ նոր ժամանակներում Լեւանտ էին անւանում արեւելեան միջերկրածովեան երկրները՝ Փոքր Ասիան, Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Կիպրոսը, Յունաստանը, Եգիպտոսը եւ այլն: Հնագոյն ժամանակներից սկսած Լեւանտը հանդիսացել է միջազգային առեւտրափոխանակութեան կարեւորագոյն հանգոյցներից մէկը: Միջին դարերում խաչակրաց արշաւանքների հետեւանքներից մէկը հանդիսացաւ Լեւանտի հետ Եւրոպայի անմիջական ու մշտական կապերի հաստատումը: Այդ ժամանակ Արեւելքի երկրներ տանող գլխաւոր առեւտրական ճանապարհը դարձաւ Միջերկրական ծովը: Աննախընթաց յաջողութիւններ ձեռք բերեց առեւտուրը Իրանի, Յունաստանի եւ Արաբիայի հետ: Իտալական առեւտրական քաղաքները՝ Վենետիկը, Ջենովան, Պիզան, Ամալֆին հսկայական օգուտներ էին ստանում Արեւելքի եւ Եւրոպայի միջեւ կատարւող առեւտրից:

Յայտնի է, որ միջերկրածովեան երկրների տնտեսական աշխուժացումը անմիջականօրէն իր արտացոլումը գտաւ Կիլիկեան Հայաստանում, որը հանդիսանում էր միջերկրածովեան առեւտրի խոշորագոյն կենտրոնը: Կիլիկիայի հայ խոշոր վաճառականութիւնը սերտօրէն ընդգրկւեց համաշխարհային առեւտրի մէջ եւ իր այդ դիրքերը պահպանեց ընդհուպ մինչեւ Կիլիկիայի հայկական թագաւորութեան կործանումը: (1375 թ.)

Այաս նաւահանգստի անչքանալուց եւ առեւտրական կարեւորութիւնը կորցնելուց յետոյ եւս հայերը չդադարեցին ակնառու դեր խաղալ Լեւանտեան առեւտրում: Յարմարւելով նոր ստեղծւած պայմաններին, նրանք շարունակում էին գործօն մասնակցութիւն ունենալ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ միջազգային ապրանքափոխանակութեանը: Այդ ժամանակ համաշխարհային առեւտրի գլխաւոր ուղիներից մէկն է դառնում Այաս-Թաւրիզ եւ Թաւրիզից Սիրիայի նաւահանգիստները տանող առեւտրական զարկերակը, որի միջոցով եւ իրականացւում էր Լեւանտի կապը

մահմեդական Արեւելքի, ինչպէս նաեւ Հնդկաստանի եւ Չինաստանի հետ: Անդրասիական այդ առեւտրի գլխաւոր լծակները գտնւում էին Իտալիայի վաճառականների ձեռքում, որոնք ոչ մի կերպ չէին հանդուրժում տեղական մրցակիցներին: Թերեւս այդ է պատճառը, որ Կիլիկիայի հայկական պետականութեան անկումից յետոյ հայ վաճառականները գլխաւորապէս հաստատւում են Ղրիմում:

Թուրքիայի վրայով անցնող աւանդական առեւտրական ճանապարհով, որը ձգւում էր դէպի Միջերկրական ծովի արեւելեան ափերը՝ Լեւանտեան առեւտրի խոշորագոյն կենտրոնները, 15-րդ դարի վերջերից առեւտուր էին անում գերազանցապէս հայ վաճառականները: Նրանք յատկապէս դարձան Իրանի վրայով անցնող տարանցիկ ցամաքային ճանապարհի բացարձակ տէրերը: Ընդ որում հայ վաճառականներ ասելով պէտք է նկատի ունենալ ոչ միայն Հայաստանի, այլեւ Իրանի, Սիրիայի, Եգիպտոսի եւ այլ հայկական գաղթավայրերի առեւտրականներին:

Թուրքական զաւթումները եւ Եւրոպան Արեւելքի հետ կապող ուղու լիովին խափանումը արագացրին Հնդկաստան տանող ծովային ճանապարհի որոնումները: 15-րդ դարի վերջի եւ 16-րդ դարի սկզբի աշխարհագրական մեծ յայտնագործութիւնները վերջ տուեցին Լեւանտի առեւտրական մենաշնորհին: Աւելին, այդ առեւտուրն ընկաւ փակուղու մէջ, որովհետեւ ցամաքային ճանապարհներից տեղափոխուեց դէպի Հնդկական եւ Ատլանտեան ովկիանոսները:

Իհարկէ չի կարելի խօսել Լեւանտեան առեւտրի լրիւ ընդհատման մասին: Նրա պահպանմանը առաջին հերթին նպաստում էր Օսմանեան կայսրութեան աճող շահագրգռածութիւնը: Առեւտրական մաքսերը գնալով աւելի մեծ դեր էին խաղում սուլթանական գանձարանի համար: Միւս կողմից, առեւտրի զոյատեւման կարեւոր կուռ էր հանդիսանում Հնդկաստան տանող ծովային ճանապարհի վրայ պորտուգալացիների մենաշնորհը: Թերադրելով գները, նրանք հնդկական համեմունքները Եւրոպայում վաճառում էին 24 անգամ թանկ, քան դրանք արժէին Հնդկաստանում: [89, էջ 67] Վերջապէս չպէտք է մոռանալ, որ բուն Լեւանտի արտադրանքը Եւրոպա էր գնում միջերկրածովեան շուկաների միջոցով: Լեւանտը նաեւ այն հիմնական շուկան էր, որի վրայով պարսկական մետաքսը տեղափոխւում էր եւրոպական երկրներ, որոնք հանդիսանում էին մետաքսի հումքի եւ մետաքսեայ կտորեղէնի հիմնական սպառողները: Առհասարակ յայտնի է, որ

մետաքսը Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ միջազգային առեւտրում առաջնակարգ նշանակութիւն է ունեցել: XVI դարի սկզբից Եւրոպայում մետաքսեայ կտորեղէնի արտադրութիւնը ստացաւ այնպիսի բուռն զարգացում, որ տեղում արտադրւող հումքը այլեւս չէր բաւարարում եւ անհրաժեշտութիւն էր զգացւում այն ներմուծել Արեւելքից, առաւելապէս Իրանից, որը դարձել էր հում մետաքսի արտադրութեան խոշորագոյն կենտրոններից մէկը: Իրանական հում մետաքսը աչքի էր ընկնում իր գերազանց որակով: Նրա արտադրութեան հիմնական կենտրոններ էին Գիլանը, Մազանդարանը, Վրաստանը եւ Հայաստանը (Սիւնիքը եւ Արցախը):

Սակայն յաճախակի բռնկող թուրք-իրանական պատերազմների, թուրքական կարաւանային ճանապարհների վտանգաւորութեան, եւրոպական վաճառականների համար ցամաքային կարաւանային առեւտրի անսովոր լինելու եւ այլ պատճառների հետեւանքով եւրոպացիները հնարաւորութիւն չունէին Թուրքիայի վրայով անմիջական առեւտրական յարաբերութիւններ հաստատել Իրանի հետ եւ անձամբ կազմակերպել մետաքսի արտահանումը Եւրոպա: Ճիշտ է, անգլիական կապիտալը սկսել էր նոր ուղիներ որոնել դէպի Արեւելք, մասնաւորապէս փորձելով Ռուսաստանի վրայով հասնել մետաքսի արտադրութեան շրջանները՝ Շիրւան եւ Գիլեան, սակայն այդ փորձերը յաջողութիւն չունեցան: Զախողման մատնուեցին նաեւ 1600 թ. կազմակերպւած անգլիական Օստ-Հնդկական ընկերութեան ջանքերը Իրանից մետաքսը ծովով արտահանելու ուղղութեամբ:

Այսպիսով, ստեղծւում էր մի վիճակ, երբ Եւրոպայի համար կենսական նշանակութիւն ունեցող հարցի լուծման միակ ճանապարհը դարձեալ մնում էր հայ վաճառականների միջնորդ ծառայութիւններից օգտւելը: Հիրաւի, XVI դարի սկզբներից ցամաքային ճանապարհների վրայ հում մետաքսի արտահանութեան ընդգաւառում հայերը այլեւս մրցակիցներ չունէին:

Լեւանտեան քաղաքներում առեւտուր էին անում ինչպէս բուն Լեւանտում՝ Սիս, Այաս, Աղանա, Գարաման, Հռոմկլա, Հալեպ, Բէյրութ, Տրիպոլի, Կ. Պոլիս, Զմիւռնիա, Սալոնիկ, Ալէքսանդրիա, Ալէքսանդրեթ (Հայոց ծոց) եւ այլ քաղաքներում բնակւող հայ վաճառականները, այնպէս էլ Օսմանեան կայսրութեան եւ Սէֆեան Իրանում, այդ թւում նաեւ Հայաստանի զոյգ հատւածներում գործող հայ խոջաները:

Պատահական չէ, որ հայ առեւտրական կապիտալի ա-

բեւմտահայ ու արեւելահայ հատուածների միջեւ գոյութիւն ունէր խոր հակամարտութիւն, որի վերաբերեալ մենք վկայութիւններ ենք գտնում Գրիգոր Դարանաղցու մօտ: [79]

1536 թ. Ֆրանսիական Ֆրանցիսկ I թագաւորը սուլթան Սուլէյման Ղանունիի (օրենսդիր) հետ կնքեց կապիտուլյացիոն մի պայմանագիր, որը իրաւունք էր տալիս Ֆրանսիային մշտական դեսպանութիւն հաստատել Կ. Պոլսում, ինչպէս նաեւ հիւպատոսութիւններ կայսրութեան ցանկացած վայրում: Ֆրանսիական հպատակները ստանում էին Օսմանեան կայսրութեան տարածքում առեւտուր անելու արտօնութիւն, իսկ Թուրքիայում ապրող Ֆրանսիացիները ձեռք էին բերում արտաերկրայնութեան իրաւունք, այսինքն ենթակայ չէին թուրքական դատարանի իրաւասութեանը:

Լեւանտում եւրոպական տէրութիւնները՝ Վենետիկի հանրապետութիւնը, Ֆրանսիան, Անգլիան, Հոլանդիան եւ այլն սուլթանների թոյլտուութեամբ հիմնել էին իրենց հիւպատոսութիւնները, որոնք միաժամանակ հանդիսանում էին առեւտրական ներկայացուցչութիւններ: Նրանց վրայ էր դրուած արեւելեան վաճառականների հետ առեւտրական գործարքներ կատարելու պարտականութիւնը:

Լեւանտի քաղաքներում հայերը գործում էին ոչ միայն որպէս եւրոպացիների առեւտրական գործակալներ, այլեւ որպէս թարգմանիչներ, քանի որ նրանցից շատերը տիրապետում էին մի քանի լեզուների: [90, էջ 18]

Եւրոպական պետութիւններից իւրաքանչիւրը, փորձելով տիրապետող դիրքեր ձեռք բերել Լեւանտեան աւանդական ուղիներում եւ դառնալ իրանական հում մետաքսի, հայկական բամբակի եւ արեւելեան միւս ապրանքների առաւել խոշոր ներմուծողը Եւրոպա, աշխատում էր Օսմանեան կառավարութիւնից ստանալ առեւտրական իրաւունքներ ու առանձնաշնորհումներ: Այսպէս, 1553 թ. անգլիացի նաւագնաց Ինտոնի Ջենկինսոնը սուլթան Սուլէյման Ղանունիից ստացաւ առեւտրական արտօնագիր, որը անգլիացիներին դասում էր, հաւասար առանձնաշնորհեալ ազգերի թիւն: [91, էջ 5]

Լեւանտեան շուկաներում առեւտուր անելիս հայ վաճառականները, բնականաբար հանդէս էին գալիս որպէս միջնորդ վաճառականներ, մի հանգամանք, որը մի շարք տեսակէտներից ձեռնտու չէր նրանց. նախ, եւրոպացիները իրենք

էին թելադրում գները, յաճախ արհեստականօրէն իջեցնելով դրանք, կամ հայ վաճառականներին աւելի գիջող դարձնելու համար, բոյկոտի ենթարկելով նրանց ապրանքները եւ այլն: Այդ պատճառով, ինչպէս կտեսնենք ստորեւ, մեծածախ առեւտրով զբաղւող հայ խոջաները ձգտում էին անմիջականօրէն իրենց ապրանքներն արտահանել Եւրոպա, ազատուել Լեւանտում եւրոպական հիւպատոսների քմահաճոյքից եւ իհարկէ ձեռք բերել նաեւ գերշահոյթ:

Լեւանտի առեւտրական կենտրոններում բազմամարդ հայկական գաղութների եւ գաղթօջախների առկայութիւնը նշանակալիօրէն հեշտացնում էր հայ վաճառականների գործունէութիւնը եւ բարձրացնում նրանց մրցունակութիւնը: Օրինակ, Հալեպում, որը շնորհիւ իր աշխարհագրական դիրքի, ընդհուպ մինչեւ նոր ժամանակները հանդիսանում էր աշխարհի առեւտրական մեծագոյն կենտրոններից մէկը, արդէն XV դարում գոյութիւն ունէր բազմամարդ հայ գաղութ իր եկեղեցիներով, սրբատեղիներով, հիւրանոցներով եւ այլն: [93, էջ 46]

Հալեպի հայկական գաղթօջախը կազմակերպւել է XIV դարում, Կիլիկեան Հայաստանի անկումից յետոյ: Այստեղ գաղթած հայերը հիմնականում եղել են առեւտրական եւ ազնուական դասերից: [92, էջ 420] 1478 թ. Հալեպում արդէն կար Աստուածածնի անուամբ հայկական մի եկեղեցի, որի հովանու ներքոյ պարոն Ֆարաճի պատւէրով մի աւետարան էր ընդօրինակել Մելիքսէթ գրիչը: [94, էջ 433] 1500 թ. Հալեպում կառուցւում է Քառասուն մանկանց անուամբ մի սրբատեղի եւ հիւրատուն: Այդ Սալիբէ եւ Ագիզէ կոչւած երկու հայկական գերեզմանատներում յայտնաբերւել են XVI դարից 14 արձանագիր տապանաքարեր, որոնցից 13-ը պատկանում են «Հալեպ քաղաքում զարիպ մնացած Հին ջուղայեցի խոջաներին»: [95, էջ 12-13, 26]

XVI դարում, երբ սկսւում է հայ վաճառականութեան գործունէութեան աննախընթաց վերելքը, Հալեպը դառնում է Լեւանտեան առեւտրի ամենակարեւոր հանգոյցներից մէկը: Այն սկսում է առաջատար դեր խաղալ Արեւելքի (Հնդկաստան, Իրան, Անդրկովկաս) եւ Արեւմտեան Եւրոպայի (Վենետիկ) միջեւ ապրանքափոխանակութեան բնագաւառում: Եւրոպացի ճանապարհորդների վկայութեամբ, XVI դարում այստեղ ի թիւս արաբ, մաւրիտանացի եւ այլ ազգութիւնների վաճառականների, գործում էին նաեւ մեծ թւով հայ վաճառականներ: [32, էջ 88-89] Անգլիացի Իդուարդսի վկայութեամբ Հալեպի առեւտրում գլխաւոր դերը

պատկանում էր հայերին: «Այստեղ, - գրում է նա, - Նրանք արեւելեան ապրանքները (հում մետաքսը, արմտիք եւ այլն) փոխանակում են Վենետիկցիների բերած ապրանքների հետ»: [21, էջ 24] Յատկապէս ջուղայեցիները այս վաճառաշահ քաղաքում այն աստիճանի ստուար գանգուած էին կազմել, որ Եւրոպացի Վիլեամ Բիդդուլֆը, որը 1600 թ. այցելել էր Հալեպ, առանձնացնում է Նրանց մնացած հայ բնակիչներից. «Հալէպը, - գրում է նա, - բնակեցուած է թուրքերով, արաբներով, հրեաներով, յոյներով, հայերով, ջուղայեցիներով, նեստորականներով եւ տարբեր այլ ազգերով: [22, էջ 262] Ջուղայեցիներից յետոյ Հալեպում մեծ թիւ էին կազմում Ամիդցի (Դիարբեքիրցի) եւ առհասարակ Արեւմտեան Հայաստանի տարբեր վայրերի վաճառականները: Նրանց մասին Սիմէոն Լեհացին հիացմունքով գրում է. «Իմաստուն, փարթամք, գեղեցկատեսիլ, նման Ջուղայեցւոց եւ Ամիդեցոց՝ անուանիք եւ մեծ վաճառականք, որ մարդ ամաչէր երեսին նայել: Կայր խոջայ Ղանտիլն եւ այլ համբայք նորա քառասուն հազար, յիսուն հազար բեռան տէր: «Գնան Հնդկաստան, Պաղտատ եւ Ասպահան»: [96, էջ 319-320] Այստեղ 1590 թ. մինչեւ 1630 թ. Ֆրանսիացիները, հոլանդացիները եւ իսպանացիները մետաքսի առեւտուրը կատարել են բացառապէս հայերի հետ: [34, էջ 287]

Հայ վաճառականների կողմից Արեւելքի տարբեր երկրներից (Իրանից, Հնդկաստանից, Չինաստանից, Արաբիայից եւ այլն) Հալեպ բերուած ապրանքները սովորաբար տեղափոխուում էին միջերկրական ծովի Ալէքսանդրեթ (այժմ Իսքենդերուն) եւ Տրիպոլի նաւահանգիստները, իսկ աւելի ուշ նաեւ Լաթաքիա, իսկ այնտեղից արտածուում էին Եւրոպա:

Հալեպում յատկապէս յայտնի են եղել խոջաներ Պետիկենց եւ Սանոսենց առեւտրական ընտանիքները, որոնք միջնորդի դեր էին խաղում Արեւելքի եւ Արեւմուտքի վաճառականների միջեւ: Հալեպում Նրանք ունէին առեւտրական գրասենեակ, որը եւրոպական վաճառականների հետ իրագործում էր խոշոր գործարքներ: Ցիշեալ գրասենեակի ձեռքում էր կենտրոնացած իրանական հում եւ մշակուած մետաքսի գնման եւ վաճառահանման մենաշնորհը: Այդ գրասենեակը կամ ֆակտորիան իրականացնում էր նաեւ եւրոպական արտադրութեան ապրանքների, մասնաւորապէս գործուածքեղէնի արտածումը դէպի Լեւանտի գանգան քաղաքները, իսկ այնտեղից էլ դէպի արեւելքի խորքերը:

Խոջա Պետիկը ոչ միայն Հալեպի, այլեւ ողջ Սիրիայի մաքսապետն էր (Էմին): Նրանից կախում ունէին նաեւ Տրիպոլիի եւ

Ալէքսանդրեթի մաքսատները: Նա միաժամանակ հանդիսանում էր Հալեպում Հոլանդիայի առեւտրական ներկայացուցիչը: [34, էջ 287] Տեղական Օսմանեան իշխանութիւնների մօտ խոջա Պետիկի վարկը եւ ազդեցութիւնը էլ աւելի էր մեծանում այն պատճառով, որ նա Հալեպի քարւանսարաների, բաղնիքների եւ հասարակական այլ հաստատութիւնների վերակացուն էր: [93, էջ 48-49] Յանկանալով շեշտել խոջա Պետիկի հարստութիւնն ու ազդեցութիւնը Սիմէոն Լեհացին գրում էր. «Այլ եւ խոճայ Պետիկն եկաւ երկու եղբարք հեծեալ ի սպիտակ ձի արապի... ունէր բազում ճորտ եւ ծառայ, սիրահիք եւ ենիչերիք որպէս փաշայ մի»: [96, էջ 321]

Սակայն թուրքական իրականութեան պայմաններում, երբ խպառ բացակայում էր վաճառականի անձի եւ գոյքի ապահովութիւնը, երբ բռնութիւններն ու կեղեքումները սովորական երեւոյթ էին , խոջա Պետիկը դառնում է բանսարկութեան ու ընչաքաղցութեան զոհ: XVII դարի 30-ական թ.թ. նա գլխաւում է Հալեպի բանտում: [34, էջ 287] Այս դէպքը վերստին գալիս է վկայելու, որ Օսմանեան կայսրութիւնում գոյութիւն ունեցող բռնապետական վարչակարգը արգելք էր հանդիսանում հայ առեւտրական բուրժուազիայի զարգացմանը: Խոջա Պետիկը եւ նրա նմանները հանդիսանում էին ոչ միայն անկշտում ու գիշատիչ թուրքական իշխանութիւնների, այլեւ եւրոպական տէրութիւնների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Վենետիկի հանրապետութեան եւ այլն քաղաքական ու առեւտրական հակամարտութեան զոհը:

Այսպէս, նկատի ունենալով, որ Հալեպում մետաքսի վաճառքի մենաշնորհը գտնւում էր խոջա Պետիկի ձեռքերում եւ նա էր թելադրում նրա գները, այդ քաղաքում վենետիկեան հիւպատոսը, որի իրաւասութիւնների մէջ էր մտնում նաեւ հանրապետութեան առեւտրին նպաստելը, դիմում էր բազմապիսի դաւերի, որպէսզի թուրքական իշխանութիւնները հեռացնեն նրան իր գրաւած պաշտօնից: Սակայն նրա ջանքերը ժամանակաւորապէս աւարտւում են անարդիւնք ու ապարդիւն: Դրա պատճառը այն էր, որ չափազանց մեծ էր Հալեպի թուրքական իշխանութիւնների ստացած օգուտները խոջա Պետիկի առեւտրից: [73, էջ 187]

Ուշադրութեան արժանի է նաեւ հետեւեալ փաստը: 1535 եւ 1581 թ.թ. երբ Ֆրանսիան Թուրքիայից ձեռք բերեց կապիտուլիացիոն իրաւունք եւ Միջերկրականի Ալէքսանդրիա, Զմիւռնիա, Սայդա (Սիդոն) նաւահանգիստներում ու Հալեպում բաց արեց հիւպատոսութիւններ, անգլո-ֆրանսիական պայքարը ընդունեց ան-

նախադէպ չեկացած բնոյթ: Իր ախոյեանին մահացու հարուած հասցնելու բրիտանական նենգամիտ ծրագրի կարեւորագոյն կէտերից մէկն էր լինելու նաեւ Հալեպում մետաքսի առեւտրի խափանումը, որից մեծամեծ եկամուտներ էր ստանում իր ախոյեանը՝ Ֆրանսիան: Այդ նպատակով շահ Աբբաս Իր յաջորդ՝ շահ Սէֆիի մօտ է ուղարկւում բրիտանական մի դեսպանութիւն, որի խնդիրն էր լինելու շահից ձեռք բերել մետաքսը ծովային ճանապարհով արտահանելու մենաշնորհը, նրա առեւտուրը ցամաքային ճանապարհից շեղելու ակներեւ մտադրութեամբ: Դեսպանութեան ձախողումից յետոյ անգլիացիները ձեռնամուխ են լինում իրենց ծրագրի աւելի դիւրին մասի իրագործմանը, այն է՝ խոջա Պետիկի ոչնչացմանը, որը, ինչպէս նշւեց, իր ներկայացուցիչների միջոցով Հալեպ էր բերել տալիս Իրանի եւ Հնդկաստանի ապրանքները՝ հում մետաքս, մետաքսէ հիւսուածեղէններ եւ այլն: [34, էջ 279-280]

Տեղին է նշել, որ հայ վաճառականների կարողութիւնը շատ յաճախ կողոպուտի ճարակ էր դառնում նաեւ տեղական կառավարիչների միջեւ մղւող անընդհատ միջաւառական պատերազմների ժամանակ: Հայ վաճառականները յատկապէս մեծ վնաս կրեցին, երբ 1604-1605 թ.թ. Դամասկոսի փաշան մի քանի անգամ պաշարեց ու կողոպտեց Հալեպը, անդամալուծելով Լեւանտեան առեւտրի այդ խոշոր կենտրոնի ողջ առեւտուրը: [97, էջ 117. 98, էջ 241] Փաշաների միջեւ արիւնախանձ ու անդադար պատերազմներն, որպէս կանոն, ուղեկցւում էին հետեւողական աւարառութիւններով, որոնց զոհերն էին դառնում նաեւ Իրանից ու Մեքքայից եկող կարաւանները:

Սովորաբար մետաքսով բեռնաւորւած հայ վաճառականների կարաւանները Հալեպ էին ժամանում Եփրատի հովտով, հատելով կարինը, իսկ աւելի յաճախ՝ Թաւրիզ-Վան-Բաղեշ-Դիարբեքիր-Բիրեջիք ճանապարհով:

Դեռեւս միջնադարում Թաւրիզը հանդիսանում էր Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ խոշոր մշակութային ու տնտեսական կենտրոն: Թաւրեզի մասին Ռաֆայէլ դյու Մանը գրում է. «Թաւրեզը առեւտրական մեծ քաղաք է, ինչպէս նաեւ խոշոր հանգուցային կենտրոն, որտեղից անցնում են եւ պարսկական հողեր մուտք գործում բազում ճանապարհներ Կոստանդնուպոլսից, Զմիւռնիայից, Բուրսայից, Թոքատից, Էրզրումից, Երեւանից, Նախիջեւանից, Հալեպից, Դիարբեքիրից, Մերդինից, Ուրֆայից,

Բիթլիսից, Վանից, Զորսից, Ագուլիսից, Էգլիսից, ամբողջ Գուրջիստանից ու Քրդստանից, Գանջայից, Շամախուց, Գիլանից, Արդաբիլից, մի խօսքով բոլոր հեռու ու մօտիկ տեղերից՝ որպէս Սպահան գնալու համար տարանցիկ վայր: Առեւտրականներն այստեղից անցնում են գնալու համար նաեւ Շամախի, Գիլան, Գանջա: Սրանք այն երեք քաղաքներն են, որտեղ վաճառւում են պարսկական մետաքսները»:

Նշելով, որ Թաւրիզում Զուղայի հայ վաճառականներն ունեն առեւտրական գրասենեակներ (ֆակտորիաներ) եւ խանութներ, Ռաֆայէլ դյու Մանը շարունակում է. «Նրանց կարաւանները ըՀմիւռնիայից եւ Հալեպից Պարսկաստան են բերում լոնդոնեան, ֆրանսիական եւ վենետիկեան կտորեղէն, մարջան, դեղին համպար, վենետիկեան հայելիներ, երկաթ եւ այլն, մահուդից եւ այլ կտորներից պատրաստած ապրանքներ, պերճանքի առարկաներ, որոնք ինչպէս յայտնի է Պարսկաստանում լաւ սպառում են գտնում: [89, էջ 332]

Թաւրիզը եւ առհասարակ Ատրպատականը սերտ կապերի մէջ էր գտնւում նաեւ Արարատեան դաշտի հետ: Այստեղից ստացւում էր մեծ քանակութեամբ բրինձ, բամբակ, իւղ, պանիր, ձէթ, ճրագու, կաշի, մորթի եւ այլն: [100, II, էջ 51] Իր հերթին Թաւրիզից, Մակուից եւ այլն Արարատեան դաշտ էին արտահանւում բազմապիսի ապրանքներ եւ յատկապէս հացաբոյսեր:

Թաւրիզ-Զմիւռնիա միջազգային տարանցիկ առեւտրի մայրուղին, որի Թաւրիզ-Էրզրում (Կարին) հատւածն անցնում էր Հայաստանի տարածքով, յատկապէս մեծ նշանակութիւն ունէր Սէֆեան Իրանի եւ Արեւմտեան Եւրոպայի երկրների միջեւ կատարւող ապրանքափոխանակութեան համար: Այն մի կողմից Թաւրիզի վրայով կապւած էր կենտրոնական Իրանի, որտեղից նաեւ Միջին Ասիայի, Հնդկաստանի, Չինաստանի հետ, իսկ միւս կողմից ձգւում էր մինչեւ Միջերկրականի ափերը եւ Զմիւռնիայի նաւահանգստի միջոցով Մերձաւոր արեւելքի երկրները, Միջին Ասիան, Հնդկաստանն ու Չինաստանը կապում Արեւմտեան Եւրոպայի գլխաւոր առեւտրական կենտրոններ Վենետիկի, Ջենովայի, Ֆլորենցիայի, Լիվոռնոյի, Մարսէյլի, Ամստերդամի, Լոնդոնի եւ այլ վաճառաշահ քաղաքների հետ: [101, էջ 61] Վերոյիշեալ մայրուղին մանրամասն նկարագրել է XVII դարի վաճառական Զաքարիա Ագուլեցին՝ իր «Օրագրութեան» մէջ: Նա վկայում է, որ Թաւրիզ-Զմիւռնիա գլխաւոր մայրուղուն զուգահեռ գործել են նաեւ մի շարք երկրորդական ճանապարհներ, որոնք թէեւ հիմնականում

ծառայում էին ներքին առեւտրին, սակայն կապված լինելով գլխաւոր մայրուղու հետ, Արեւելեան Հայաստանի եւ յատկապէս Արարատեան երկրի ներքին գաւառները եւս ընդգրկում էին միջազգային տարանցիկ առեւտրի մէջ: [102, էջ 21]

Հայ վաճառականների համար Լեւանտեան առեւտրի կարեւոր կենտրոն էր նաեւ Բուրսան: Դեռեւս XIV դարի վերջերից Բուրսան վերածւեց Անատոլիայի կարեւորագոյն առեւտրական քաղաքի: Նա փաստօրէն դարձաւ Անատոլիայով անցնող բոլոր առեւտրական ճանապարհների հատման կենտրոն: Արեւմտեան Անատոլիայի այնպիսի առեւտրական կենտրոնները, ինչպիսիք էին Պալատիան, Էֆեսը (Եփեսոս) եւ Զմիւռնիան արդէն 1391 թ. ընկան օսմանցիների հակողութեան տակ եւ դրանից յետոյ ամբողջապէս կապված էին Բուրսայի հետ: Այսուհետեւ Իրանից եկող կարաւանները գնում էին դէպի այդ առեւտրական նաւահանգիստները Բուրսայի վրայով: Աւելին, ընդլայնելով իր տիրոյթներն արեւելքում, սուլթան Բայազեդ I իր հակողութեան տակ վերցրեց առեւտրական այդ ուղին: XV դարում Ամասիա եւ Թոքատ քաղաքները, որոնք տեղաւորուած էին այդ ճանապարհի վրայ, Բուրսայից յետոյ դարձան Անատոլիայի կարեւորագոյն քաղաքական, տնտեսական եւ մշակութային կենտրոններ:

Բուրսան առեւտրական սերտ կապերով կապված էր նաեւ հարաւային Անատոլիայի Անթալիա եւ Ալանիա նաւահանգիստների հետ, որտեղ առաւելապէս ներմուծւում էին հնդկական եւ արաբական ապրանքներ:

Բուրսան հանդիսանում էր մի կարեւորագոյն առեւտրական կենտրոն, որտեղ եւրոպական, մասնաւորապէս վենետիկեան, ջենովական եւ ֆլորենտինեան վաճառականները ձեռք էին բերում արեւելեան ապրանքներ եւ վաճառում էին առաւելապէս եւրոպական բրդէ գործուածքներն: Բուրսայի զարգացումը նախ եւ առաջ տեղի էր ունենում իրանական մետաքսի առեւտրի հաշւին: Այդ քաղաքում Մեդիչիների եւ այլ ֆլորենտինեան տների ներկայացուցիչ Ջ. Մարինին 1501 թ. նշում էր, որ իւրաքանչիւր տարի Իրանից Բուրսա էին ժամանում մետաքսով բեռնաւորուած բազմաթիւ կարաւաններ:

Լեւանտեան առեւտրի խոշորագոյն կենտրոններից մէկն էր նաեւ Կ. Պոլիսը, որը հանդիսանում էր Արեւելքը Արեւմուտքի հետ կապող կարեւորագոյն հանգոյց: Նա յատկապէս առաջնակարգ դերք էր գրաւում Իրանից Արեւմտեան Եւրոպա տանող միջազգային տարանցիկ կարաւանային ճանապարհի վրայ: Այստեղ

դեռեւս Ծ-րդ դարի կէսերից գոյութիւն ունէր հայ գաղութ: [103, էջ 182] Մուհամմեդ Բ-ի կողմից Կ. Պոլիսը գրաւելուց յետոյ տեղի հայ գաղութը, յատկապէս բռնի գաղթեցումների ճանապարհով, նշանակալիօրէն սուարացաւ: 1461 թ. Մուհամմեդ Բ-ն յատուկ ֆիրմանով հաստատեց Կ. Պոլսում հայ գաղութի գոյութիւնը:

Դեռեւս շահ Աբբաս Բ-ի դարաշրջանից շատ առաջ Հին Ջուղայի եւ նրա հարակից վայրերի (Ագուլիս, Նախիջեւան, Փարաքա, Ղափան եւ այլն) հայ վաճառականները, որոնք առեւտուր էին անում Սեւ ծովի նաւահանգիստների հետ (Կաֆա), գալիս եւ հաստատւում են Կ. Պոլսում: [21, էջ 22] XVII դարում արդէն Կ. Պոլսի հայ գաղթօջախի բնակչութեան թիւը հասնում էր 100 հազարի եւ այնտեղ կար վեց եկեղեցի:

Այս քաղաքի մասին Գրիգոր Դարանաղցի պատմիչը նշում է, որ «Համենայն վաճառականք հայերք շատ կան անդ յամենայն աշխարհաց»: [79, էջ 168-169]

Կ. Պոլսում եւս միջազգային առեւտրի գործօն մասնակիցներն էին ինչպէս արեւմտահայ, այնպէս էլ արեւելահայ վաճառականները, որոնց մէջ գլխաւոր դանգուածը կազմում էին Նոր Ջուղայեցիները: Վերջիններս Կ. Պոլսում սերտօրէն միաձուլեցին թուրքական վաճառականների հետ: Ընդ որում նրանցից շատերն ընդունեցին մահմեդականութիւնը եւ նպաստեցին առեւտրական խաւի առաջացմանը նաեւ տեղի թուրքերի շրջանում: [104, էջ 208-215]

Կ. Պոլսում հայերը հանդիսանում էին եւրոպական առեւտրականների համար պարտադիր միջնորդներ: Այսինքն նրանք այս քաղաքում արեւելեան ապրանքներ կարող էին ձեռք բերել միայն հայ վաճառականների միջոցով: Միջնորդ կամ կոմպրադորական առեւտուրը հայ վաճառականների համար մի մենաշնորհ էր, որ նրանք պահպանեցին մինչեւ 19-րդ դարը: [105, էջ 134] Անգլիացի ուղեգիր Ջորջ Սանդիսը, որը 1610 թ. այցելել էր Կ. Պոլիս, վկայում է, որ անգլիացի վաճառականները այդ քաղաքում ձեռք են բերում պարսկական գորգեր, այծի բրդից պատրաստուած գործուածքներ, մետաքսէ դիպակներ, հում մետաքս եւ այլն, որոնք «Պարսկաստանից այստեղ են բերւում ցամաքային ճանապարհով հայ վաճառականների կողմից»: [106, էջ 86]

Այդ նոյն անգլիացին ստիպուած էր խոստովանել, որ այդ քաղաքում, որտեղ բրիտանական առեւտրական հիմքերը առաւել կայուն էին, քան Մերձաւոր Արեւելքի որեւէ այլ վայրում, հում մետաքսի առեւտուրը գտնւում է առաւելապէս հայ վաճա-

ռականների ձեռքում:

Օսմանեան կայսրութեան մէջ անձի անապահովութեան եւ գոյքի անվտանգութեան երաշխիքներ չլինելու պատճառով Կ. Պոլսում հաստատած հայ վաճառականներից շատերը քաղաքական վայրիվերումների, մայրաքաղաքում յաճախակի բռնկող ապըստամբութիւնների եւ այլ պատճառների հետեւանքով ստիպւած էին երկարատեւ բնակութիւն չհաստատել սուլթանների մայրաքաղաքում եւ հեռանալ այլ ապահով վայրեր:

Յայտնի է օրինակ, որ երկարատեւ թուրք-իրանական պատերազմների ժամանակ Նոր Ջուղայից, Ագուլիսից, Նախիջեւանից, Ղափանից, Ղրիմից (Կաֆա) եւ այլ վայրերից եկած եւ Կ. Պոլսում հաստատւած հայ վաճառականների համար ստեղծւում էր տնտեսական ու քաղաքական անապահով վիճակ, որի պատճառով նրանց մի մասը ստիպւած էր թողնել սուլթանների մայրաքաղաքը եւ հեռանալ այլ վայրեր: Սակայն նրանց տեղը անմիջապէս զբաղեցնում էին Անատոլիայից, Արեւմտեան Հայաստանից (գլխաւորապէս Ակնից, Բենգեանից, Ապուչեհից եւ այլն), Արեւելեան Հայաստանից ու Իրանի հայ գաղթօջախներից եկած հայ վաճառականները: [21, էջ 92-93]

Կ. Պոլիսը այսպիսով հայ վաճառականների համար ծառայում էր նաեւ որպէս միջանկեալ մի կայան Արեւմտեան Եւրոպա տեղափոխւելու եւ այնտեղ խարիսխ գցելու ճանապարհին:

Լեւանտեան առեւտրի աչքի ընկնող կենտրոններից մէկն էր նաեւ Զմիւռնիան: Միջմայրցամաքային առեւտրում ծովափնեայ եւ նաւահանգստային այս քաղաքի նշանակութիւնը մեծանում է 16-րդ դարի վերջերից սկսած: Սակայն դեռեւս XVI դարի կէսերից փոքրասիական ներքին առեւտրին քաջատեղեակ հայ վաճառականները Զմիւռնիան օգտագործում էին որպէս միջանկեալ առեւտրական կայան եւրոպական երկրների հետ առեւտուր անելու համար: [107, էջ 67] Ըստ Ֆրանսիացի պատմաբան Պ. Մասսոնի, իրանական մետաքսի մատակարարումները այդ քաղաքը առաջին անգամ արձանագրել է 1621 թ. [108, էջ 372]. Սակայն չուտով նա դառնում է մետաքսի առեւտրի խոշորագոյն կենտրոններից մէկը:

Զմիւռնիայի առեւտրական նշանակութեան մասին Սիմէոն Լեհացու մօտ գտնում ենք հետեւեալ վկայութիւնը. «Եւ սա էր ծովու եալու մեծ սկալայ, որ Ստամպօլա, Մսրա, Վանատիկու, Սաքըզու եւ այլոց կէմիք կու խաղային եւ բազում Ֆռանկք եւ հոռոմ կային անդ»: [98, էջ 37-38]

Զմիւռնիայում գործում էին նաեւ բազմաթիւ մեծածախ առեւտրով զբաղող հայ վաճառականներ, որոնք միանգամ գնում էին Եւրոպայից նաւերով, եւ Արեւելքից կարաւաններով բերւած ապրանքները: Այդպիսի վաճառականներից մէկն էր, օրինակ, Անտոն Չելեպին, որի առեւտրական գործունէութեան մասին Առաքել Դավրիժեցին հաղորդում է հետաքրքիր տեղեկութիւններ: «... էր եւ անդ, (Թիմա Զմիւռնիայում Վ.Բ.) Հայ ազգաւ այր ոմն քրիստոնեայ՝ որոյ անուն էր Անտոն չալապի, եւ էր սա ի քաղաքէն Բուրսայոյ՝ որոյ տուն եւ տեղիք եւ՝ ընակութիւնն անդ ի Բուրսայ էր: Այլ եւ յԻզմիր քաղաքի եւս ունէր տունս եւ ապարանս, նաեւ ի Կոստանդնուպօլիս ունէր զտունս եւ զապարանս հոյակապս, եւ ոսկեզօծ զարդարեալ երանդ երանդ գունով. եւ էր այրս այս Անտոն չալապի յոյժ երեւելի եւ հռչակեալ այնքան, մինչ զի յայտնի էր ի դուռն թագաւորին Օսմանցւոց, նաեւ ի հեռաւոր աշխարհս ի Ֆռանկաց: Ի Պարսից, զի կարի ընչաւէտ եւ փարթամ էր ստացուածովք եւ էր իւր գործ վաճառականութիւն, որոյ պատճառ է երբեմն ժամանակաւ ի Կոստանդնուպօլիս լինէր, եւ երբեմն ի Զմիւռնի լինէր, որ է Իզմիր: Եւ յորժամ գային կարաւանք վաճառականաց՝ յաշխարհէն Պարսից ի քաղաքն յԻզմիր, զամենայն բեռինս կարաւանին միանգամայն գնէր, զինչ եւ լինէր, թէ ապրիշում եւ թէ թաֆարիզ, եւ միանգամայն վճարէր զգինն: Սոյնպէս եւ աշխարհէն Ֆռանկաց՝ յորժամ գային ծովով նաւքն բարձեալ բեռամբ պատուական ստացուածովք. զնաւին բեռն միանգամայն ինքն միայն գնէր եւ վաղվաղակի զգինն վճարէր»: [23, էջ 338-339]

Լեւանտեան առեւտրի մէջ չափազանց մեծ դեր էին խաղում նաեւ Արեւմտեան Հայաստանի առեւտրական բազմաթիւ կենտրոնները՝ Կարինը (Էրզրում), Ակնը, Ամիդը (Դիարբեքիր), Երզնկան, Բաղեշը, Բաբերդը (Բայբուրդ), Վանը, Արճեշը, Արծկէն, Խլաթը, Խիզանը, Մուշը, Ոստանը, Ախթամարը, Խարբերդը, Սղերդը եւ այլ քաղաքներ, որոնք գտնելով կամ գլխաւոր, կամ օժանդակ առեւտրական ուղեգծերի վրայ, մասնակցութիւն ունէին միջազգային տարանցիկ առեւտրին: [34, էջ CIX]

Արեւմտեան Հայաստանից արեւմուտք, ողջ Փոքր Ասիայի տարածքում հայ գաղթօջախների առկայութիւնը ստեղծում էր մի միասնական շղթայ, որոնք իրար հետ կապած էին առեւտրատնտեսական բազմապիսի թելերով: Իզուր չէ, որ XVII դարի սկզբին Սիմէոն դպիր Լեհացին գրում էր, «Եւ թէ հաշուես ի

Պուղտանայ մինչեւ Ստամպօլ, պուֆուն Ուռումէլին մինչեւ մեծն Վանատիկ, նա չկայ քաղաք, գեղ կամ չֆտլիկ, որ հայ չկենայ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի որպէս գիտէ»: [96, էջ 469]

Լեւանտեան առեւտրի համար կարեւոր տարանցիկ կայան եւ հանգուցակէտ էր Էրզրում (Կարին) քաղաքը: Այն Իրանի եւ Լեւանտի միջեւ ցամաքային կարաւանային ճանապարհների միջեւ հանդիսանում էր կապող օղակներից մէկը: Ֆրանսիացի ճանապարհորդ Պիտտոն դէ Տուրնեֆորը գրում է. «Այս քաղաքը (Էրզրում Վ.Բ.) տարանցիկ առեւտրի կենտրոն է Հնդկաստանից եկած ապրանքների համար... որոնցից հիմնականն են Պարսկաստանի մետաքսը, բամբակը, թմրադեղերը, տարբեր գոյնի մահուդները, որ անցնում էին բացառապէս Հայաստանի վրայով»: [62, էջ 202]

17-րդ դարի մատենագիր Յակոբ Կարնեցին իր «Նկարագիր վերին Հայոց» ժամանակագրութեան մէջ Էրզրումի մասին հաղորդում է հետեւեալ տեղեկութիւնը. «Եւ ի վաճառականացն ի Դ (4) կողմանց ազգէս հայոց անթիւ կան նստեալ տարին բոլոր բովանդակ ի գնել եւ ի ծախել՝ ի փառէայ եւ ապրշում, ցեղ ու ցեղ դումաշ եւ դանավուզ չուխայ, կտաւեղէն եւ քթան անթիւ. եւ բազում ջուահիր քար, արմաս եւ եաղութն, լալ եւ զմրութն, սամուր եւ վարշաղ եւ ամենայն մազեղէն ի բոլոր տարին յայտնի գնեն եւ վաճառեն, զի այժմ քաղաքս այս յոյժ բանտար է նման Ստամպօլայ, որ տարին Ժ [10] կամ ԻՌ (20.000) ըէռն մտանէ եւ կելանէ, որ ՃՌ (100.000) դուռուշ մտանէ քսակն փաշային»: [109, էջ 668-669]

Արեւմտահայ վաճառականների մէջ Ամիդցի խոջաները եւս աչքի էին ընկնում միջազգային առեւտրի բնագաւառում իրենց եռանդով եւ ձեռներեցութեամբ: Խօսելով նրանց մասին Սիմէոն Լեհացին տեղեկացնում է, որ Ամիդում ապրում էր հազար տուն հայ, որոնք «... ամենքն հարուստ եւ փարթամ, պերճ եւ փառաւոր եւ որչափ ամայ եւ մեծութիւն կայ, ամէնն իրենք զաֆթ են արել, թէ զառապխանան, թէ զկօմրուկն, թէ զիսաներն եւ զայլ ամենայն»: [98, էջ 205]

Թաւրիզ-Զմիւռնիա ճանապարհի կարեւորագոյն հանգոյցներից մէկն էր Թոխաթ քաղաքը: Թոխաթի մասին Տավերնիէն գրում է, որ այն հանդիսանում է Արեւելք տանող խոշոր տարանցիկ կայաններից մէկը: Այստեղ «անվերջ կարաւաններ են գալիս Պարսկաստանից, Դիարբեքիրից, Բաղդադից, Կոստանդնուպոլսից,

Զմիւռնիայից, Մինոպից եւ այլ վայրերից» գրում է նա: [50, էջ 11-12]

Լեւանտեան առեւտրում իր ակնառու դերն ունէր նաեւ Արեւմտեան Հայաստանի աչքի ընկնող առեւտրական կենտրոններից մէկը՝ Վանը: Ֆրանսիացի Ռաֆայէլ դյու Մանի վկայութեամբ «Վանի տառեխը առեւտրական խոշոր շրջանառութիւնների նիւթ էր մատակարարում շատ հայ վաճառականների, որոնք արտահանում էին այդ ապրանքը մինչեւ Մոսկա եւ Ռուսաստանի այլ կողմերը, Պարսկաստան, Վրաստան: Ամբողջ Արեւելքը ճանաչում եւ գնահատում էր այդ հռչակաւոր ձուկը»: [30, էջ 347]

Լեւանտեան շուկաներում չափազանց յարգի էին Հայաստանի գունաւոր կաշիները (սաֆեան), գդմորը, ճոթերը, բամբակը, հում մետաքսը եւ այլն:

Հայերի մասնակցութիւնը Լեւանտեան առեւտրին առանձնակի թափ ստացաւ XVII դարի սկզբներին: Դա բացատրւում է առաջին հերթին նրանով, որ եւրոպական շուկաներում մետաքսի պահանջարկը շէշտակիօրէն աճել էր: Ստամբուլում նիդերլանդների դեսպանը 1615 թ. մայիսի 2-ին իրենց արտաքին գործերի նախարարին հաղորդում էր, որ դէպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհի բացումից յետոյ Արեւելքի հետ համեմունքների առեւտուրն անցաւ երկրորդ պլան եւ ընդհակառակն, Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ առեւտրի հիմնական ապրանք դարձաւ հում մետաքսը: [34, էջ 293-294, 302] Գերմանացի Ադամ Օլեարիուսի վկայութեամբ XVII դարի առաջին կէսին Իրանում հաւաքւում էր շուրջ 20 հազար հակ հում մետաքս, [76, էջ 791] որից երկրի ներսում օգտագործւում էր միայն հազար հակ, իսկ մնացածը արտահանւում էր առեւտրի Լեւանտեան կենտրոններ եւ Եւրոպա:

Հարկ է սակայն նշել, որ Լեւանտում հայ վաճառականները կամայ թէ ակամայ հանդիպելու էին լուրջ առեւտրական մրցակիցների ու ախոյեանների: Կապիտուլյացիաների հաստատումով XVI դարի վերջերում եւրոպական առեւտրական կապիտալի ներթափանցումն արդէն աւարտել էր Մերձաւոր Արեւելքում եւ դրանով Արեւելքի շուկան կուսադաշտ էր դարձել Արեւմտեան Եւրոպայի առեւտրական պետութիւնների միջեւ, որոնց գլխաւորները Ֆրանսիան, Անգլիան եւ Հոլանդիան էին:

Ելնելով Ֆրանսիայի եւ Հոլանդիայի հետ իր քաղաքական եւ առեւտրական հակամարտութիւնից, Անգլիան, օրինակ, ամէն կերպ աշխատում էր կամ իրանական մետաքսի արտահանման մենա-

չընորհը վերցնել իր ձեռքը եւ կամ, ծայրայեղ դէպքում, Լեւանտում խափանել մետաքսի առեւտուրը: Անտարակոյս, այս քաղաքականութիւնն իր սուր ծայրով ուղղած էր նաեւ հայ վաճառականութեան դէմ, մանաւանդ որ նրա առեւտրական գործառնութիւնների մեծագոյն մասը կատարւում էր հենց Ֆրանսիայի ու Հոլանդիայի հետ: Առհասարակ պէտք է նշել, որ յանձինս հայ առեւտրական դասի բրիտանական առեւտրական կապիտալը իր համար տեսնում էր լուրջ մրցակից:

Իր ախոյեաններին թուլացնելու համար Մեծ Բրիտանիան կազմակերպում է բազմաճակատ մի գրոհ: Նախ 1592 թ. անգլիացի վաճառականները ստեղծեցին «Լեւանտեան ընկերութիւնը», որը երբեմն կոչում էին նաեւ «Թուրքական ընկերութիւն»: Ձգտելով էժան գներով հում մետաքս ձեռք բերել եւ նրա արտահանման մենաշնորհը վերցնել իրենց ձեռքը, «Լեւանտեան ընկերութեան» վաճառականները հետեւողականօրէն փորձեր էին կատարում թափանցել Իրանում մետաքսի արտադրութեան հիմնական շրջանները: 1607 թ. նրանք թուրքական սուլթանից իրաւունք ստացան մուտք գործել Սեւ ծով, որը փակ էր եւրոպացիների առջեւ: Այնուհետեւ, 1609 թ. կ. Պոլսում անգլիական դեսպանը թոյլտւութիւն ձեռք բերեց, որպէսզի «Ռոյեալ Դիֆենս» նաւը անցնի Բոսֆորով եւ Տրապիզոնում կազմակերպւի առեւտրական գրասենեակ, որի միջոցով ենթադրւում էր Իրանից հում մետաքս արտահանել: [110, էջ 29]

Թուրքախրութիւնը ընտրելով որպէս իր նպատակներին հասնելու ազդու միջոց, «Լեւանտեան ընկերութիւնը» նոյնիսկ սկսեց եռանդուն ճնշում գործադրել սեփական կառավարութեան վրայ, որպէսզի նա հակաթուրքական դաշինքի վերաբերեալ պայմանագիր չկնքի շահ Աբբաս Իի ներկայացուցիչ Էնտոնի Շիրլիի հետ, որն այդ նպատակով 1599 թ. շահի կողմից ուղարկած էր Եւրոպա: [67] Այդ ճնշման հետեւանքով Շիրլիի առաքելութիւնն աւարտւեց կատարեալ ձախողմամբ: Բանը հասաւ նոյնիսկ նրան, որ «Լեւանտեան ընկերութեան» վաճառականների պահանջով բրիտանական պետական քարտուղար Սոլսբերին 1606-1607 թ.թ. բողոք ներկայացրեց Տոսկանայի դքսին, պահանջելով դադարեցնել անգլիական նաւերի օգտագործումը թուրքերի դէմ: [111, No 283, 104] Իսկ Էնտոնի Շիրլիի եղբայրը, Թոմաս Շիրլին, որը Եւրոպայում մեծ հռչակ էր ձեռք բերել իր «Դիտողութիւններ թուրքերի մասին» հակաթուրքական պամֆլետի շնորհիւ, նեւեց Թաւերի բանտը՝ «բարեկամ

Թուրքիայի դէմ քարոզչութեան» մեղադրանքով:

Ի դէպ, անգլիացիներին յայտնի էր, որ շահ Աբբաս Ի-ի յանձնարարութեամբ նրա հայ դիւանագիտական յանձնակատարները Եւրոպայում բանակցութիւններ են վարում իրանա-եւրոպական հակաթուրքական դաշինք կնքելու վերաբերեալ: [Տես 27] Այդ հանգամանքը եւս անկասկած նրանց կողմից օգտագործւում էր թուրքական իշխանութիւնների մօտ հայ վաճառականներին վարկաբեկելու համար:

Չնայած Սուլթանից ստացած կապիտուլիացիոն արտօնութիւններին, [Տես 112, էջ 37] Լեւանտում անգլիացիները աստիճանաբար զիջում էին դիրքերը, ասպարէզը թողնելով իրենց մրցակիցներին՝ հոլանդացիներին ու ֆրանսիացիներին, իսկ հում մետաքսի գծով նաեւ հայերին: Դրա պատճառներից մէկն էլ այն էր, որ նորաստեղծ Օստ-Հնդկական ընկերութիւնը Լեւանտեան վաճառականներին դուրս էր մղում արեւելեան պերճանքի առարկաների ու համեմունքների առեւտրից: Ժամանակակիցների վկայութեամբ, Օստ-Հնդկական ընկերութեան ստացած շահոյթի չափը երեք անգամ գերազանցում էր Լեւանտեան ընկերութեան շահոյթի չափին: [113, էջ 129, 150] Այդ պատճառով 1604 թ. Լեւանտեան ընկերութեան թւով 64 վաճառականներ տեղափոխուեցին աւելի շահութաբեր Օստ-Հնդկական ընկերութիւնը: [114, էջ 91]

Լեւանտեան ընկերութեան մրցողունակութեան բարձրացմանը չօգնեց նոյնիսկ այն, որ 1617 թ. անգլիական այսպէս կոչւած «Արկածախնդիր վաճառականների» ընկերութիւնը հրաժարւեց Եւրոպայից Լեւանտ ապրանքներ ներմուծելու իր իրաւունքից յօգուտ «Լեւանտեան ընկերութեան»: [115, էջ 112]

Անգլիացիների համար բնականաբար բնաւ ձեռնտու չէր հում մետաքսը ձեռք բերել երկրորդ ձեռքերից՝ հայ վաճառականներից: Մատնանշելով այդ իրողութիւնը, Օստ-Հնդկական ընկերութեան ծառայող Ռիչարդ Ստիլը գրում էր, որ Հալէպում, օրինակ, հում մետաքսը 50 տոկոսով աւելի թանկ էր, քան բուն Իրանում: [116, էջ 196] Այդ պատճառով անգլիացիները եռանդուն կերպով աշխատում էին ներթափանցել իրանական շուկայ:

Անգլիական առեւտրական կապիտալի եւ հայ խոշոր առեւտրականների միջեւ ախոյանութիւնը չսահմանափակւեց լոկ XVII դարի առաջին քառորդով: Ողջ հարիւրամեակի ընթացքում անգլիացիները փորձում էին հայ վաճառականների ձեռքից խլել մետաքսի արտահանման նրանց մենաշնորհը եւ յատկապէս սահմանափակել

այդ ապրանքի արտահանումը դէպի Լեւանտ: Սակայն բրիտանական այդ քաղաքականութիւնը ճեղքւածք տւեց եւ չիրականացաւ գլխաւորապէս այն պատճառով, որ չնայած գործադրւած բազում ջանքերին, Օսմ-Հնդկական ընկերութեանը այդպէս էլ չյաջողւեց կազմակերպել իրանական մետաքսի զանգւածային արտահանութեան գործը Պարսից ծոցի ճանապարհով: Նախկինի պէս, այդ ապրանքի մեծագոյն մասը արտահանւում էր հայ վաճառականների կողմից, առաւելապէս թուրքական կարաւանային ճանապարհով դէպի Լեւանտի առեւտրական կենտրոնները: [117, էջ 413-416. 118, էջ 157] Ընդ որում հայ վաճառականների Լեւանտեան առեւտրի վրայ բարերար ազդեցութիւն ունեցաւ ինչպէս 1616 թ. Սարաւում կնքւած թուրք-իրանական պայմանագիրը, որի մէջ յատուկ յօդւած էր պարունակւում այն մասին, որ իրանական վաճառականները իրաւունք են ստանում Թուրքիայի վրայով ազատօրէն արտահանել հում-մետաքս եւ այլ ապրանքներ [119, էջ 189], այնպէս էլ Զոհաբում կնքւած 1639 թ. թուրք-իրանական հաշտութեան պայմանագիրը, որը երկու պետութիւնների միջեւ աւելի քան 80-ամեայ խաղաղ զարգացման մի շրջան բերեց: Հայ վաճառականների կեղեքումները, նրանց ապրանքների բռնագրաւումները կամ անօրինական մաքսերի սահմանումը որոշ չափով նւազեց: Շահագրգռւած լինելով, որ ողջ իրանական առեւտուրը կատարւի Թուրքիայի վրայով, սուլթանական կառավարութիւնը միջոցներ էր ձեռնարկում ապահովելու համար առեւտրական կարաւանների դիւրին տեղաշարժերը Օսմանեան կայսրութեան տարածքով:

Նման քաղաքականութիւն իրագործւում էր նոյնիսկ թուրք-իրանական պատերազմների ժամանակ: [29, էջ 62] Թուրքերը չէտարթեցին հսկում էին կարաւանային ճանապարհները նաեւ այն պատճառով, որ Օսմանեան կայսրութիւնը ձգտում էր իր բաժինը ստանալ ոչ միայն իրանական հում մետաքսի առեւտրից, այլեւ կենտրոնական Ասիայի, Հնդկաստանի ու Չինաստանի հետ իրագործւող առեւտրափոխանակութիւնից: [130, էջ 210-211]

Հաբիւրամեակներ տեւած թուրք-իրանական պատերազմների հիմնական պատճառներից մէկը առեւտրական շահերն էին, յատկապէս մետաքսի առեւտրից ստացւող հսկայական շահոյթների տէր դառնալու անզուսպ ձգտումը եւ Անդրկովկասի ու Իրանի մետաքսաբեր շրջաններին տիրապետելը: Պատահական չէ, որ թուրք-իրանական հաշտութեան պայմանագրերում, Թուրքիայի յաղթանակի դէպքում, որպէս կանոն, յատուկ յօդւած էր պարու-

նակւում որպէս ռազմատուգանք Իրանի կողմից մետաքսի պարտադիր մուծումների վերաբերեալ: Ճիշտ է, պայմանագրերում ռազմատուգանքի այդ ձեւը յիշատակւում է, «Ղուէրի» անուն տակ, սակայն անտարակոյս դրանից վիճակը բնաւ չէր փոխւում: Յատկանշական է նաեւ, որ պարսիկների կողմից մետաքսի յանձնման դադարեցումը անմիջապէս տեղիք էր տալիս Թուրք-իրանական նոր աւերիչ պատերազմի: [131, էջ 151]

Ուշագրաւ է նաեւ նշել, որ Թուրք-իրանական պատերազմների ժամանակ իր հակառակորդին մետաքսի վաճառքից ստացւող հասոյթներից զրկելու համար, Թուրքերը ոչ միայն կոտորում էին մետաքսի արտադրութեան շրջանների բնակչութեանը, այլեւ անխնայ կերպով կտրատում էին թթի ծառերը: [71, էջ 125]

Այնուամենայնիւ Օսմանեան կայսրութիւնում առեւտրական կարաւանների կողոպուտը մնում էր որպէս մի սովորական երեւոյթ: Վկայելով այդ մասին Տավերնիէն գրում է. «Ողջ Թուրքիան լի է աւազակներով, որոնք թափառում են խոշոր խմբերով եւ ճանապարհներին դարանակալում են հայ վաճառականներին: Եթէ հանդիպում են հարուստ վաճառականներ, կողոպտում են նրանց եւ յաճախ զրկում են նաեւ կեանքից: [60, էջ 78]

Առհասարակ վաղ միջնադարում Օսմանեան կայսրութեան մէջ առեւտուր անելու եղանակը կարաւաններ կողոպտելն էր: Այդ սովորոյթը էական փոփոխութիւններ չենթարկւեց նաեւ ուշ միջնադարում: Օսմանեան նահանգական կուսակալները, որպէս կանոն, միաբանելով աւազակների հետ, թոյլ էին տալիս կողոպտել առեւտրական կարաւանները աւարը կիսելու պայմանով: [120, էջ 219] Շատ յաճախ կուսակալ-փաշաները գաղտնապէս իրենք էին ստեղծում աւազակախմբեր, որոնց կանոնաւոր կողոպուտները իրենց բերում էին խոշոր եկամուտներ: Առաքել Դավրիժեցին հաղորդում է, որ յատկապէս ապստամբ փաշաները, դերեբէյներն ու այանները անխնայ թալանի էին ենթարկում իրենց սահմաններից անցնող առեւտրական կարաւանները: Նա բերում է Էրզրումի Աբազա փաշայի օրինակը, որը խարէութեամբ բազմաթիւ առեւտրական կարաւաններ հաւաքելով քաղաքում, թալանել է դրանք: [23, էջ 573] Այդ նոյն փաշայի մասին Գրիգոր Դարանաղցին հաղորդում է, որ նա 1624 թ. Ստամբուլից վերադարձող եօթ հարիւր ջուղայեցի վաճառականներին կողոպտելուց յետոյ ասում է նրանց. «Ինձ չատ պիտոյ է քան ձեզ, գնացէք նոր վաստակեցէք»: [79, էջ 223]

Գողութիւնը, աւազակութիւնը, կողոպուտն ու թալանը այն

աստիճանի տարածուած երեւոյթ էր Փոքր Ասիայում, որ անգլիացի ճանապարհորդ Պարբին այդ երկրամասը անւանում է «գողերի երկիր», գրելով, որ «այդտեղի մարդիկ բոլորը միասին հակւած են գողութեան»: [87, էջ 155]

Այդ բոլորը անասելի մեծ չափեր էր ընդունել յատկապէս Փոքր Ասիայում ջալալիների ապստամբութիւնների ժամանակ: Զաքարիա Ագուլեցին իր «Օրագրութեան» մէջ գրում է, որ երբ ինքը 1656 թ. գտնւում էր Թոխաթում, ականատես է լինում ջալալիների գործադրած բռնութիւններին ու կողոպուտներին: «Այսօր Սէիդ Ահմադ Փաշէն եկաւ ԺԲՌ ձիաւոր յհետն, զերայ ջալալի էր: Շատ դրամ առաւ քաղաքէն: Մեք քանի բազրկան այսօր գոհտուկ դուրս ելաք, փախաք, թէ բռնեն ոչ, կամ թէ փող ուզեն»: [102, էջ 47]

Զենթարկւելով պետութեան սահմանած կարգ ու կանոնին, շատ յաճախ նահանգական փաշաները կամայականօրէն փոխում էին չափերն ու կշիռները եւ նորերը մտցնելու պատրւակի տակ պատկառելի գումարներ էին կորզում վաճառականներից: Բացի այդ, նրանք ստիպում էին քրիստոնեայ եւ հրեայ վաճառականներին իւրաքանչիւր քաղաքում մուծել այլադաւանների համար սահմանւած գլխահարկ՝ խարաջ, մինչդեռ օրէնքով այդ հարկը պէտք է վճարւէր տարեկան միայն մէկ անգամ: [117, էջ 56]

Թուրքական իշխանութիւնները կամայականօրէն բարձրացնում էին նաեւ առանց այն էլ բարձր մաքսատուրքերը: Ողջ XVII դարի ընթացքում, Հալէպում հոլանդացիները ստիպւած էին պայքարել թուրքերի կողմից մաքսատուրքերի կամայական բարձրացման դէմ: [121, էջ 308] Ստամբուլում իրենց հիւպատոսի հետ հոլանդական կառավարութեան գրագրութիւնից երեւում է, որ նա բազմիցս հրահանգներ էր տալիս նրան ամէն ինչ անել, որ թուրքական կառավարութիւնը նւազեցնի «արեւելեան առեւտրի հիմքերի հիմք ու ոգի հանդիսացող» հում մետաքսի վրայ դրւող բարձր մաքսերը: [34, էջ 311-312] Նոյնպիսի վիճակ էր տիրում նաեւ թուրքական միւս քաղաքներում: Տրիպոլիում, օրինակ, սովորական մաքսատուրքերից բացի օտարերկրեայ վաճառականները պարտաւոր էին Օսմանեան մաքսային աստիճանաւորներին ու տեղական փաշաներին, բէգերին եւ այլն վճարել բազմաթիւ կամայական հարկեր եւ տուրքեր: [34, էջ 304-307]

Զաքարիա Ագուլեցին յաղորդում է, որ Ագուլիսից Թոխաթ ապրանք տանելու համար հայ վաճառականները պարտաւոր էին զանազան մաքսատուրքեր (գոմրուկ) ու ճանապարհային հարկեր

(բաջ) վճարել Ազատ-Դեռում, Նախիջեւանում, Շարուրում, Երեւանում, Էջմիածնում, Կաղզւանում, Աղջաղայում, Զորան-Քոփիում, Հասանդալայում, Իլիջայում եւ Թոխաթում: [102, էջ 7-9]

XVII դարի մէկ այլ հեղինակ, Կոստանդ Զուղայեցին, իր «Աշխարհաժողովում» տեղեկացնում է, որ Հալէպ-Թաւրիզ առեւտրական մայրուղու վրայ վաճառականները զանազան «խալջ» ու «բալջ» (մաքսեր եւ տուրքեր) էին վճարելու Հալէպում, Այնթապում, Զաֆարղունեում, Ուրֆայում, Բիթլիսում, Վանում, Դատվանում, Ադիլջեւազում, Բանդիմահիում, Նուշարում, Զորսում, Մարանդում:

Սակայն վաճառականների ծախսերը չէին սահմանափակւում դրանով: Նրանցից զանազան կորզումներ էին անում Հալէպում, Այնթապում, Մալաթիայում, Կամախում, Երզնկայում, Իլիջայում, Էրզրումում, Հասանդալայում, Զորան Քոփիում, Կաղզվանում, Երեւանում, Նախիջեւանում, Մարանդում եւ Թաւրիզում: Սակայն օրինականացած մաքսերն ու հարկերն աւելանում էին օսմանեան աստիճանաւորներին յատկացուելիք «կամաւոր» նուիրատուութիւններով կամ «փեշքեշներով»՝ նրանց մանրախնդրութիւններից զերծ մնալու համար: Կոստանդ Զուղայեցին մէկ առ մէկ թւարկում է դրանք, որպէս տեղեկատու նիւթ հայ վաճառականների համար: [122, էջ 245ա-247բ]

Սիմէոն դպիր Լեհացին նկարագրելով Պոլսից դէպի Մուշ, Խարբերդ ու Ամիդ կատարած իր ուղեւորութիւնը, հետեւեալ կերպ է բնութագրում երկրի ընդհանուր վիճակը եւ նրանում գոյութիւն ունեցող բարքերը. «Տներն ախուռ նման եւ չալուսվցած, իսկ ի քաղաքն քարբիչով, դռվին փոքր եւ խորափտիտ, խաւարտչին... Եւ այսպիսի տառապանք եւ նեղութիւն էին ի ձեռս տաճկաց, վասն որոյ յոյժ աղքատ եւ չքաւոր են, զի միշտ զրկեն, գզվեն, տուգանեն, զրպարտեն եւ առաւել հարկս պահանջեն. եւ թէ տասն որդի ունիցի ոք, ամէնէն խարաճ առնուն, եւ թէ հեռանայ դարձեալ առնուն: Եւ Ստամպօլայ գաւառք ձի, ջորի հեծնուր. եւ անտի Սեւաստ մինչ յԱմիթ էշ եւ ուղտ. իսկ Սեւաստուին տան էշ ալ տեկմա չէրեւի, ամէնն եզ կու բանեցնեն, աղ եւ բեռն բառնան, այլեւ հեծնան: Վասն որոյ ես ամէն քաղաք, ամէն տեղ յոլով մնաս եւ տուգանք տայի վասն ձիուս, այլեւ մութ տեղիս, օտանին եւ սրահոց տուն տայի պահել, ամէնին դրամ տայի, որ ուլախ չառնուին, եւ ի ճանապարհին եւս քանիցս անգամ առին ուլախ, զոր տրօք հագիւ կարացի թափել ի ձեռաց նոցա զեղկելի ձիակս եւ այսպէս ահիւ եւ դողութեամբ

չրջէի տարակուսանօք, թէպէտ մեծ քաւանով չրջէի զի ամէն տեղ հարամիք էին, սօսթանի, ամէն տեղ թալան եւ եաղմայ եւ զուլում»... [123, էջ 169]

1697 թ. Զմիւռնիայում գրած մի յիշատակարանում՝ գրիչը դառնացած հոգով գանգատւում է. «Որ եւ մեք եւս ունիմք նեղութիւն բազում ի հարկապահանջութենէ եւ ասպատակաւորէ ի հենից եւ աւազակաբար զրկողէ ոչ միայն ի ճանապարհս, որ վնասեն վաճառականաց, նաեւ մեր չրջողաց այլեւայլ քաղաքս եւ ի գիւղորայս բռնութեամբ վարին այլազգիք՝ կողոպտելով, զրկելով, զկին եւ զտղայս քաշելով, յայտնի կողոպտելով եւ ոչ յումեքէ երկնչելով: [124, էջ 224բ]

Առհասարակ պէտք է նշել, որ թուրքական սուլթանները՝ բարեհաճ գտնելով հրեաների եւ յոյների առեւտրական ձեռնարկումների հանդէպ, հալածանքի էին ենթարկում հայազգի վաճառականներին:

Անտարակոյս այս բոլորի հետեւանքը լինելու էր առեւտրի սահմանափակումը, քաղաքների դատարկումը եւ առհասարակ առեւտրական ճանապարհների վրայ ընկած գիւղերի ու աւանների ամայացումը: Այդ մասին աղբիւրներում գտնում ենք բազում վկայութիւններ: Այսպէս, 1687 թ. Թոխաթում գրած մի յիշատակարանում կարդում ենք. «... Եւ դատարկեցան ճանապարհորդք եւ կարաւանք եւ ամայացան ճանապարհք ամենայն, զի բազումս կողոպտեցին ի վաճառականաց եւ սպանին... Զի եւ ի կոյրս մուրացիկս մերկացուցանէին, յորոյ բանցս զառաւելութիւն չարութեան իմացիս»: [125, էջ 295բ-296ա]

Առեւտրական կարաւանների երթեւեկութիւնը Օսմանեան կայսրութեան տարածքով առանձնապէս դժւարանում էր համարեայ անընդմէջ թուրք-իրանական պատերազմների ժամանակ: Կարաւանները ստիպւած էին շարժւել ծայրահեղ դանդաղ, երկար ժամանակ սպասելով ռազմական գործողութիւնների դադարին, իսկ յաճախ էլ յարձակումների ենթարկւելով կռւող բանակների կողմից:

Այս բոլորը ստիպում էր խոջաներին առեւտրական կարաւաններ կազմելու եւ նրանց տեղաշարժերը ապահովելու գործը կազմակերպել ամենայն բծախնդրութեամբ, այն հասցնելով ուղղակի կատարելութեան: Այդ մասին հետաքրքիր տեւեալներ ենք հանդիպում Յոհ. Շրեոդերի «Արամեան լեզուին գանձ» աշխատութեան մէջ: Ոմն Ֆրանսիացու կողմից հայ վաճառական Սաֆարին ուղղւած այն հարցին, թէ «Ձեր վաճառականքն ինչպէս

ճանապարհ կանեն այնքան ապրանք էն ձեր մեծ եւ յայնատարած երկրումն դէպ ի Հնդկաստան, Ռումելի, Արաբստան եւ այլ աշխարհ, չուն որ ձեր երկրումն ծով եւ նաւագնացութիւն չկայ», խոջան պատասխանում է. «Խիստ հեշտ եւ սաքայով, զարա երբ որ շատուր են եւ շատ ապրանք կայ՝ կարաւան կու դառնան, եւ ունեն իւրեանց քեարւանբաշին, չավուշն, թեանգչին: Ամէն փուսաթովն (պարագաներով) ապրանքն՝ ուղտերն, ձի կամ ջորի կու բառնան, եւ իւրեանք ձիաւորք ինչպէս մին մեծ օրդու (բանակ) կու գնան, ու ամէնքն քեարւանբաշու հրամանաւն աստ կամ անդ իջեւանեն. ունեն իւրեանց հետ ամէն թուրլու (տեսակ) թոչակ եւ զախիրայ (ուտելեղէն): Ինչ տեղ որ կուզին՝ վրան եւ չադիր կու տան, եւ իւրեանց պէտքն ու կարիքն լիուլի կատարեն՝ յետոյ իւրեանց ճանապարհն յառաջ գնան»: [82, էջ 341]

Իւրաքանչիւր հայ խոջա հիանալի տիրապետում էր գէնքի գործածութեանը եւ անհրաժեշտութեան դէպքում ի վիճակի էր իր գոյքը պաշտպանել աւազակախմբերի յարձակումներից: Մատթէոս Ջուղայեցին յայտնում է, որ որեւէ երկիր մեկնելուց առաջ սովորաբար հայ վաճառականները մեծ պատրաստութիւններ էին տեսնում: «Արդ, - գրում է նա, - որք կամին յերկրէ յերկիր երթալ՝ բազում ինչ խորհին եւ ապա ընթանան...: Զի զէնք եւ հեծեալս առնուն ընդ յինքեանց (ճանապարհորդք), զի թշնամիքն յաղթեալ սատակեսցեն զնոսա»: [126, էջ 160բ]

Իրենց առեւտրական ուղեւորութիւնները հեշտացնելու համար հայ վաճառականները կարիք ունէին զանազան տեղեկատուների եւ քարտէզների: Այդ նպատակով 1685 թ. կազմում է Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովը» կամ «Վասն նորահաս մանկանց եւ երիտասարդ վաճառականաց խրատ» աշխատութիւնը [122], որն իրենից ներկայացնում է ուսումնական մի ձեռնարկ սկսնակ վաճառականների համար: Նրանում ընդարձակ տեղեկութիւններ էին տրւում տարբեր երկրներում գործածւող չափ ու կշռի համակարգերին, կիրառւող դրամական միաւորներին եւ այլն: Անվարան կերպով կարելի է ասել, որ այն հանդիսանում է 17-րդ դարում համաշխարհային առեւտրի եւ նրանում հայերի մասնակցութեան վերաբերեալ լաւագոյն սկզբնաղբիւրներից մէկը:

Կոստանդ Ջուղայեցու ջանքերով, Նոր Ջուղայում բացւել էր առեւտրական մի դպրոց, որն իր գոյութեան ընթացքում ունեցել էր աւելի քան 250 շրջնաւարտներ: Այդ դպրոցում ապագայ վաճառականները սովորում էին «թեւաբանութիւն, հասարակ ընթեր-

ցողութիւն, գրագրութիւն եւ ըստ մեծի մասին խրատ յաղագս վաճառականութեան»: (51, էջ 253)

1695 թ. Ամստերդամում Թովմա Վանանդեցու կողմից հրատարակւում է «Համառաւած աշխարհացոյց» անուանով քարտէզը, իսկ 1696 թ. այդ քարտէզի բացատրութիւնը կամ «բանալին»: Ի դէպ, այդ գործերը Թովմա Վանանդեցու մտայղացմամբ պէտք է ծառայէին նախ եւ առաջ որպէս ուսումնական ձեռնարկ Հայաստանում հիմնելիք համալսարանի համար:

Եւրոպան, Ասիան եւ Աֆրիկան շափող հայ վաճառականները ունեցել են նաեւ այդ գրաղմունքի տէր մարդկանց յատուկ գործնական խառնուածք: Նրանք իրենց ճանապարհորդութիւնների ժամանակ պահել են օրագրեր («դաւթար»), որտեղ մէկ առ մէկ գրանցել են տարբեր վայրերով անցնող առեւտրական ճանապարհների հետ կապւած մանրամասնութիւնները, չափերն ու կշիռները, վաճառականներից գանձւող հարկատեսակները եւ այլն, որոնք, պէտք է ենթադրել, իրենց խոջա-գործընկերների կողմից օգտագործւել են որպէս ուղեցոյց: Այսպէս, միջմայրցամաքային առեւտրով զբաղւող հայ վաճառականներից մէկը՝ Զաքարիա Ագուլեցին թողել է մի այդպիսի օրագիր, որն աչքի է ընկնում իր հաղորդած տեղեկութիւնների զարմանալի ճշգրտութեամբ ու հաւաստիութեամբ: Ագուլեցին գրում է. «Ոչ թէ մին անգամ գնալով այս գրեցի, ՌՂԶ (1647) յամի Ագուլուց դուրս գնացի մինչի ՌՃՃԳ (1667) յամն շուրջ գալով, գնալով, հարցանելով գրեցի ըստուքն: Գ (3), Դ (4) թղթի վերայ գրած էի, ոմն ըստուք, ոմն սխալ: Ապա ՌՃՃԳ (1667) յամին կամիկն Աստուծոյ բէրի, նորոյգէցի այսմ դաւտարս: Դարցեալ ես անարժան Զաքարիայ, ուր եւ իցէ, էթէ քաղաք, էթէ ծով, էթէ ցամաք, մինչի ես գնացի ոչ, ականատես չէլայ, գրեցի ոչ. զերայ իմ գնացած, տէսած տէղն գրեցի, անտէսն ոչ գրեցի»: (102, էջ 6)

Ֆրանսիացի ճանապարհորդ Տուրնըֆորը գրում է. «Այս հայերը ինչպէս իրենց, այնպէս էլ Ջուղայի վաճառականների համար աշխատելիս, անխոնջ են ուղեւորութիւնների ժամանակ եւ արհամարում են եղանակների խստութիւնները: Շատերին ենք տեսել, նոյնիսկ ամենահարուստներին, որ ոտքով անցնում էին գետերով, մինչեւ պարանոցը խրած ջրի մէջ, փրկելու համար իրենց եւ բարեկամների հակերը...: Այս ազնիւ մարդիկ երբեք չեն փոխում իրենց վարելակերպը, միշտ նոյնն են, խոյս են տալիս աղմկայոյզ օտարականներից եւ յարգում նրանց, ովքեր խաղաղ են. սիրով

պատսպարում եւ կերակրում են նրանց... Երբ լուր են ստանում որեւէ կարաւան անցնելու մասին, գինով եւ խմիչքներով մէկ-երկու օրւայ ճանապարհ ընդառաջ են գնում իրենց հայրենակիցներին»: [127, էջ 34]

Իզուր չէ, որ համաշխարհային առեւտրի պատմութեան հարցերի խոշոր գիտակ Շերերը XVII դարի հայ վաճառականներին որակել է որպէս «խիզախ», «նախաձեռնող», «արկածների ու դժւարութիւնների սոսոր»: [128, էջ 621]

Այսպիսով դժւարութիւններն արհամարելը, համբերատարութիւնը, չարքաշութիւնը, յամառ կերպով նպատակին ձգտելը հանդիսանում էր հայ խոջայութեան բնաւորութեան ընդհանուր գիծը: [129, էջ 163]

Ինչպէս նշւեց վերեւում, 1639 թ. թուրք-իրանական պայմանգրի ստորագրումից յետոյ Լեւանտեան առեւտրում իրանահայ վաճառականների մասնակցութիւնը ձեռք բերեց նոր թափ: Իրենց գործունէութիւնն ակտիւացրին նաեւ արեւմտահայ վաճառականական կապիտալի ներկայացուցիչները: Հալէպում, Ալէքսանդրէթում, Զմիւռնիայում, Տրիպոլիում, Ստամբուլում եւ այլ քաղաքներում հայ վաճառականները ծաւալեցին մինչ այդ անանախընթաց չափերի հասնող առեւտուր: Ստամբուլում անգլիական առեւտրական ներկայացուցիչը ստիպւած էր խոստովանել, որ այդ քաղաքում, որտեղ անգլիացիների առեւտրական հիմքերը առաւել կայուն էին, հում մետաքսի առեւտուրը գտնւում է առաւելապէս հայ վաճառականների ձեռքում:

Անշուշտ, հայ վաճառականների առեւտուրը Լեւանտի հետ չէր սահմանափակւում լոկ հում մետաքսով եւ մետաքսէ կտորեղէնով: Նրանք Լեւանտի առեւտրական կենտրոններն էին հասցնում արեւելեան ամենաբազմապիսի ապրանքներ (օրինակ՝ համեմունքներ, թանկագին քարեր, կաշւեղէն, այծի եւ ուղտի բուրդ, բուսական ներկեր (ալ, ինդիգոյ եւ այլն), գորգեր, սուրճ, մորթիներ, բուժիչ խոտեր, թմրադեղեր, շաքրան, պղպեղ, մեխակ, մուսկաթի ընկոյզ, լեղակ, սնդիկ, խեցեղէն, ծծումբ, բրինձ, ծխախոտ, նուշ, քիշմիշ, չորացրած մրգեր, ափիոն, մարմար, գինի (յատկապէս յարգի էր Հորմուզի գինին), կաւէ եւ պղնձէ ամանեղէն, խաւարծիլ, սակամոն, քազբան, խեժ, գոթոր, քրքում, բամբակ, ուղտեր, մանր եղջերաւոր անասուններ եւ այլն), իսկ Լեւանտից Արեւելք էին տեղափոխում մահուդ, վենետիկեան կրսեներ ու կերպասներ, հայելիներ, ապակեղէն, ակնոց, բուստ, սաթ, ժամացոյցներ, հոլանդական եւ

անգլիական ասուիներ, ոսկեթել ու արծաթաթել դիպակներ, թաւշէ կտորեղէն, հրացաններ, պերճանքի զանազան առարկաներ, շաքար, թուղթ, ասեղներ, դրամ եւ բազմապիսի այլ ապրանքներ: [29, 122] Լեւանտում հայ վաճառականների կողմից բերւած ապրանքների հիմնական գնորդներն էին Ֆրանսիական, հոլանդական եւ իտալական քաղաքներն ու քաղաք-հանրապետութիւնները (Վենետիկ, Ջենովա, Լիւոռնո, Լուկկա, Ֆերրարա, Պեսչենցա եւ այլն):

Դեռեւս XVI դարի վերջերից կապիտուլիացիաների հաստատումով Լեւանտը կուաղաչտ էր դարձել գլխաւոր արեւմտեան տէրութիւնների՝ Ֆրանսիայի, Անգլիայի եւ Հոլանդիայի միջեւ: XVII դարի սկզբից սկսած նրանց միջեւ բորբոքւեց անհաշտ առեւտրական պատերազմ, որը ծայրայեղ սրութեան հասաւ յատկապէս դարի երկրորդ կէսին: [132, էջ 234-235]

Այս պայմաններում հայ վաճառականութիւնը ստիպւած էր մեծ ճկունութիւն դրսեւորել Լեւանտեան առեւտրում իր դիրքերը պահպանելու համար: Այստեղ հայ առեւտրական կապիտալը յատկապէս սերտ կապերի մէջ էր Վենետիկի Հանրապետութեան հետ:

Դա բացատրւում է նրանով, որ ի վիճակի չլինելով դիմանալու առաջաւոր արդիւնաբերական երկրների հետ առեւտրական մրցակցութեանը, Վենետիկը ստիպւած էր ամէն կերպ խրախուսել արեւելեան, այդ թւում նաեւ հայ վաճառականների միջնորդ առեւտուրն իր հետ, այդ նպատակով նրանց տրամադրելով բազմաթիւ արտօնութիւններ ու իրաւունքներ եւ պարբերաբար իջեցնելով նրանցից գանձւող մաքսատուրքերը: [29, էջ 67] Այսպիսով, ներգրաւելով նրանցից գանձւող մաքսատուրքերը, վենետիկցիները կարող էին շնորհիւ հայ վաճառականների, յաջողութեամբ մրցակցել Անգլիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի եւ եւրոպական միւս պետութիւնների առեւտրական կապիտալի հետ:

XVII դարի առաջին տասնամեակներին մետաքսագործութեան բնագաւառում վենետիկեան հանրապետութիւնը դեռեւս գրաւում էր առաջատար տեղերից մէկը: [133, էջ 164] Նրա մետաքսագործական մանուֆակտուրաները աշխատում էին բարձրորակ իրանական հում մետաքսի հումքային հենքի վրայ: Գտնւելով Արեւմուտքի եւ Մերձաւոր Արեւելքի կենսական կենտրոններից ոչ մեծ հեռաւորութեան վրայ, Վենետիկը միաժամանակ զբաղւում էր նրանց միջեւ միջնորդ առեւտրով: Այդ նպատակով Լեւանտում Վենետիկեան Հանրապետութիւնն ունէր բազմաթիւ առեւտրական

հիւպատոսութիւններ, որոնք հայ վաճառականների հետ իրագործում էին խոշոր առեւտրական գործառնութիւններ: Վենետիկի առեւտրական կապիտալը Առաջաւոր Արեւելքի երկրներում սերտօրէն կապւած էր տեղական, յատկապէս հայկական առեւտրական կապիտալի հետ, իսկ նրա միջոցով այդ երկրների աւատատէրերի տիրապետող դասակարգի հետ:

Հայ վաճառականների հետ ապրանքափոխանակութեան ընդլայնումը Վենետիկի համար կենսականօրէն կարեւոր հարց դարձաւ յատկապէս XVII դարի երկրորդ կէսին, երբ Ֆրանսիական դիւանագիտութեան դրդումով Թուրքիան ոչ միայն խզեց իր յարաբերութիւնները Վենետիկի հետ, այլեւ զրկեց նրան առեւտրի ընդգաւառում ունեցած արտօնութիւններից: [134, էջ 64] Դա հետեւանք էր Օսմանեան կայսրութեան եւ Վենետիկի Հանրապետութեան միջեւ ընթացող Կրետէի 25-ամեայ պատերազմի (1645-1669), որն անմիջականօրէն շօշափում էր նաեւ երկու պետութիւնների միջեւ առեւտրական քաղաքականութեան խնդիրներ:

Լեւանտում հայ վաճառականները խոշոր առեւտուր ունէին նաեւ Հոլանդիայի հետ, որը XVII դարի կէսերին հասել էր իր առեւտրական հզօրութեան գագաթնակէտին: Այդ ժամանակ Նիդերլանդները դարձել էին դէպի Լեւանտեան շուկաներ կենտրոնական եւ հիւսիսային Եւրոպայի ապրանքների հիմնական մատակարարողները: [136, էջ 40] Հոլանդիան մրցակիցների դէմ թէժ պայքարում աստիճանաբար ընդարձակում էր իր առեւտուրը Լեւանտում, հենւելով 1598 Օսմանեան կայսրութեան հետ կնքած կապիտուլիացիայի վրայ: [136, էջ 348] 1598 թ. սուլթանական ֆիրմանով հոլանդացիները Թուրքիայում կարող էին առեւտուր անել միայն Ֆրանսիական կամ անգլիական դրօշի ներքոյ: Մինչդեռ իրենք անհրաժեշտ էին համարում առանց օտար դրօշակի, ուղղակի կապեր ունենալու Մերձաւոր Արեւելքի երկրների հետ, այնտեղ իրենց ապրանքները անարգել կերպով վաճառելու համար: Հետեւաբար անհրաժեշտ էր, որ Նիդերլանդները եւս Բ. Դռան հետ կնքէին այնպիսի առեւտրական եւ քաղաքական մի դաշնագիր, ինչպիսին ունէին Ֆրանսիան եւ Անգլիան: Մանաւանդ որ հոլանդացիները յոյս ունէին, թէ այդպիսի մի բարեկամական դաշնագրի ստորագրումից յետոյ իրենց նաւերն այլեւս չեն ենթարկւի թուրքական ծովահենների յարձակումներին: Վերոյիշեալ նպատակով 1611 թ. կ. Պոլիս ուղարկւեց հոլանդական նշանաւոր իրաւաբան եւ դիւանագէտ Կորնելիուս Հագան, որպէս

Նիդերլանդերի դեսպանորդ: 1612 թ. Յուլիսի 6-ին նա կնքեց քաղաքական-առեւտրական դաշնագիր Հոլանդիայի ընդհանուր նահանգների եւ Բ. Դռան միջեւ, որը նոյնպէս ունէր կապիտուլիացիոն պայմանագրի բնոյթ: Հոլանդացիները ստանում էին անգլիացիների եւ Ֆրանսիացիների հետ հաւասար իրաւունքներ, իսկ հոլանդական վաճառականները՝ ազատ մուտք եւ գործունէութիւն լայնածաւալ Օսմանեան կայսրութեան բոլոր մասերում: Բացի այդ, հոլանդական նաւերն իրաւունք էին ստանում սեփական դրօշներով նաւարկել Թուրքական ջրերում: Յիշեալ պայմանագրի ստորագրումից յետոյ հոլանդացի վաճառականներն անմիջապէս սեփական առեւտրական տներ հիմնեցին Օսմանեան կայսրութեան գանազան կողմերում:

1617 թ. Միջերկրական ծովում յայտնուեց հոլանդական ռազմական նաւատորմը, առաջին նաւատորմը մի պետութեան, որը տեղաւորուած չէր Միջերկրածովեան աւազանում: [137, էջ 55] Բոլորովին իզուր անգլիական դեսպանը կոչ էր անում սուլթանին «աջակցել հին բարեկամներին, փոխանակ փնտրելու նորերը»: Հոլանդիայի սերտ համագործակցութիւնը Օսմանեան կայսրութեան հետ վենետիկեան դիւանագէտներին նոյնիսկ առիթ էր տալիս մտածելու, որ գոյութիւն ունի հոլանդա-թուրքական գաղտնի մի պայմանագիր համատեղ կերպով Իսպանիայի դէմ պայքարելու վերաբերեալ:

Մինչեւ Իրանի հետ հոլանդացիների կողմից անմիջական առեւտրական կապերի հաստատումը (1623 թ.) իրանա-հոլանդական առեւտուրը տեղի էր ունենում գլխաւորապէս հայ վաճառականների միջոցով, ընդորում՝ ինչպէս Լեւանտեան քաղաքներում, այնպէս էլ անմիջականօրէն Հոլանդիայում: Ամստերդամը ծանօթ էր հայերին դեռ XVI դարի 60-ական թ.թ.: [138, էջ 14.] Ընդամենը մէկ հարիւրամեակ անց, 1660-ական թ.թ. միայն Ամստերդամում արդէն հաշւում էին 60 հայկական առեւտրական տներ: [139, էջ 251]

1612 թ. կապիտուլիացիան ստանալուց յետոյ Նիդերլանդները աշխոյժ նաւագնացութիւն հաստատեցին իրենց նաւահանգիստների ու Օսմանեան Թուրքիայի առեւտրական կենտրոնների միջեւ, որտեղ իրացնում էին իրենց արդիւնաբերական ապրանքները եւ գնում էին մեծ քանակութեամբ արեւելեան ապրանքներ, առաւելապէս հում մետաքս եւ բուրդ: [140, էջ 134, 136] Հէնց այս շրջանում հոլանդացիները իրենց առեւտրական գործունէութիւնների մէջ լայնօրէն ընդգրկեցին նաեւ Լեւանտի հայ եւ յոյն

վաճառականներին, [140, էջ 134, 146] որոնց ձեռքերում էր կենտրոնացած Թուրքիայի ողջ ներքին եւ արտաքին առեւտուրը: 1623 թ., երբ հոլանդական Օստ-Հնդկական ընկերությունը շահ Աբբաս Ի-ից Իրանում ազատ առեւտուր կատարելու վերաբերեալ հրամանագիր ստացաւ, հայ-հոլանդական առեւտրական կապիտալի համագործակցությունը ձեռք բերեց աւելի լայն չափեր: [141, էջ 71]

1625 թ. Ամստերդամում ստեղծուեց մի յատուկ հաստատութիւն «Մերձաւոր Արեւելքի առեւտրի եւ Միջերկրական ծովում նաւագնացութեան վարչութիւն» անունով, որի խնդիրն էր աշխարհը կերպով հսկել Միջերկրական ծովում կատարուող միջազգային կապերի վրայ եւ իրականացնել առեւտուրը Մերձաւոր Արեւելքի երկրների հետ: [138, էջ 14]

Պատահական չէ, որ Լեւանտեան նաւահանգիստներում հայ վաճառականների հետ հոլանդացիների առեւտուրը մեծ աշխոյժութիւն է ապրում յատկապէս XVII դարի 30-ական թ.թ.: Դրա պատճառներից մէկն էլ այն էր, որ 1634 թ. Հոլշտինեան ընկերությունը հրաժարւում է Ռուսաստանի վրայով իրանական մետաքսը ներմուծել Եւրոպա՝ ռուսական իշխանութիւնների առաջադրած բարձր մաքսատուրքերի պատճառով: [142, էջ 71]

Լեւանտում Իրանի եւ Թուրքիայի հայ վաճառականների հետ հոլանդացիները լայն շփումների մէջ էին գտնւում յատկապէս Զմիւռնիա, Կ. Պոլիս եւ Հալէպ քաղաքներում: Ամստերդամից Զմիւռնիա եւ Լեւանտեան այլ նաւահանգիստներ էին այցելում տարեկան 30-ից աւել հոլանդական նաւեր: Լեւանտում դեռեւս թոյլ դիրքեր ունենալով, հոլանդացիները եւս հակւած էին համագործակցել տեղական վաճառականների հետ իրենց մրցակիցների՝ անգլիացիների ու ֆրանսիացիների դէմ յաղող պայքար մղելու համար:

XVII դարի երկրորդ կէսին Լեւանտեան վաճառականների ընդլայնւող առեւտուրը հոլանդացիների կողմից սկսում է դիտւել որպէս առեւտրական մրցակցութիւն եւ ըստ այդմ սկսում են կիրառել զանազան պատժամիջոցներ: Այսպէս, Զմիւռնիայում հաստատւած հոլանդական հիւպատոս Միխիել Մորտիերը փորձում է սահմանափակել մրցակից հայ եւ յոյն վաճառականների առեւտուրը Եւրոպայի հետ: Ուստի վերջիններս սկսում են բողոքագիր յղել հոլանդական կառավարութեանը: 1658 թ. հայ վաճառականները մի բողոքագիր են ներկայացնում Նիդերլանդների կառավարութեանը, որտեղ գանգատւում էին, որ հոլանդական

հիւպատոսը արհեստականօրէն դժուարութիւններ է ստեղծում արգելակելու եւ խափանելու համար իրենց առեւտուրը: Որ նա կամովին բարձրացնում է հիւպատոսական մաքսի չափը, բռնագրաւում է հայ վաճառականների ապրանքը եւ այլն: Ընդորում ասւում էր, որ հիւպատոսը իրենց հետ վաճառականի պէս չի վարւում, այլ «թուրքի» պէս եւ խնդրում էին փոխարինել նրան մէկ ուրիշով: [138, էջ 15-31] Գործին միջամտում է Զմիւռնիայի հոլանդական գաղութը, որը 1658 թ. փետրուարի 14-ին մի ընդարձակ տեղեկագիր է ուղարկում Ամստերդամ, որտեղ նախազգուշացնում է, որ, եթէ տեղի հիւպատոսը չփոխւի, ապա հայ, յոյն եւ հրեայ վաճառականները, տեսնելով, որ շարունակ նեղութիւնների են ենթարկւում, կարող են հոլանդական նաւերին այլեւս ապրանք չտալ: [138, էջ 32] Ի վերջոյ, 1660 թ. Նիդերլանդների կառավարութիւնը պաշտօնից ազատում է հիւպատոսին եւ նրա փոխարէն նշանակում ոմն Դուկկա դի Զովաննիի:

Իրենց մրցակիցների դէմ պայքարելու եւ սեփական նաւագնացութիւնն աւելի հզօրացնելու նպատակով Նիդերլանդները հրապարակում են մի նոր օրէնք, որով բացարձակապէս արգելւում էր օտար նաւերով Թուրքիայից եւ Իրանից Հոլանդիա ապրանք տեղափոխելը: Բազմաթիւ վաճառականներ, որոնք ոչ հոլանդական նաւերով ներածում եւ արտածում ունէին Հոլանդիայի հետ, անմիջապէս կանգնեցին Ամստերդամի շուկան կորցնելու վտանգի առջեւ: Այդ դրութեան մէջ էին մանաւանդ Զմիւռնիայում հաստատուած կամ այդ քաղաքն իրրեւ արտահանութեան կէտ գործածող հայ վաճառականները: Ուստի սրանք ստիպուած էին կամ հեռանալ Լեւանտից ու գնալ հաստատւել Ամստերդամում եւ կամ այնտեղ բանալ իրենց առեւտրական մասնաճիւղը, որպեսզի այնտեղից հոլանդական նաւերով, կամ հոլանդական դրօշակ կրող հայկական նաւերով իրենց առեւտուրը անարգել շարունակեն: Հէնց այդ ժամանակուանից սկսած Ամստերդամում մշտական բնակութիւն հաստատած հայերը սկսում են կարեւոր դեր խաղալ նաեւ Մերձաւոր Արեւելքի հետ հոլանդական առեւտրի ապարէզում: [138, էջ 16]

Լեւանտում հայ վաճառականները ծաւալուն առեւտուր ունէին նաեւ Ֆրանսիայի հետ: Մի իրերկրական ծովը աւանդաբար կարեւոր տեղ էր գրաւում Ֆրանսիական քաղաքականութեան մէջ, եւ Լեւանտի հետ առեւտուրը կենսականօրէն կարեւոր էր Ֆրանսիայի համար: [143, էջ 118]

Օսմանեան կայսրութիւնից Ֆրանսիան իր առաջին կապիտուլյացիան ձեռք բերեց դեռևս 1535 թ. Ֆրանցիսկ I թագաւորի օրօք: Այն առևտրական մի պայմանագիր էր, որը հեշտացնում էր Ֆրանսիական վաճառականների ներթափանցումը Մերձաւոր Արևելք եւ նրանց տրամադրում էր Լեւանտում առևտուր անելու խոշոր արտօնութիւններ: 1581 թ. Ֆրանսիան ստացաւ մի նոր կապիտուլյացիա, որով վենետիկեան, ջենովական, անգլիական, իսպանական եւ եւրոպական մի շարք այլ ազգութիւնների պատկանող վաճառականների նաւերը հարկադրւած էին Լեւանտի նաւահանգիստները մտնել միայն Ֆրանսիական դրօշակի ներքոյ: [144, էջ 149-151]

XVII դարում Ֆրանսիական բացարձակապետութիւնը էլ աւելի մեծ եռանդով էր խրախուսում իր վաճառականների առևտուրը Լեւանտի հետ: Կարդինալ Ռիշելիէն նոյնիսկ ստեղծեց Լեւանտի գործերով պետական քարտուղարի պաշտօն: XVII դարի 30-ական թ.թ. միայն Մարսէլից, որը հանդիսանում էր Ֆրանսիայի արեւելեան ծովային դարպասը, Լեւանտ էր ժամանում տարեկան մինչեւ 70 նաւ: [145, էջ 199] Լեւանտի հետ առևտուրը էլ աւելի ծաւալելու համար Կոլբերը կազմակերպեց 15 միլիոն լիվր դրամագլուխ ունեցող յատուկ առևտրական ընկերութիւն, որի անդամներ էին հանդիսանում յայտնի ֆինանսական գործիչներ: Այդ ընկերութեանը Լուդովիկոս XIV արքան շնորհեց լայն արտօնութիւններ: Նա պարտաւորեցրեց նաեւ Լեւանտում, Սեւ ծովի եւ Պարսից ծոցի առափնեայ շրջաններում ցրւած Ֆրանսիական հիւպատոսութիւններին ու առևտրական դրասենեակներին օժանդակել ու նեցուկ հանդիսանալ «Լեւանտեան ընկերութեանը»: [108, էջ 183-184]

Պէտք է նշել սակայն, որ չնայած այս բացառիկ առանձնաշնորհումներին, յիշեալ ընկերութիւնը բաւականին տեւական ժամանակ ի վիճակի չեղաւ ծաւալելու լայն գործունէութիւն: Դրա պատճառը ոչ միայն, գուցէ նաեւ ոչ այնքան, Լեւանտում Ֆրանսիայի առևտրական մրցակիցների ախոյանութիւնն ու ընդդիմութիւնն էր, որքան թուրքական կառավարութեան յամառ դիմադրութիւնը: Պատահական չէ, որ Ստամբուլը կտրականապէս մերժեց նաեւ Ֆրանսիայի առաջարկը նոր կապիտուլյացիոն պայմանագիր կնքելու վերաբերեալ: Առհասարակ օսմանցիները այդ շրջանում որդեգրել էին սառը վերաբերմունք եւրոպական տէրութիւնների, այդ թւում նաեւ Ֆրանսիայի նկատմամբ: Դրա

պատճառը կայանում էր նրանում, որ այդ տէրութիւնները մշակում էին գործօն քաղաքականութեան գիծ Մերձաւոր Արեւելքի նկատմամբ: Որպէս պատասխան 1645 թ. սկսած Թուրքիան անընդհատ պատերազմներ էր մղում նրանց դէմ: Ինչպէս յայտնի է եւրոպական միապետները ստիպած 1684 թ. տեղծեցին «Սրբազան լիգան», որի կազմի մէջ մտան Աւստրիան, Լեհաստանը եւ Վենետիկը: Նոյն, 1684 թ. նրան միացաւ նաեւ Ռուսաստանը: [146, էջ 87]

Դեռեւս մինչ այդ սուլթանին յայտնի էր դարձել, որ 1663 թ. Ֆրանսիացի նշանաւոր մարշալ Տիւրէնը հանդէս է եկել մի ծրագրով, որտեղ Լուդովիկոս XIV-ին կոչ էր արւում արշաւանք սկսել թուրքական սուլթանի դէմ: Ֆրանս-թուրքական յարաբերութիւնները հասնում են ծայրայեղ լարւածութեան մանաւանդ 1670 թւականից, երբ Լուդովիկոս XIV-ը Կ. Պոլիս դեսպան ուղարկեց մարքիզ Նուանտելին, որն իր պաշտօնատեղին եկաւ ռազմական նաւատորմով եւ մի պահ ստեղծեց մի նոր վաճառականական պատերազմի սպառնալիք: [25, էջ 109-111] Ֆրանսիայի երիտասարդ թագաւորին սաստիկ ոգեւորում էր խաչակիր զինուոր լինելու ցնորքը: Եւ նրան այդ ուղղութեամբ խրախուսում էին ամէն կողմից: Մեծ հռչակ վայելող պալատական բանաստեղծ Բուալոն, օրինակ, «արեւ արքային», նւիրւած իր ձոնում ասում էր. «Ես վեց ամսում սպասում եմ քեզ Հելլեսպոնտեսի ափերին»: [147, էջ 321]

Սուլթանի սառը վերաբերմունքը Ֆրանսիացիների հանդէպ պայմանաւորւած էր նաեւ նրանով, որ վերջիններս Կանդիայի պատերազմի ժամանակ գաղտնի կերպով օգնել էին վենետիկցիներին: Մեծ վեզիր Քեոփրիլու Ահմեդը այդ առթիւ Ֆրանսիական դեսպանին ասել էր. «Մենք գիտենք, որ դուք մեր բարեկամներն էք, բայց ամէն տեղ ձեզ պատահում ենք մեր թշնամիների հետ»: [148, էջ 229]

Այս բոլորը որոշակիօրէն խոչընդոտելով Ֆրանսիական առեւտուրը Լեւանտում, ի վիճակի չէր խսպառ կասեցնելու այն, որովհետեւ նրանում շահագրգռւած էին ոչ միայն Ֆրանսիան ու Օսմանեան կայսրութիւնը, այլեւ այդ առեւտրի մէջ ընդգրկւած տեղական վաճառականները:

Կարեւոր է նշել, որ Լեւանտը նաեւ իրանա-ֆրանսիական առեւտրի խոշորագոյն կենտրոն էր: Մինչեւ 1664 թւականը Ֆրանսիայի ուղղակի առեւտրական յարաբերութիւնները Իրանի հետ գործնականում հաւասար էին զրոյի: Թէեւ դարի սկզբից կատարւել էին մի շարք փորձեր երկու երկրների միջեւ ուղղակի

տնտեսական ու քաղաքական կապեր հաստատելու ուղղությամբ, սակայն դրանք մնացել էին անարդիւնք: Այսպէս, դեռեւս շահ Աբբաս Իի ժամանակ, 1610 թ. Ֆրանսիա մեկնեց առաջին իրանական դեսպանությունը՝ կապուցինեան միաբանության անդամ Ժիւստի գլխաւորությամբ: Վերջինս Փարիզ հասաւ Հենրիխ IV մահից երեք ամիս յետոյ: Արքունիքը նրան հասկացրեց, թէ հարկ է, որ շահը մի ուրիշ դեսպանություն ուղարկի նոր թագաւորի մօտ: Բայց դա չկատարուեց: [149, էջ 173]

1627 թ. կարդինալ Ռիշելիէն իր կողմից մի առաքելություն ուղարկեց Իրան, որին յանձնարարուած էր շահ Աբբաս Իից ձեռք բերել իրաւունք Սպահանում կապուցինեան միսիա բաց անելու համար: Շահը տուեց իր համաձայնությունը: Աւելի ուշ, 1653 թ. Ֆրանսիացիները Նոր Ջուղայում բաց արին ճիզվիթների մի միսիա Պեր Ֆրանսուա Ռիգուրդիի գլխաւորությամբ: [83, էջ 120]

Այսպիսով բաւականին տեւական ժամանակ ի վիճակի չլինելով Իրանի հետ հաստատելու ուղղակի առեւտրա-տնտեսական կապեր, Ֆրանսիան, որը հանդիսանում էր իրանական հում մետաքսի խոշոր ներմուծող, այն ձեռք էր բերում Լեւանտում եւ համարեայ բացառապէս հայ վաճառականներից: Սակայն ամբողջ խնդիրն այն էր, որ հայերի առեւտուրը Մարսէլի հետ չէր սահմանափակւում լոկ հում մետաքսով: Նրանք այդ քաղաքն էին ներմուծում եւ արտահանում բազմապիսի ապրանքներ, որոնց առեւտրով զբաղւում էին նաեւ Ֆրանսիացի վաճառականները: Հետեւաբար հայ խոջաները հանդէս էին գալիս որպէս վերջիններիս մրցակիցներ: Թէ որքանով էր լուրջ այդ մրցակցությունը, երեւում է հետեւեալ փաստից. Մարսէլի առեւտրական պալատի բողոքների հիման վրայ 1622 թ. դեկտեմբերի 10-ին քաղաքապետարանը հրապարակեց մի հրամանագիր, համաձայն որի Ֆրանսիական նաւերի նաւապետներին խստիւ արգելւում էր Լեւանտից Մարսէլ եւ Մարսէլից Լեւանտ տեղափոխել հայ վաճառականների ապրանքները: Ընդորում հրամանը խախտող նաւապետները ենթակայ էին տուգանքի 10 հազար ոսկի գումարով: Նոյնատիպ հրամանագրեր հրապարակեցին նաեւ Պրովանսի եւ Տուլոնի իշխանությունների կողմից: [150]

Ֆրանսիական նաւահանգիստների փակելը ծանր հարուած էր հայ վաճառականների համար: Այդ պատճառով Ջուղայեցի խոջաները գործի են լծւում դրությունը չտկելու համար: 1628 թ. Նոր Ջուղայի քաղաքապետ («քալանթար») խոջա Նազարը կազմակերպում է Ֆրանսիական կապուցինեան միաբանության անդամ

Պացիֆիկի հանդիպումը չահ Աբբաս Բ-ի հետ: Ի վարձատրումն իր միջնորդութեան Ֆրանսիական արքունիքի առջեւ, Պացիֆիկը թոյլատրութիւն է խնդրում Սպահանում կապուցինեան միաբանութեան մխիթարական կազմակերպելու վերաբերեալ: [161, էջ 423] Ստանալով շահի համաձայնութիւնը, Ֆրանսիացի հոգեւորականը կատարում է իր խոստումը: 1629 թ. Նոյեմբերի 23-ին հրապարակում է Լուդովիկոս XIII-ի եւ կարդինալ Ռիշելիէի յատուկ արտօնագիրը հայ վաճառականներին՝ Մարսէլ ազատ մուտք ու ելք ունենալու իրաւունքի մասին: [37, էջ 456] Սակայն այս վիճակը երկար չտեւեց: 1634 եւ 1650 թ.թ. Մարսէլի իշխանութիւնները վերստին սահմանափակեցին հայ վաճառականների առեւտուրը՝ նրանց ապրանքների նկատմամբ սահմանելով 50 տոկոսի մաքսատուրք: [162] Ի դէպ, Ֆրանսիական իշխանութիւնների այս միջոցառումները ուղղուած էին ոչ միայն հայ վաճառականների, այլեւ Լեւանտեան առեւտրի մէջ իրենց հիմնական մրցակից Հոլանդիայի դէմ, որովհետեւ վերջինս հայ վաճառականներից Մարսէլում ձեռք էր բերում մեծ քանակութեամբ արեւելեան ապրանքներ եւ նրանց վաճառում հոլանդական մահուդ:

Ֆրանսիական Արեւելա-Հնդկական ընկերութեան հիմնադրումից յետոյ Լուդովիկոս XIV-ի կողմից Իրան ուղարկուեց մի առաքելութիւն, որը Սպահան ժամանեց 1665 թ. Նոյեմբերին: Շահը Ֆրանսիացիներին տրամադրեց առեւտրի բնագաւառում այն բոլոր արտօնութիւններն ու իրաւունքները, որոնցից օգտւում էին անգլիացիներն ու հոլանդացիները: [63, էջ 120] Սակայն այս համաձայնագիրը առանձնապէս ոչինչ չտուեց Ֆրանսիացիներին, եթէ չհաշուենք նրանց որպէս եւրոպական առաջնակարգ պետութեան ինքնասիրութեան չոյումը: Բանը նրանումն էր, որ ոսկիանոսային ճանապարհի վրայ Ֆրանսիան չէր կարող հանդէս գալ որպէս Անգլիայի ու Հոլանդիայի մրցակից, իսկ ցամաքային կարաւանային առեւտրով Ֆրանսիական վաճառականներն առհասարակ չէին զբաղւում: Հետեւաբար Լեւանտում հայ վաճառականների համագործակցութիւնը Ֆրանսիական բուրժուազիայի հետ նախկինի պէս մնում էր ուժի մէջ:

Կարեւոր է նշել նաեւ, որ Լեւանտում հայ վաճառականները նախընտրում էին իրենց ապրանքները վաճառել Ֆրանսիացիներին, որոնք ապրանքի ամբողջ գինը վճարում էին կանխիկ դրամով, մինչդեռ հոլանդացիներն ու անգլիացիները մետաքսի գնի կէսը հատուցում էին ասուլով: [127, էջ 175]

ԳԼՈՒԽ III

ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԵՒ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԵՒՏՈՒՐԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

Մի քանի դարերում միջերկրածովեան երկրների տնտեսական աշխուժացումը անմիջականօրէն իր արտացոլումը գտաւ նաեւ համաշխարհային առեւտրի մէջ ընդգրկուած «Ծովային Հայաստանում» կամ Կիլիկիայի հայկական թագաւորութեան մէջ, որը առեւտրական լայն կապեր էր հաստատել եւրոպական տարբեր երկրների հետ: [153,էջ 107. 37,էջ 461] Մասնաւորապէս այդ թագաւորութեան առաջին թագակիր տիրակալ Լեւոն II-ը (1198-1219) 1201 թ. առեւտրական պայմանագրեր է կնքել Վենետիկի եւ Ջենովայի քաղաք-պետութիւնների հետ, նրանց վաճառականներին հնարաւորութիւն տալով ազատ երթեւեկել Կիլիկիան Հայաստանում, ցանկացած վայրում հաստատել բնակութիւն, կառուցել իրենց աղօթատները եւ այլն: Նմանատիպ արտօնութիւններ եւ իրաւունքներ ստանում էին նաեւ հայ վաճառականները Իտալական քաղաքներում: Ցիշեալ պայմանագիրը իրաւունք էր տալիս իտալական վաճառականներին Կիլիկիայի վրայով առեւտուր անել նաեւ ողջ Արեւելքի հետ: [153, էջ 107]

Պայմանագրային այդ կապերի հետեւանքով 13-րդ դարի սկզբներից անընախընթաց կերպով աշխուժացաւ Ծովային առեւտուրը Իտալիայի եւ Կիլիկիան Հայաստանի միջեւ: Կիլիկիահայութեան առեւտուրը եւրոպական երկրների հետ առանձնակի խթան ստացաւ 1261 թւականից յետոյ, երբ Կիլիկիայի Հեթում արքան յատուկ հրովարտակով արտօնութիւններ շնորհեց եւրոպական առեւտրական հաստատութիւններին: Այդ շրջանում միջերկրածովեան առեւտուրը ձեռք է բերում այն աստիճանի լայն թափ, որ յաճախ բնորոշւում է որպէս «առեւտրական յեղափոխութիւն»: [154, էջ 60-150. 155, էջ 1]

Գիտութեան մէջ յայտնւում է այն տեսակէտը, որ Կիլիկեան թագաւորութեան ծաղկուն վիճակը, ինչպէս նաեւ նրա քաղաքական

եւ ռազմական հզօրութիւնը, նշանակալից չափով պէտք է բացատրել նրանով, որ համաշխարհային առեւտրի հիմնական եւ առաւել յարմար կարաւանային մայրուղին Արեւելք էր գնում Կիլիկիայի տարածքի վրայով:

Այս, Կոռիկոս, Տարսուս, Սիս, Մամիստրա (Մսիս) նաւահանգիստները դարձան տարանցիկ առեւտրի խոշոր կենտրոններ: Նրանցում իտալական վաճառականների կողմից ստեղծուեցին գաղութներ եւ առեւտրական գրասենեակներ:

Կիլիկիայի հայ վաճառականների առեւտուրը չէր սահմանափակւում լոկ իտալական քաղաքներով. նրանք յաճախակի այցելում էին նաեւ Բելգիա [156, էջ 117-118], Իսպանիա [157, էջ 626-627] Ֆրանսիայի նաւահանգստային Պրովանս, Մարսէլ, Մոնֆիլ, Նարբոն, Նիմ քաղաքները [158,էջ 54], Հոլանդիա, Հանզայի միութիւն եւ այլ երկրներ ու պետութիւններ:

Կիլիկիայի հայ վաճառականութիւնը համաշխարհային առեւտրի մէջ իր կարեւոր դիրքերը պահպանեց ընդհուպ մինչեւ Կիլիկիայի հայկական թագաւորութեան կործանումը (1375թ.): Կիլիկիայից հայ խոշոր գաղթականութիւններ ստիպուած էին զանգւածաբար շարժւել դէպի արեւմուտք: 1226թ. Հռոմում ընդօրինակած իր ձեռագիր յիշատակարանում Թադէոս գրիչը նկարագրում է այն արհաւիրքները, որոնք ստիպում էին իր տարաբախտ ժողովրդին լքել հայրենիքը եւ մեկնել օտար ափեր, «Եհաս աշխարհին (մեր), - գրում է նա, - սուր անպատմելի, զոր տեսաք աչաւք մերով, զի զհամարն աստուած միայն գիտէ զկոտորելոցն սրով եւ զգերելոցն ի ձեռս անաւրինաց, եւ յետ այնր մահ եւ սով սաստիկ»:[159, էջ 845-846]

Կիլիկիայի հայ թագաւորութեան անկումից յետոյ տասնեակ հազարաւոր հայեր անցնում են «յայնկոյս ծովուն՝ այսինքն Կպրոս, իսկ այնտեղից Իտալիա եւ ցրւում զանազան քաղաքներում: Նման առաւել խոշոր գաղթեր տեղի են ունեցել 1402, 1404 եւ 1423-1424 թւականներին: Այդ առթիւ Մաղաքիա դպիր ժամանակագիրը հաղորդում է հետեւեալ տեղեկութիւնը, «1402թ. ի սոյն ժամանակ յետ բառնալոյ թագաւորութեան Հայոց ի Սսոյ, ժողովեցան թագաւորազունք եւ իշխանք եւ բազում ի ժողովրդոց, մտեալ ի նաւ՝ գնացին ի Ֆրանգստան: Ի յԱնգոնա (Անգոնա), գոն բազում գերեզմանք հայ գրով փորագրեալք, որ երեւին մինչեւ ցայսօր, որ եմք ՌՃՄ (1701)»: [37, էջ 463]

Այդ գաղթերի հետեւանքով Հռոմում, Վենետիկում, Պիզայում,

Ջենովայում, Ռիմինիում, Ֆլորենցիայում, Պերուժում, Բաթուայում, Անգոնայում, Սիցիլիայում, Միլանում, Բոլոնիայում, Նեապոլում, Լուկկայում եւ Իտալիայի այլ քաղաքներում ու երկրամասերում գոյանում են հայկական մեծ ու փոքր գաղթօջախներ:

Սկզբնական շրջանում կաթոլիկ եկեղեցին հանդուրժողական վերաբերմունք էր ցուցաբերում Իտալիայում հաստատուած հայերի նկատմամբ, թոյլ տալով, որ կատարեն պաշտամունք ըստ լուսաւորչական ծէսի, կառուցեն վանքեր ու եկեղեցիներ եւ այլն: Սակայն Կիլիկիայի հայ պետականութեան անկումից յետոյ Վատիկանը կտրուկ շրջադարձ կատարեց իր քաղաքականութեան մէջ, եւ սկսեց իտալահայութեան նկատմամբ կիրառել կաթոլիկութիւնը պարտադրելու քաղաքականութիւն, որի հետեւանքով հայ բնակչութիւնը համաձուլման է ենթարկւում եւ անհետանում:

Իտալիայի հայ գաղթօջախների խամրելու ու չքանալու պատճառներից է հանդիսացել նաեւ այն, որ նրանց միջեւ համարեայ կապեր գոյութիւն չեն ունեցել, որը մեծ մասամբ հետեւանք էր այն բանի, որ 14-15-րդ դարերում Իտալիան եւս պետական միասնական ամբողջութիւն չի կազմել:

Կիլիկիայի հայկական պետականութեան վերանալուց յետոյ եւս հայերը չդադարեցին ակնառու դեր խաղալ համաշխարհային առեւտրում: Յարմարւելով նոր ստեղծւած պայմաններին, նրանք շարունակում էին գործօն մասնակցութիւն ունենալ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ միջազգային ապրանքափոխանակութեանը: Սակայն քանի որ անդրծովական առեւտրի գլխաւոր ծակները այդ ժամանակ գտնւում էին Իտալիայի վաճառականների ձեռքում, որոնք ոչ մի կերպ չէին հանդուրժում տեղական մրցակիցներին, ուստի հայ վաճառականները աստիճանաբար հաստատւում են Ղրիմում:

Մինչեւ 1475թ., այսինքն թուրք-օսմանների կողմից Ղրիմի գրաւումը, ղրիմահայ վաճառականները մրցակիցներ չունէին Լեւանտի ու Արեւելքի միջեւ կատարւող ցամաքային կարաւանային առեւտրում: Դժւար է գերագնահատել նրանց խաղացած դերը նաեւ Արեւմուտք-Արեւելք առեւտրական կապերում:

Յայտնի է, որ 15-րդ դարի կէսերից միջազգային առեւտուրը ստացաւ մինչ այդ աննախընթաց ներքին մղում: Եթէ միջնադարեան առեւտրի խնդիրն ու կոչումն էր լոկ հասարակութեան բարձր խաւերի պահանջարկի բաւարարումը պերճանքի առարկաներով, ապա նշւած ժամանակաշրջանից սկսած սկիզբ է դրւում մի-

ջագգային առեւտրի այսպէս կոչուած «ժամանակակից» ձեւին, որն առաւելապէս հետեւանք էր եւրոպական տնտեսութեան բուռն զարգացման: Արեւմուտքում արհեստներն ու գիւղատնտեսութիւնը արդէն անցել էին ապրանքային արտադրութեանը, որը բնակչութեան արագ աճի պայմաններում անգամ ժողովրդական սպառման համար ապահովում էր աւելի մեծ քանակութեամբ ապրանքներ: Եւրոպական զարգացող արդիւնաբերութիւնը, բնականաբար, հարաճուն կերպով զգում էր հումքի պահանջ, որի զգալի մասը ապահովում էր Արեւելքից բերուած հում մետաքսի, բամբակի, բուսական ներկերի, բուսախէժերի եւ բազմապիսի այլ հումքատեսակների հաշւին: Բացի այդ, Եւրոպայում դրամատիրական հասարակութեան բուռն զարգացումը վաճառահանման մշտական արտաքին շուկաներ ապահովելու պահանջ էր առաջադրում:

Ահա այդ հանգամանքներն էլ դրամատիրական հասարակութեան ուղին թեւակոխած երկրների անդրծովեան նւաճողականութեան սկզբնաւորման պատճառ հանդիսացան:

Նոյն 16-րդ դարում նաւաշինութեան բուռն զարգացումը նպաստեց մերձաւոր արեւելեան ու եւրոպական նաւահանգիստների միջեւ առեւտրական կապերի ընդլայնմանը եւ բեռների զանգւածային տեղափոխմանը:

Հէնց այս շրջանում տեղի է ունենում հայ առեւտրական-խոջայական դասի վերելքը: Արդէն 16-րդ դարում Լեւանտ-Արեւելք առեւտուրը նրանց թւում էր խիստ սահմանափակ եւ նրանք սկսում են Արեւմուտքում փնտրել աւելի լայն ու յուսալի շուկաներ, քան դա կարող էին ապահովել արեւելեան միջերկրածովեան նաւահանգիստները: Միւս կողմից թուրք-իրանական անընդմէջ ու արիւնոտ պատերազմները, որոնք մեծ մասամբ ընթանում էին Հայաստանի տարածքում եւ նրանց հետեւանքով ստեղծւած կեանքի եւ գոյքի անապահով վիճակը, հազարաւոր հայերի, եւ առաջին հերթին ունեւոր-վաճառականական դասերի ներկայացուցիչների, մղում էին թողնել հայրենիքը եւ գործունէութեան ապահով ու ազատ ասպարէզ գտնելու միտումով գաղթել եւրոպական երկրներ, նոր շունչ հաղորդելով այնտեղ խմբւած հայ գաղթօջախներին: Հայաստանից այդ արտագաղթի հետեւանքով երկիրը դատարկւում էր գործարար բնակչութիւնից: Այդ միտքը հիանալի պատկերւած է հետեւեալ տողերի մէջ.

«Ի հայրենեաց մրդեալ արտաքս

Առուտուրաւ շահաւաստակ
ի Վենետիկ եւ ի Գենուա,
Եւ ի սահմանս առին ըզկայ
Ի Դիրբենեան եւ ի յԱտրիակ.
Միմեանց հանդէպ ծովուց իշխանք.
Ց Այիկուռնա Անքոն քաղաք,
Երամ Երամ պանդրխտականք,
Բիւր աստ բիւր անդ թափառական
Կործանեցին ըզՀայաստան
Եւ զ Թորգոմն իմ եւ Ագքանազ
Վերածեցին ի թիւ նւազ»: [88, էջ 220]

Այդ նոյն երեւոյթի մասին Ֆրանսիացի Տուրնֆորը գրում էր.

«Նրանք (հայ վաճառականները Վ. Բ.) գալիս են Պարսկաստանի խորքերից եւ հաստատւում են Լիւոնոյում: Ոչ շատ վաղուց հիմնաւորեցին Մարսէյլում: Որքա՞ն մարդ է նրանցից գտնւում Հոլանդիայում եւ Անգլիայում»: [62, էջ 158]

Վերականգնելով միջնադարեան հայ ծովային առեւտրի աւանդութիւնները, վաճառական-խոյաները իրենց ապրանքները բարձելով եւրոպական նաւերի վրայ, կտրում անցնում էին Միջերկրական ծովն ու Եւրոպա հասցնում արեւելեան (իրանական, թուրքական, միջին ասիական, հնդկական, չինական եւ այլն) ապրանքների բազմապիսի ու հարուստ տեսականի, [28, էջ 503-504] *որոնց մէջ առաջին տեղերից մէկը գրաւում էր պարսկական հում մետաքսը, որի պահանջարկը մետաքսագործական արդիւնաբերութեան բուռն զարգացման կապակցութեամբ եւրոպական շուկաներում շեշտակիօրէն աճել էր:*

XVI-XVII դարերում Միջերկրական ծովի աւազանում առեւտրի զարգացմանը զուգընթաց մեծանում էր նաեւ հայ նաւատէրերի թիւը: Ղ. Ալիշանը, օրինակ, յիշատակում է մի շարք վենետիկցի նաւատէր հայերի անուններ՝ Զանդ, որի նաւը կոչւում էր Spirito Santo (Սուրբ հոգի), Շահումեաններ եւ Նուրիքեաններ, որոնց նաւերն էին Ս. Խաչ եւ Տիրամայր Շնորհաց (Madonna della Grazia), Ասլան Պողոս (նաւը Ս. Յովսէփ), Պետրոս Սինան (նաւը Calera S. Giorgio), Առաքել Գերաքեան, նաւը Տիրամայր խաղաղարար (Madonna della Pace) եւ այլն: [28, էջ 503-504]

Մեզ են հասել նաեւ մի շարք իրանահայ, առաւելապէս Նոր Ջուղայեցի հայ նաւատէրերի անուններ, որոնք գրաւում էին Լեւանտի եւ Հոլանդիայի միջեւ առեւտրում: Դրանք են Coopman van

Armenien (Հայաստանի վաճառական), Coopman van Persien (Պարսկաստանի վաճառական):

Բնականաբար հայ վաճառականների տրամադրութեան տակ եղած նաւերի թիւը չէր կարող այնքան մեծաքանակ լինել, որ ամբողջապէս ապահովէր առեւտրական բեռնափոխադրումների ողջ պահանջարկը: Հետեւապէս նրանք ստիպւած էին լայնօրէն օգտւել եւրոպական տէրութիւնների եւ առաջին հերթին Անգլիայի, Ֆրանսիայի եւ Հոլանդիայի առեւտրական նաւատորմիղների ծառայութիւններից, մանաւանդ որ դա կարող էր ապահովել ապրանքների տեղափոխման աւելի յուսալի երաշխիքներ: Ցիշենք, որ XVI-XVII դարերում ծովահենութիւնը անբաժան էր ծովային առեւտրից: Ցատկապէս Միջերկրական ծովում ծովահենութիւնն ընդունել էր աննախընթաց չափեր: [160, էջ 28] Իզուր չէ, որ ժամանակակիցները ծովահենութիւնը անւանել են «Միջերկրածովեան առեւտրի պատուհաս»: Միայն Հիւսիսային Աֆրիկայի ծովահենային հանրապետութիւնները իրենց տրամադրութեան տակ ունէին 150 նաւ, հազար թնդանօթ եւ 20 հազար նաւաստի: [160, էջ 28] Միջերկրական ծովում ծովահենութեամբ էին զբաղւում բոլոր պետութիւնները: Նոյնիսկ կարդինալ Ռիշելիէն հրամայել էր Ֆրանսիական նաւատորմի հրամանատար դէ Մարդիին գրաւել բոլոր երկրների նաւերը: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա ծովահենութեամբ էր զբաղւում նոյնիսկ սուլթանական նաւատորմը: Ժամանակակիցների վկայութեամբ, միայն 1609-1621 թ.թ. ծովահենութեան պատճառով եւրոպական վաճառականները կորցրել էին աւելի քան 1500 նաւ: [161, էջ 176]

Կասկածից վեր է, որ պետականութիւնից ու պետական հովանաւորութիւնից զուրկ հայ վաճառականներն աւելի յաճախակի էին դառնում ծովահենութեան զոհեր: XVII դարի հայ վաճառական Զաքարիա Ագուլեցու «Օրագրութիւնում» մենք հանդիպում ենք բազմաթիւ փաստերի, ըստ որոնց խոջաների համար նաւով Եւրոպա մեկնելը, առանց ուղեկցող ռազմանաւերի, կապւած էր մեծ դժւարութիւնների հետ, որովհետեւ նրանց նաւերը ենթարկւում էին ծովահենների յարձակումներին: [102, էջ 51] Մեզ է հասել նման կարգի այլ տեղեկութիւններ եւս: Այսպէս, Ֆրանսիացի ծովահեն Անրի դ'Անգլիւր դէ Բուրլեմոնը 1649 թ. Միջերկրական ծովում զաւթում է հայ նաւատէր Անտոն Պողոսին պատկանող «Հայաստանի վաճառական» («Մերկանդէ Արմէնօ») կոչւած նաւը: [162, էջ 189] Նման յարձակումների հետեւանքով ունեզրկւում ու սնանկանում էին ոչ

միայն առանձին վաճառականներ, այլեւ ամբողջ առեւտրական տներ:

Նման վտանգներից խուսափելու համար հայ նաւատէրերը եւրոպական տէրութիւններից վարձում էին ռազմանաւեր իրենց նաւերին ուղեկցելու համար: Տեւեալներ կան այն մասին, որ հայ խոջաները աւելի յաճախակի օգտւում էին հոլանդական մարտանաւերի նմանօրինակ ծառայութիւններից: Մասնաւորապէս Միջերկրական ծովում հայ առեւտրական նաւերին սպասարկող հոլանդական ռազմանաւերից աղբիւրներում յիշատակւում է «Gelderland» ռազմանաւը: [138, էջ 56-57]

Եւրոպայի եւ Լեւանտի միջեւ Միջերկրական ծովի վրայով աշխոյժ առեւտուրը առաջին հերթին պայմանաւորուած էր նրանով, որ ցանկացած եւրոպական երկրից ճանապարհը Միջերկրական ծովով դէպի Մերձաւոր Արեւելք շատ աւելի կարճ էր ու անվտանգ, քան ովկիանոսի վրայով: Այդ է պատճառը, որ եւրոպական երկրները Մերձաւոր ու Միջին Արեւելքի հետ առեւտուրն իրականացնում էին արեւելեան միջերկրածովեան աւազանի առեւտրական կենտրոններում, անմիջական շփման մէջ մտնելով միջազգային առեւտրով զբաղւող հայ խոջայութեան հետ:

Այսպիսով, պետականութեան բացակայութեան պայմաններում, զուրկ ամէն տեսակի հովանաւորութիւնից, հայ առեւտրական կապիտալը եւրոպական արդիւնաբերական երկրների բուրժուազիայի մրցակցութեան պայմաններում XVII դարում հանդէս էր գալիս որպէս կարեւոր գործօն եւ կապող օղակ Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ միջազգային ապրանքափոխանակութեան մէջ: «Հայերի գործունէութեան այդ կողմը (այսինքն առեւտուրը. Վ. Բ.), - նշում է անանուն պատմաբան Ն. Ադոնցը,- սերտօրէն կապւած է համաշխարհային կարեւորութիւն ունեցող խնդիրների հետ: Համաշխարհային շուկայում հայերի յայտնւելը ժամանակակից քաղաքակրթութեան հիմքում ընկած նոր ոգու դժւարին փորձութիւնն է, որը մատնանշում է Հայաստանի կարեւորութիւնը որպէս նոր աշխարհի առաջացման գործօն՝ արտացոլւած Արեւելքի ու Արեւմուտքի փոխադարձ յարաբերութիւններում»: [163, էջ 48]

Միջազգային առեւտրով զբաղւող հայ վաճառականները սկսում են յաջողութեամբ մրցակցել եւրոպական հզօր առեւտրական ընկերութիւնների ու առեւտրական բուրժուազիայի հետ ոչ միայն այն պատճառով, որ կարաւանային առեւտրի մենաշնորհը

պատկանում էր իրենց, այլ գլխաւորապէս այն պատճառով, որ բաւարարում էին համեմատաբար ցածր շահույթներով, որ անընդունելի էր եւրոպական վաճառականների համար: Բացի այդ, Հայաստանի իւրայատուկ աշխարհագրական դիրքը (Եւրոպայի եւ Ասիայի սահմանակէտում) եւ այն, որ նրա վրայով անցնում էին համաշխարհային նշանակութիւն ունեցող առեւտրական ճանապարհները, նրան դարձնում էին կապող օղակ Արեւելքի եւ Արեւմուտքի ապրանքափոխանակութեան մէջ: [90]

Հայ առեւտրական դասի վերելքին նշանակալիօրէն նպաստում էր նաեւ մերձաւոր արեւելեան երկու խոշորագոյն պետութիւնների քաղաքականութիւնը: Այդ առթիւ Լէոն գրում է, «Պարսկաստանն ու Թուրքիան կապված են նոր ժամանակի Եւրոպայի հետ առեւտրական սերտ շահերով, որոնց շնորհիւ նրանք կամայ-ակամայ բռնում են այնպիսի դիրք, որ նպաստում է այդ երկու պետութիւնների մէջ ապրող եւ վաճառականական ընդունակութիւններով աչքի ընկնող ազգերին իրենց ներքին կեանքի մէջ շարժումներ առաջացնելու»: [12, էջ 11] Ֆրանսիացի Տուրնըֆորի վկայութեամբ, օրինակ, Սէֆեան շահ Աբբաս Իբ հայերի նկատմամբ վարում էր կրօնական հանդուրժողականութեան քաղաքականութիւն, քանի որ նրանց քրիստոնեա լինելը հեշտացնում էր Իրանի առեւտրական յարաբերութիւնները եւրոպական երկրների հետ: [62, էջ 158]

Եւրոպական երկրների հետ հայ վաճառականութեան առեւտրին խթանող կարեւորագոյն հանգամանքներից մէկն էլ այն էր, որ Լեւանտում գնալով աւելի ու աւելի էր մեծանում եւրոպական տէրութիւնների առեւտրական մրցակցութիւնը: Դա հայ խոջայութեանը մղում էր փնտրելու նոր, ազատ շուկաներ: Բացի այդ, գնալով աւելի կտրուկ ու շեշտակի էին դառնում Լեւանտում հայ վաճառականների գործունէութիւնը կաչկանդելու ուղղութեամբ եւրոպական պետութիւնների հիւպատոսութիւնների կողմից հարուցած արհեստական դժուարութիւնները: Կատարելով իրենց երկրների առեւտրական ներկայացուցչութիւնների դեր, նրանք հայ վաճառականներին փորձում էին թելադրել ապրանքների գները, յաճախ բոյկոտի էին ենթարկում նրանց եւ այլն: Որպէս ելք այդ վիճակից, խոջաները ձգտում էին իրենց ապրանքները անմիջականօրէն արտահանել Եւրոպա, մանաւանդ որ դա նրանց խոստանում էր աւելի բարձր շահոյթներ:

Առհասարակ եւրոպական հզօր առեւտրական ընկերու-

թիւնների կողմից հարուցուող մրցակցային դաժան պայքարին դիմանալու համար հայ վաճառականները մշտապէս ստիպուած են եղել դրսեւորել անօրինակ ճկունութիւն: Նրանք, օրինակ, 17-րդ դարում եւրոպացիների օրինակով միաւորւել են առեւտրական ընկերութիւնների մէջ, մրցակցութեանը աւելի հեշտութեամբ դիմագրաւելու համար: Նման ընկերութիւններ գոյութիւն են ունեցել Նոր Ջուղայում, Երեւանի խանութեան մէջ մտնող Կաբրի գիւղաքաղաքում, Հալէպում, Թիֆլիսում եւ այլուր: [33, էջ 131-132. 34, էջ 288-289. 102, էջ 72-73] Հարկադրուած են եղել իւրացնել Եւրոպայում գոյութիւն ունեցող առեւտրի ձեւերը, սովորել լեզուներ, ուսումնասիրել տեղական կենցաղն ու սովորոյթները, բանկային ու վարկաւաւական փոխատուութեան ձեւերը, ծանօթանալ Եւրոպայի շուկայական իրադրութեանը, այդ շուկաներում արեւելեան ապրանքների պահանջարկին, համագործակցութեան մէջ մտնել եւրոպական առեւտրական ընկերութիւնների ու վարկաւորող հաստատութիւնների հետ եւ, վերջապէս, կապեր հաստատել եւրոպական պետութիւնների կառավարող շրջանների հետ:

Ցայտնի է, օրինակ, որ 1699 թ. Ինովկենտիոս 12-րդ պապը Ջուղայեցի հարուստ վաճառականական ընտանիքներից մէկին՝ Շահրիմանեաններին շնորհեց Հռոմի քաղաքացու պատուաւոր կոչում, որը նրանց իրաւունք էր տալիս ազատ առեւտուր անելու Հռոմում եւ Անկոնայում: [88, էջ 211] Իսկ 1699 թ. Աւստրիայի կայսր Լէոպոլդ I Հաբսբուրգը Շահրիմանեան ընտանիքին շնորհեց մի պարգեւագիր, որով նրանց ճանաչեց որպէս Աւստրիայի ազնւականութեան դասակից ու հաւասար եւ նրանց ողջ գերդաստանին շնորհեց կոմսութեան տիտղոս՝ տոհմական զինանշան ունենալու իրաւունքով: [88, էջ 299-307. 52, հատ. 1, էջ 485, հատ. 2, էջ 1358]

Շահրիմանեանները եւս եւրոպական տէրութիւնների օրինակով ստեղծել էին առեւտրական մի ընկերութիւն, որը 720 հազար դուկատ գումարով դրամագլուխ ունէր Վենետիկի տարբեր բանկերում: [51, էջ 110-116] Ընկերութիւնը վարկեր՝ «մայա» (հիմնադրամ) էր տրամադրում միջազգային առեւտրով զբաղուող բազմաթիւ հայ վաճառականների, որոնք առեւտուր էին անում տարբեր երկրներում: Ընկերութիւնը իր գրասենեակներն ու առեւտրական ներկայացուցիչներն («սարքար») է ունեցել ժամանակի համարեայ բոլոր խոշոր առեւտրական կենտրոններում:

Այդ առեւտրական տան առաւել աչքի ընկնող զեկավարներից են եղել Մարգար եւ Զաքար Շահրիմանեանները: Հետագայում

Մանուէլ ու Աստուածատուր Շահրիմանեանները մշտական ընակութեան համար տեղափոխուել են Եւրոպա, իրենց հետ տանելով երկու միլիոն դուկատի չափ դրամ: [88, էջ 207]

Այս ընտանիքի առեւտրական տան գործունէութիւնը չէր սահմանափակւում լոկ Եւրոպայի ու Մերձաւոր Արեւելքի շրջանակներով: Նրանք լայն առեւտուր ունէին նաեւ Հնդկաստանի, Հարաւ-Արեւելեան Ասիայի ու հեռաւոր Արեւելքի երկրների հետ: Ժամանակակիցների վկայութեամբ Շահրիմանեան ընտանիքը մեծ հեղինակութիւն ունէր նաեւ շահական արքունիքում, շնորհիւ իր հարստութեան եւ միջազգային լայն կապերի: [164, էջ 366]

Նոր Ջուղայում աչքի ընկնող առեւտրական ընկերութիւններ են ունեցել նաեւ Խոջա-Մինասենց, Աղազարեանների կամ Լազարեանների եւ այլոց ընտանիքները: [51, էջ 143-145, 256-257. 165, էջ 81-120]

Հայ իրականութեան մէջ եղած բոլոր առեւտրական ընկերութիւնները անխտիր առեւտրական գործունէութեան հետ միաժամանակ զբաղուել են նաեւ բանկային գործարքներով, վարկատուութեամբ եւ վաշխառուութեամբ: Ընդորում հայկական աղրիւրներում վարկատու վաճառականը կոչւում էր աղա, իսկ վարկառուն՝ ընկեր: [165, էջ 122] Հայկական միջավայրում յատկապէս լայն չափերով կիրառւում էր վարկատուութեան այն եղանակը, որը եւրոպայում յայտնի էր կոմմնդա անունով: [165, էջ 126-138]

Արեւելքում անձի եւ գոյքի անապահովութեան պայմաններում հայ վաճառականները սովորաբար իրենց դրամները պահում էին եւրոպական բանկերում, որը հեշտացնում էր նրանց առեւտրական գործառնութիւնների ծաւալումը: Յայտնի է, օրինակ, որ հայ վաճառականները դրամական խոշոր աւանդներ ունէին վենետիկի «Banco Dolfin» յայտնի դրամատանը: [28, էջ 371] Իսկ Մարգար Շահրիմանեանը, ինչպէս նշւեց, նոյն քաղաքի «Ս. Մարկոս» կոչւած բանկում ունէր 700 հազար դուկատ գումարով աւանդ: Այսպիսով ինչպէս հայ չելեբիները Թուրքիայում, ջուղայեցիները եւս զբաղւում էին բանկային գործառնութիւններով, վարկատուութեամբ, դրամափոխութեամբ եւ այլն:

XVII դարում արեւլահայ եւ արեւմտահայ խոջաները արդէն լայն առեւտրական գործառնութիւններ ունէին եւրոպական երկրների հետ: Իգուր չէ, որ Ֆրանսիացի Տուրնեֆորը գրում էր, որ հայ վաճառականները «ոչ միայն հանդիսանում են Լեւանտի առեւտրի տէրը, այլեւ նշանակալից չափով նաեւ Եւրոպայի առաւել խոշոր քաղաքների առեւտրի տէրը»:

Եւրոպայում հայ վաճառականների վաղեմի առեւտրական գործընկերներ են հանդիսացել Իտալիայի քաղաք-հանրապետութիւնները եւ առաջին հերթին՝ Վենետիկի հանրապետութիւնը:

Հայ գաղթականութեան ալիքը դէպի այս քաղաքը տեղի է ունեցել դեռեւս XI դարում: Աւելի ուշ, ինչպէս նշւեց վերեւում, Կիլիկիայի հայկական թագաւորութեան կործանումից յետոյ, 1413 թ. Կիլիկիայից 30 հազար հայեր տեղափոխւում են Եւրոպա եւ ի թիւս այլեւայլ երկրների ու քաղաքների, հաստատւում են նաեւ Վենետիկում:

Կատարինօ Մենօ անունով վենետիկցի մի ազնւական ի տրիտուր հայերից ընդունած ինչ-ինչ ծառայութիւնների, XV դարում նրանց համար կառուցում է մի եկեղեցի Ս. Խաչ անունով: Աւելի ուշ, 1688 թ. ջուղայեցի խոջա Գրիգոր Միրմանեանը հիմնովին նորոգում է այդ եկեղեցին: [88, էջ 212-215]

XVII դարը հանդիսանում էր իտալական պետութիւնների տնտեսութեան ու քաղաքական ազդեցութեան անկման դարաշրջան: Լեւանտի հետ միջնորդ առեւտուրը անչեղօրէն կրճատւում էր եւ վաճառականների մեծ մասը վեր էր ածւում հողագործների: Դեռեւս XVI դարում թուրքերը Վենետիկից գաւթեցին նրա յունական տիրոյթները, որը հանգեցրեց Արեւելքի հետ նրա առեւտրի կտրուկ կրճատմանը: Այս պարագաներում Վենետիկի համար կենսական անհրաժեշտութիւն էր հայ վաճառականների հետ համագործակցութիւնը, որը նրան հնարաւորութիւն էր տալիս ձեռք բերել արեւելեան ապրանքներ եւ հում (յատկապէս հում մետաքս), ինչպէս նաեւ ինչ-որ չափով դիմակայել իր հզօր առեւտրական ախոյանների՝ Անգլիայի, Ֆրանսիայի եւ Հոլանդիայի մրցակցութեանը: Անգլիացիները ստիպւած էին խոստովանել, որ «վենետիկցիների եւ հայերի միջեւ առեւտուրը ամբողջապէս խափանելը անհնարին է»: [4, էջ 411]

Վենետիկի հանրապետութեան սենատը, ելնելով վերոյիշեալ նկատառումներից, բազմաթիւ արտօնութիւններ եւ իրաւունքներ էր շնորհում հայ վաճառականներին, պարբերաբար իջեցնելով նաեւ նրանցից գանձւող մաքսատուրքերը: [29, էջ 67]

Այսպէս, համաձայն Վենետիկի սենատի 1537 թ. մարտի 5-ի որոշման, Սիրիայի նաւահանգիստների վրայով իրանական մետաքսը Վենետիկ ներմուծելու դէպքում սահմանւում էր արտօնեալ վեց տոկոսանոց մաքս: [29, էջ 67] Պարսկական մետաքսի համար սահմանւած մաքսատուրքը Վենետիկի սենատը որոշեց

պեղչել նաեւ 1567, 1574, 1576 թ. որոշումներով: Հետագայում բազմիցս (1589, 1591 թ. եւ այլն) այդ որոշումները հաստատւում էին: Սենատի 1589 թ. դեկտեմբերի 29-ի հրամանագրում ասւում էր. «Պարսկական մետաքսեղէնը պէտք է ներմուծւի Սիրիայի նաւահանգիստներից, գնուի Դամասկոսի եւ Հալէպի հիպատոսների կողմից եւ վճարւի 1537 թ. մարտի 5-ին սահմանած արտօնեալ մաքսային սակագնով»: [29, էջ 67. 28, էջ 431, 464-466]

1614 թ. մարտի 5-ին Վենետիկի սենատը յատուկ որոշում է ընդունում իրանական հում մետաքսից գանձւող մաքսատուրքը նւազեցնելու վերաբերեալ: Նոյն թւականի մայիսի 2-ին սենատը վճիռ կայացրեց այն մասին, որ Սէֆեան պետութիւնից սիրիական նաւահանգիստների վրայով Վենետիկ բերւող ողջ մետաքսը վեց տարի ժամկէտով ազատւում է 6%-ից մաքսից: [29, էջ 67]

Կոստանդ Ջուղայեցին «Աշխարհաժողովում» վկայում, որ «ինչ ապրանք որ Վանատիկը կու մտնի գումրուկ չունի զերած Նազարէթին խալճն եւ ինչ ապրանք որ Վանատիկէն դուրս կելնի կելնի Ճ-ին (100-ին) Ժ (10) գումրուկ կտան ամենայն խալճով»: [122, էջ 165բ]

Ընդորում այս արտօնութիւնը յատկացւում էր բացառապէս իրանահայ վաճառականներին: Դա պարզորոշ կերպով երեւում է վճռի մէջ տեղ գտած յատուկ յօդւածից, որտեղ ասւում էր, որ պարտադիր պայման է, որ Հալէպի վրայով Վենետիկ մետաքս բերող բոլոր վաճառականները Սիրիայում Վենետիկեան հիպատոսին անվիճելի փաստերով ապացուցեն, որ իրենց բերածը իսկապէս «պարսկական» մետաքս է: Այսպիսով սենատի որոշումը չէր տարածւում թուրքական մետաքսի վրայ, որը վերստին վկայում է այդ շրջանում Վենետիկի հանրապետութեան սուր առճակատման մասին Օսմանեան կայսրութեան հետ:

Ղ. Ալիշանը ենթադրում է, որ վենետիկեան սենատի վերոյիշեալ վճիռը ընդունւած էր Նոր Ջուղայեցի վաճառական խոջա Սաֆարի առաջարկութեամբ, որը շահ Աբբաս Իի դեսպանի առաքելութեամբ ժամանել էր Վենետիկ, հանրապետութեան հետ առեւտրական ու քաղաքական բնոյթի բանակցութիւններ վարելու համար: Ի հաստատումն այդ վարկածի նա բերում է այն փաստը, որ խոջա Սաֆարի բանակցութիւններից յետոյ ապրանքափոխանակութիւնը Ջուղայեցի եւ վենետիկցի վաճառականների միջեւ կտրուկ աւելացրել էր: [37, էջ 419]

Վենետիկեան սենատի 1640 թ. ապրիլի 24-ի նիստի

արձանագրութեան մէջ ասւում էր, որ «այդ ազգին (հայերին Վ.Բ.) հովանաւորելը մեծապէս օգտաւէտ է մեզ, քանի որ հայ վաճառականները զբաղւում են մեծ առեւտրով եւ Վենետիկ են ներմուծում ամենաթանկագին արեւելեան ապրանքներ, որոնց մէջ ամենաարժէքաւորը հում մետաքսն է»: [88, էջ 215] Մէկ այլ փաստաթղթում, որը թւագրւած է 1651 թ., վենետիկեան իշխանութիւնները յայտարարում էին. «Ներկայումս արժէ միայն խրախուսել հայերի առեւտուրը, նրանց տրամադրելով ամենալայն արտօնութիւններ»: [37, էջ 447] Վենետիկի արքունի դիւանի այլեւայլ յիշատակութիւնների մէջ ծերակոյտի կողմից հայ ազգը անւանւում է «երախտաւոր ազգ» (nazione Benemerita) «բարեացակամ», «սիրելագոյն», «յաճոյական», «օգտակար», «միշտ շահաւոր», «բազմերախտ» եւ այլն: Ի նշան համակրութեան, Վենետիկի ծերակոյտի կողմից շնորհւած էր հրաման, որ հայերը համարձակ կարող են իրենց ապրանքները վաճառել Ս. Մարկոսի հրապարակում, առանց որեւէ հարկ վճարելու: [88, էջ 216]

Հայ վաճառականների նկատմամբ վենետիկեան հանրապետութեան նման բարեացակամ վերաբերմունքի հիմքում ընկած էր նաեւ այն մտավախութիւնը, որ նրանք կարող են վերակողմնորոշւել դէպի միւս մրցակից իտալական հանրապետութիւնները: Վենետիկեան սենատի արձանագրութիւններից մէկում ասւում է, որ անհրաժեշտ է հայ վաճառականներին տրամադրել ամէն տեսակի դիւրութիւններ, հակառակ դէպքում նրանք իրենց ապրանքները կուղղեն դէպի Լիւորնօ կամ Ջենովա: [28, 323]

Մինչեւ իրանահայ վաճառականների անմիջական այցելութիւնները Վենետիկ, «Ադրիատիկի մարգարիտը» կոչւած այս վաճառաշահ քաղաքի հետ աշխոյժ առեւտուր ունէին Թուրքիայի եւ Արեւմտեան Հայաստանի հայ խոշոր վաճառական-խոջաները: Այստեղ էին գալիս, օրինակ, հայ անւանի վաճառականներ, Ստամբուլից, Զմիւռնիայից, Ամիդից, Անգորայից, Տրապիզոնից, Բրուսայից, Սիւրիհիսարից, Հրսնքէյֆից, հայ վաճառականութեան հնագոյն կենտրոններ Սսից, Այասից, Ադանայից, Գարամանից, Կեսարիայից, Հռոմկլայից, Կարկառից, Ուռհայից, Ակնից, Կարինից, Երզնկայից, Բաղեշից, Բաբերդից, Վանից եւ այլ քաղաքներից: [28, էջ 428-429] Քիչ չէին նաեւ Ղրիմից եւ Անդրկովկասից (Նախիջեւան, Ղափան, Սիւնիք, Ղարաբաղ, Ջուղա եւ այլն) եկած վաճառականները:

Դրանցից մէկն է օրինակ Փիրզադէ Ղափանցի անունով մէկը, որը 1586-1587 թ.թ. եղել է ոչ միայն Վենետիկում, այլեւ Եւրոպայի բազմաթիւ քաղաքներում: Իր ճանապարհորդական ուղեգրութիւններում նա ռամկական պարզ ու անպաճոյճ լեզուով գրում է. «Եմ մեղաւոր Փիրզատա Ղիզիլպաշէն (Իրան), երկիր Ղապանէն, Իւրոտէն ձորէն (Որոտանի ձոր), կեղոս (գեղս) Գետաթաղէն, Պաստամեցէց սաքեն (ցեղէ), Զաքէրի թոռն Միրզին, (Մ'րն հայրն է ո՞րն պապն), Հռոսմսիմին (մայրն Հռիփսիմէ) տաղայ, Խալիֆոն փարուն?, Պահալաւէն աղրէր: Էն տարին որ հայոց թվ. էր ՌԼԵ (1586-1587) ես իմ տաէն ելայ, գլոխս առայ ասկական մուլորեցի, օտար աշխարհ եկայ: Առջի քաղաքն Վան. էնկից կինեցի Հիզու քաղաքն. էնկից կինեցի Ղարահէմիդ եւն. էն կին Իզնայմիտ. էն կին Աստանբուլ քաղաք, որ Խոնդքարին թախտն այ: Այնուհետեւ դանուբեան երկրների վրայով նա մեկնում է Լեհաստան, այնտեղից Դանցիգ, Պրագա, եւ մտնում է Իտալիա «Դէյլիանայ երկիրն, Վէնետիկ քաղաք՝ ԺԲ մեծ պարոնի ձեռն այ. որ Ս. Մարկոս Աւետարանիչին մարմին այ. Ծովի մէջ այ. ՁՌ (6000) կարմոճ կայ մէջն. ՁՌ (6000) պարքայ կայ իւր մէջն, խիստ (մեծ կամ զարմանալի) քաղաք այ: Էնկից կինեցի Եա Նուայայ (Ջենովա կամ Անգոնա). Էնկ. կին. Հռումայ քաղաք եւ այլն: [28, էջ 438-439]

Ամենակարճ ժամկէտում արեւելահայ վաճառականները, յատկապէս ջուղայեցիները, կարողացան Վենետիկի հետ կատարուող առեւտրի մեծագոյն մասը կենտրոնացնել իրենց ձեռքում եւ մրցակցային պայքարում կամ դուրս մղել իրենց արեւմտահայ մրցակիցներին եւ կամ ստիպել նրանց չահաւէտ պայմաններով համագործակցել իրենց հետ:

Վենետիկում հաստատուած հայ խոշորագոյն վաճառականական ընտանիքներից են եղել Գերաք Միրմանները (1588-1750), Շահումեանները (1650-1757), Շահրիմանեանները (1697-1800), Սինանեանները (1667-1712) Մարտիրոսեանները (1690-1737), Զանդ Աղամիրը (1690-1713) Վանեցի Դաւթեանները (1670-1742), Ղափանցի Նահապետեանները (1718-1738) եւ բազմաթիւ այլ տներ: [166, էջ 297]

Ղ. Ալիշանը արքունական դիւանների վաւերագրերի հիման վրայ կազմել է XVI-XVIII դարերում Վենետիկում առեւտուր անող հայերի ցանկը. այնտեղ գրանցուած անունների թուացանկը անցնում է 2000-ից:

XVII դարի սկզբներից հայերի առեւտուրը Վենետիկի հետ իսկական ծաղկում է ապրել: Դա նաեւ 12-րդ դարից գոյութիւն

ունեցող տեղի գաղթօջախի մեծացման պատճառ է հանդիսացել: XVI դարի երկրորդ կէսից ծայր է առնում հայ բնակչութեան նոր հոսանք դէպի Իտալիա: Դրա պատճառը ոչ միայն Թուրք-իրանական պատերազմներն էին, Հայաստանի անապահով վիճակը, տնտեսական կեանքի լճացումը, կողոպուտն ու գերեվարութիւնը, որոնք ստիպում էին հայ զանգուածներին լքել իրենց հայրենիքը եւ գաղթել աւելի ապահով վայրեր, այլեւ հայ առեւտրական բուրժուազիայի արագ ձեւաւորումը, որն անմիջապէս նեւում էր նոր շուկաներ որոնելու բուռն հորձանուտի մէջ: Վենետիկում այնքան մեծ է եղել ջուղայեցի վաճառականների թիւը, որ Ս. Մարիամ Ֆորմոզայի եկեղեցու կից փողոցը կոչել է «Ջուղայի փողոց»: [88, էջ 214] Մխէոն Լեհացին իր ուղեգրութեան մէջ (1612 թ.) Վենետիկում յիշում է հայկական քարաշէն եկեղեցի՝ իր հիւրանոցներով եւ հարակից այլ շէնքերով: (167) Այդ քաղաքում իրենց ներկայացուցիչներն են ունեցել Իրանի, Թուրքիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Ռուսաստանի եւ այլ երկրների հայ խոշոր վաճառականական տները:

Վենետիկի հանրապետութեան եւ հայ խոջաների միջեւ առեւտուրը առանձնակի վերելք էր ապրում պարբերաբար բռնկուող Թուրք-վենետիկեան պատերազմների, մասնաւորապէս Կանդիայի 25-ամեայ պատերազմի ժամանակ (1645-1669 թ.): Ընդորում հայ վաճառականների քաղաքական համակրանքը մշտապէս եղել է Թուրքիայի հակառակորդի կողմը: Ցայտնի է օրինակ, որ Մարգար Շահրիմանեանը 1693 թ. 200000 դուկատ գումարով փոխառութիւն էր յատկացրել Վենետիկի հանրապետութեանը Թուրքերի դէմ պատերազմ մղելու համար: [52, հատ. I, էջ 438]

Իտալական քաղաքներից Ջենովան եւս մինչեւ XVII դարի կէսերը կարեւոր տեղ էր գրաւում Արեւելքի ու Եւրոպայի միջեւ միջնորդ առեւտրում: Հանդիսանալով Վենետիկի մրցակիցը, նա ամէն կերպ աշխատում էր հայ վաճառականներին գրաւել իր կողմը, նրանց տրամադրելով լայն իրաւունքներ եւ արտօնութիւններ: 1623 թ. Ջենովան նոյնիսկ ընդունեց հայ վաճառականների առաջարկը՝ համատեղ կազմակերպել «Արեւելեան Հնդկաստանի առեւտրական ընկերութիւն»՝ Հնդկաստանի եւ Իրանի հետ առեւտուր անելու եւ իրանական հում մետաքսը անմիջականօրէն Ջենովա ներմուծելու համար: [37, էջ 160]. Իդէպ, այդ ընկերութիւնը գոյութիւն ունեցաւ մինչեւ XVII դարի կէսը, որից յետոյ վերացաւ:

Հայ խոջաները աչքի ընկնող առեւտուր ունէին նաեւ

Իտալիայի Լիւոռնո նաւահանգստային քաղաքի հետ: Այդ քաղաքի հայ գաղութի պատմութեան հետազօտող Մ. Ուղուրլեանը գրում է, որ տեղեկութիւններ կան այն մասին, որ 1582 թ. այդ քաղաքում հաստատուած հայազգի վաճառականներից մէկը՝ խոջա Կիրակոս Միրմանը վարել է Թոսքանայում պարսից շահի հիւպատոսի պաշտօնը: [88, էջ 44] Այս տեղեկութիւնից երեւում է, որ 16-րդ դարի կէսից Լիւոռնոյում ստուգապէս կար հայ գաղթականութիւն, որի մեծ մասը կազմում էին վաճառականները: Հայերը առաջիններից էին, որ սկսել էին արեւելեան ապրանքներ ներմուծել Թոսկանական քաղաքներ՝ Ֆլորենցիա, Լիւոռնո եւ այլն, որտեղ վայելում էին այլեւայլ իրաւունքներ եւ ազատութիւններ:

Լիւոռնոյի առեւտրական նշանակութիւնը բարձրացնելու նպատակով Թոսկանայի մեծ Հերցոգ Ֆերդինանդոս I Մեդիչին 1593 թ. յունիսի 10-ին հրապարակում է մի հրամանագիր, որով նա բոլոր ազգերի վաճառականներին, այդ թւում նաեւ հայերին, հրաւիրում էր «առանձին կամ ընտանեօք» հիմնաւորուել Լիւոռնոյում կամ Պիզայում եւ զբաղել Արեւելքի հետ առեւտրով: «Ամենեցուն ձեզ, ո՛վ վաճառականք իւրաքանչիւր ազգաց,- ասում էր այդ հրամանագրում,- Արեւելեայք եւ Արեւմտեայք, Սպանիացիք եւ Փորթուգալացիք, Ցոյնք, Տեւտոնեանք, Իտալացիք, Երբայեցիք, Թուրք, Հայք, Պարսիկք եւ այլք, ողջոյն համայնից»: [88, էջ 253-255]

Քառասուն կէտից բաղկացած յիշեալ հրամանագրով Ֆերդինանդոս Բ Լիւոռնո եկող վաճառականներին շնորհում էր զանազան արտօնութիւններ, առանձնաշնորհումներ, ազատութիւն, ապահովութիւն, կրօնական բացարձակ ազատութիւն, ազատ առեւտրի իրաւունք, «ապահովութիւն շահեալ գումարաց վճարման, ներումն եւ թոյլտուութիւն գործեալ յանցանացն, անկախութիւն ըստ խմբի ի դատաւորաց հրման կազմելոյ առանձին հասարակութիւնս, եւ յերթեւեկութեան վաճառականաց ուղեւորական նպաստներ, եւ այլն եւ այլն»: [88, էջ 253-255]

Մեդիչիների վարած յիշեալ քաղաքականութեան հետեւանքով Լիւոռնոն դարձաւ հայ վաճառականների համար ձգողութեան կենտրոն: «Ցայնժամ բազմացան վաճառականք եւ կարաւանք հայոց յարեւելեաց Ասիոյ եւ ի Կիլանայ, ի Նուխոյ, ի Գանձակայ, եւ այլն, բառնալ մթերս անբաւ զուտ եւ անզուտ մետաքի այլ եւ այլ որակաւ եւ տեսակաւ»: [37, էջ 455]

Հայ վաճառականները Իրանից, Հնդկաստանից, մերձաւորարեւելեան երկրներից Թոսկանա էին ներմուծում կտաւներ, դվթի

(դրՔտիկ), մետաքսեղէն, համեմունքներ, որդան կարմիր, մարդարիտ, թանկարժէք քարեր, դամասկոսեան դիպակներ, գոհարեղէն, մում եւ այլ բազմապիսի ապրանքներ: 1671 թ. Լիւոնեոյում իրանական աւագ հիւպատոսի պաշտօն էր վարում Պետրոս անունով դափանցի մի հայ: [168, էջ 170-171, 194-196] Սրան յաջորդել են Գրիգոր Միրմանը (Գրիգոր Գերաք) եւ իր ժառանգները, որոնք Կոդմաս III-ի ժամանակ ճանաչեցին որպէս իշխանազուն տոհմ: Մեզ է հասել երկու մեդալ, դրուագած Գրիգոր Գերաքի դիմաքանդակով, դրոշմած 1673 թ. [169, էջ 115-116] Այդ մեդալների միւս երեսին պատկերուած է «Գառն աստծոյ». ձախ կողմում մի առիւծ, որի մէջքից բարձրանում է արեգակը, իսկ ցածում Մեղուի մի փեթակ, դէպի որը շեշտակի ճեպում է մի մեղուապարս: Ա. Սաքըզեանի կարծիքով այդ պատկերը «մի այլաբանութիւն է աշխատանքի եւ ծաւալուն գործունէութեան»: [169, էջ 116] Սակայն իրողութեան աւելի մօտ է այն ենթադրութիւնը, որ քանդակած մեղուի փեթակի տակ պէտք է տեսնել խոջա Գերաքի մեծահարուստ որդիների գանձարանը, իսկ ի դէմս մեղուների պարսի՝ նրանց տասնեակ գործակատարներին, որոնք ոսկու քակներով այդ գանձարանը լցնելու համար թափառում էին երկրից երկիր: [170, էջ 13]

1683 թ. Յունիսի 17-ին հայ անուանի վաճառականների մի մեծ խումբ ստորագրում է «Առաջին դաշնագրութիւն հայոցը» Լիւոնեոյում եկեղեցի կառուցելու մասին «վասն ազգին մերոյ»: Դաշնագրութեան մէջ յատուկ շեշտւում էր, որ եկեղեցուն կից աղքատանոցում հիմնարկութիւնից օգտուելու են ոչ միայն հայերը այլեւ օտարները: «Որովհետեւ են ի քաղաքիս յայսմիկ այլ եւ այլ ազինք Յոյնք, Գաղղիացիք եւ Հոլանտացիք որք խնամեն զտնանկս ազգին իւրեանց, սակս որոյ եւ տնանկք մեր չլինիցին խտրեալք առաջի այլոց ազգաց, այլ եղիցին օժանդակեալք նոքա ի մերայնոց: Նոյնպէս եւս ապագայ սերունդք նոցին ի քաղաքիս այսմիկ, համարեսցին որպէս եղբարս եւ համազգիս: Եւ թուեալ լիցին նոքա ի միջի հասարակութեան սիրոյ, եւ վայելեսցեն զամենայն արտօնութիւնս, որպէս վայելէ Ազգն մեր յայսմիկ քաղաքի»: [88, էջ 256-257]

Լիւոնեոյում հայկական եկեղեցի կառուցելու համար Հռոմի «Հաւատի տարածման Ս. ժողովի» համաձայնութիւնը ստանալու նպատակով Լիւոնեոյի հայութիւնը որպէս իր ներկայացուցիչ Հռոմ է ուղարկում «Պարոն Աստուածատուր Օղլանքէշիշին», որը յայտնի է նաեւ Ադա տէ Մաթուս անունով: Վերջինս իր հետ վերցնում է

Թոսկանայի աւագ դուքս Կոզմաս III-ի եւ նրա «ծիրանաւոր եղբօր» յանձնարարականները՝ ուղղած «Հաւատի տարածման Ս. Ժողովի» ատենադպիր Մոնսիներ Ֆաբբրոնիին: Հռոմը տալիս է իր համաձայնութիւնը, պայմանով, որ խնդրատուները ընդունեն Հռոմի ուսի յօդուածից բաղկացած «Թէզութիւնները», որոնք Լիւոնսոյի հայ վաճառականներին եւ այդ քաղաքում կառուցելիք հայկական եկեղեցին կդնէին սուրբ Պետրոսի աթոռի հսկողութեան տակ: [88, էջ 69-70] Այսպիսով Վատիկանը առիթը բաց չէր թողնում հայ առեւտրական կապիտալի նկատմամբ հսկողութիւն սահմանելու համար: Ի դէպ, Հռոմի թոյլտւութիւնը Լիւոնսոյում հայկական եկեղեցի կառուցելու վերաբերեալ ստացւեց բաւական ձգձգումներից յետոյ՝ 1701 թ. Մարտի 8-ին:

1697 թ. Մարտի 18-ին Լիւոնսոյի հայերը ընդունում են նաեւ այսպէս կոչած «Ազգային սահմանադրութիւն»: Նրանում ի թիւս այդ գաղթօջախի ներքին կեանքին վերաբերող այլեւայլ հարցերի պարունակւում էր նաեւ մի կէտ այն մասին, որ Լիւոնսոյում առեւտուր անող հայ վաճառականները պէտք է վճարեն ազգային բաժ կամ տուրք հետեւեալ պայմաններով. «Եթէ վաճառաց տեսակքն են չերամ, սաուղէն, կտաւեղէն, կերպաս, մուշկ, որդան կարմիր, բուստ, սաթ, լեղակ, հաստուցանեն մէկ բեցցա իւրաքանչիւր բեռին համար. իսկ եթէ են մեղրամոմ եւ տեսակք որ կը վերաբերին իտալական վաճառաց՝ իւրաքանչիւր բեռին համար հաստուցանեն միայն կէս բեցցա»: Խոշաներից մէկին՝ Ճիլարիան Մարգարեանին ժողովը նշանակում է ազգային բաժը հաւաքող վերակացու: Ժողովը որոշում է նաեւ դիմել Լիւոնսոյի աւագ դուքս Կոզմաս III-ին, որպէսզի նա հաստատի ժողովի որոշումը եւ այն օրէնսդրական կարգով պարտադրի ոչ միայն Լիւոնսոյում բնակւող հայերին, այլեւ այն հայ վաճառականներին, որոնք առեւտրական գործերով այցելում էին Լիւոնսոյ: [88, էջ 66-67]

Այնքան շատ ջուղայեցիներ են հաստատւած եղել Վենետիկ, Ջենովա եւ Լիւոնսոյ քաղաքներում, որ Ստեփանոս արքեպիսկոպոս Ջուղայեցին իր 1688 թ. մի գրութիւնը վերնագրել է՝ «Գիր օրհնութեան աստուածաշէն քաղաքացն Վենետիկ, Այեկոռնոյ եւ Ջենովայ եղեալ քրիստոսասէր եւ բարեպաշտոն ջուղայեցի վաճառականաց, սիրելի եւ հարազատ եղբարց»: [157, էջ 450]

Պատահական չէ, որ հէնց հայ վաճառականների դրամական հատկացումների շնորհիւ 1643-1702 թ.թ. ընթացքում Լիւոնսոն ակնառու տեղ է գրաւել նաեւ հայ գրատպութեան մէջ: [Տես 171, էջ 229-236]

Իտալիայում հայ վաճառականները խոշոր առեւտուր ունէին նաեւ Լուկկայի քաղաքային հանրապետութեան, Ֆերրարայի եւ Պեաչենցայի հերցոգութիւնների, «յաւիտենական քաղաք» Հռոմի, Բոլոնիա, Պալմի, Ֆաբրիանա, Ֆորլի, Պերուժ, Նեապոլ, Միլան, Ֆլորենցիա, Պիզա, Պադուա, Տուրին, Բաւիա, Պիստոեա, Սիենա, Վիտերբո, Էմիլիա եւ այլ քաղաքների հետ: Մեծ թիւով հայեր էին հաստատուել Ռաւեննա քաղաքին կից նաւահանգստում, այդ պատճառով յաճախ Ռաւեննան անուանուել է նաեւ «Արմենիա»: Ի դէպ, այս քաղաքի նշանաւոր եկեղեցիներից մէկի գաւթում գտնւում է Սահակ Կամսարականի դամբարանը, որը ժամանակին եղել է Ռաւեննայի կուսակալը եւ իր մահկանացուն կնքել է 664 թւականին: [88, էջ 212-250] XIII դարից սկսած հայ վաճառականները սկսել են երթեւեկել նաեւ Ծովեզերեա Անկոնա քաղաքը: Հայերն այստեղ ունեցել են նաեւ իրենց եկեղեցին:

Դժբախտաբար նիւթերի պակասը հնարաւորութիւն չի տալիս առանձին-առանձին ցոյց տալու հայ վաճառականների առեւտրական կապերը վերոյիշեալ քաղաքների հետ: Սակայն յայտնի է մի բան, որ նշւած բոլոր քաղաքներում XVII դարում գոյութիւն են ունեցել հայ գաղթօջախներ: Ընդորում եւրոպական զանազան քաղաքներում եւ նաւահանգստներում հաստատուած հայերը սերտ յարաբերութիւններ են ունեցել միմեանց հետ: Շատ անգամ միեւնոյն ընտանիքի անդամները առեւտրական գրասենեակներ էին բաց անում տարբեր քաղաքներում եւ նաւահանգստներում եւ իրար հետ շարունակ գտնւում էին կապակցութեան մէջ: [139, էջ 40]

Վերին աստիճանի ծաւալուն էր նաեւ հայ վաճառականների առեւտուրը Ֆրանսիայի հետ: Ճիշտ է, այն հիմնականում կատարւում էր Լեւանտում, որտեղ Ֆրանսիան, հենւելով XVI դարում Օսմանեան սուլթաններից ստացած կապիտուլիացիաների վրայ, ձեռք էր բերել կայուն դիրքեր, [108] սակայն հայ վաճառականները Միջերկրական ծովով այցելում էին նաեւ բուն Ֆրանսիա: Առհասարակ պէտք է նշել, որ Ֆրանսիան մեծ յաջողութեամբ կարողացաւ օգտագործել Միջերկրածովեան առեւտրի աւանդոյթները, իսկ Մարսէլը հանդիսացաւ դասական միջնադարի իտալական քաղաքների Լեւանտեան առեւտրի ժառանգորդը: [145, էջ 199]

Մարսէլի վրայով իրականացւում էր նաեւ առեւտուրը Իսպանիայի, Իտալիայի եւ Աֆրիկայի հետ:

XVII դարում առեւտրական խոշոր նշանակութիւն ձեռք

բերեցին նաեւ Ամյանտեան ծովափի առեւտրական քաղաքները, յատկապէս Նանտը, Բորդոն, Լա-Ռոշելը, Դիւեպպը եւ այլն: Իսկ Ֆրանսցիսկ Բի ժամանակ հիմնադրուած Հաւրը աւելի ուշ դարձաւ Ֆրանսիայի խոշորագոյն նաւահանգիստը:

XVII դարում ովկիանոսային ճանապարհների վրայ Ֆրանսիան չէր կարող հանդէս գալ որպէս Անգլիայի մրցակից, իսկ ցամաքային կարաւանային առեւտրով Ֆրանսիական վաճառականները առհասարակ չէին զբաղւում: Հետեւաբար Ֆրանսիական առեւտրական բուրժուազիայի համար եւս կարեւորագոյն նշանակութիւն էր ձեռք բերում առեւտրական համագործակցութիւնը հայ վաճառականների հետ:

Տեղեկութիւններ կան այն մասին, որ XVII դարի սկզբին հայ խոջաները փորձում էին Ֆրանսիական թագաւորից ձեռք բերել Ֆրանսիայի բոլոր մեծ քաղաքներում հաստատուելու իրաւունք: [150] Մտանալով այդպիսի իրաւունքներ, կարճ ժամանակամիջոցի ընթացքում նրանք ծաւալում են այն աստիճանի լայն առեւտուր, որ դառնում են Ֆրանսիայի վաճառականների լուրջ մրցակիցներ: Մարսէլի առեւտրական պալատի բողոքների հիման վրայ 1622 թ. Դեկտեմբեր 10-ին քաղաքապետարանը հրապարակեց մի հրամանագիր, որի համաձայն Ֆրանսիական նաւերի նաւապետներին խստիւ արգելւում էր Լեւանտից Մարսէլ եւ Մարսէլից Լեւանտ տեղափոխել հայ վաճառականների ապրանքները եւ առհասարակ որեւէ հայ ընդունել իրենց նաւերի վրայ: Հրամանագրում նաւապետներից պահանջւում էր նաեւ նոտարին ստորագրութիւն տալ այն մասին, որ իրենք պարտաւորւում են այդ արգելքը խախտելու դէպքում տուգանք վճարել 10 հազար ոսկի գումարով: Պրովանսի պառլամենտը նոյն թւականին հրապարակեց նոյնատիպ մի հրամանագիր, որով նա իր համերաշխութիւնն էր յայտնում Մարսէլի քաղաքապետարանի որոշումներին: Աւելին, պառլամենտի հրամանագրում նշւում էր, որ հայ վաճառականներին արգելւում է Մարսէլից արտահանել ոսկի եւ արծաթ: [150, էջ 10-13,14-20. 172, էջ 14-15] Նոյնանման որոշումներ ընդունեցին նաեւ Տուլոնում: Ֆրանսիական իշխանութիւնները շարունակում էին պարբերաբար սահմանափակել իրենց առեւտրական ախոյեանների գործունէութիւնը: [150, էջ 22-41] Բանը հասնում է նոյնիսկ նրան, որ Մարսէլ եւ Տուլոն նաւահանգիստները փակւում են հայ վաճառականների առջեւ: Ֆրանսիական իշխանութիւնների այդ քաղաքականութեան նպատակներից մէկն էր նաեւ Թուրքիային

տնտեսական հարած հասցնելը, որովհետեւ Լուդովիկոս XIV-ի արտաքին քաղաքականութեան կարեւորագոյն խնդիրներից մէկն էր Միջերկրական ծովը փակել թուրքերի առջեւ: [173, էջ 365]

Անտարակոյս Ֆրանսիական նաւահանգիստների փակելը ծանր հարած էր հայ վաճառականների համար: Մասնաւորապէս այն բացասաբար ազդեց իրանա-եւրոպական, այդ թւում նաեւ իրանա-Ֆրանսիական առեւտրի վրայ, որովհետեւ մինչեւ 1664 թ. Ֆրանսիայի ուղղակի առեւտրական յարաբերութիւնները Իրանի հետ գործնականում հաւասար էին զրոյի, մինչդեռ Ֆրանսիան հանդիսանում էր իրանական հում մետաքսի խոշոր ներմուծող: Պատահական չէ, որ առաջինը Ֆրանսիական նաւահանգիստները բացելու ուղղութեամբ հայ վաճառականների կողմից ծաւալած շարժմանը թնչեցին ջուղայեցի խոջաները: Նրանք գործի մէջ ընդգրկեցին նաեւ Իրանում գործող կաթոլիկ միսիոներներին: Այսպէս, 1628 թ. Նոր Ջուղայի քալանթար (քաղաքապետ) խոջա Նազարը կարողացաւ ստանալ կապուցինեան միաբանութեան անդամ Պացիֆիկի համաձայնութիւնը միջնորդելու Ֆրանսիական արքունիքի առջեւ, որպէսզի դադարեցուն հայ վաճառականների նկատմամբ գործադրւող հալածանքներն ու առեւտրական սահմանափակումները: Դրա փոխարէն արքունիքում կշիռ ունեցող խոջա Սաֆարը կազմակերպելու էր Ֆրանսիացի միսիոների հանդիպումը շահ Աբբաս Իի հետ, որից նա խնդրելու էր թոյլտուութիւն Սպահանում կապուցինեան միաբանութեան միսիա կազմակերպելու վերաբերեալ: [174, էջ 423]

Այս միջամտութեան արդիւնքներն իրենց երկար սպասեցնել չտուեցին: Հակառակ այն բանի, որ Ֆրանսիական կառավարութիւնն արդէն ընդունել էր Ֆրանսիական առեւտրի պաշտպանութեան վերաբերեալ մի շարք հովանաւորողական օրէնքներ, որոնք անխտիր տարածւում էին Ֆրանսիայի բոլոր արտասահմանեան մրցակիցների վրայ, [175, էջ 126] 1629 թ. Նոյեմբերի 23-ին հրապարակեց Լուդովիկոս XIII-ի եւ կարդինալ Ռիշելիէյի յատուկ արտօնագիրը («պատենտ»), որով հայ վաճառականներին թոյլատրւում էր ազատ ելք ու մուտք ունենալ Մարսէլի նաւահանգիստ: Անշուշտ հայ վաճառականների նկատմամբ նման բացառութիւն անելը պայմանաւորուած չէր լոկ Ֆրանսիայի կողմից հովանաւորւող կապուցինեան միաբանութեանը շահ Աբբաս Իի կողմից ընդառաջ գնալու հանգամանքով, որի մէջ, ինչպէս նշւեց, կարեւոր դեր խաղացին հայ խոջաները: Իսկանը այն էր, որ եւ թագաւորը եւ կարդինալ Ռիշելիէն հիանալի գիտակցում

էին, որ արեւելեան ապրանքների բնագաւառում Ֆրանսիայի գլխաւոր մրցակիցները Հոլանդիան եւ Անգլիան են եւ ոչ թէ Լեւանտեան վաճառականները: Որ ընդհակառակն, արեւելեան վաճառականների հետ առեւտրական համագործակցութիւնը ինչ-որ տեղ նոյնիսկ ձեռնտու է Ֆրանսիային: Սակայն ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ այդ վաճառականները չունէին նաւատորմիղ, իսկ Ֆրանսիական առեւտրական թոյլ նաւատորմը ի վիճակի չէր մրցակցելու հոլանդական եւ անգլիական նաւատորմիղների հետ:

Ուստի Լեւանտեան շուկաներից ապրանքների մի զգալի մասի տեղափոխումը Ֆրանսիա կատարւում էր հոլանդական եւ անգլիական դրօշների ներքոյ նաւարկող նաւերով, եւ այդ իսկ պատճառով ստեղծւում էր նաեւ շահերի միասնութիւն մի կողմից արեւելեան, միւս կողմից հոլանդական ու անգլիական վաճառականների միջեւ: Առաւել եւս, որ հոլանդական վաճառականներն, օրինակ, Մարսէլում մեծաքանակ առեւտրով զբաղւող հայ խոջաներից ձեռք էին բերում մեծ քանակութեամբ արեւելեան ապրանքներ, դրանք եւրոպական տարբեր շուկաներում վերավաճառելու համար: Ֆրանսիացիները կրկնակի վնաս էին կրում նաեւ այն պատճառով, որ հէնց Մարսէլում հոլանդացիները հայ վաճառականներին վաճառում էին հոլանդական մահուդ, որը չօշափելի հարուած էր հասցնում Ֆրանսիական մահուդի մանուֆակտուրներին: Եւ քանի որ առանձին կոնկրէտ դէպքերում Ֆրանսիական մաքսային իշխանութիւնների համար դժուար էր որոշել, թէ որ նաւով ում ապրանքներն են մտնում Մարսէլ եւ այլ նաւահանգիստներ, այդ պատճառով նրանք հախուռն ձեւով ընդունել էին 1622 թ. վերեւում յիշատակւած հրամանագիրը:

Բացի այդ, «պատենտը» չնորհելիս կարդինալ Ռիշելիէն առաջնորդւում էր նաեւ զուտ քաղաքական նկատառումներով: Ինչպէս յայտնի է Ռիշելիէն հանդիսանում էր Արեւելքի երկրներում Ֆրանսիական ազդեցութեան տարածման եռանդուն ջատագով: Ըստ այնմ, նա Արեւելքի երկրների քրիստոնեաներին համարում էր Ֆրանսիական քաղաքականութեան նեցուկ եւ ամէն կերպ աշխատում էր շահել նրանց համագործակցութիւնը:

Որպէս գործնական մտքի տէր ու հեռատես քաղաքական գործիչ, նա առանձնակի խոշոր յոյսեր էր կապում Արեւելքի ժողովուրդների առեւտրական բուրժուազիայի հետ: Նրան անշուշտ յայտնի էր նաեւ այն կարեւոր դերը, որ խաղում էր հայ վաճառականութիւնը համաշխարհային առեւտրում եւ Արեւելք-

Արեւմուտք տնտեսական փոխյարաբերութիւնների մէջ:

Պատահական չէ, որ Ֆրանսիայի պետական քաղաքականութեան սանձերը իր ձեռքում պահող այդ կարդինալը ծրագրեր ունէր հայ վաճառականներին բնակեցնելու Ֆրանսիայի առաւել խոշոր առեւտրական քաղաքներում, մասնաւորապէս Մարսէլում, որպէսզի նրանք անմիջականօրէն զրաղուեն Լեւանտի հետ առեւտրով: [170, էջ 28-29] Վերջապէս կարդինալը քաջ գիտակցում էր, որ Օսմանեան կայսրութիւնում եւ Իրանում Ֆրանսիայի նաւեցողական քաղաքականութեան առաջամարտիկները հանդիսացող կաթոլիկ միսիոներների յաջող գործունէութեան կարեւոր գրաւական է հանդիսանում հայ ազդեցիկ առեւտրական-խոջայական դասի եւ նրա շահերն արտայայտող հոգեւորականութեան դրական դիրքորոշումը:

1620 թ. արտօնագիրը աննախընթաց կերպով զարկ տուեց Ֆրանսիայի հետ հայ վաճառականների առեւտրին, առաւել եւս, որ Մարսէլի իշխանութիւնները սկսեցին նրացից գանձել համեմատաբար ոչ բարձր մաքսատուրքեր: Սակայն այս վիճակը երկար չտեւեց: 1634 թ. Ֆրանսիական վաճառականների ճնշման ներքոյ Մարսէլի քաղաքապետարանը վերստին սահմանափակեց հայ վաճառականների առեւտուրը՝ ներմուծման մաքսատուրքերը իւրաքանչիւր հակ հում մետաքսի համար 16 ֆրանկից բարձրացնելով մինչեւ 112 ֆրանկի: 1650 թ. հայ վաճառականների նկատմամբ կիրառուեց հերթական սահմանափակումը. նրանց ապրանքների վրայ սահմանուեց 50 տոկոսի չափով մաքսատուրք, որի նպատակն էր, ինչպէս այդ մասին նշւում էր հրամանագրում, «ստիպել նրանց այլեւս չայցելել Մարսէլ»: [172, էջ 17-18, 162]

Դրա հետեւանքով առեւտուրը Մարսէլի հետ համարեա դադարեց: Այսպէս, եթէ մինչ այդ հայերը մէկ նաւով Մարսէլ էին բերում միջին հաշուով 1000-1200 հակ հում մետաքս եւ բազմապիսի այլ ապրանքներ, ապա 1658 թ. բերած ողջ մետաքսը չէր անցնում նոյնիսկ 100 հակից: [150, էջ 40]

Սակայն Մարսէլը հայ վաճառականների առջեւ փակելու պատճառով Ֆրանսիայի արեւելեան առեւտուրը եւս կարճ ժամանակամիջոցի ընթացքում նշանակալի մնասներ կրեց: Այդ պատճառով կեանքը հրամայողաբար պահանջում էր վերանայել առեւտրական սահմանափակումների վերաբերեալ Ֆրանսիական իշխանութիւնների ընդունած որոշումներն ու օրէնքները:

Ինչպէս յայտնի է, կարդինալ Ջուլիո Մազարինիի կառա-

վարման շրջանը նշանաւորուեց Լիւդովիկոս XIV-ի (1643-1715) կառավարութեան կողմից նոր քաղաքական գծի մշակմամբ, որն ընթանում էր Ֆրանսիական բուրժուազիայի դիրքերի ամրապնդման կարգախօսի ներքոյ: Այդ քաղաքականութեան բաղկացուցիչ մասերից մէկն էր դիտւում նաեւ արեւելեան վաճառականների նկատմամբ գոյութիւն ունեցող սահմանափակումների վերացումը: [177, էջ 333-339] Այս շրջադարձը մասամբ պայմանաւորուած էր նրանով, որ Ֆրանսիայի մրցակիցները, մասնաւորապէս Հոլանդիան, աւելի ու աւելի էին իրենց կողմը գրաւում արեւելեան վաճառականների առեւտուրը, որի հետեւանքով Ֆրանսիայի արտադրութեանն ու առեւտրին հասցւում էին խոշոր վնասներ: Անտվերպէնն , օրինակ, կարողացաւ զաւթել հում մետաքսի առեւտուրը՝ Ֆրանսիական մետաքսի մանուֆակտուրաները համարեա զրկելով հումքից: [178, էջ 270]

Այս անցանկանալի իրողութիւնը հարկադրեց Ֆրանսիային արեւելեան վաճառականների նկատմամբ որդեգրուած քաղաքականութեան բնագաւառում կատարել կտրուկ շրջադարձ: Կրկին խրախուսւեց նրանց առեւտուրը Մարսէլի հետ: Այդ ուղղութեամբ յատկապէս մեծ ջանքեր սկսեց գործադրել կարդինալ Մազարինին, որը եռանդուն կերպով ջանում էր հայ վաճառականներին գրաւել Ֆրանսիայի կողմը, մասնաւորապէս աշխատելով խրախուսել նրանց առեւտուրը Մարսէլի հետ:

Ֆրանսիայի որդեգրած վերոյիշեալ քաղաքականութիւնը առանձնակի հետեւողականութեամբ իրագործեց XVII դարի ականաւոր քաղաքական գործիչ Կոլբերի կողմից, որը եռանդուն կերպով աշխատում էր, որ երկիրը իր մասնակցութիւնը բերի համաշխարհային առեւտրին, զարկ տա արդիւնաբերութեանը եւ պայքարի մէջ մտնի վաճառահանման շուկաների համար:

Լեւանտի եւ առհասարակ Արեւելքի երկրների հետ Ֆրանսիական առեւտրի աշխուժացման հնարաւորութիւնը, ինչպէս նաեւ անգլիական եւ հոլանդական մրցակիցների հետ պայքարում յաջողութեան հասնելու երաշխիքները Կոլբերի խորհրդականները տեսնում էին Թուրքիայի վրայով ցամաքային առեւտրին զարկ տալու մէջ: Այդ նպատակի իրագործումը հնարաւոր էր միայն հայ վաճառականների օժանդակութեան դէպքում: [36, էջ XLV: 117, հ.I, էջ 434-435]

Այդ առումով յատկապէս կարեւոր նշանակութիւն ունեցաւ 1667 թ. Կոլբերի կողմից կազմած սակացուցակը (<տարիֆ>), որն իրենից ներկայացնում էր ներմուծւող հումքի նկատմամբ

հովանաւորողական մաքսերի մի ամբողջ համակարգ: [179, էջ 81-82] Արեւելեան առեւտրի բնագաւառում Հոլանդիայի եւ Անգլիայի դէմ յաջողութեամբ մրցակցելու համար 1664 թ. Կոլբերը ստեղծեց «Ֆրանսիական արեւելա-հնդկական ընկերութիւնը», իսկ 1669 թ. կազմակերպեց «Լեւանտեան ընկերութիւնը»: [180, էջ 103] Այնուհետեւ Մարսէլը յայտարարուեց բաց նաւահանգիստ («պորտո Ֆրանկո»): [186, էջ 352 144, էջ 207-208] Այդ առթիւ Լիւդովիկոս XIV-ի եւ Կոլբերի հրապարակած էդիկտում ասւում էր, որ Մարսէլ եկող եւ այնտեղից մեկնող բոլոր նաւերը ազատւում են ամէն տեսակի հարկերից եւ որ այդ նաւահանգիստը այսուհետեւ յայտարարւում է ազատ ու մատչելի բոլոր վաճառականների ու բոլոր տեսակի ապրանքների համար: [182, էջ 183-189] Ազատ քաղաքներ յայտարարուեցին նաեւ Տուլոնը, Դիւնկերկը, Բորդոն, Լա-Ռոշելը, Նանտը եւ այլն: Այսպիսով հայ վաճառականների առջեւ կրկին բացւեց Լեւանտ-Ֆրանսիա առեւտրական երթուղին: Ֆրանսիայի հետ նրանց առեւտուրը խրախուսելու նպատակով Կոլբերը յատկացրեց այնպիսի արտօնութիւններ, որպիսիք «չունէր արեւելեան ազգերից եւ ոչ մէկը»: Ֆրանսիայի արեւելեան առեւտրի զարգացման բնագաւառում կարեւոր միջոցառում հանդիսացաւ նաեւ 1665 թ. Կոլբերի կողմից Մերձաւոր Արեւելքում Ֆրանսիական առեւտրական հիւպատոսութիւնների վերակառուցումը:

Բացի այդ, Լիւդովիկոս XIV-ը, 1687 թ. Զմիւռնիայի Ֆրանսիական հիւպատոսին հրամայեց, որպէսզի հայ վաճառականներին յատուկ հովանաւորութիւն ցոյց տրւի: [183, էջ 47]

Ֆրանսիական կառավարութեան այս նոր քաղաքականութեան դրդապատճառները բազմաթիւ էին. նախ Եւրոպայում պատերազմներից ու բուն Ֆրանսիայի ներսում ծաւալւող բարդ իրադարձութիւններից ուժասպառ եղած երկիրը ի վիճակի չէր Լեւանտում առանձնակի եռանդ դրսեւորել առեւտրի բնագաւառում, առաւել եւս սեփական ուժերով ապահովել արեւելեան ապրանքների ներմուծումը Ֆրանսիա: Այնուհետեւ Ֆրանսիայում եկել էին այն համոզման, որ իրենց արեւելեան, մասնաւորապէս իրանական առեւտրի յաջողութիւնը բացառապէս կախւած է հայ վաճառականների համագործակցութիւնից ու նրանց բարի կամեցողութիւնից:

Բանը նրանում է, որ թէեւ Լիւդովիկոս XIV-ի անմիջական աջակցութեամբ 1671 թ. Ֆրանսիական «Արեւելա-Հնդկական ընկերութեանը» յաջողւեց ստանալ իրանական շահ Աբբաս II-ի նոր

ֆիրմանը, որով Իրանում Ֆրանսիական հպատակներին տրամադրում էին Անգլիայի եւ Հոլանդիայի վաճառականներին յատկացած նոյնատիպ իրաւունքներ ու արտօնութիւններ, [184, էջ 195] սակայն այնուամենայնիւ Ֆրանսիան ի վիճակի չեղաւ դրանից յետոյ եւս Իրանի հետ ծաւալելու լայն առեւտուր: Դրա պատճառներից մէկը անչուշտ 1672-1679 թ. Ֆրանս-հոլանդական պատերազմն էր: Սակայն Ֆրանս-իրանական առեւտրի ծաւալման ճանապարհին ամենակարեւորագոյն խոչընդոտը այն էր, որ իր տրամադրութեան տակ չունենալով հզօր առեւտրական նաւատորմ, Ֆրանսիան ի վիճակի չէր ովկիանոսային ճանապարհների վրայ յաջողութեամբ մրցակցել անգլիացիների ու հոլանդացիների հետ: Հէնց դա էլ ստիպում էր Ֆրանսիական կառավարութեանը օգտուել բացառապէս միջերկրածովեան ճանապարհից: Սակայն այստեղ եւս առկայ էին լուրջ դժուարութիւններ: Բացի Լեւանտում անգլիական եւ հոլանդական վաճառականների մրցակցութիւնից, դժուարութիւնը կայանում էր նրանում, որ առհասարակ Թուրքիայի ցամաքային ճանապարհների վրայով Ֆրանսիական վաճառականները ուղղակի առեւտրական կապեր չունէին Իրանի հետ, ուստի հարկադրւած էին օգտուել հայ վաճառականների միջնորդական ծառայութիւններից: [117, էջ 434-436]

Այսպիսով հայ վաճառականների առջեւ կրկին բացւեց Լեւանտ-Ֆրանսիա առեւտրական երթուղին: Չնայած նրան, որ կոլբերը իրականացնում էր մերկանտիլիզմի, պրոտեկցիոնիզմի եւ ակտիւ առեւտրական հաշւեկշռի քաղաքականութիւն, սակայն հայ վաճառականների հետ փոխյարաբերութիւններում որպէս կանոն Ֆրանսիական մաքսային իշխանութիւնները հետամուտ չէին լինում այդ սկզբունքների անշեղ կենսագործմանը: Բացի այդ, կարգադրւեց հայ վաճառականների կողմից բերւած ապրանքների արժէքը վճարել միայն դրամով, այն դէպքում, երբ հոլանդացիներն ու անգլիացիները գերադասում էին վճարումները կատարել ապրանքների փոխանակութեան ձեւով կամ անկախիկ հաշւարկով, որը, բնականաբար, ձեռնտու չէր հայերին: Հէնց այդ պատճառով էլ վերջիններս սկսեցին նախապատութիւն տալ Ֆրանսիացիներին: [183, էջ 47]

Օգտւելով այս շեշտւած բարեացակամ վերաբերմունքից, 1687 թ. հայ խոջաները թոյլատրութիւն խնդրեցին Մարսէյում եւ Բորդոյում բաց անելու սեփական առեւտրական գրասենեակներ: Աւելին, նրանք խնդրագիր ներկայացրին Ֆրանսիայում «Հնդկա-

կան Ընկերութիւն» հիմնելու համար, որը մասնագիտանալու էր Հնդկաստանի, Չինաստանի, մերձաւորարեւելեան երկրների եւ Լեւանտի հետ առեւտրում: Թէեւ Ֆրանսիական վաճառականների ճնշման ներքոյ Լուդովիկոս XIV-ը մերժեց այդ խնդրանքը, սակայն որպէս փոխհատուցում հայերին թոյլատրեց Ֆրանսիայի հարաւային նաւահանգստներում բաց անել առեւտրական տներ: [157, էջ 200]

Կոլբերը սկսեց խրախուսել նաեւ Մարսէլի հայ գրատպութիւնը, նկատի ունենալով, որ նախ դա կնպաստէր հայ վաճառականների առեւտրի աշխուժացմանը այդ քաղաքի հետ եւ ապա՝ Ֆրանսիական գանձարանը նշանակալից եկամուտներ կստանար գրքի առեւտրից, որովհետեւ հայկական գրքերը սովորաբար լաւ սպառում էին գտնում Արեւելքում: [185, էջ 62] Օգտուելով ընձեռնուած հնարաւորութիւններից, 1669 թ. մայիսի 6-ին Ոսկան Երեւանցին լատիներէն լեզուով մի «աղերսանց թուղթ» է յղում Լուդովիկոս XIV-ին, որով խնդրում էր բարեհաճել ընդունել 1666 թ. Ամստերդամում իր հրատարակած հայկական Աստուածաշնչի մի օրինակ: Թագաւորից ստացած 1669 թ. Օգոստոսի 11-ի պատասխան նամակում յայտնւում էր, որ Երեւանցուն շնորհուած է Մարսէլում, Լիոնում կամ տէրութեան մէկ ուրիշ քաղաքում տպարան հիմնադրելու եւ հայերէն լեզուով ամէն տեսակի գրքեր հրատարակելու իրաւունք: [186, էջ 163] Վերոյիշեալ միջոցառումները առաջ էին բերում Ֆրանսիական վաճառականների կատաղի հակազդեցութիւնը, որովհետեւ նրանք նախկինի պէս հայերին համարում էին իրենց մրցակիցներ: Ֆրանսիական գործարարշրջանները նոյնիսկ յաջողեցին դիմել հռոմի հաւատաքննութեան օգնութեանը, որի միջամտութեան հետեւանքով տաս տարի գործելուց յետոյ 1683 թ. Մարսէլի տպարանը փակուեց:

Ֆրանսիայի առեւտրական բուրժուազիայի այդ պայքարը երկրի ազգային շահերի համար այն աստիճանի արտառոց էր, որ Փարիզը հրապարակօրէն հանդէս եկաւ Մարսէլի դէմ, որի վաճառականական դասը առաւել անհաշտ դիրքորում էր որդեգրել հայ խոջայութեան նկատմամբ: Հայերի պաշտպանութեան օգտին հանդէս եկան նաեւ փարիզեան յայտնի անձնաւորութիւններ: Ի վերջոյ, գործին միջամտեց նաեւ թագաւորը՝ Լուդովիկոս XIV-ը: 1683 յունուարի 3-ին եւ փետրուարի 5-ին Մարսէլի իր պաշտօնակատար Մորանին նա ուղարկեց երկու հրամանագրեր տպարանի իրաւունքները լիովին վերականգնելու մասին: [187, էջ190-193]

Հայ-Ֆրանսիական յարաբերութիւնները նոր մղում ու թափ

ստացան XVII դարի վերջին: Դա մասամբ հետեւանք էր այն բանի, որ 1693 թ. Զմիւռնիայի մօտ տեղի ունեցած ծովային ճակատամարտում Ֆրանսիացիները ջախջախիչ պարտութեան մատնեցին Անգլիային ու Հոլանդիային: Լեւանտում գործող այս երկու պետութիւնների առեւտրական նաւատորմիղը խորտակւեց եւ նշանակալիօրէն տկարացաւ: Այսուհետեւ միաժամանակ արեւելեան միջերկրածովեան աւազանում գրութեան տէրը դառնում էին Ֆրանսիացիները: Անտարակոյս, այս հանգամանքը դրական ներգործութիւն էր ունենալու հայ-Ֆրանսիական առեւտրատնտեսական յարաբերութիւնների վրայ, որը յաջողութեամբ շարունակւեց նաեւ յաջորդ՝ XVIII դարում:

Արեւմտեան Եւրոպայում միջազգային առեւտրով զբաղւող հայ վաճառականների խոշորագոյն առեւտրական գործընկերներից մէկն էր նաեւ Հոլանդիան, որը Եւրոպայում առաջին երկիրն էր, որտեղ իրագործւեց յաղթական բուրժուական յեղափոխութիւն եւ ստեղծւեց պատմութեան մէջ առաջին բուրժուական հանրապետութիւնը: Յեղափոխութիւնից յետոյ ընդամէնը մի քանի տասնամեակում Հոլանդիան իր զարգացմամբ առաջ անցաւ եւրոպական միւս պետութիւններից: Այստեղ յատկապէս նկատւում էր վաճառականական կապիտալի արագ զարգացում:

Հոլանդիայի եւ Ֆլանդրիայի (Բելգիա) Ամստերդամ եւ Բրիւժ (Բրիւգէ) քաղաքներում հայ վաճառականները հաստատւել են դեռ շատ վաղ ժամանակներից՝ XI դարից: Բրիւժը այն ժամանակ կարեւոր առեւտրական նաւահանգիստ էր եւ յարաբերութեան մէջ էր Կիլիկիայի Այաս նաւահանգստի հետ: Հէնց այդ քաղաքում էլ յայտնւում են առաջին հայ վաճառականները: [138, էջ 10-11] Հետագայում Կիլիկիայի հայկական պետութեան վերանալուց յետոյ Կիլիկիացիներից ոմանք տեղափոխւել եւ ապաստանել են հոլանդական նաւահանգիստները:

«Ի վերջ կոյս ԺԴ դարու (իբր յամի 1390), - գրում է Ղ. Ալիշանը, - չնորհեցաւ արտօնութիւն Հայոց եւ Թրքաց ի Պրիժ՝ վաճառել զկապերտս իւրեանց առաջի դրան Ս. Դոնատ եկեղեցւոյ, (որպէս յետոյ եւ ի հրապարակի Ս. Մարկոսի ի Վենետիկ՝ հանդէպ դրանց հրաշակերտ տաճարին:» [37, էջ 461] Արդէն XV դարում հայերը Հոլանդիայում այնքան շօշափելի թիւ են կազմել, որ ունեցել են իրենց «Ազգային տունը»:

XV դարի վերջին Բրիւժը կորցնում է իր առեւտրական նշանակութիւնը եւ նրա փոխարէն բարձրանում է Ամստերդամը:

Հայերի գալուստը Ամստերդամ առաջին անգամ յիշատակւում է 1560-1565 թ.թ. Նրանք այդ քաղաքն էին այցելել իրենց բերած մարգարիտներն ու ադամանդները վաճառելու եւ տեղում հոլանդական ապրանքներ ձեռք բերելու եւ Լեւանտի նաւահանգիստները արտահանելու համար: [138, էջ 45-46] Ենթադրւում է, որ դրանք առաւելապէս ջուղայեցի վաճառականներ էին, թէեւ նրանց հետ միասին եւրոպական երկրներ էին գալիս նաեւ հայ վաճառականներ Փոքր Ասիայից ու Արեւմտեան Հայաստանից, ինչպէս նաեւ Ղարաբաղից, Զանգեզուրից, Գողթան գաւառի հայկական առեւտրական գիւղաքաղաքներից, յատկապէս Ագուլիսից եւ այլ վայրերից, որոնք բոլորն էլ իրենց կոչել են «ջուղայեցի»: [138, էջ 41-42]

Ի դէպ Սէֆեան Իրանի տիրապետութեան տակ գտնւող Արեւելեան Հայաստանից եւ իրանահայ գաղթօջախներից եկած վաճառականները Ամստերդամի մաքսային գրքերում արձանագրւած են պարզապէս «քրիստոնեա պարսիկներ», իսկ Փոքր Ասիայից ու Արեւմտեան Հայաստանից Հոլանդիա մեկնած վաճառականները յիշատակւում են որպէս հայ կամ զմիւռնիացի: Առհասարակ եւրոպական երկրներում ուշ միջնադարում պարսիկ անւանումն այնչափ տարածւած էր, որ հոլանդացի պատմագիրները Ամստերդամի հայոց եկեղեցին, որ ջուղայեցիներն էին կառուցել, ուղղակի «պարսկական» եկեղեցի էին կոչում, իսկ ժողովուրդը թէ սրանց եւ թէ զմիւռնիացիներին յաճախ «ասիական ազգ» էին անւանում: [138, էջ 49-50]

«ԺԶ դարի կէսերում- դիտում է Ա. Սարուխանը, - յանկարծ անսպասելի կերպով երեւան են ընկնում ջուղայեցիք, այն էլ գրեթէ միաժամանակ այն բոլոր եւրոպական վաճառաշահ քաղաքներում, որոնք յարաբերութեան մէջ էին Մերձաւոր Արեւելքի շուկաների հետ»: [138, էջ 41-42]

XVII դարի սկզբներից հայերը սկսում են կանոնաւոր երթեւեկութիւն Ամստերդամի հետ, որն արդէն առաջատար տեղ էր գրաւել համաշխարհային առեւտրի մէջ: Հայ վաճառականների հոսքը Ամստերդամ յատկապէս մեծ չափեր ընդունեց շահ Աբբաս Բ-ի կողմից Արեւելեան Հայաստանից դէպի Իրան Հայ ժողովրդի բռնի տարագրութիւնից յետոյ: Հոլանդացի պատմաբան Վան Էմդրէն յենւելով հոլանդական արխիւային նիւթերի վրայ գրում է, որ XVII դարում «Հայոց երկրի մի մասի վրայ պարսիկների յարձակման եւ աւերածութեան ենթարկելու հետեւանքով հայերը ստիպւած են եղել

այնտեղից գաղթել. նրանցից մանք եկել են եւ հիմնաւորել Ամստերդամում»: [188, էջ 65]

Առաջին անգամ Ամստերդամում հաստատուածները, բնականաբար, անծանօթ էին տեղական լեզուին, վարք ու բարքին եւ այլն, ուստի ստիպուած էին միջնորդ- թարգմանի օգնութեան դիմել: Այս դերը կատարել են նրանցից առաջ եկած մի քանի հրեաներ, որոնք տիրապետել են արեւելեան լեզուների: 1626 թ. քաղաքային արձանագրութիւնների մէջ առանձնապէս յիշատակւում է նրանցից մէկի անունը՝ Իսահակ Խամայա կամ Խամիս:

1612 թ. Օսմանեան կայսրութիւնը Հոլանդիայի հետ կնքեց կապիտուլիացիոն մի պայմանագիր, որը Նիդերլանդների առջեւ բաց էր անում Լեւանտեան շուկաներում ազատ առեւտուր անելու հնարաւորութիւն: [189, էջ 349] Այդ պայմանագիրը շեշտակիօրէն խթանեց հայ վաճառականների առեւտուրը Հոլանդիայի հետ, մանաւանդ որ հոլանդական նաւերը կանոնաւոր երթեւեկութիւն սահմանեցին Լեւանտեան նաւահանգիստների՝ յատկապէս Զմիւռնիայի, կ. Պոլսի եւ հոլանդական առեւտրաշատ կենտրոնների միջեւ:

Բայց ահա քիչ աւելի ուշ Նիդերլանդներ եկած հայ վաճառականների մասին հոլանդացի պատմագիրներից մէկը վկայում է, թէ «նրանց մեծ մասը կրթուած մարդիկ էին եւ իրենց մայրենի լեզու հայերէնից զատ խօսում էին նաեւ իտալերէն, եւ Ֆրանսերէն: Սրանք այս լեզուներով էին գործ տեսնում հոլանդացիների հետ»: [138, էջ 47-48]

Հենւելով Ամստերդամի քաղաքային արխիւների փաստաթղթերի վրայ, Հոլանդիայի հայ գաղութի պատմութիւնն ուսումնասիրած Առաքել Մարուխանը տեղեկութիւններ է հաղորդում այն մասին, որ 1617 թւականից սկսած հայ վաճառականները Ամստերդամի քաղաքային բորսայում կատարում էին խոշոր առեւտրական գործարքներ: Դրա կարեւոր վկայութիւնն է հանդիսանում նաեւ ժամանակակից հոլանդացի պատմաբան Ռ.Ա.Բեկիուսի յայտնած այն տեղեկութիւնը, որ Բորսայի պատերին ի թիւս բազմաթիւ օտարազգի վաճառականների, լումայափոխների եւ այլն պատկերուած են նաեւ հայ վաճառականներ: [190, էջ 3] Այդ քաղաքում նրանք ունեցել են նաեւ իրենց յատուկ շուկան, որը կոչւել է «Արեւելեան շուկա» (Qoster market): Հայ վաճառականները հոլանդացիների հետ կազմել են նաեւ փայատիրական սկզբունքների վրայ հիմնւած առեւտրական ընկերութիւններ: Նրանք ունեցել են

նաեւ զուտ հայկական առեւտրական տներ, որոնց թիւը միայն Ամստերդամում 1660-ական թ.թ. հասնում էր 60-ի: [133, էջ 251] Հոլանդիայում հայերի առեւտրի ծաւալմանը մեծապէս նպաստել է այն, որ նրանք այդ երկրում վայելել են թէ՛ առեւտրական եւ թէ՛ կրօնական ազատութիւն: Մինչ տեղական իշխանութիւնները հայերից առաջ Ամստերդամ եկած հրեաներին մերժում էին «Ամստերդամի քաղաքացիութեան» իրաւունքը, հայերին խնդրոյն չնորհւում են այդ կոչումն ու դրա հետ կապած իրաւունքները: [138, էջ 147]

Հայ-հոլանդական առեւտրի այս աշխուժացման շրջանում մեծանում է նաեւ Ամստերդամի հայ գաղթօջախը: Այն վաճառականները, որոնք այստեղ յաջողութիւն էին ունենում, բերում էին իրենց ընտանիքները եւ մշտական բնակութիւն հաստատում: Շատերը ամուսնանում էին տեղացի աղջիկների հետ եւ արձանագրւում որպէս քաղաքացի:

Հոլանդական իշխանութիւնների այս բարեացակամ վերաբերմունքը հայ վաճառականների նկատմամբ պէտք է բացատրել նրանով, որ նախ իսպանական լծից ազատագրւելուց յետոյ (1603 թ. Իսպանիան ղէ-ֆակտօ ճանաչեց Հոլանդիայի հանրապետութեան անկախութիւնը) Նիդերլանդները սկսել էին բուռն զարգացում ապրել: Նրա մանուֆակտուրաները, որոնք կտորեղէն էին մատակարարում համարեա բոլոր եւրոպական երկրներին, կարիք ունէին մեծ քանակութեամբ հումքի (մետաքս, բուրդ, բամբակ, ներկեր եւ այլն), որոնց մի զգալի մասը Հոլանդիան ձեռք էր բերում հայ եւ յոյն վաճառականներից: [140, էջ 134] Այնուհետեւ Հոլանդիայի հետ առեւտուր անող հայ վաճառականները իրականացնում էին նաեւ Նիդերլանդների ու եւրոպական միւս երկրների միջեւ լայն առեւտրափոխանակութիւն, որը նպաստաւոր էր Հոլանդիայի պետական գանձարանի համար: Իտալիայի Լիւոռնօյ քաղաքի թանգարանում յայտնաբերւած է 1627 թ. Նոյեմբերի 21-ի թւակիր, հոլանդերէն գրւած մի պայմանագիր, որտեղ ասւում է, որ Ամստերդամի վեց հայ վաճառական պայմանաւորւում են Ժան Ստիին անունով հոլանդացի մի նաւապետի հետ, որ սա Ամստերդամից նրանց ապրանքը տեղափոխի Լիւոռնօյ: Փաստաթղթում ստորագրութիւնների տեղ դրւած են վաճառականների անուանական կնիքները, որոնց վրայ կարդացւում են՝ Սարհաղ, Զաքար, Օհան, Մարկոս, Պետրոս եւ Յովակիմ: [138, էջ]

Վենետիկում, Լիւոռնոյում, Մարսէլում, Իսպանիայի

քաղաքներում եւ այլուր գտնուող հայ վաճառականների առեւտրական տները կամ նրանց ճիւղերը Հոլանդիայից ստանում էին կամ այդ երկիրն էին ուղարկում մեծ քանակութեամբ ապրանքներ: Այլ կերպ ասած, Նիդերլանդները հայ վաճառականների համար հանդիսանում էին նաեւ փոխարեռնման յենակէտ ողջ եւրոպական առեւտրի համար: Այստեղից խոջաները նաւերով ապրանքներ էին առաքում նաեւ դէպի հիւսիս, բալթեան ծովեղրեայ քաղաքներն ու այնտեղից ստանում էին ուրիշ ապրանքներ, առանձնապէս սաթ, որը մեծ հարգ ունէր Զմիւռնիայի շուկայում: [138, էջ 55]

Հայ-Հոլանդական առեւտրական կապիտալի համագործակցութիւնը առաւել լայն չափեր ձեռք բերեց XVII դարի 30-ական թ.թ. սկսած: [191, էջ 74] Նախ դա պայմանաւորուած էր նրանով, որ 1623 թ. «Հոլանդական արեւելա-հնդկական ընկերութիւնը» Իրանի հետ կնքեց առեւտրական պայմանագիր, որն անշուշտ մեծապէս խթանելու էր նաեւ նիդերլանդների հետ իրանահայ վաճառականների առեւտուրը, որոնք այդ ժամանակ ըստ էութեան իրենց ձեռքում էին կենտրոնացրել Սէֆեան պետութեան արտաքին առեւտրի մենաշնորհը: Վերջապէս, հայ-հոլանդական առեւտրական յարաբերութիւնների ծաւալման համար կարեւոր նշանակութիւն ունեցաւ առհասարակ Մերձաւոր Արեւելքում նիդերլանդների քաղաքականութեան ակտիւացման մեծացումը: Հենելով 1598 եւ 1612 թ.թ. Օսմանեան կայսրութեան հետ կնքած կապիտուլիացիաների վրայ, Հոլանդիան Մերձաւոր Արեւելքում ատտիճանաբար ընդարձակում էր իր առեւտուրը: 1617 թ. Միջերկրական ծովում յայտնուեց հոլանդական ռազմական նաւատորմը:

Արդէն XVII դարի կէսերին Հոլանդիան դարձաւ կենտրոնական եւ հիւսիսային Եւրոպայի ապրանքների հիմնական մատակարարողը Լեւանտի շուկաներին: [192, էջ 40] Մի թաժամանակ հոլանդական նաւերի էժան փոխադրավարձը նպաստում էր նրանց աւելի լայն օգտագործմանը արեւելեան միջերկրածովեան շրջանում: Բանը հասնում էր նոյնիսկ նրան, որ երբեմն Լեւանտեան ապրանքները Լոնդոն էին բերւում հոլանդական նաւերով: [193, էջ 443] Այս բոլորի հետեւանքով XVII դարի կէսին Լեւանտեան առեւտրում Անգլիայից յետոյ Հոլանդիան դուրս եկաւ երկրորդ տեղը:

Հոլանդացիները հակուած էին համագործակցել հայ վաճառականների հետ ոչ միայն արեւելեան ապրանքներ ձեռք բերելու, այլեւ իրենց մրցակիցների՝ անգլիացիների ու ֆրանսիացիների դէմ յաջողութեամբ պայքարելու համար: Նիդերլանդները խիստ շա-

հագրգռած էին հայ վաճառականների եւրոպական առեւտրով նաեւ այն պատճառով, որ նրանք իրենց ապրանքները Լեւանտեան նաւահանգիստներից Միջերկրական ծովով եւրոպական երկրներ էին տեղափոխում առաւելապէս հոլանդական նաւերով: Ուշագրաւ տեղեկութիւններ կան նաեւ այն մասին, որ հայերն ունեցել են նաւեր, որոնք երթեւեկել են Լեւանտի եւ Նիդերլանդական նաւահանգիստների միջեւ հոլանդական դրօշի ներքոյ: [138, էջ 56-57]

Ինչպէս յայտնի է, անգլո-հոլանդական մրցակցութիւնը համաշխարհային ծովային ուղիների վրայ XVII դարի կէսերին հանգեցրեց պատերազմի, որն աւարտուեց Հոլանդիայի պարտութեամբ: Նիդերլանդների ռազմական եւ քաղաքական հզօրութիւնը թուլացաւ, նրանք կորցրին մի շարք գաղութներ եւ դուրս մղուեցին ծովային առեւտրից: Սահմանափակուեց նաեւ նրանց առեւտուրը Մերձաւոր Արեւելքի երկրների հետ: Բնական է, որ այդ պայմաններում Հոլանդիայի համար կենսական նշանակութիւն էր ձեռք բերում համագործակցութիւնը հայ վաճառականների հետ: Պատահական չէ, որ ողջ XVII դարի երկրորդ կէսի ընթացքում Նիդերլանդների կառավարութիւնը պարբերաբար արտօնութիւններ էր յատկացնում հայ վաճառականներին: [194]

Իրենց ապրանքների վաճառքի համար շահաւէտ շուկաներ ձեռք բերելու որոնումների ժամանակ հայ վաճառականները Միջերկրական ծովի ճանապարհով թափանցում էին նաեւ Արեւմտեան Եւրոպայի այլ երկրներ՝ Իսպանիա, Պորտուգալիա, Անգլիա, Գերմանիա, Դանիա, Սկանդինաւեան երկրներ եւ այլն: [196, 198, էջ 171-213. 197. 198]

Իսպանիայում հայ վաճառականները աւելի յաճախակի այցելում էին Կադիքս եւ Սեւիլիա քաղաքները: Զաքարիա Ագուլեցին, օրինակ, իր օրագրութիւնում յիշատակում է, որ 1671 թ. ինքը առեւտրական գործերով եղել է Կադիքսում: [102, էջ 55] Մեծ թիւով հայ վաճառականներ այցելում էին նաեւ Պորտուգալիա: Այս երկրի հետ հայերի առաջին շփումները սկիզբ են առել XI դարի վերջերից, երբ արտագաղթը Հայաստանից սելջուկների արշաւանքի կապակցութեամբ ընդունել էր աղէտալի չափեր: Իր գոյութեան երեք հարիւր տարիների ընթացքում (1080-1375 թ.թ.) Կիլիկիայի հայկական պետութիւնը ի թիւս Միջերկրական ծովի արեւմտեան առափնեայ շրջանների, լայն կապեր էր պահպանում նաեւ Իսպանիայի եւ Պորտուգալիայի հետ: 1293 թ. Ժակ II Արագոնացու (1291-1327) խնդրանքով Կիլիկեան պետութիւնը կատալոնական

վաճառականներին տրամադրել է մի շարք առեւտրական առանձնաշնորհումներ, որոնք նրանց ազատում էին հարկերից, իրաւունք էին տալիս Կիլիկիեան Այաս նաւահանգստում կառուցել պահեստներ եւ այլն: Կարծիք կայ նոյնիսկ այն մասին, որ Պորտուգալիայի եւ Կիլիկիեան Հայաստանի կառաւարող դինաստիաներն ունէին ազգակցական կապեր: [196, էջ 171-216]

1453 թ. Կ. Պոլիսը Թուրքերի կողմից գրաւելուց յետոյ այդ քաղաքի բազմաթիւ հայ բնակիչներ ի թիւս մի շարք այլ երկրների, գաղթել են նաեւ Պորտուգալիա, հաստատուելով գլխաւորապէս Միրագայում: [196, էջ 214-216]

Աւելի ուշ, 16-17-րդ դարերում Լիսաբոնում եւս հաստատուում են Իրանից, առաւելապէս Հին եւ Նոր Ջուղայից ժամանած հայ վաճառականներ, որոնց ներմուծած ապրանքների մէջ ամենայաճախ յիշւածը պարսկական գորգն է: [199, էջ 83]

1580 թ. Անգլիայի եւ Թուրքիայի միջեւ կնքւած կապիտուլիացիոն պայմանագիրը հիմք հանդիսացաւ Բրիտանիայի հետ հայ վաճառականների վաղեմի առեւտրական յարաբերութիւնների աշխուժացման համար: Դրանից յետոյ, իրենց հերթին անգլիացի գործարար մարդիկ եւ ճանապարհորդները սկսեցին այցելել Հայաստան: Ցայտնի է, օրինակ, որ 1581 թ. Նիպրի անունով մի ճանապարհորդ եղել է Հայաստանում: Իսկ 1600 թ. անգլիացի մէկ այլ ճանապարհորդ՝ Ջոն Քարտրայտը Առաջաւոր Ասիայի երկրներ կատարած իր ուղեւորութեան ժամանակ ի թիւս Միջագետքի, Սիրիայի եւ Իրանի այցելել է նաեւ Հայաստան: Նա հայերին անւանում է «վերին աստիճանի աշխատասէր մի ժողովուրդ գործունէութեան բոլոր բնագաւառներում»:

Ցայտնի է, որ Եւրոպայի առեւտրական խոշոր կենտրոն Ամստերդամում գոյութիւն ունեցող հայ գաղթօջախը մշտապէս սեւեռուն հետաքրքրութիւն է դրսեւորել բրիտանական կղզիների նկատմամբ: Ամստերդամից ոսկերչութեամբ ու առեւտրով զբաղւող հայերի առաջին, ոչ մեծ խմբերը, տեղափոխելով Անգլիա, հաստատւել են Պլիմուտ քաղաքի մերձակայքում: Սակայն 17-րդ դարի 40-ական թւականներին անգլիական բուրժուական յեղափոխութեան վայրիվերումների շրջանում, երբ Կրոմվելը հայերից պահանջեց յստակ պատասխանել, թէ նրանք ում կողմից են, իր թէ թագաւորի, հայերը իրենց վտանգի չենթարկելու համար ստիպւած են լինում խուճապահար վերադառնալ Հոլանդիա:

Սակայն աւելի ուշ, Հնդկաստանում, Իրանում եւ բուն

Անգլիայում առեւտրի բնագաւառում հայերի խաղացած անող դերի ազդեցութեան ներքոյ անգլիացիները սկսում են չեչտուած հետաքրքրութիւն դրսեւորել նաեւ հայոց լեզի ու հայ մշակոյթի նկատմամբ: Այսպէս, 1669 թ. Ե. Կատելլոսը Լոնդոնում հրատարակում է եօթլեզանի մի բառարան, որի լեզուներից մէկն էլ հայերէնն էր:

1675 թ. ճանապարհորդութիւն կատարելով դէպի բրիտանական կղզիներ ոմն Ցակոբ Գրիգորենց, ամենայն հաւանականութեամբ զբաղմունքով վաճառական, գրում է չափածոյ մի ստեղծագործութիւն «Փառք Բրիտանիոյ» վերնագրով, որտեղ նա իր հիացմունքն է արտայայտում այդ երկրի նկատմամբ:

Թէեւ Միջերկրական ծովը հանդիսանում էր Արեւմտեան Եւրոպայի հետ հայ վաճառականների հիմնական առեւտրական զարկերակը, սակայն նրանց համար պակաս կարեւոր նշանակութիւն չունէր նաեւ ցամաքային ու գետային ճանապարհները, որոնք առաւելապէս օգտագործւում էին եւրոպական մէկ երկրից միւսն անցնելու համար:

Այսպիսով հայ վաճառականները խաղացել են վերին աստիճանի ծանրակշիռ դեր Արեւելքի հետ Արեւմտեան Եւրոպայի առեւտրա-տնտեսական եւ մշակութային յարաբերութիւնների զարգացման գործում:

Իզուր չէ, որ Ֆրանսիացի Տուրնֆորը հայ խոջաների մասին գրում էր. «Նրանք ոչ միայն հանդիսանում են Լեւանտի առեւտրի տէրը, այլեւ նշանակալից չափով նաեւ Եւրոպայի առաւել խոշոր քաղաքների առեւտրի տէրը: Նրանք գալիս են Պարսկաստանի խորքերից եւ հաստատւում են Լիւոռնոյում: Ոչ շատ վաղուց հիմնաւորուեցին Մարսէյլում: Որքան մարդ է նրանցից գտնւում Հոլանդիայում եւ Անգլիայում: [62, էջ 158]

Հայ վաճառականների կողմից Եւրոպա արտահանւող ապրանքների տեսակներին չափազանց հարուստ էր: Իհարկէ առաջնութիւնը պատկանում էր հում մետաքսին: Սակայն մեծ տեղ էր գրաւում նաեւ արհեստագործական արտադրանքը: Նոր Ջուղայեցի խոջաների կողմից Արեւմտեան Եւրոպա արտահանւող ապրանքների մէջ հում մետաքսից յետոյ կարեւոր տեղ էր գրաւում իրանական արհեստագործական, յատկապէս մանածագործական արտադրանքը: Ցայտնի է, որ XVII դարում Իրանում նշանակալից զարգացում ապրեցին «Քարխանեները», որը բացատրւում է արտաքին եւ ներքին շուկաների համար ապրանքների արտադ-

բութեան աւելացման անհրաժեշտութեամբ: Գերմանացի Ադամ Օլեարուսը վկայում է, որ Սպահան քաղաքում մեծ թիւով ջուլհակներ, ներկարարներ, նկարիչներ եւ այլն, որոնք զբաղւում են բամբակեղէնի ու մետաքսի մշակմամբ, հրաւականին մեծ վարպետութեամբ դրանք վերածելով ոսկեգօծ դիպակների»: [76, էջ 790]

Աղբիւրները հարուստ տեղեկութիւններ են պարունակում հայ վաճառականների կողմից Արեւմտեան Եւրոպա տարուող ապրանքների մասին: Այդ ապրանքներից յատկապէս յաճախակի յիշատակւում են հետեւեալները. ուղտի, ոչխարի եւ այծի բուրդ, դամասկոսեան դիպակներ, զանազան համեմունքներ, մոմեր, մետաքսեայ եւ բրդեայ կտորեղէն, գառնաւուբիտ, թաւիշ, գիտոր, խաղնդեղ, բուսախեժ, գորգեր, կաշւեղէն (մանաւորապէս շագրենի), հաշիշ, պիստակ, սաֆեան, լեղակ, մորթեղէն, հնդկական մուշկ, բամբակ, մեղրամոմ, մարգարիտ, մարջան, օծանելիքներ, գինի, լաջվարդ, որդանաներկ, ինդիգօ, գժոխաքար, համպար, խունկ, չորացրած եւ աղած ձուկ, ոսկի եւ արծաթ, արմաւ, ծխախոտ, պաղլեղ, շաքար, զաֆրան, խաւարծիլ, մեղր, բրինձ, անուշադր եւ այլ բազմապիսի ապրանքներ: [122, էջ 86-91: 37, էջ 445-446] Արտահանւող ապրանքների մէջ կարեւոր տեղ էին գրաւում նաեւ գոհարեղէնն ու թանկարժէք քարերը, որոնք ճոխութեան սիրահար եւրոպական ազնուականութեան շրջանում գտնում էին լայն սպառում: Կարեւոր նշանակութիւն ունէր նաեւ այն հանգամանքը, որ գոհարեղէնի արտահանումը շատ աւելի հեշտ էր, եւ բերած շահոյթը աւելի մեծ: Մի ճիզվիթ վանականի վկայութեամբ, հայ վաճառականները կարողանում էին խոյս տալ պարսկական եւ թուրքական մաքսային ստուգաճանաւորների քննախոյզ աչքերից եւ մաքսանենգային եղանակով Եւրոպա արտահանել խոշոր գումարներ արժեցող թանկարժէք քարեր: Նրա վկայութեամբ գոհարեղէնը գրպաններում թաքցնելու եղանակով հայ վաճառականներին երբեմն յաջողւում էր անց կացնել մինչեւ երկու միլիոն ֆրանկի արժողութեամբ քարեր: [21, էջ 44]

Գոհարեղէնի առեւտրի գծով դիւրութիւններ ստեղծելու համար XVI-XVII դարերում հայ իրականութեան մէջ թանկարժէք քարերի վերաբերեալ կազմւում էին նոյնիսկ յատուկ ձեռագիր ձեռնարկներ: [200: 23, էջ 586-589]

Մեծ էր հայ վաճառականների դերը նաեւ արեւմուտքում դեռեւս անյայտ արեւելեան սննդամթերքների, համեմունքների, զանազան դեղորայքի, օծանելիքների եւ բազմապիսի այլ ապ-

բանքների տարածման ու արմատաւորման գործում: Այսպէս, տեղեկութիւններ կան, որ սուրճի գործածութիւնը Եւրոպայում տարածել են առաջին հերթին հայ վաճառականները: [201, էջ 70]

Եւրոպական այլեւայլ երկրներից հայ խոջաները Արեւելք են ներմուծել գլխաւորապէս հոլանդական, անգլիական, գերմանական, Ֆրանսիական մահուդ, թաւիշ, բրդեայ կտորներ, մետաքսէ գունազարդ գործւածքեղէն (կամկա), ոսկեայ եւ արծաթեայ դիպակներ, բաւթա, զմուռս, մնդիկ, արջասպ, խրուկաներկ, զանազան կահկարասիք, զէնք, ասեղներ, երկաթեայ ապրանքներ, կապար, խաղաթղթեր,զանազան զարդեր, ապակի, թուղթ, բուստ, վենետիկեան հայելիներ, կտաւ, ներկեր, ժանեակներ, կաշէ իրեր, ժամացոյցներ, մկրատներ, դանակներ, օճառ, ակնոցներ, արհեստական մարգարիտ, ուլունքներ, պերճանքի առարկաներ եւ Եւրոպական արտադրութեան այլ բազմապիսի ապրանքներ: [62, էջ 159. 59, էջ 47]

Հոլանդացի պատմաբանները նշում են, որ XVII դարում հայ վաճառականները հանդիսանում էին հոլանդական արդիւնաբերական ապրանքների, մանաւորապէս մահուդի եւ բրդեայ կտորեղէնի լաւագոյն գնորդները:

Հայ խոջաների համար գրւած առեւտրական ձեռնարկում «Աշխարհաժողովում» Կոստանդ Ջուղայեցին վկայում է, որ Արեւմուտք-Արեւելք միջազգային առեւտրով զբաղւող հայ վաճառականները Եւրոպայից արեւելեան երկրներ էին արտահանում մեծ քանակութեամբ սաթ: «Քարպարն (սաթ Վ.Բ.)- գրում է նա,- Ֆռանկստան՝ Տանձկու (Դանցիկ) ծովումն բհամ կգոյ. քուլուչայ է, որ կտաշեն, կուլուլակ թապեհ էլ կշինեն. թախտայ էլ կայ, որ կերպ կերպ իքմին կշինեն... Աշխարհումս ամենայն տեղ խարջ այ, Հնդստան էւել այ խարջ»: (202, էջ 10 ա) Պատահական չէ, որ հայ վաճառականները շատ յաճախ մեկնում էին Մերձբալթեան երկրներ յատկապէս սաթ գնելու համար: [203, էջ 147]

Հայ վաճառականները հանդիսանում էին նաեւ Եւրոպայի եւ Ասիայի միջեւ ոսկու եւ թանկարժէք ապրանքների տեղափոխման լաւագոյն միջնորդներ: [201, էջ 424] Ռաֆայէլ դյու Մանի վկայութեամբ հայերը Վենետիկից եւ Լիւոռնոյից արեւելք էին տեղափոխում արծաթ եւ ոսկի համբողջ պիաստրներով կամ ոսկի էկիւներ»: [36, էջ 181] Եւրոպայից բերած ոսկէ եւ արծաթէ դրամները վերադրոշմելով իրանական դրամի, Ջուղայեցի վաճառականներն, օրինակ, ստանում էին հակայական շահոյթներ, որոնք կիսում էին

Սէֆեան շահերի հետ: [48, հ. 3, էջ 260] Վերջիններս խրախուսում էին այդ գործը, որովհետեւ դա առատ աղբիւր էր շահական գանձարանի հարստացման, ինչպէս նաեւ Իրանի ֆինանսական վիճակի ամրապնդման համար: Նշելով աղբիւրը Ա. Ալպոյաճեանը գրում է, որ Եւրոպայից վերադառնալիս ջուղայեցի վաճառականների իւրաքանչիւր կարաւան Իրան էր բերում 200 հազար արծաթէ սկուդի: [103, էջ 175]

Հայ խոջաների կողմից դրամի ներմուծումը Իրան յատկապէս խրախուսւում էր շահ Աբբաս Բ-ի կողմից: Դա պայմանաւորւած էր նրանով, որ համարեա անընդմէջ թուրք-իրանական պատերազմների, անվերջ զօրահաւաքների եւ ներքին խռովութիւնների պատճառով երկրի ֆինանսները գտնւում էին ծայրահեղ հիւծման վիճակում: Ոսկին եւ արծաթը դարձել էին հազւագիւտ ապրանք Իրանում: Ճիշտ է, շահը փորձեց շահագործել երկրի ոսկու հանքերը, սակայն պարզւեց որ ծախսը հասոյթից աւելին է, ուստի եւ լքեց այդ գործը: [127, էջ 31] Շահ Աբբասը շահագրգռւած էր, որ երկիրը ստանայ հնարաւորին չափ մեծ քանակութեամբ ոսկի եւ արծաթ նաեւ իր բարեփոխումները իրականացնելու համար: Հէնց այս հանգամանքների պատճառով Սէֆեան արքունիքը հանդուրժում էր հայ խոջաների գործօն մասնակցութիւնը Իրանի ելեւմտական կեանքում:

Իրանը չէր հանդիսանում սակայն հայ վաճառականների կողմից եւրոպական երկրներից ներմուծւած վայրենայի վերջին հանգրւանը: Ոսկեայ եւ արծաթեայ դրամները Իրանի Բենդեր Աբբաս նաւահանգստի վրայով տեղափոխւում էին Հնդկաստան, որը իր ապրանքների գնորդներից համարեա բացառապէս պահանջում էր զրնգուն դրամ: Այդ առթիւ Ռաֆայէլ Դյու Մանը վկայում է, որ «Պարսկաստանը նման է մի քարաւանսարայի, որն ունի երկու դուռ. դրանցից մէկը գտնւում է թուրքական սահմանի վրայ, որտեղից ներմուծւում է արեւմուտքից հոսող արծաթը... միւս ելքի դուռը՝ Բենդեր Աբբասին կամ Գոմրունն է Պարսից ծոցում, ուսկից ճանապարհ է բացւում դէպի Հնդկաստան՝ Սուրաթ՝ արծաթի համաշխարհային այդ շտեմարանը... Պարսկաստանի հարստութիւնը ոչ այլ ինչ է, քան այն խոնաւութիւնը, որ թողնում է խողովակի մէջ հոսած ջուրը»: [36, էջ 193-194]

Աղբիւրներում խիստ հետաքրքիր եւ ուշագրաւ տեղեկութիւններ են պարունակւում նաեւ Արեւմուտք-Արեւելք միջազգային առեւտրի իրականացման ձեւերի մասին: Եւրոպացի մի

վաճառականի հետ զրոյցի ժամանակ ջուղայեցի խոջա Սաֆարը յայտնում է, որ հայերի մօտ առկայ են երեք կարգի վաճառականներ. մանր վաճառական- խանութպաններ, որոնք երկրից դուրս չեն մեկնում եւ տեղում զբաղւում են գործածքեղէնի եւ այլ ապրանքների վաճառքով. մեծածախ վաճառականներ, որոնք ապրանքներ են յատկացնում խանութներին, իրենց հերթին դրանք ձեռք բերելով խոշոր վաճառականներից եւ վերջապէս միջազգային առեւտրով զբաղւող խոշոր վաճառական - խոջաներ, որոնք առեւտուր են անում եւրոպական երկրների, «ուռումների երկրի» (Թուրքիա), Հնդկաստանի, Արաբիայի, Աֆրիկայի եւ այլ երկրների հետ: [21, էջ 37]

Զափազանց լայն է եղել հայ առեւտրական կապիտալի գործունէութեան աշխարհագրական սահմանները: Գրիգոր Դարանաղցի պատմիչը նշում է, որ հայ խոջաները ցրւած էին «Ընդ ամենայն երեսս երկրի, - ի Հնդիկս ներքինս, եւ յԵթովպիա, եւ յԵգիպտոս, եւ յամենայն աշխարհս Ֆռանգաց, եւ ի Կոստանդինուպոլիսս, եւ ընդ ամենայն աշխարհն Թրակացւոց եւ Մոսկոփցաց եւ Վրկանաց, եւ ընդամենայն աշխարհն Քուրքաց եւ Քրդաց եւ Քաղդեացւոց եւ յՄատչինն, ի Թոնն եւ ի Թոնճան, եւ ամենայն Պարսկաստանաց, եւ արեւելայայս մինչեւ ի Չինն եւ յԱնգլիան, եւ ամենայն աշխարհին Տաթարաց եւ Ափխազաց, մինչեւ ի ծագս աշխարհաց անծանօթից»: [79, էջ 457-458]

Կոստանդ Ջուղայեցին իր «Աշխարհաժողովում» աւելի հանգամանօրէն է թւարկում այն երկրներն ու քաղաքները, ուր այցելում էին հայ վաճառականները: Դրանք են Իրան, Անդրկովկաս, Մինին Ասիա, (Բալ եւ Բուխարա կամ «Իօզպեկստան»), Աֆղանիստան (Ղանդահար, Ղազնի, Քաբուլ), Հնդկաստան (Փեշավար, Քաշմիր եւ այլն), Արաբիա կամ «Արաբստան» (Բասրա, Բաղդադ, Հալէպ, Մոսուլ) Հարեչստան: Օսմանեան կայսրութեան կազմի մէջ մտնող քաղաքներից աւելի յաճախակի յիշատակւում է Կոստանդնուպոլիսը, Բուրսան, Ատրանան (Ադանա), Իզմիրը (Զմիւռնիա), Թոխաթը, Արզրումը (Կարին) եւ այլն: Նրա տեղեկութիւնների համաձայն եւրոպական կենտրոններից հայ խոջայական կապիտալի ներկայացուցիչները առաւել գործօն առեւտրական կապերի մէջ էին Ալիկոռնայի (Լիւոռնոյ), Վենետիկի, Ջենովայի, Մեսինայի, Մարսէլի, Ամստերդամի, Դանցիգի, Մոսկովի հետ: Եւրոպական երկրներից նրա մօտ աւելի յաճախակի յիշատակւում է Ֆռանկըստանը (Ֆրանսիա), Ընկլեթեռը (Անգլիա), Ալամանը (Գերմանիա),

Սպանիան, Լեհաստանը, Մաղարստանը (Հունգարիա), ինչպէս նաեւ յիշատակութիւն կայ այն մասին, որ հայ խոջաները կտրում անցնում էին Ատլանտեան ովկիանոսը եւ հասնում նոր աշխարհ (Ենկի դունիա), այսինքն նորայայտ Ամերիկեան մայր ցամաք: [202, էջ 3սr-3բ]:

XVII դարում հայ վաճառականների համար անյայտ աշխարհամաս չէր նաեւ Աֆրիկան: Ճիշտ է, մեր ձեռքի տակ չկան հարուստ փաստական նիւթեր աֆրիկեան մայր ցամաքի հետ հայ վաճառականների առեւտրի մասին, սակայն նոյնիսկ հատ ու կենտ տեղեկութիւններից աներկբայօրէն կարելի է ենթադրել, որ միջազգային առեւտրով զբաղող հայ խոջաները յաճախ են այցելել նաեւ աֆրիկեան տարբեր երկրներ, յատկապէս Եթովպիա (Հաբեշստան) եւ Մաղրիբի երկրներ:

Ցայտնի է, օրինակ, որ Աւետիք Բաղդասարեան Տիգրանակերտցին 1682-1704 թ.թ. ընթացքում եղել է Հաբեշստանում, Նուբիայում, Սուդանում, Չադ հանրապետութեան ներկայիս տարածքում, այնուհետեւ Սահարայի վրայով անցնելով Աֆրիկայի հիւսիսային շրջանները , հասել է մինչեւ Ջիբրարթար: [209]

17-18 դարերում սպիտակամորթ ժողովուրդներից Հաբեշստան մտնելու իրաւունք են ունեցել միայն հայերը եւ յոյները: Այդ պատճառով այդ ժամանակներում Եթովպիա գնացող գրեթէ բոլոր հայկական կամ յունական տարազ են հագել եւ եւրոպացիները հայկական կամ յունական տարազ են հագել եւ ձեւացրել իրենց հայ կամ յոյն: [166, էջ 153] Ղ. Ալիշանը նման կեղծած հայերից մատնացոյց է արել միսուսեան կաթոլիկ ճանապարհորդներ Մելքոն Միլուսին եւ Պետրոս Պայիզին [37, էջ 471]: Այդ նոյն կերպ են վարուել նաեւ կապուցինեան կրօնաւորները (1638 թ.), իսկ աւելի ուշ՝ Ալէքսանդր VII պապի օրօք (1655-1667) նաեւ ֆրանցիսկեանները եւ ուրիշներ: [210, էջ 87-88]

Դրա պատճառը կայանում էր նրանում, որ Հաբեշստանում ծաւալած կրօնական ալեկոծութիւնների հետեւանքով 1632 թւականից կառավարութիւնը «ընդմիշտ» փտարել էր երկրից լատին մխիթարներին եւ առհասարակ երկիրը փակել էր եւրոպացիների առջեւ: [208, էջ 397-398]

Ռուս անւանի պատմաբան Բ. Տուրաեւը իրաւացիօրէն նշում է, որ «հայերը դարեր շարունակ Հաբեշստանում հանդէս են եկել իբրեւ աշխարհիկ եւ հոգեւոր գործունէութեան ամենատարբեր բնագաւառների ներկայացուցիչներ»: [207, էջ 5]

Իհարկէ, համաշխարհային առեւտրով զբաղող հայ վաճառականութեան առաջամարտիկը միշտ էլ հանդիսացել է Նոր

Ջուղայի վաճառականութիւնը: Իզուր չէ, որ Հ. Տէր-Յովհաննեսեանը, ոչ առանց հպարտութեան նշում է, որ «Զկարծեմ թէ լիցի չափազանցութիւն յասելն իմ, թէ ի նմին ժամանակի Ջուղայեցիք էին առաջագէմ վաճառականք քան զամենայն վաճառականս աշխարհի»: [51, էջ 172]

Սակայն հայ ժողովրդի պատմութեան մէջ «խոջայական կապիտալի» դերը չի սահմանափակւել լոկ առեւտրով:

Եւրոպայի եւ Ասիայի ամենանշանաւոր կենտրոններում հայ խոջաների առեւտրական կայանները «միայն վաճառականական շահին չէին ծառայում, այլեւ երբեմն մտաւոր գործի օջախներ էին հանդիսանում: Վաճառականութեան հետ գաղթականութեան ճանապարհին մի-մի երեւան էր գալիս նաեւ գրագէտը, ուսման տենչով վառւած հայը»: [211, էջ 163].

Արեւելքի երկրներում Եւրոպայի կապիտալիստական արտադրութեան բնագաւառում ստեղծւած նոր ապրանքների տարածման հետ մէկտեղ, չափազանց մեծ է եղել հայ վաճառականների դերը նաեւ Արեւելքի տարբեր երկրներում եւրոպական մշակոյթի արժէքների տարածման բնագաւառում: Յայտնի է, օրինակ, որ նրանց միջոցով են Արեւելք թափանցել Եւրոպայում հրատարակւած առաջին գրքերը, եւրոպական նկարչութեան, թատրոնի եւ արւեստի այլ բնագաւառների նորոյթները եւ այլն: Պատահական չէ, որ Թուրքիայում եւ Իրանում առաջին տպարանները բացւել են հայ վաճառականների կողմից կամ նրանց գործօն աջակցութեամբ:

«Համաշխարհային շրջիկ խոջաները, - գրում է Լէոն, - ժողովուրդների մշակոյթների, պետական զանազանակերպ կազմւածքների հետ իրանց ունեցած անդադրում հանդիպումների մէջ չէին մնում անտարբեր եւ անզգայ դէպի իրանց տեսածներն ու լսածները, եւ այս՝ մանաւորապէս Արեւմտեան Եւրոպայում: Վաճառականն արդէն իր պարապմունքներով իսկ նիւթական մշակոյթի տարածող էր ազգերի մէջ: Տարածողի դերը առանձնապէս անխոնջ կերպով կատարում էր Արեւելքի ժողովուրդների մէջ Արեւմուտքի քաղաքակրթութեան վերաբերմամբ»: [25, էջ 94-95] «Շփւելով զանազան ազգերի հետ, հայ վաճառականը ձեռք էր բերում ոչ միայն հարստութիւններ, այլեւ փորձառութիւն, աշխարհահայեացքներ, Եւրոպայից նա իր տունն էր տանում ոչ միայն ժամացոյցներ, հայելիներ, թաւիշ, մարգարիտ, մահուդ եւ նուրբ կերպասներ այլեւ գաղափարներ»: [12, էջ 152]

Առանձնապէս մեծ է եղել խոջայութեան դերը հայ գրատպութեան զարգացման գործում: Նրանց ջանքերով կամ մեկենասութեամբ Ամստերդամում, Մարսէլում, Վենետիկում եւ Եւրոպական այլ կենտրոններում 16-18-րդ դարերում լոյս են տեսել կրօնական ու աշխարհիկ բնոյթի բազմաթիւ գրքեր, վաճառականական տեղեկատուներ, աշխարհագրական քարտէզներ եւ այլն: «Լքելով վանքի եւ եկեղեցու մթնոլորտը՝ գիրքն ու գրագիտութիւնը սկսում են ընդգրկել աշխարհիկ ընթերցողին, հասարակութեան վերին ու միջին խաւերը, եւ որոշ նախապայմաններ ստեղծում հայերի հետագայ ազգային-կուլտուրական էւոլուցիայի համար»: [17, էջ 59-60]

Սակայն այս բոլորով հանդերձ, չի կարելի չնշել նաեւ այն բացասական դերը, որ խաղացել է հայ վաճառականական դասը հայ ժողովրդի քաղաքական համախմբման ճանապարհին: Ջեռնտու շուկաների մշտական փնտրտուքներին հետամուտ, վաճառականութիւնը հեռացել է հայրենիքից եւ հաստատուել տարբեր երկրներում: Նրանց այնուհետեւ հետեւել են ուրիշները, որոնք խոշոր խմբերով գալիս եւ հաստատուում էին Արեւմտեան Եւրոպայի տարբեր գաղթօջախներում, ի սկզբանէ իրենց դատապարտելով ձուլման ու անհետացման: Այդ երեւոյթը աւելի լայն թափ էր ստանում Եւրոպայում եղած վաճառականների «փափագանցեցուած պատմութիւնների շնորհիւ արեւմուտքի երկրներում տիրող «ազատութեան» եւ «նիւթական բարեկեցութեան» վերաբերեալ: [21, էջ 13]

Իհարկէ միայն առեւտրական շահը չէր, որ բնաւեր էր անում հայութեանը եւ դուրս մղում նրան հայրենիքից: Հայաստանում տիրող քաղաքական անկայուն վիճակը, կեանքի եւ գոյքի ապահովութեան խպառ բացակայութիւնը, թուրք-իրանական համարեա անընդմէջ պատերազմները, որոնք մեծ մասամբ ընթանում էին Հայաստանի տարածքում եւ այլ գործօններ, ստիպում էին հայ վաճառականական կապիտալին Արեւմուտքում փնտրել աւելի ապահով հանգրուաններ, մանաւանդ որ այնտեղ նա արժանանում էր բարեացակամ ու գրկաբաց ընդունելութեան, որի պատճառը կայանում էր նրանում, որ դրամատիրական հասարակութեան ճանապարհով ընթացող Արեւմուտքի երկրները մեծապէս շահում էին նրանց առեւտրա-տնտեսական գործունէութիւնից: Մասնաւորապէս հայ վաճառականութիւնը իր չօշափելի նպաստն էր բերում Եւրոպայում կապիտալների կուտակման եւ դրամաշրջանառութեան ծաւալման գործին:

ԳԼՈՒԽ IV

ԻՐԱՆԱՀԱՅ ԽՈՋԱՆԵՐԻ ԱՌԵՒՏՈՒՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ XVII ԴԱՐՈՒՄ

Հին Ռուսիոյ եւ ռուսների հետ հայերի ծանօթութիւններն ու շփումները սկիզբ են առել վաղնջական ժամանակներում, երբ ձեւաւորում էր ռուս ժողովուրդը եւ նրա պետականութիւնը՝ Ռիւրիկովիչների տէրութիւնը կիեւ մայրաքաղաքով:

1480 թ. Ռուսական պետութիւնը թօթափեց թաթարա-մոնղոլական լուծը: Այդ իրադարձութիւնը շրջադարձային նշանակութիւն ունեցաւ Ռուսաստանի հետագայ պատմական զարգացման համար: XVI դարի 80-ական թւականներին հիմնականում աւարտուեց ռուսական հողերի միաւորումը Մոսկւայի իշխանութեան ներքոյ: Ստեղծւում էր կենտրոնացած ռուսական պետութիւնը, որը անգուսպ ձգտում էր դրսեւորում շարժւել դէպի հարաւ՝ իրեն միացնելու համար ոչ միայն թաթար-մոնղոլական վերջին իշխանութիւնները, այլեւ դուրս գալ դէպի Սեւ եւ Կասպից ծովերը, որտեղից նրա առջեւ կարող էին բացւել առեւտրական-տնտեսական ճանապարհներ՝ Մերձաւոր ու Միջին Արեւելքի, ինչպէս նաեւ Միջին Ասիայի, Հնդկաստանի ու Չինաստանի հետ անմիջական կապեր հաստատելու համար: Իւան IV կողմից Կազանի (1552) եւ Աստրախանի (1556) խանութիւնների նուաճումը Ռուսաստանի համար ունեցաւ հսկայական տնտեսական եւ քաղաքական նշանակութիւն: Նախ ռուսական պետութիւնը ձեռք բերեց արեւելեան առեւտրի կարեւորագոյն զարկերակը՝ Վոլգան, այնուհետեւ նա անմիջական շփման մէջ մտաւ Կովկասի, Իրանի եւ Միջին Ասիայի խանութիւնների հետ՝ եռանդուն պայքար սկսելով Իրանի եւ Անդրկովկասի վրայով անցնող համաշխարհային առեւտրական ճանապարհների համար:

Ցայտնի է, որ Իրանի եւ Անդրկովկասի վրայով էր անցնում այն առեւտրական ուղին, որով Ասիայից Եւրոպա էին արտահանում հում մետաքս: Աստրախանի գրաւումով Ռուսաստանի ելքը դէպի Կասպից ծով նրան հնարաւորութիւն էր տալիս հսկողութիւն

սահմանել եւրոպական տէրութիւնների քաղաքական- տնտեսական կապերի վրայ Մերձկասպեան ու Անդրկասպեան շրջանների, Անդրկովկասի ու Հնդկաստանի հետ: Այսպիսով Ռուսաստանը պայքարի մէջ էր մտնում Իրանի եւ Անդրկովկասի վրայով անցնող համաշխարհային առեւտրական ճանապարհների համար: (212, էջ 7)

Ռուսաստանի այս քաղաքականութեան մէջ Օսմանեան կայսրութիւնը տեսնում էր բազմարնոյթ սպառնալիք իր տնտեսական-քաղաքական շահերի համար: Նախ սպառնալիքի տակ էին դրւում նրա մաքսային եկամուտները, որոնք ձեռք էին բերւում Իրանից թուրքական տարածքի վրայով դէպի Լեւանտ տանող տարանցիկ առեւտրից: Այնուհետեւ Աստրախանում Իրանի յայտնւելով անյաղթահարելի պատնէշ էր ստեղծւում Անդրկովկասում, Իրանում եւ Մերձկասպեան շրջանում Օսմանեան կայսրութեան լայնահուն նուաճողական ծրագրերի առջեւ, մասնաւորապէս որոնց նպատակն էր Դնեպրից մինչեւ Ուրալ թեւանցել Մոսկովեան պետութեան սահմանները: (213, էջ 45,46)

Օսմանեան կայսրութեանը յատկապէս մեծ մտահոգութիւն էր պատճառում այն հաւանականութիւնը, որ Իրանի Սէֆեան պետութեան եւ Ռուսաստանի միջեւ շահերի միասնութեան հիմքի վրայ կարող էր առաջանալ հակաթուրքական դաշինք: Ոչ պակաս մղձաւանջային իրողութիւն էր նաեւ Իրանի եւ Ռուսաստանի միջեւ անմիջական առեւտրական կապերի հաստատումը, որի գործնական իրականացման դէպքում Փոքր Ասիայի վրայով անցնող թուրքական քարաւանային տարանցիկ ուղին կարող էր դուրս մղել աւելի կարճ եւ ձեռնտու Վոլգա-կասպեան առեւտրական ճանապարհի կողմից:

Անտարակոյս այս բոլորը առաջ էին բերելու Օսմանեան կայսրութեան վճռական հակազդեցութիւնը Ռուսաստանի դէպի հարաւ շարժւելու անգուսպ ձգտմանը: Այս իսկ տեսակէտից բնաւ պատահական չէ, որ ողջ XVI-XVII դարերի ընթացքում իր ախոյեան Սէֆեան Իրանի դէմ մղած անընդմէջ պատերազմների ընթացքում թուրքական զինուորականութիւնը ռազմական յաղթանակների մէջ տեսնում էր նաեւ Ռուսաստանի առաջխաղացումը դէպի հարաւ կանխելու միջոց: Ստամբուլում այդ ձեռնարկի յաջողութեան գրաւական էր դիտւում այն, որ Մերձվոլգեան եւ Ղրիմի թաթարները, ինչպէս նաեւ Կովկասի լեռնականները եւ առհասարակ այդ ընդարձակ երկրամասի սունիիթական աղանդին հետեւորդ մահմեդական բնակչութիւնը բազմապիսի թելերով կապւած էր Թուրքիայի հետ:

Երիտասարդ եւ օրըստօրէ ուժեղացող ռուսական պետութեան առաջխաղացումը դէպի հարաւ կանխելու ուղղութեամբ առաւել լուրջ փորձեր կատարուեցին յատկապէս XVI դարում: Այսպէս, 1569 թ. սուլթան Սելիմ II (1566-1574 թ.թ.) Ղրիմի խանի օգնութեամբ փորձեց գաւթել Աստրախանը եւ դրանով իսկ Մոսկւայի, Իրանի ու Անդրկովկասի միջեւ ստեղծել մի անանցանելի պատնէշ: Սակայն թուրք-թաթարական զօրախմբերը ստիպւած էին մազապուրծ փախչել Աստրախանի մօտակայքից: 1578 թ. վերսկսելով պատերազմը Իրանի հետ, սուլթան Մուրադ IIIը (1574-1595 թ.թ.) ձգտում էր գաւթել Անդրկովկասն ու Կասպիական ծովափը, որպէսզի տիրանայ նաեւ Վոլգա-Կասպեան ճանապարհին: Յատկանշական է, որ այդ գործում նրան օգնում էին ոչ միայն Ղրիմի խանը, այլեւ Դաղստանի, Շաքիի ու Շիրւանի աւատատէրերն ու սուննիթ-վաճառականները, որոնք եռանդ չէին խնայում յօգուտ թուրքերի յաջողութեան:

Սակայն Իրանի եւ Ռուսաստանի միջեւ առեւտրա - տնտեսական եւ նոր-նոր ձեւաւորւող քաղաքական կապերը խափանելու ուղղութեամբ օսմանցիների գործադրած բոլոր ջանքերը ապարդիւն անցան: Ճիշտ է, XVI դարում դեռեւս առկայ չէին ռուս-իրանական կայուն առեւտրական կապեր, սակայն բազմաթիւ փաստեր վկայում են այն մասին, որ որպէս այդ առեւտրի միջնորդներ առաւելապէս հանդէս էին գալիս հայ վաճառականները:

Յայտնի է, որ հայերը Մոսկովեան պետութեան հետ առեւտուր էին անում նրա կողմից Վոլգա-Կասպեան ճանապարհը ձեռք բերելուց դեռ շատ առաջ: Առհասարակ Վոլգեան մայրուղին ծանօթ էր հայերին հնագոյն ժամանակներից ի վեր. որոշակի տեւողներով տակաւին մ.թ.ա. I դ. մարերն ու հայերը ցամաքային ճանապարհով Միջագետքից արեւելեան ապրանքներ էին հասցնում Կասպից ծովի հիւսիսային շրջանները: [214, էջ 16] Իւան IIIի կառավարման շրջանում հայ-ռուսական կապերը նշանակալիօրէն աշխուժանում են: Իսկ Ղազանում ու Աստրախանում ռուսների ամրապնդումից յետոյ կայուն նախապայմաններ ստեղծուեցին Ռուսաստանի հետ հայ վաճառականների առեւտրի ծաւալման համար: Պատահական չէ, որ թաթարական իշխանութիւնների դէմ ռուսների մղած պայքարի ընթացքում հայերը հանդիսանում էին ռուսական զէնքի յաղթանակի ջերմ կողմնակիցներ: «Ղազանի տարեգրութիւնը», օրինակ, տեղեկութիւն է տալիս այն մասին, որ պատերազմից յաղթանակով վերադարձած ցարին ու զօրքերին Մոսկւայում ցնծագին դիմա-

տորողների շարքում եղել են բազմաթիվ հայեր: [215, էջ 154: 216, էջ 83] Ի նշանաւորումն այս յաղթանակի, Իւան Ահեղը Մոսկվայի կենտրոնում կառուցել է տուել Վասիլի Երանելու տաճարը, որի եկեղեցիներից մէկը նուիրել է Հայոց Լուսաւորիչ Գրիգոր Պարթեւին: Լ. Խաչիկեանը այդ առթիւ ենթադրում է, որ եթէ Մոսկվայի հայերը Ռուսաստանի տնտեսական կեանքում զգալի դեր կատարած չլինէին, այդ փաստը կմնար առանց բացատրութեան: [216, էջ 83] Այլ կերպ ասած այդ փաստի մէջ նա տեսնում է հայերին սիրաշահելու խորհուրդ:

Իւան Ահեղի կողմից Ղազանի խանութեան եւ Աստրախանի նուաճումը, ինչպէս նաեւ Սիբիրի խաների ու Նոգայի իշխանների կողմից ռուսական գերիշխանութեան ճանաչումը ունեցան այն հետեւանքը, որ Վոլգեան մայրուղին մէկ ծայրից միւսը, իր ամբողջութեամբ՝ անցաւ ռուսական տիրապետութեան տակ եւ այդպիսով բացուեց Վոլգայից Կասպից ծով տանող երթուղին: Անմիջապէս Շամախիի եւ Շերվանի բեկլարբեկները դեսպաններ են ուղարկում Մոսկվա՝ խնդրելով վերականգնել Մոսկովեան պետութեան հետ հայ վաճառականների ունեցած հնամենի առեւտրական արտոնութիւնները եւ վերսկսելու առեւտուրը Ռուսաստանի հետ Աստրախանի վրայով: Իւան IV-ը բաւարարում է նրանց խնդրանքը: [217, էջ 24]

Այդ ժամանակաշրջանից սկսած հայ վաճառականները սկսում են Ռուսաստան այցելել ոչ միայն Իրանից ու Հնդկաստանից, այլեւ Հոլանդիայի, Իտալիայի, Լեւանտի ու Ղրիմի հայ գաղթօջախներից, ինչպէս նաեւ Արեւմտեան Հայաստանից: 1555 թ. Ռուսաստան այցելած վենետիկեան դեսպան Ֆր. Դիեերոյն, օրինակ, վկայում է, որ առեւտրական գործերով Մոսկովիա, Ղազան եւ Նովգորոդ էին ժամանում բազմաթիվ հայ վաճառականներ, իրենց հետ բերելով բազմապիսի արեւելեան ապրանքներ: [37, էջ 161]: Իսկ ջենովացի Պավել Իովին, որը 1567 թ. այցելել էր Աստրախան, վկայում է, որ արեւելեան վաճառականները, մասնաւորապէս հայերը, այդ քաղաքում ունէին մեծ առեւտուր: [218, էջ 36] Աղբիւրներում յիշատակութիւն կայ նաեւ ոմն Ցակոբ Հայի մասին, որը Կասպից ծովի վրայ 35 տոննայ ջրատարողութեամբ նաւատէր էր: Ցիշատակւում է նաեւ Կասպից ծովի Նիզաբադ նաւահանգիստի մօտ հայկական մի գիւղի առկայութեան մասին, որը ներգրաւած էր առեւտրի մէջ: [4, էջ 112-114] Նովգորոդում արեւելեան երկրներից ժամանած հայ վաճառականների քանակը այնքան է մեծանում, որ

դեռևս 1486 թ. հրապարակված հրովարտակով սահմանում է լիտովցիներից, թուրքերից եւ հայերից գանձվող հարկերի չափը: [219, էջ 61] Ռուսաստանում հայ վաճառականների նշանակալից առեւտրի մասին է վկայում նաեւ Մոսկվայում այսպէս կոչված «Հայկական տան» կամ «Հայկական կարաւանատան» առկայութիւնը, որտեղ, ի դէպ կանգ էին առնում նաեւ պարսիկ վաճառականները: [220, էջ 86]

Թէեւ ռուսական կառավարութիւնը սահմանափակել էր արեւելեան վաճառականների գործունէութեան վայրերը, այդուամենայնիւ, Արեւելքից ներմուծված ապրանքները Ռուսաստանում լայն տարածում էին գտնում: Ռուս վաճառականները հայերից ձեռք բերելով այդ ապրանքները, դրանք վաճառքի էին հանում ոչ միայն Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում, այլեւ հիւսիսային եւ հիւսիս-արեւելեան ամենահեռաւոր շրջաններում: «Այս հանգամանքը, - գրում է Մ. Ֆեխները, - ակնառու կերպով հաստատում է, որ ռուսական ներքին շուկայի համար արեւելեան առեւտուրն ունեցել է ոչ փոքր նշանակութիւն»: [219, էջ 60-63]

Հայ վաճառականների առեւտրի հիմնական առարկան XVI դարում եղել է հում եւ մշակված մետաքսը: Սակայն նրանք մեծ չափերի հասնող առեւտուր են արել նաեւ այնպիսի ապրանքներով, ինչպիսիք են օրինակ թանկագին քարերը, մորթիները, կաշին, մոմը եւ այլն:

Ռուսաստանի հետ հայերի առեւտրա-տնտեսական յարաբերութիւնների մէջ առանձնակի տեղ էր գրաւում Աստրախանը, որտեղ հանգուցաւորում էին հարաւի եւ հիւսիսի միջազգային ապրանքաշրջանառութեան ճանապարհները: Շամախու, Աստրախանի, Կազանի, Արխանգելսկի, Տուերի եւ Նովգորոդի վրայով Սեւ, Սպիտակ եւ Բալթիկ ծովերի հանգուցաւորման համար մեծ կարեւորութիւն էին ստանում յատկապէս հայ վաճառականները: [17, էջ 440] Դեռեւս մինչեւ Աստրախանի նուաճումը ռուսների կողմից հայ եւ պարսիկ վաճառականները ժամանում էին այնտեղ, ապրանքներ բերելով Իրանից, Բուխարայից, Խիւայից եւ Հնդկաստանից: [220, էջ 12]

XVI դարում Ռուսաստանի հիւսիսում ցարի իշխանութիւնը մինչեւ Սպիտակ ծով հասնելուց իսկ հարաւում ռուսների Կասպից ծով դուրս գալուց յետոյ Արեւմտեան Եւրոպայի երկրները ռեալ հնարաւորութիւն ստացան հիւսիսային ծովի եւ Վոլգա-Կասպեան ճանապարհով անմիջական առեւտրական յարաբերութիւններ հաստատելու Իրանի եւ Ռուսաստանի հարաւում գտնուող այլ երկրների հետ: Դեռեւս XV դարի 70-ական թւականներին Իրանում Վենե-

տիկեան հանրապետութեան դեսպաններ Կոնտարինին եւ Բարբարոն այդ ճանապարհի վրայ ուշադրութիւն էին դարձրել:

Իսկ XVI դարի սկզբին աւստրիական բարոն Սիգիզմունդ Հերբերշտէյնը իր «Մոսկովեան գործերի մասին գրութիւններում» շեշտում էր այդ ուղու նշանակութիւնը արեւմտաեւրոպական պետութիւնների արեւելեան առեւտրի համար: [221] Սակայն առաջինը անգլիացիները գնահատեցին այդ ճանապարհի նշանակութիւնը իրենց առեւտրա-տնտեսական շահերի համար եւ 50-ական թւականներին կազմակերպեցին մի արշաւախումբ Ջենսլերի գլխաւորութեամբ, որի հետեւանքով Արեւմուտքի հետ ստեղծւեց ուղիղ ծովային կապ: Բալթիկ ծովով հիւսիսային ճանապարհի յայտնագործումը այն ստիճանի կարեւոր իրողութիւն էր, որ անգլիացիները համեմատում էին պորտուգալացիների կողմից Հնդկաստան տանող ծովային ճանապարհի յայտնագործման հետ: Այսպէս կոչւած անգլիական «Մոսկովեան ընկերութեանը» առեւտրական արտօնութիւնների տրամադրումը ընկերութեանը առեւտրական արտօնութիւնների տրամադրումը նպաստեց Արեւմուտքի հետ Ռուսաստանի առեւտրա-տնտեսական կապերի աննախադէպ ընդլայնմանը: [222, էջ 58-59]

«Հիւսիսային ճանապարհի» բացումից յետոյ եւրոպական համարեա բոլոր առաջատար պետութիւնները սկսեցին եռանդուն ջանքեր գործադրել, որպէսզի ստանան ռուսական պետութեան վրայով Իրանի հետ առեւտրի մենաշնորհը: Արեւմտաեւրոպական երկրների մեծ հետաքրքրութիւնը ռուսական տարանցիկ ճանապարհի նկատմամբ բացատրւում է նրանով, որ XVI դարի երկրորդ կէսին իրանական շուկա ներթափանցելու ուղիները վերին աստիճանի սահմանափակ էին, քանի որ Լեւանտեան ճանապարհը հանդիսանում էր Վենետիկի եւ իտալական միւս հանրապետութիւնների մենաշնորհը, իսկ Հնդկական ովկիանոսում եւ Պարսից ծոցում տիրապետում էին պորտուգալացիները: Գաղութային սից ծոցում տիրապետում էին պորտուգալացիները: Գաղութային քաղաքականութեան ուղու վրայ կանգնած Անգլիային ու Հոլանդիային Վոլգա-Կասպեան ճանապարհը հետաքրքրում էր ոչ միայն Իրան ներթափանցելու, այլեւ այդ երկրի վրայով անցնող համաշխարհային առեւտրի ուղիներին տիրանալու համար:

Բացի այդ, Վոլգա-Կասպեան ճանապարհը թուրքական ցամաքային տարանցիկ ուղու, ինչպէս նաեւ Աֆրիկայի շուրջը ծովային ճանապարհի հետ համեմատած շատ աւելի կարճ էր: Ըստ շւեդացի Կիլբուրգերի տւեալների, ովկիանոսային ճանապարհով ուղեւորութիւնը Անգլիայից Պարսից ծոց տեւում էր մօտ մէկ եւ կէս

տարի, ընդորում առանց նաւագնացութեան ելքի համար երաշխիքների: Իսկ Ֆիննական ծովով եւ Վոլգա-Կասպեան ճանապարհով Հոլանդիայից ուղեւորութիւնը Իրան տեւում էր ընդամենը 7-8 ամիս: Կիլբուրգերը եզրակացնում էր, որ իրանական առեւտուրը լիշեալ ճանապարհով ամենայարմարն է ու անվտանգը: [223, էջ 149] Այդ ճանապարհի կարեւոր առաւելութիւններից էր նաեւ այն, որ Արխանգելսկ-Աստրախան հսկայ ճանապարհն անցնելիս վաճառականները մաքսավճարում էին անելու միայն Արխանգելսկում ապրանքի տաս տոկոսի եւ Մոսկայում հինգ տոկոսի չափով: [81, էջ 38-41]

Իհարկէ, Վոլգա-Կասպեան ճանապարհը եւս ունէր իր անյարմարութիւնները: Նախ ձմռանը առաջանում էին մեծ դժուարութիւններ: Այնուհետեւ խստ վտանգաւոր էր պրիմիտիւ նաւերով Կասպից ծովով նաւարկելը: Բացի այդ, Վոլգայի ստորին հոսանքներում առեւտրականներին դարանակալում էին նողայ ելուզակները եւ կոզակները:

XVI դարի երկրորդ կէսին եւ ողջ XVII դարում եւրոպական համարեա բոլոր պետութիւնները եռանդուն գործունէութեան էին լծւել ռուսական կառավարութիւնից ստանալու համար Վոլգա-Կասպեան ճանապարհով Ռուսաստանի եւ նրա վրայով նաեւ Իրանի հետ առեւտուր անելու արտօնութիւն: Առանձնակի յամառութեամբ այդ իրաւունքը ձեռք բերելու համար պայքարում էին կապիտալիստական զարգացման ուղին թեւակոխած առեւտրական երկու հզօր պետութիւնները՝ Անգլիան եւ Հոլանդիան: [224, էջ 13-14, 225, էջ CLXXIII]

Սակայն առանձին կարճամկէտ բացառութիւններով հանդերձ վերոյիշեալ ուղղութեամբ եւրոպական պետութիւնների գործադրած բազում ջանքերը աւարտուեցին ձախողմամբ գլխաւորապէս այն պատճառով, որ այդ ժամանակ ցարական կառավարութիւնը հետեւողականօրէն վարում էր Ռուսաստանում եւրոպական առեւտրական կապիտալի սահմանափակման քաղաքականութիւն: Ցարական արքունիքը կուահել էր, որ ռուսական պետութեան մէջ տնտեսապէս հզօր արեւմտեան երկրների առեւտրական գործունէութեան ազատութիւնը անխուսափելիօրէն կհանգեցնի դեռեւս թոյլ ու անզօր ռուսական առեւտրական կապիտալի թուլացմանը եւ լաւ կազմակերպւած օտարերկրեայ առեւտրական ընկերութիւններից կախեալ վիճակի մէջ ընկնելուն: Այդ նոյն գիտակցութեամբ ռուսական վաճառականութիւնը անհաշտ դիրք էր

գրաւել օտարերկրեայ ընկերութիւնների ու առեւտրական կապիտալի նկատմամբ: Նրա համար տնտեսական պայքարի միջոցները եղան անբաւարար եւ այդ պատճառով մնում էր ապաւինել աւատական ճորտատիրական պետութեան պաշտպանութեանը, յորդորելով նրան վարել առեւտրի հովանաւորողական քաղաքականութիւն:

Արեւմտեան պետութիւններին մերժելով Ռուսաստանի վրայով առեւտուր անել Իրանի հետ, Մոսկովեան կառավարութիւնը ինքն էր ձգտում այդ երկրի հետ հաստատել անմիջական առեւտրաքաղաքական յարաբերութիւններ:

Սէֆեան պետութեան եւ Ռուսաստանի միջեւ պաշտօնական դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու նախաձեռնութիւնը պատկանում էր Մոսկային: Վերջինս 1586 թ. Իրան ուղարկեց իր առաջին դեսպանութիւնը, որը կոչած էր սկիզբ դնել նաեւ երկու պետութիւնների միջեւ կայուն առեւտրական յարաբերութիւնների հաստատմանը: Հետագայում, մինչեւ դարի վերջը, դեսպանութիւնների փոխանակումները դարձան աւելի յաճախակի: [213]

Անհրաժեշտ է նշել, որ ռուս-իրանական բանակցութիւնների ժամանակ քննարկման նիւթ էր հանդիսանում նաեւ ընդհանուր թշնամու՝ օսմանեան Թուրքիայի դէմ երկու պետութիւնների յարձակողական-պաշտպանողական ռազմաքաղաքական դաշինք կնքելու հարցը:

Ռուսաստանի դիւանագիտական ակտիւութիւնը եւ նրա առանձնակի շահագրգռուածութիւնը Իրանի հետ ռազմաքաղաքական դաշինք կնքելու ուղղութեամբ պէտք է բացատրել նաեւ նրանով, որ նշած շրջանում ակտիւացել էր ռուսական ներթափանցումը Կովկասի եւ Կասպից ծովի շրջանը: 1595 թ. մայիսին յաջողութեամբ աւարտելով պատերազմը Շուեդիայի հետ, Բալթիկ ծով դուրս գալու համար, ռուսական պետութիւնը կարողացաւ որոշ չափով ուժեղացնել իր դիրքերը Թուրքիայի վասալ Ղրիմի խանի դէմ: Ուշքի գալով 1603-1612 թ.թ. գիւղացիական պատերազմի ցնցումներից եւ լեհական ու շուեդական ինտերվենցիայի հետեւանքով Ռուսաստանում ծայր առած անիշխանութիւնից ու համընդհանուր քաջքայքայումից, ռուսական կառավարութիւնը ձգտում էր Արեւելքի հետ իր ունեցած կապերին հաղորդել աւելի հաստատուն բնոյթ: Ռուսաստանը մեծ պետութիւն դարձնելու ձգտումը աւելի ու աւելի էր արմատաւորւում ռուս

քաղաքական գործիչների գիտակցութեան մէջ, որը մղում էր նրանց ոչ միայն յամառ պայքար մղել դէպի Եւրոպա ծովային ելք ունենալու համար, այլեւ առաջին քայլերը կատարել Արեւելքի անծայրածիր շուկաները ներթափանցելու ուղղութեամբ: Ընդ որում, եթէ նոր ոտքի կանգնող ռուսական առեւտրական կապիտալը Եւրոպայում կարող էր հանդիպել տեղական կազմակերպված, հարուստ եւ ուժեղ առեւտրական ընկերութիւնների դիմադրութեանը, ապա թւում էր Արեւելքում ասպարէզն ազատ է: Պատահական չէ, որ շրջահայեաց ու խոհուն, դիտողական կարողութիւններով օժտված ռուս վաճառական Ֆեդոտ Կոտովին, որը 1623-1624 թ.թ. այցելել էր Իրան, հետաքրքրւում էր ամէն ինչ, առեւտրի կենտրոնները, առեւտրական ուղիները ռուսական պետութիւնից դէպի Իրան եւ այնտեղից Հնդկաստան, Չինաստան եւ այլն, օտարերկրեայ վաճառականների առեւտուրն Իրանում, հում մետաքսի արտադրութեան վայրերը, երկրի բարեկեցութիւնը, վերջապէս պարսիկների նիստուկացը եւ այլն: [226]

Թւում էր, թէ իրանական կողմը եւս, մասնաւորապէս շահ Աբբաս Իր (1587-1629 թ.), որը 1590 թ. մարտին Թուրքիայի հետ ստորագրել էր հաշտութեան ծանր պայմանագիր եւ տենդագին նախապատրաստութիւններ էր տեսնում նրա դէմ նոր պատերազմ սկսելու համար, իր հերթին պէտք է դրսեւորի դիւանագիտական ակտիւութիւն եւ կենսական շահագրգռածութիւն իր վտանգաւոր ու ոխերիմ ախոյեանի դէմ՝ ռուսական պետութեան հետ ռազմաքաղաքական դաշինք կնքելու հարցում: Այս հարցադրումը միանգամայն տրամաբանական է, եթէ նկատի ունենանք, որ սկսած XVI դարի 90-ական թւականներից շահը դեսպանութիւններ էր ուղարկում Եւրոպա եւ առաջին հերթին այն երկրները, որոնց անմիջականօրէն սպառնում էր թուրքերի եւ Ղրիմի խանի ներխուժման վտանգը: [227] Ընդորում, այդ բանակցութիւնների ժամանակ շահը լայնօրէն օգտագործում էր հայ բանագնացներին: Սակայն որքան էլ որ տարօրինակ է եւ առաջին հայեացքից անհասկանալի, շահ Աբբաս Իր փորձում էր Թուրքիայի դէմ ռազմական դաշնակիցներ գտնել արեւմտաեւրոպական պետութիւնների շրջանում, չփորձելով համաձայնութեան գալ Ռուսաստանի հետ, որն այդ հարցում կարող էր լինել Իրանի բնական դաշնակիցը: Ռուս իրանագէտ Պ.Պ. Բուշեւը այդ առթիւ նշում է. «Ինչպէս ցոյց է տալիս արխիւային փաստաթղթերի ուսումնասիրութիւնը, Մոսկովեան պետութեան հետ շահ Աբբաս Իի

քաղաքական յարաբերութիւններում երբեք չէր դրւում Թուրքերի դէմ ռազմական դաշինք կնքելու հարց»: Թերեւս միակ բացառութիւնը հետեւեալ դէպքն էր. 1611 թ. վերջին շահը Հռոմի պապի մօտ է ուղարկում քարմելիթեան միաբանութեան անդամ Թադդէուսի դեսպանութիւնը, որի կազմի մէջ կային նաեւ երկու հայ վաճառականներ եւ մէկ հոգեւորական: Դեսպանութիւնը յանձնարարւած էր այցելել Ռուսաստան ու Լեհաստան եւ համոզել նրանց Թագաւորներին համատեղ պայքար մղել Թուրքերի դէմ: Սակայն այս դեսպանութիւնը ոչ միայն չհասաւ իր նպատակին, այլեւ ակամայից նպաստեց ռուս-իրանական յարաբերութիւնների սրմանը: Ենթադրելով, որ դեսպանութիւնը Մոսկւայ է ուղեւորւում յարաբերութիւնների մասին, Աստրախանի վոյեւոդ Ի. Խուորոստինինը բանտարկում է դեսպանութեան անդամներին: Բանտարկութեան երրորդ տարւայ վերջին հայ վաճառականներին յաջողւում է փախչել եւ եղելութեան մասին պատմել շահ Աբբասին: Վերջինս անմիջապէս վոյեւոդից պահանջում է վերադարձնել դեսպանութեանը, հակառակ դէպքում սպառնալով մի ամբողջ բանակով յայտնւել Աստրախանում նրան փրկելու համար: Այդ ժամանակ Աստրախանում գտնւող Մարինա Մնիշէկի միջնորդութեամբ Թադդէուսը եւ նրա ուղեկիցները ազատւում են եւ 1614 թ. վերադառնում Սպահան: [52 հատ I, էջ 72]

Արդ, որոնք էին շահական կառավարութեան կողմից Ռուսաստանին Թուրքիայի դէմ դաշնակից դարձնելու հարցը հաշւից դուրս թողնելու կամ անտեսելու պատճառները: Դրանք բազմաթիւ էին, որոնցից կարեւորները մեր կարծիքով հետեւեալներն էին. Ռուսաստանի անզուսպ առաջխաղացումը դէպի հարաւ եւ առհասարակ նրա աճող հետաքրքրութիւնը այն շրջանների նկատմամբ, որոնք Սէֆեանների կողմից դիտւում էին որպէս իրանական ազդեցութեան գօտիներ, լրջօրէն անհանգստացնում էին շահ Աբբասին եւ նրա հետեւորդներին: Աւելին, նրանց այս մտավախութեան էին եւ Թուրքերի տագնապների միջեւ կային շատ ընդհանրութիւններ: Այս հարցում, որքան էլ որ տարօրինակ է, երկու ախոյեանների միջեւ գոյութիւն ունէին շահերի որոշ միասնութիւն, որոնց մասին, ճիշտ է, շատ մշուշապատ ձեւով, սակայն յամառ հետեւողականութեամբ, նրանց քաղաքական բանակցութիւնների ընթացքում ժամանակ առ ժամանակ յիշատակւում էր: [198] Մասնաւորապէս, շահական կառավարութիւնը վախենում էր, որ Ռուսաստանի ազդեցութիւնը կտարածւի Դաղստանի վրայ, իսկ նրա վրայով նաեւ

ռուսները անմիջական կապեր կհաստատեն Վրաստանի եւ Հայաստանի դաւանակից ժողովուրդների հետ: Հանրայայտ իրողութիւն է, որ 1605 թ. սկսած Աբբաս Իը զինուած պայքար սկսեց ռուսական ազդեցութիւնը Արեւելեան Վրաստանում վերացնելու եւ այն մահմեդական խանութեան վերածելու համար: Վրացական հարցը այսուհետեւ դառնում էր ռուս-իրանական հակասութիւնների հիմնական հարցերից մէկը:

Խնդրին այս տեսանկիւնից մօտենալով, մենք բնաւ պատահական չենք համարում նաեւ այն, որ շահ Աբբաս Իը, որը հետեւողականօրէն փորձում էր Իրանի արտաքին առեւտրի ուղին թուրքական ցամաքային ճանապարհներից շեղել այլ կողմ իր ախոյեանին տնտեսական հարւած հասցնելու եւ միաժամանակ նրանից իր կախւածութիւնը վերացնելու միտումով, երբեք չփորձեց օգտուել ռուսական Վոլգա-Կասպեան ճանապարհից, բացառապէս իր ուշադրութիւնը կենտրոնացնելով Պարսից ծոցի ծովային ճանապարհի վրայ: [228]

Շահ Աբբաս Իի կառավարման տարիներին ռուս-իրանական քաղաքական յարաբերութիւնները միանգամայն անպտուղ դուրս եկան, չհանգեցնելով որեւէ շօշափելի արդիւնքների: Ինչպէս նշւեց, ծաւալում չստացան նաեւ նրանց առեւտրա-տնտեսական յարաբերութիւնները: Այս բնագաւառում թերեւս միակ կապող օղակը, արեւելահայ, առաւելապէս ջուղահայ վաճառական խոյաներն էին, որոնց այցելութիւնները Ռուսաստան նպաստում էին այն բանին, որ ռուս-իրանական առեւտրական կապերը չխզւեն:

Ռուսական արխիւային փաստաթղթերից, օրինակ, մենք տեղեկանում ենք, որ 1626 թ. գարնանը Մոսկւա են ժամանել մի խումբ հայ վաճառականներ, իրենց հետ բերելով բազմապիսի արեւելեան ապրանքներ: [229, էջ 34] Պէտք է ենթադրել, որ նման փաստերը եզակի չէին: Դժբախտաբար 1626 թւականից առաջ ընկած շրջանի արխիւային բոլոր նիւթերը այրւել են այդ նոյն թւականին Մոսկւայում բռնկած հրդեհի ժամանակ: Այդ պատճառով XVII դարի առաջին քառորդի հայ-ռուսական յարաբերութիւնների, այդ թւում նաեւ առեւտրի մասին, մենք համարեա նիւթեր չունենք: Մի բան սակայն ակնյայտ է, որ հայերի առեւտրական կապերը Ռուսաստանի հետ երբեք չեն դադարել: Դրանում շահագրգռւածութիւն էր դրսեւորում նաեւ ռուսական արքունիքը, որովհետեւ մի շարք ապրանքների, եւ առաջին հերթին հում մետաքսի, գնման ու վաճառահանման մենաշնորհը պատկանում էր գանձարանին, որը

այդ առեւտրից ստանում էր խոշոր շահույթներ:

Այդ շրջանում Մոսկվայի հետ տնտեսական սերտ կապերի մէջ էին նաեւ արեւմտահայ, մասնաւորապէս Թոխաթեցի վաճառականները: Եւ դա չնայած նրան, որ XVI դարի վերջերին եւ XVII-ի սկզբներին Օսմանեան կայսրութիւնն ալեկոծւում էր ջալալիների հուժկու ապստամբութիւններից: Դրա հետեւանքով Փոքր Ասիայի արհեստագործութեան եւ առեւտրի նշանաւոր կենտրոնները կողոպտւում ու աւերւում էին:

Թուրքիայից հայ վաճառականները Ռուսաստան էին ներմուծում գլխաւորապէս ձէթ, մերձարեւադարձային պտուղներ, մեղրամոմ, սուրճ, արեւելեան արտադրութեան զանազան պերճանքի առարկաներ, յատկապէս արծաթեղէն, իսկ Ռուսաստանից Թուրքիա էին արտածում հացահատիկ, կաշեղէն, մորթեղէն, երկաթեղէն եւ այլն:

Արեւմտահայ վաճառականները Ռուսաստանի հետ իրենց առեւտուրը իրականացնում էին ինչպէս ջրային, այնպէս էլ ցամաքային ճանապարհներով: Սկիզբ առնելով Կոստանդնուպոլսից, ջրային առեւտրական այդ ուղին այնուհետեւ անցնում էր Սինոպ-Կաֆա-Ազով, որտեղից Դոն եւ Օկա գետերով հասնում էր մինչեւ Մոսկվա: Կոստանդնուպոլսից Մոսկվա ցամաքային կարաւանային ճանապարհը իրագործւում էր հետեւեալ ուղերթով. Ադրիանոպոլիս - Ակքերման - Օչակով - Պերեկոպ - Պուտիւլ - Սեւերսկի - Նովգորոդ - Բրեանսկ -Բրին - Կալուգա - Մոսկվա: Գործել են նաեւ մի շարք այլ ճանապարհներ, օրինակ, Տուլայի, Լիւնիի եւ Վալոյկիի վրայով դէպի Ազով տանող կամ Մոսկվա - Զեռնիգով - Կիեւ - Դնեպր - Սեւ ծով - Կոստանդնուպոլիս երթուղով, որոնք սակայն աչքի չեն ընկել իրենց բանուկութեամբ եւ առեւտրա-տնտեսական դերով:

Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ տարանցիկ առեւտրում Ղրիմի եւ մասնաւորապէս Կաֆայի հայ վաճառականները խաղացել են միջնորդ առեւտրականների դեր:

Հայայն Ռուսիայի մայրաքաղաք դարձած Մոսկվայում հայ վաճառականներն ու տարբեր զբաղմունքի տէր մարդիկ գնալով աւելի ու աւելի էին շատանում: Նրանցից շատերը մշտական բնակութիւն էին հաստատում Մոսկվայում, առաւելապէս զբաղւելով առեւտրով: Ի տարբերութիւն նախորդ ժամանակների, այդ վաճառականները իրենց մեծամասնութեամբ, այլեւս ղրիմահայեր կամ Թուրքական տիրապետութեան տակ անցած հայկական նահանգների

հետ կապված հայեր չէին, այլ Արեւելեան Հայաստանից, Վրաստանից եւ Իրանի տիրապետութեան տակ գտնուող Անդրկովկասեան խանութիւններից տեղափոխածներ: [216, էջ 86].

Սակայն այս բոլորով հանդերձ XVII դարի առաջին կէսի ընթացքում հայ-ռուսական առեւտրական յարաբերութիւնների բնագաւառում չեչտակի վերելք տեղի չունեցաւ, որը հետեւանք էր ռուս-իրանական քաղաքական յարաբերութիւնների որոշակի սառեցման: Բանը նրանում է, որ շահ Աբբաս Բ-ի հեռնորդները իրենց նախորդին բնորոշ հետեւողականութեամբ չչարունակեցին եւրոպական տէրութիւնների հետ հակաթուրքական ռազմական դաշինք կնքելու բանակցութիւնները: Դա անշուշտ, վկայում է այն մասին, որ նրանք հիասթափւել էին այդ բնագաւառում արդիւնքի հասնելու հնարաւորութիւնից: Իրանական արքունիքում արդէն շատերն էին գիտակցում այն իրողութիւնը, որ եւրոպայում առկայ քաղաքական եւ կրօնական խոր ճգնաժամը եւ պետութիւնների միջեւ գոյութիւն ունեցող սուր հակասութիւնները նման դաշինք կնքելու հաւանականութիւնը հաւասարեցնում են զրոյի: Բացի այդ, միանգամայն որոշակիօրէն ուրւագծում էր այն ճշմարտութիւնը, որ Եւրոպայի մեծ պետութիւնները իրենց առեւտրական շահերից ելնելով մերձաւորարեւելեան քաղաքականութեան մէջ շատ յաճախ դրսեւորում են թուրքամէտ ձգտումներ, [230, էջ 14] ամենակարեւորը, թերեւս այն էր, որ Սպահանում արդէն կռահում էին, որ արեւմտեան տէրութիւնների քաղաքականութիւնը հանգում է նրան, որ թուրք-իրանական երկարատեւ ու հիմնիչ պատերազմների միջոցով նախ թուրքերի ուշադրութիւնը չեղեն եւրոպական գործերից եւ ապա օսմանեան կայսրութիւնը թուլացնեն՝ Ասիայի երկրների ու առաջին հերթին Իրանի ռազմական ուժերի օգնութեամբ:

Այս բոլորը, զուգորդւելով տեղական իրադրութեան հետ, ստիպեցին շահական կառավարութեանը 1639 թ. Զոհաբում օսմանեան Թուրքիայի հետ կնքել խաղաղութեան պայմանագիր, որը կարգաւորում էր հարեւան պետութիւնների միջեւ առկայ մի շարք վիճելի հարցեր, եւ բաւականին տեւական մի ժամանակաշրջան՝ գրեթէ մի ամբողջ դար այն չխախտւեց: Այդ պայմանագիրը Սէֆեան Իրանի արտաքին քաղաքականութեան մէջ մտցնում էր էական փոփոխութիւններ: Նախ միառժամանակ վերանում էր եւրոպական պետութիւնների հետ հակաթուրքական դաշինք կնքելու անհրաժեշտութիւնը, այնուհետեւ պայմանագիրը հնարաւորութիւն

էր տալիս Սէֆեան կառավարութեանը Ռուսաստանի նկատմամբ որդեգրելու կոշտ քաղաքականութիւն՝ որպէս պատասխան Կովկասի նկատմամբ նրա վարած եռանդուն քաղաքական կուրսի: Կարելի է նոյնիսկ անվարան կերպով ասել, որ 1639 թ. պայմանագրի կնքումից յետոյ Իրանը այլեւս չէր թաքցնում իր թշնամական տրամադրութիւնները Ռուսաստանի նկատմամբ: Կովկասում իր տիրապետութիւնը պահպանելու համար Իրանը նոյնիսկ չխորշեց Ռուսաստանի հետ ռազմական ընդհարումից: Իր հերթին Մոսկովեան պետութիւնը եւս արդէն հարկ չէր համարում նոր բանակցութիւն դրսեւորել Սէֆեան կառավարութեան նկատմամբ: Երկուստեք, գիտակցաբար, կողմերը գնում էին առճակատման եւ որպէս դրա հետեւանք միաժամանակ նրանց միջեւ տեղի ունեցաւ առեւտրական-դիւանագիտական յարաբերութիւնների խզում: [231]

Չնայած յարաբերութիւնների այս լարածութեանը, հայ վաճառականները շարունակում էին իրենց առեւտուրը Ռուսաստանի հետ, նախկինի պէս կատարելով ռուս-իրանական առեւտրի միջնորդի դեր: 1647 թ. մարտի 14-ին Ի. Թաւաքալեանը դիմում է Ալէքսէյ Միխայլովիչ ցարին՝ խնդրելով իրեն տրամադրել արտօնագիր Ռուսաստանում ազատ առեւտուր անելու վերաբերեալ: [229, էջ 8-10] Այդ առթիւ Ց. Տէր Յովհաննեսեանը հաղորդում է հետեւեալ տեղեկութիւնը. «Թաւաքալեանք կամ Աւաքալեանք էին յականաւոր տոհմից Ջուղայու, որք գտուրեւառութեանն իւրեանց բազուկ ձգեցին ի Ռուսաստան, եւ յամի 1647 խնդրամատոյց լեալ կայսերն ընկալաւ հրման մուծանելոյ զվաճառս իւր ի Ռուսաստան առանց մաքսից»: [51, էջ 147, 175]

Ընդհուպ մինչեւ XVII դարի 60-ական թուականները ռուս-իրանական յարաբերութիւնները մնում էին լարած վիճակում: Դրանից բխող տնտեսական վնասները աւելի շօշափելի էին ներքին հակասութիւններից ծաւալող եւ անընդհատ ֆէոդալական երկպառակութիւնների մէջ գտնւող Սէֆեան Իրանի համար: Պատահական չէ, որ հէնց վերջինս էլ դրսեւորեց զիջումների գնալու պատրաստակամութիւն եւ առաջինը քայլ կատարեց Ռուսաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման ուղղութեամբ: 1658 թ. Մոսկւա ուղարկուեց մի դեսպանութիւն Դաքուլ Սալթան խանի գլխաւորութեամբ: Բանակցութիւնների ժամանակ պարզուեց, որ եթէ յարաբերութիւնները վերականգնելիս Ռուսաստանը ղեկավարւում է ե՛ւ տնտեսական ե՛ւ քաղաքական շար-

ժառիթներով, ապա Իրանը ձգտում է լոկ ապահովել ակտիւ առեւտրական յարաբերութիւններ, բնաւ մտադրութիւն չունենալով խախտել 1639 թ. հաշտութեան պայմանագիրը Թուրքիայի հետ: Աւելին, իրանական արքունիքում Ռուսաստանին մշտապէս համարում էին պոտենցիալ թշնամի, երբեմն նոյնիսկ աւելի վտանգաւոր, քան արեւմտեան ախոյեանը՝ Թուրքիան, որովհետեւ Ռուսաստանի կովկասեան քաղաքականութեան ուրւականը պարսիկ քաղաքագէտների գիտակցութեան մէջ գծագրւում էր աւելի սպառնալից գոյներով:

Այս շրջանում Ռուսաստանի կովկասեան քաղաքականութեան հետապնդած կարեւորագոյն նպատակներից մէկն է դառնում այդ երկրամասում Թուրքիայի դէմ ռազմական յենակետի ստեղծումը: Ռուսական քաղաքական շրջաններում գտնում էին, որ այդ նպատակին հասնելու համար խիստ կարեւոր է հայկական առեւտրական կապիտալի միջոցով Անդրկովկասը Ռուսաստանին կապելը: [232, էջ 63] Բացի այդ, XVII դարի կէսերին ռուսական կառավարութիւնը որդեգրել էր մերկանտիլիստական ծրագիր, որի բաղկացուցիչ մասն էր հանդիսանում արտաքին առեւտրի ուժեղացումը: Պատահական չէ, որ Ալէքսէյ Միխայլովիչ ցարը իրար հետեւից արեւելեան երկրներ (Իրան, Չինաստան, Հնդկաստան եւ այլն) էր ուղարկում դաղաղան դեսպանութիւններ: [233, էջ 14-15]

Այսպիսով շահ Արբաս II-ը (1642-1666 թ.թ.) փորձում էր Ռուսաստանի հետ յարաբերութիւններում քաղաքականութեան եւ առեւտրի ոլորտները տարարաժնել միմեանցից: Այդ պատճառով նա խուսափում էր Ռուսաստանի հետ յարաբերութիւնների վերականգնումը իրականացնել պաշտօնական խողովակներով դեսպանութիւններ ուղարկելով: Նա որոշեց կիրառել իր պապի՝ շահ Արբաս I-ի եւ հօր՝ Սէֆի I-ի (1629-1642 թ.թ.) կողմից բազմիցս փորձւած եղանակը՝ հայ վաճառականներին որպէս դիւանագիտական յանձնակատարներ ու բանագնացներ օգտագործելու ձեւը: Տւեալ ժամանակաշրջանում դա խիստ արդիւնաւէտ կարող էր լինել մանաւանդ այն պատճառով, որ Նոր Ջուղայի հայ առեւտրական բուրժուազիայի ներկայացուցիչները սեւեռուն հետաքրքրութիւն էին դրսեւորում ռուսական շուկայի եւ Ռուսաստանի վրայով անցնող տարանցիկ ճանապարհների նկատմամբ:

1660 թ. Սպահանից Մոսկւա ժամանեց «Նոր Ջուղայի հայկական առեւտրական ընկերութեան» ներկայացուցիչ խոջա Զաքար

Շահրիմանեանը, որը ջուղահայ խոջայական կապիտալի աչքի ընկնող ներկայացուցիչ Սահրաղ Շահրիմանեանի որդին էր։ Նրան ուղեկցում էին ինը անանի վաճառականներ։ Զաքար Շահրիմանեանը Ալէքսէյ Միխայլովիչ ցարին նուիրեց հայ վարպետների կողմից պատրաստուած նշանաւոր «աղամանդեայ գահը» եւ բազմաթիւ այլ արժէքաւոր նուէրներ, որոնց թուում նաեւ ջուղահայ յայտնի նկարիչ Թանդրիվերանի (հետագայում Մոսկւա տեղափոխուելուց յետոյ ռուսական միջավայրում նա յայտնի էր Իւան կամ Բոգդան Սալթանով անունով) նկարած «Խորհրդաւոր ընթրիք» նկարը։ [234, էջ 286-287] Ի դէպ, ցարին նուէրներ մատուցելը XVI-XVII դարերում հանդիսանում էր առեւտրի իրաւատուն ձեւ։ Սակայն տուեալ դէպքում մատուցելով այդ թանկարժէք նուէրը, ջուղահայ առեւտրական ընկերութեան ներկայացուցիչները ըստ երեւոյթին ցանկանում էին ցուցադրել ընկերութեան մեծ հնարաւորութիւնները։ Մոսկւայում տեղի ունեցան բանակցութիւններ պետական բարձրաստիճան պաշտօնէութեան եւ Զաքար Շահրիմանեանի միջեւ՝ Ռուսաստանում ջուղահայ առեւտրականների գործունէութեան ընդարձակման հարցի շուրջ։ Այդ բանակցութիւնների ժամանակ խոջա Զաքարն աշխատում էր ամէն կերպ ցուցադրել իր համակրանքը ցարի՝ «քրիստոնէական մեծ տիրակալի» նկատմամբ։ Մասնաւորապէս ամէն պատեհ առիթով նա չեշտում էր հետեւեալը. քանի որ «ցարը շահի հետ գտնուում է եղբայրական բարեկամութեան մէջ, իրենք մեծապէս ուրախ են ծառայելու նրան»։ [229, էջ 26] Սակայն դրա հետ մէկտեղ նա քաղաքական ընոյթի յայտարարութիւն է անում այն մասին, որ թէեւ հայկական ընկերութեան վաճառականները շահի հրամանագրով Իրանում առեւտուր են անում «առանց մաքս վճարելու, սակայն շահական գերագանցութեան կրօնը մահմեդական է, իսկ քանի որ իրենք դաւանում են քրիստոնէութիւնը, ուստի ուրախ կլինեն ծառայելու մեծ թագաւորին», այսինքն ցարին։ [229, էջ 26]

Այսպիսով, միանգամայն ակներեւ է, որ Շահրիմանեանը շահի կողմից օժտուած էր որոշակի լիազօրութիւններով եւ Մոսկւայում կատարում էր Իրանի յարաբերութիւնները Ռուսաստանի հետ կարգաւորելու դիւանագիտական յանձնակատարի դեր. այնուհետեւ հայկական առեւտրական ընկերութեան, գուցէ նաեւ Սէֆեան կառավարութեան կողմից նրան յանձնարարած էր չօշափել ռուսական կառավարութեան տրամադրութիւնը առեւտրական պայմանագիր կնքելու վերաբերեալ։ Այս եզրահանգումների կուան

կարող են ծառայել հետեւեալ փաստարկները։

Շահրիմանեանները վերին աստիճանի ազդեցիկ ու հարուստ ընտանիք էին (որոշ աւեալների համաձայն նրանք սերել էին հին նախարարական մի ընտանիքից), [88, էջ 207] որոնք խոշոր առեւտուր ունէին Արեւելքի եւ Արեւմուտքի մի շարք երկրների հետ եւ կենսականորէն շահագրգռած էին ռուս-իրանական առեւտրական յարաբերութիւնների վերականգնման մէջ։ Ռուսաստանի արտաքին գործերով զբաղող հիմնարկութեանը՝ «Պոսոլսկի պրիկազին» ներկայացրած իր բացատրագրի մէջ խոջա Զաքարը յայտնում էր, որ իր հօր՝ Սարհաղ Շահրիմանեանի գործակատարները առեւտրական գործերով մեկնում են բոլոր պետութիւնները։ Նոր Ջուղայում գործող կաթոլիկական քարմելիթեան միաբանութեան անդամներից մէկը այդ ընտանիքի մասին գրում էր. «Շահրիմանեան գերդաստանը հսկայական հարստութիւնների տէր է։ Աշխարհի բոլոր մասերում ցրուած են նրանց առեւտրական գործակալները»։ [52, I, էջ 650] 1646 թ. Հարելով կաթոլիկ եկեղեցուն եւ դառնալով հռոմէադաւան, Շահրիմանեանների գերդաստանը դարձել էր Նոր Ջուղայի հայկական կաթոլիկական համայնքի ղեկավարը։ Այդ էր պատճառը, որ նրանք առանձնակի սերտ առեւտրական յարաբերութիւններ էին պահպանում Եւրոպայի կաթոլիկ պետութիւնների հետ։ Բազմաթիւ փաստեր կան այն մասին, որ Շահրիմանեանները վայելում էին Հռոմի պապի եւ եւրոպական կաթոլիկ միապետների ամենաբարեացակամ վերաբերմունքը։ [88, էջ 307]

Բացառած չէ, որ Զաքար Շահրիմանեանի թեկնածութիւնը որպէս բանագնացի, շահի ներկայացրել էին Սպահանում արեւմտեան պետութիւնների դիւանագիտական ներկայացուցիչները, կամ նրա առաքելութիւնը համաձայնեցուած էր արեւմտաեւրոպական առեւտրական կապիտալի ազդեցիկ շրջանների հետ, որոնք յոյս ունէին անմիջական առեւտրական յարաբերութիւններ հաստատել եթէ ոչ շահական արքունիքի, ապա գէթ միջազգային առեւտրով զբաղող Նոր Ջուղայեցի վաճառականների հետ։

Շահրիմանեանների ընտանիքը սերտ յարաբերութիւնների մէջ էր նաեւ շահական արքունիքի հետ։ «Պոսոլսկի պրիկազի» փաստաթղթերում նշւում էր, որ խոջա Զաքարը հանդիսանում է «շահի մերձաւոր մարդը» եւ Իսթոմօ Դելլեթի (շահի առաջին նախարար Վ.Բ.) «գործակատարը»։ [229, էջ 23-24]

Այս բոլորը հիմք է տալիս ենթադրելու, որ Մոսկւայում Զաքար Շահրիմանեանը առեւտրական նպատակներից բացի հետա-

մուտ էր նաեւ քաղաքական որոշակի ծրագրերի, մասնաւորապէս Իրանական կառավարութեան ու Իրանում գործող կաթոլիկ միսիոներների յանձնարարութեամբ նա աշխատում էր չշափել ռուսական կառավարութեան տրամադրութիւնը Թուրքիայի դէմ Իրանա-Եւրոպական ռազմական դաշինք կնքելու վերաբերեալ:

Աշոտ Յովհաննիսեանը նշում է, որ հառաջմ չկայ որեւէ դրական փաստ, որ ցոյց տար, թէ Իրանի կամ կաթոլիկների կողմից իրեն տրուած յանձնարարութիւնները կատարելիս խոջա Զաքարը, թիկունք դարձնելով Արեւմտեան Եւրոպային, քաղաքականապէս դիմաշրջուում էր դէպի Մոսկովեան պետութիւնը, բացառապէս նրա մէջ տեսնելով հայերի կամ գէթ խոջայական դասի ազգային քաղաքական ակնկալութիւնների ապաւէնը: [17, էջ 181] Կարելի է ենթադրել սակայն, որ Նոր Ջուղայի հայ կաթոլիկական համայնքի ներկայացուցիչները եւս եթէ ամբողջապէս չէին դիմաշրջուում դէպի Ռուսաստան, համենայնդէպս սկսել էին հայ ժողովրդի քաղաքական բաղձանքներն իրականացնելու ճանապարհին Արեւմուտքի կաթոլիկ պետութիւններին ապաւինելու ուղուց բացի որոնել նաեւ այլ ուղիներ:

Ռուս-իրանական առեւտրա-տնտեսական ու քաղաքական յարաբերութիւններ հաստատելու այս փորձը եւս չտեւեց ցանկալի արդիւնքներ, թէեւ Իրանից, Հնդկաստանից եւ արեւելքի այլ երկրներից այցելութիւնները Ռուսաստան աւելի յաճախակի դարձան: Այդ մասին են վկայում ռուսական մաքսային ծառայութիւնների մատեանները, որտեղ հայ վաճառականների այցելութիւնների մասին Ռուսաստան կան բազմաթիւ գրանցումներ: Այսպէս, 1662-1663 թ.թ. գրանցումներում նշւում է, որ հայ խոշոր վաճառականներ Միխիտա Պետրովը, Գրիգոր Սաւելեւը եւ Ստեփան Զեխատունովը Հնդկաստանից ցարի համար բերել են զանազան ապրանքներ, այդ թւում նաեւ ոսկէ գաւազան եւ ադամանդակուռ մի թագ, որի վրայ ամրացւած էր ռուսական պետական գերբը՝ երկգլխանի արծիւը:

XVII դարի 40-ական թւականներից սկսւել էր Թուրք-վենետիկեան կամ Կանդիայի պատերազմը, որն առանձնակի մեծ թափ ընդունեց 1665 թւականից յետոյ: Պատերազմը խիստ դժւարացրեց իրանական հում մետաքսի արտահանումը դէպի Լեւանտեան առեւտրական կենտրոնները: Շահական գանձարանը կրում էր մեծամեծ վնասներ: Այս պարագաներում դրութեան ելքը կարող էր լինել ռուսական տարանցիկ ճանապարհից օգտւելը:

Շահական կառավարութեան այս նպատակադրումը միանգամայն համապատասխանում էր միջազգային առեւտրով զբաղող հայ վաճառականութեան շահերին: Ուստի Սպահանում, շահական արքունիքում, որոշուեց դարձեալ Մոսկւա ուղարկել Նոր Ջուղայի «Հայկական առեւտրական ընկերութեան» ներկայացուցիչներին:

1666 թ. Փետրուարին Մոսկւա են ժամանում Ստեփան Ռամադամսկին (Ստեփան Մովսիսեան Ռամադով) եւ Գրիգոր Լուսիկովը (Գրիգոր Մատթէոսեան Կուսիկեան կամ Լուսիկենց), որոնց ուղեկցում էին 40 հայ վաճառականներ եւ արհեստաւորներ: Նրանց յանձնարարուած էր բանակցութիւններ վարել ռուսական կառավարութեան հետ նրանից ստանալու համար համապատասխան իրաւունք իրանական հում մետաքսը եւ այլ ապրանքներ Ռուսաստան ներմուծելու համար: Ալէքսէյ Միխայլովիչ ցարի անունով գրած խնդրագրում Գր. Լուսիկենցը հանգամանօրէն շարադրում էր այն դրդապատճառները, որոնք ստիպել են հայ վաճառականներին «թախանձել ցարի բարեացակամութիւնը»: Նախ նշւում էր, որ «Նոր Ջուղայի հայկական առեւտրական ընկերութիւնը», որին շահը շնորհել է իրանական հում մետաքսը արտահանելու մենաշնորհային իրաւունք, տարիներ շարունակ մետաքսը արտահանում էր Թուրքական պետութեան վրայով, որը դրա համար գանձում էր բարձր մաքսատուրքեր: Բացի այդ, Լուսիկենցը շեշտում էր, որ հում մետաքսը եւ այլ ապրանքներ Թուրքիա արտահանելիս իրենք մեծ վնասներ են կրում աւազակներից եւ Թուրքական սուլթանին «դաւաճանած անձանցից», որոնք կողոպտում են հայ վաճառականներին: Իսկ երբ Թուրքական հողերից նաւերով մեկնում են Եւրոպա, իրենց վրայ յարձակումներ են գործում ծովահեները, որոնք նոյնպէս կողոպտում են իրենց: Այդ բոլորին նա աւելացնում էր, որ ռուսական կառավարութիւնից համապատասխան թոյլտուութիւն եւ արտօնութիւններ ստանալու դէպքում իրենց ընկերութիւնը պատրաստ է իրանական մետաքսի ամբողջ արտահանութիւնն ուղղել դէպի Կասպ-Վոլգեան ճանապարհը, դէպի Ռուսաստան: Լուսիկենցը հաւաստիացնում էր, որ իր կարծիքով դրանով ռուսական պետութիւնը կստանայ մաքսային եկամտի չտեսնուած մեծ աղբիւրներ: Այնուհետեւ նամակում ակնարկւում էր առեւտրական պայմանագրի ստորագրման նպատակայարմարութեան մասին, որը հնարաւորութիւն կտար կազմակերպել հում մետաքսի եւ այլ ապրանքների կանոնաւոր արտահանումը

Ռուսաստան, եւ Նովգորոդի, Արխանգելսկի կամ Սմոլենսկի վրայով նաեւ եւրոպական երկրներ: Վ. Ոսկանեանը իրաւացիօրէն նշում է, որ Նոր Ջուղայի «Հայկական առեւտրական ընկերութիւնը» խաղում էր առաւել շահագրգռած միջնորդի դեր իրանա-ռուսական յարաբերութիւնները կարգաւորելու գործում, որ հայկական ընկերութիւնը եւ նրա առեւտուրը հանդիսանում էին կապող օղակ Ռուսաստանի եւ Իրանի միջեւ: [235, էջ 102-104]

«Պոսոլսկի պրիկազի» փաստաթղթերից ակնառու կերպով երեւում է, որ այս անգամ եւս Նոր Ջուղայի առեւտրական ընկերութեան ներկայացուցիչներն ունէին նաեւ դիւանագիտական բնոյթի յանձնարարութիւններ: Մասնաւորապէս, որպէս Սէֆեան պետութեան բանագնաց, Գր. Լուսիկենցը ձգտում էր Թուրքիայի դէմ ստեղծել երեք պետութիւնների՝ Ռուսաստանի, Իրանի եւ Լեհաստանի ռազմա-քաղաքական դաշինք: Կարեւոր է նշել, որ Գր. Լուսիկենցը եւ նրա գործընկերները տեսել հարցի ուղղութեամբ աշխատելիս, հանդէս չեն գալիս լոկ որպէս շահական կառավարութեան տուած յանձնարարութիւնների պարզ իրագործողներ: Ստանձնելով միջնորդի եւ դիւանագիտական յանձնակատարի դեր, հայ առեւտրական կապիտալի ներկայացուցիչներն առաջնորդւում էին ոչ միայն իրենց առեւտրատնտեսական շահերով, այլեւ հետապնդում էին նաեւ քաղաքական շահեր, մասնաւորապէս օսմանեան լծից Հայաստանի ազատագրման նպատակներ: Առհասարակ պէտք է նշել, որ այս շրջանում աճում էր հայ առեւտրականների քաղաքական տրամադրութիւնն ընդդէմ Թուրքիայի եւ թեքւում վերջինիս դէմ պայքարող եւրոպական պետութիւնների եւ, առաջին հերթին Ռուսաստանի կողմը: Առանձին փաստեր վկայում են նաեւ այն մասին, որ XVII դարի հայ իրականութեան մէջ իրանա-եւրոպական, մասնաւորապէս իրանա-ռուսական հակաթուրքական դաշինքի կնքումը դիտւում էր որպէս մի քայլ, որը կարող էր նպաստել օսմանեան լծից հայ ժողովրդի ազատագրմանը:

Յատկանշական է, որ ռուսական կառավարութիւնն իր հերթին հանոյքով ընդառաջ էր գնում հայ վաճառականութեան քաղաքական ձգտումներին: Դա յատկապէս վերաբերում է «Պոսոլսկի պրիկազի» ղեկավար Աֆանասի Օրդին-Նաշչոկինին: Վերջինս քաջ գիտակցում էր, որ հայ վաճառականները, ի տարբերութիւն արեւելեան երկրների հետ առեւտրի մենաշնորհ ձեռք բերած եւրոպական առեւտրական կամպանիաների, չեզոք քա-

դաքական ուժ լինելով, որեւէ կերպ չեն կարող խոչընդոտել Ռուսաստանի տնտեսական զարգացմանը եւ Ռուսաստանի վրայով դէպի արեւելեան երկրներ անցնելու իրաւունքն օգտագործել քաղաքական-գաղութատիրական ինչ-որ ծրագրերի իրականացման նպատակով: Ընդհակառակը, լինելով ճնշուած ու հարստահարուած քրիստոնեայ մի ժողովրդի ներկայացուցիչներ, հայերն իրենք են օգնութեան կարօտ եւ կարող են ռուսական պետութեան համար հաւատարիմ դաշնակից լինել»: [236, էջ 268]

Վերոյիշեալ բանակցութիւնների հետեւանքով Ալէքսէյ Միխայլովիչ ցարի կողմից 1667 թ. մայիսի 31-ին Նոր Զուղայի «Հայկական առեւտրական ընկերութեանը» տրւեց մի շնորհագիր, որը փաստօրէն ձեռք բերեց առեւտրական պայմանագրի նշանակութիւն: Այդ շնորհագիրը իր նշանակութեամբ նաեւ հաւասարազօր էր Ռուսաստանի եւ Իրանի միջեւ առեւտրական պայմանագրի: [237, էջ 134] Նրանով հայ վաճառականները պարտաւորւում էին իրանական ողջ հում մետաքսը արտահանել Ռուսաստան եւ նրա վրայով արեւմտաեւրոպական երկրներ: Նրանք ստանում էին ռուսական սահմանամերձ քաղաքներում օտարերկրեայ վաճառականների հետ ազատ առեւտրի իրաւունք 5 տոկոսի մաքս վճարելու պայմանով: Սահմանամերձ քաղաքներում իրենց ապրանքները չվաճառելու դէպքում հայկական ընկերութեանը իրաւունք էր վերապահւում դրանք արտահանելու արտասահման՝ վճարելով դարձեալ 5 տոկոսի չափով մաքսատուրք: Պայմանագրի էական նշանակութիւն ունեցող կէտերից մէկն այն էր, որ հայ վաճառականները պարտաւորւում էին արտասահմանից վերադառնալ միայն Ռուսաստանի վրայով, ընդորում այնտեղից բերած ապրանքների համար մուծելով 7 տոկոսի մաքս, որը ցարական գանձարանին կրերէր պատկառելի հասոյթներ:

Ռուսական կառավարութիւնը տալիս էր հայ վաճառականների ապահովութեան երաշխիքներ, խոստանալով ընդհուպ մինչեւ փոխհատուցել նրանց վնասները: Նրանք ստանում էին նաեւ Ռուսաստանում ազատ տեղաշարժւելու եւ մուտքի ու ելքի իրաւունք: [229, էջ 44-46]

Այս բոլորի փոխարէն հայ վաճառականները պարտաւորւում էին հրաժարւել Թուրքիայի տարանցիկ ճանապարհներից եւ իրենց ողջ առեւտուրը տեղափոխել Կասպ-Վոլգեան ուղին: Պայմանագրում նոյնիսկ յատուկ կէտ էր պարունակւում այն մասին, որ հայ վաճառականները չպէտք է հում մետաքս վաճառեն այդ նպատակով

Իրան ժամանած օտարերկրեայ վաճառականներին, թերեւս բացառութեամբ միայն նրանցից, ովքեր այդ առթիւ ունեն չահի յատուկ հրամանագիրը: [237, էջ 38-39]

1667 թ. պայմանագիրը դարձաւ մոսկովեան պետութեան հետ հայերի ծաւալած առեւտրատնտեսական ու քաղաքական յարաբերութիւնների հիմքը: Ռուսաստանի հետ հայ վաճառականների պատահական կապերը փոխարինեցին առեւտրական ամուր, տեւական ու ծաւալուն յարաբերութիւններով:

Այն հանգամանքը, որ պայմանագիրը կնքւած էր «Հայկական առեւտրական ընկերութեան» ներկայացուցիչների առաջարկութիւններին համապատասխան վկայում է այն մասին, որ ռուսական կառավարութիւնը նոյնպէս շահագրգռւած էր այդ պայմանագրի կնքման մէջ: Մոսկվայում ենթադրում էին, որ ռուս վաճառականները գանձարանի համար չեն կարող ապահովել այնպիսի եկամուտներ, որ ի վիճակի էին բերել հայ վաճառականները: Այդ պատճառով խախտելով մերկանտիլիզմի եւ սեփական առեւտրական դասի հովանաւորութեան քաղաքականութիւնը, ռուսական կառավարութիւնը երկրի արեւելեան առեւտրի նշանակալից մասը յանձնարարեց հայ վաճառականներին: [220, էջ 56] Գանձարանը յատկապէս յոյս ունէր հայերի միջոցով արեւմուտքի երկրներից ձեռք բերել խոշոր դրամական միջոցներ: [238, էջ 25]

Թէեւ 1667 թ. պայմանագիրը զուտ առեւտրական բնոյթի էր եւ չէր պարունակում քաղաքական յօդւածներ, սակայն անժխտելի է նրա քաղաքական նշանակութիւնը ինչպէս ռուսական կառավարութեան, այնպէս էլ հայ վաճառականների համար: Ռուս հետազօտող Ե. Ս. Զեւակինը նոյնիսկ հակւած է այն տեսակէտին, որ հայ վաճառականների հետ 1667 թ. առեւտրական պայմանագրի կնքումը ոչ միայն մոսկովեան պետութեան տնտեսական շահագրգռութիւնների հետեւանք էր, այլեւ հիմնականում ունէր խնդրութիւնների դրդապատճառներ: Նրա կարծիքով սուլթանի դէմ քաղաքական դրդապատճառներ: Նրա կարծիքով սուլթանի դէմ պայքարում Մոսկւան յոյս ունէր շահից օգնութիւն ստանալ եւ հաւատացած էր, որ հայ վաճառականներին տրամադրւած արտօնութիւնները կարող էին նպաստել այդ խնդրի իրականացմանը: [239, էջ 158]

Ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսեանի կարծիքով 1667 թ. պայմանագրի ստորագրումով Ռուսաստանը ոչ միայն խորացնում էր Իրանի եւ Թուրքիայի միջեւ տնտեսական ու քաղաքական խզւածութիւնը, այլեւ սեպ էր խրում Իրանի հայ վաճառականների

եւ արեւմտաեւրոպական տէրութիւնների միջեւ: [17, էջ 453]

Նշած իրողութիւնները գաղտնիք չէին նոյնիսկ օտարերկրեայ դիտողների համար: Այսպէս, աւստրիական դեսպան Ռինգուբերը նշում էր, որ մոսկովիտները մեծ բարեկամութիւն ունեն պարսիկների հետ մասամբ հիանալի պարսկական ապրանքների համար, մասամբ ի հեճուկս Թուրքիայի, որին պարսիկները համարում են իրենց մեծ թշնամին»:

Անհրաժեշտ է նկատի ունենալ այն կարեւոր հանգամանքը, որ XVII դարի 60-ական թւականներին ստեղծուած միջազգային իրադրութեան պայմաններում Ռուսաստանի համար Իրանը չէր կարող մնալ լոկ որպէս տնտեսական հետաքրքրութեան առարկայ: Ցիշենք, որ 1667 թ. Ցունւարի 30-ին Անդրուսովո գիւղում խաղաղութեան պայմանագիր էր ստորագրել Լեհաստանի հետ, ըստ որի Ռուսաստանը պարտաւորւում էր լինել նրա հաւատարիմ դաշնակիցը: Այդ պայմանագիրը նշանակալիօրէն արձակեց Ռուսաստանի ձեռքերը Թուրքիայի եւ Ղրիմի խանութեան դէմ պայքարում: Անտարակոյս այդ պայքարը աւելի արդիւնաւէտ կդառնար, եթէ նրան միանար նաեւ Իրանը:

Այն հանգամանքը, որ 1667 թ. պայմանագիրը Ռուսաստանի կողմից դիտւում էր որպէս քաղաքական նշանակութիւն ունեցող ակտ, հաստատւում է նաեւ հետեւեալ փաստարկումներով. նախ Մոսկւան անհրաժեշտ համարեց այդ պայմանագրի ստորագրման մասին տեղեակ պահել Լեհաստանի կառավարութեանը, որի հետ այդ ժամանակ վարում էր բանակցութիւններ դաշնակցային պայմանագիր կնքելու վերաբերեալ: 1667 թ. դեկտեմբերի 14-ին Մոսկւայում կողմերի միջեւ ստորագրւեց նման պայմանագիր, որով նրանք պարտաւորւում էին այսուհետեւ Օսմանեան կայսրութեան ագրեսիւ գործողութիւնների դէմ հանդէս գալ համատեղ կերպով: Այնուհետեւ հայ առեւտրական ընկերութեան հետ կնքւած պայմանագիրը Մոսկւայում դիտւում էր որպէս կարեւոր քայլ ռուս-իրանական յարաբերութիւնները կարգաւորելու բնագաւառում: Ցանուն այդ գլխաւոր նպատակի ռուսական կառավարութիւնը նոյնիսկ գնում էր լուրջ զիջումների: Այսպէս, ռուս-իրանական յարաբերութիւնները ծայր աստիճանի լարւած էին յատկապէս վրացական գործերի պատճառով: XVII դարի 40-ական թւականներին մոսկովեան պետութիւնը իր հովանաւորութեան տակ էր վերցրել Կախեթը, իսկ աւելի ուշ՝ 50-ական թւականներին նաեւ Իմերեթեան թագաւորութիւնը: Վրաց ազնւականութեան ռուսասէր

հատածը ջանք չէր խնայում Վրաստանի տարբեր շրջանների հետ ռուսական պետութեան կապերն ամրապնդելու համար: Այս պարագաներում մոսկովեան կառավարութիւնը սկսեց հասկացնել Սէֆեան արքունիքին, որ Վրաստանում Ռուսաստանի ունեցած ազդեցութիւնը անառարկելի փաստ է, սակայն Մոսկան պատրաստ է վրացական գործերի վերաբերեալ բանակցութիւններ սկսել Սպահանի հետ:

Վերջապէս 1667 թ. պայմանագրի քաղաքական նշանակութիւնը Ռուսաստանի համար կարող էր հանդիսանալ այն, որ ստեղծուում էր Անդրկովկասում, Իրանում եւ Արեւմտեան Եւրոպայում ռազմաքաղաքական իրադրութիւնը ուսումնասիրելու հնարաւորութիւններ: Պատահական չէ, որ Ստամբուլում բնակւող հայ վաճառականներին ուղղած Գր. Լուսիկենցի նամակում Նոր Ջուղայի «Հայ առեւտրական ընկերութեան» անունից յանձնարարւում էր մոսկովեան ցարի օգտին տեղեկութիւններ հաւաքել միջազգային իրադրութեան մասին:

Բացի 1667 թ. պայմանագրի ընձեռած հնարաւորութիւններից, մոսկովեան կառավարութիւնը օգտագործում էր նաեւ լծակներ ռուս-իրանական առեւտրական-քաղաքական յարաբերութիւնները բնականոն հունի մէջ դնելու համար, մասնաւորապէս օգտագործելով շահական արքունիքի հետ անմիջական դիւանագիտական կապեր հաստատելու ուղին: Այսպէս, 1667 թ. Մոսկւայից Իրան ուղարկւեց դիւանագիտական սուրհանդակ Կլիմենտի Իեւլեւը, որին յանձնարարւած էր շահին յանձնել Մոսկւայում «Հայ առեւտրական ընկերութեան» հետ ստորագրած պայմանագիրը: Սակայն Ստեփան Ռազինի գլխաւորութեամբ սկսւած գիւղացիական պատերազմը խանգարեց Իեւլեւին հասնելու Իրան եւ նոյն թւականին նա ստիպւած էր վերադառնալ Մոսկւա: Այնուհետեւ 1668 թ. շահ Սուլէյմանի (1666-1694 թ.թ.) մօտ ուղարկւեց «Հայկական առեւտրական ընկերութեան» Մոսկւայի ներկայացուցիչ անգլիացի Թոմաս Բրէյնը: Նա Ջուղայի առեւտրական ընկերութիւնից ունէր «գլխակատար գիր վեքիլութեան, որպէս զի չարունակեսցէ նա զառեւտուրս իւր ընդ անուամբ ընկերութեանն հայոց»... Նրան եւս յանձնարարւած էր շահին յանձնել 1667 թ. պայմանագրի պատճէնը: Բացի այդ, ցարը շահին տեղեկացնում էր Լեհեստանի հետ կնքւած դաշնակցային պայմանագրի մասին եւ կոչ էր անում նրան միանալ հակաթուրքական դաշնակցութեանը: Սակայն մինչեւ մայրաքաղաք Սպահան հասնելը Թոմաս Բրէյնը եւ նրան ուղեկցող անգլիացիները

հիւանդացան եւ մահացան: Կենդանի մնաց միայն ոմն Նաում Կոլեսնիկով, որին յաջողուեց շահին յանձնել ցարի նամակները: Առանց յապաղելու, շահական արքունիքը Կոլեսնիկովին եւ ուղարկեց Մոսկւա, նրան տալով նաեւ ցարին ուղղուած շահ Սուլէյմանի ուղերձը: Այս հաղորդագրութիւնը անուշադիր վկայում էր այն մասին, որ Սէֆեան կառավարութիւնը խիստ շահագրգռուած էր Ռուսաստանի հետ ունենալու առեւտրա-տնտեսական սերտ յարաբերութիւններ: Միաժամանակ շահական կառավարութիւնը ուշադիր հետեւում էր Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան կուրսին, նպատակ ունենալով յարմար իրադրութիւն ստեղծելու դէպքում քաղաքական բանակցութիւնների մէջ մտնել նրա հետ:

Այդ առթիւ Գր. Լուսիկենցը հաղորդում է ուշագրաւ տեղեկութիւններ. դեռեւս մինչեւ Մոսկւա ժամանելը շահը իրեն անընդհատ հարցափորձ էր անում, թէ արդեօք ցարը գերմանական (իմա՝ արեւմտաեւրոպական) տիրակալների ու լեհական թագաւորի հետ խաղաղութեան մէջ է թէ ոչ: [229, էջ 70-71] Իր հերթին «Իսթոմօ դեւլեթը» Գր. Լուսիկենցին նեկայացնում է շահին, որը հրամայում է նրան Մոսկւայում տեղեկացնել ցարին, որ իր նախնիները ռուսական թագաւորների հետ եղել են ամուր բարեկամութեան մէջ, իսկ ինքը՝ շահ Սուլէյմանը, ցանկանում է առաւել քան իր նախնիները, ամուր բարեկամութիւն ունենալ ցարական գերազանցութեան հետ»: [229, էջ 77]

Այսպիսով, ելնելով Իրանի ներքին ու արտաքին քաղաքական ու տնտեսական ծանր իրավիճակից, շահական կառավարութիւնը որոշում է ընդհանուր գնալ ռուսական կողմի առաջարկութեանը բանակցութիւնների նոր փուլ սկսելու վերաբերեալ: Սակայն այս էտապում եւս նախկինի պէս շահական կառավարութիւնը հեռու էր ռուս-իրանական հակաօսմանեան դաշինք կնքելու մտադրութիւնից եւ փորձում էր բանակցութիւնները սահմանափակել լոկ առեւտրատնտեսական հարցերի շուրջը:

1668 թ. Իրան է ժամանում լեհական Եան Կազիմիր թագաւորի դեսպան հայազգի Բոգդան Գուրդին:

Գուրդիի մասին կենսագրական տեղեկները վերին աստիճանի աղքատիկ են: Ցայտնի է միայն, որ նա XVII դարի 50-ական թուականներին յայտնւել է Լեհաստանում, որտեղ ծառայութեան է անցել թագաւորական բանակում: 1662 թ. ստանում է ռոտմիստրի կոչում: Ըստ երեւոյթին նա արագ աչքի է ընկնում իր ռազմական ծառայութիւններով, որի համար արդէն 1662 թ. սէյմում բանակի

պատգամաւորները պահանջում են նրան չնորհել չլեախթայական տիտղոս: Սակայն ինչ-ինչ պատճառներով այդ բանը տեղի չի ունենում: 1668-1675 թ. Բոգդան Գուրդին որպէս Եան Կազիմիր թագաւորի դեսպան գտնւում էր շահ Սուլէյմանի արքունիքում: Վերադառնալով Լեհաստան, նա սիրալիր ընդունելութիւն է գտնում նոր թագաւոր Եան III Սոբեսկու կողմից: 1676 թ. Ռեչ Պոսպոլիտայի առջեւ իր ունեցած ծառայութիւնների համար սէյմը Բոգդան Գուրդին չնորհում է չլեախթայական տիտղոս: 1676 թ. Եան III Սոբեսկին Բոգդան Գուրդին ուղարկում է Իրան որպէս շահի պալատում դեսպանորդ եւ մշտական ռեզիդենտ: Այդ պաշտօնը վարելիս նա 23 տարի շարունակ ապրում է Իրանում եւ միայն 1699 թ. շահ Սուլթան Հուսէյնի յատուկ յանձնարարութեամբ մեկնում Լեհաստան: Այդ ուղեւորութեան ժամանակ Մոսկւայում մեկնում է եւ 1700 թ. յունւարի 12-ին կնքում իր մահկանացուն:

Պէտք է նշել, որ Լեհաստանի այն ժամանակւայ անմիջական հարեւանութիւնը թաթարական տիրապետութիւնների եւ Թուրքիայի հետ, ինչպէս նաեւ Իրանը Թուրքիայի դէմ դաշինքի ներքաշելու մտադրութիւնը սուր անհրաժեշտութիւն էին առաջացրել ունենալ համապատասխան լեզուներ տիրապետող եւ ընդհանրապէս Արեւելքին քաջածանօթ դիւանագէտներ: Այդ պայմաններին ամենից աւելի բաւարարում էին լեհահայ աւագանու եւ վաճառականութեան ներկայացուցիչները, որոնք եւ դարձան «լեհական նուիրեան ներկայացուցիչները Արեւելքում» դիւանագիտութեան պիոներները Արեւելքում»:

Լեհահայերը պատրաստակամութեամբ էին դիւանագիտական առաքելութիւններ յանձն առնում Արեւելքում, մանաւանդ որ նրանց հարազատ երկրում Հայաստանում արդէն XVI դարի երկրորդ կէսից սկսած քաղաքական գիտակցութիւնը զգալի զարթօնք էր ապրում:

Միւս կողմից լեհական թագաւորների քաղաքականութիւնը, որը աչքի էր ընկնում բարեհաճ վերաբերմունքով հայոց ազգային խնդրի նկատմամբ, մեծապէս ոգեւորում էր լեհահայ դիւանագէտներին: Ցայտնի է օրինակ, որ վարչապետ Զամոյսկին 1590 թ. հայկական հարցի առթիւ յատուկ ելոյթ ունեցաւ սէյմում: Իսկ Եան Սոբեսկի թագաւորին վերագրւում է «Հայաստանը սթափեցնելու մտադրութիւններ»:

Գուրդիի դեսպանութեան պաշտօնական պարտականութիւնն էր շահական արքունիքին յայտնել Լեհաստանի եւ Ռուսաստանի

մինչեւ «դաշնակցային» պայմանագրի կնքման մասին: Սակայն դեսպանութեանը տուած էր նաեւ գաղտնի յանձնարարութիւն. նախ գլուխ բերել Իրանի ընդգրկումը հակաօսմանեան ռազմական դաշինքի մէջ եւ ապա նպաստել շահական արքունիքի կողմից «Հայ առեւտրական ընկերութեան» հետ Ռուսաստանի կնքած պայմանագրի հաստատմանը, այն պարտադիր պայմանով, որ իրանական արտահանութեան մի մասը արտածւի Լեհաստան: [240, էջ 13]

Փաստերը վկայում են, որ Գր. Լուսիկենցը եւ Բոգդան Գուրդին գործում էին փոխադարձ համաձայնութեամբ, մէկ ընդհանուր գործի համար: Այսպէս, շահական արքունիքում Բ. Գուրդին եռանդուն կերպով պաշտպանում էր «Հայ առեւտրական ընկերութեան» շահերը, պահանջելով, որ իրանական ապրանքները Լեհաստան արտահանւեն ոչ թէ պարսիկ վաճառականների, այլ բացառապէս հայ վաճառականների կողմից: [241, էջ 321] Բացի այդ, նրանք համատեղ ջանքեր էին գործադրում նաեւ Թուրքիայի դէմ Ռուսաստանի, Իրանի եւ Լեհաստանի ռազմական դաշինք կազմակերպելու ուղղութեամբ: Իր նպատակին հասնելու համար լեհական դեսպանը Սպահանում ահաբեկում էր շահին, որ իր տեղեկութիւնների համաձայն Թուրքերը շուտով ռազմական գործողութիւններ են սկսելու Իրանի դէմ: Ահաբեկւած շահն անմիջապէս պալատ է կանչում Գր. Լուսիկենցին եւ հարցնում նրան, թէ արդեօք ճի՞շտ է, որ ռուսական ցարը հաշտութիւն է կնքել լեհերի հետ եւ ի վիճակի է արդեօք նա դիմակայելու Թուրքերին: [229, էջ 77] Այս հարցմանը Լուսիկենցը անվարան պատասխանում է, որ եթէ Ռուսաստանը Լեհաստանի հետ համատեղ հանդէս գայ Թուրքերի դէմ, վերջիններս կնախընթացեն: [229, էջ 78]

Ըստ երեւոյթին Բոգդան Գուրդիի ժամանումը Իրան եւ միջազգային իրադրութեան մէջ կատարւած կտրուկ շրջադարձերը ստիպեցին շահին մի նոր դեսպանութիւն ուղարկել Մոսկւա: Այս անգամ եւս այդ առաքելութիւնը գլուխ բերելու համար առաջ քաշւեց Գր. Լուսիկենցի թեկնածութիւնը: Վերջինս երկրորդ անգամ Մոսկւա ուղեւորւեց 1671 թ.: Նրան ուղեկցում էին 22 մարդ: [242, թ. 87] Նա պէտք է շահի անունից բանակցութիւններ վարեր մի քանի հարցերի շուրջ. պահանջէր փոխհատուցում Մտեփան Ռազինի ապստամբութեան հետեւանքով իրանական վաճառականներին հասցւած վնասների դիմաց, բանակցէր վրացական գործերի հետ կապւած հարցերի շուրջ, ռուսական կառավարութեան հետ վերջնականապէս համաձայնութեան գար նոր առեւտրական պայ-

մանագիր կնքելու վերաբերեալ: Շահ Սուլէյմանը իր դեսպանորդին՝ Գր. Լուսիկենցին տուեց Ալէքսէյ Միխայլովիչ ցարին հասցէագրած մի նամակ, որտեղ նշւում էր, որ ինքը համաձայն է Նոր Զուղայի «Հայկական առեւտրական ընկերութեան» հետ կնքւած պայմանագրի պայմաններին: [229, էջ 89-90] Այդ նամակից պարզորոշ կերպով երեւում է, որ շահը իրանահայերի առեւտուրը Ռուսաստանի հետ դիտում էր որպէս Իրանի եւ Ռուսաստանի միջեւ քաղաքական մեծ կարեւորութիւն ունեցող գործ:

Գր. Լուսիկենցը իր հետ Մոսկւա էր տանում նաեւ Ալէքսէյ Միխայլովիչին ուղղւած Գանձասարի կաթողիկոս Պետրոսի նամակը, որտեղ նա խնդրում էր հովանաւորել Նոր Զուղայի հայ վաճառականներին եւ համայն հայ ժողովրդին: [229, էջ 91-92]

Դեռեւս 1671 թ. յուլիսին գտնւելով Դերբենտում, Լուսիկենցը յայտնում էր մոսկովեան կառավարութեանը, որ վրացական թագաժառանգի հարցի կապակցութեամբ ինքն ամէն ինչ արել է այնպէս, ինչպէս ցանկալի է ռուսական արքունիքին եւ խնդրում էր Խասբուլատ Չերկասկու միջնորդութիւնը Օրդին-Նաչոկինի առջեւ, որպէսզի նա ոչինչ չձեռնարկի վրացական թագաժառանգի հարցում մինչեւ իր Մոսկւա ժամանելը:

Մոսկւայում բանակցութիւններ վարելիս Գր. Լուսիկենցը հանդէս էր գալիս ինչպէս շահի դեսպանորդի, այնպէս էլ իրանահայ վաճառականների, մասնաւորապէս «Նոր Զուղայի հայ առեւտրական ընկերութեան» ներկայացուցիչ: Բանակցութիւնների հէնց սկզբում նա հանդիպեց մի շարք դժւարութիւնների. նախ պարզւեց, որ մինչեւ իր Մոսկւա հասնելը տեղի է ունեցել մի միջադէպ, որը սրել է ռուս-իրանական յարաբերութիւնները: Մոսկւա մեկնելու ճանապարհին Ստեփան Ռազինի մարդիկ բռնագրաւել են իրանական դեսպան Իւսուֆ Զուհան բէգի անձնական գոյքը եւ շահի նամակները: [229, էջ 158-159] Մոսկւայում բանակցութիւնների ժամանակ շահական դեսպանը բռնելով կոպիտ դիրք, ռուսական կառավարութեան առջեւ դրեց այնպիսի պայմաններ, որոնք ընդունելի չէին նրա համար:

Գր. Լուսիկենցից մեծ ջանքեր պահանջւեցին թուլացնելու ռուս-իրանական յարաբերութիւններում ստեղծւած լարւածութիւնը եւ համոզելու ցարին, որպէսզի նա չսրի յարաբերութիւնները իրանական դեսպանի հետ: Այնուհետեւ Ալէքսէյ Միխայլովիչը կտրականապէս հրաժարւեց բաւարարելու իրանական դեսպանի պահանջը 40 հազար թուման գումարով փոխհատուցում վճարելու

այն մնասների դիմաց, որ իրանական վաճառականներին հասցրել էին ապստամբած կազակները: [243, թ. 163] Աւելին, Մոսկվայի կառավարութիւնը իր հերթին շահական դեսպանի միջոցով Սէֆեան կառավարութեանը ներկայացրեց իր պահանջները. նա դժգոհութիւն էր յայտնում, որ շահը չի ձերբակալել իրեն այցելած Ստեփան Ռազինի ներկայացուցիչներին եւ նրանց շղթայակապ չի ուղարկել Մոսկվա:

Ի վերջոյ Պոսոլսկի պրիկազում Իսուֆ Զուհան բէգին յայտարարեցին, որ մինչեւ շահ Սուլէյմանի կողմից յաջորդ դեսպանի ժամանումը Մոսկվա, իրենք այլեւս դեսպանութիւն չեն ուղարկի Իրան: [244, թ. 22-23] Զայրացած շահական դեսպանը հրաժարւելով ցարական նէրներից, թոյլատրութիւն է խնդրում վերադառնալու հայրենիք: [244, էջ 22-23]

Միջազգային յարաբերութիւններում ստեղծւած իրավիճակը, մասնաւորապէս լեհ-թուրքական յարաբերութիւնների վատթարացումը, ստիպեցին մոսկովեան կառավարութեանը զիջումների գնալ: Բնաւ ժամանակը չէր շահի հետ առճակատման մէջ մտնելու համար: Դժգոհ լինելով անդրուսովեան հաշտութիւնից, սուլթանը իր կողմն էր հակել Աջափնեայ Ուկրաինայի հետման Պյոտր Դորոշենկոյին եւ սկսել էր պատերազմի եռանդուն նախապատրաստութիւններ տեսնել: 1668 թ. Դորոշենկոն կարողացաւ վերացնել Ի. Բրիւխովիցկուն եւ իրեն յայտարարեց ողջ Ուկրաինայի հետման: Մոսկվայի կառավարութիւնը ստիպւած էր ձեռնարկել մի շարք հակամիջոցներ. 1672 թ. սուլթանը նախազգուշացուեց, որ Լեհաստանի վրայ վերստին յարձակւելու դէպքում Ալէքսէյ Միխայլովիչը կհրամայի Դոնի կազակներին յարձակւել Թուրքիայի սեւծովեան ափերի վրայ: [246, էջ 179] Բացի այդ, կրկին փորձ կատարւեց հակաթուրքական դաշինք ստեղծելու համար: Այդ նպատակով 1672 թ. Իրան ուղարկւեց Նովգորոդեան պրիկազի աստիճանաւոր Ֆեոդոր Վոզնիցինը եւ թարգմանիչ Իւան Կուդրովը:Սակայն շահ Սուլէյմանը բնաւ մտադիր չէր յանուն եւրոպական տէրութիւնների շահերի փչացնել դժւարութեամբ կարգաւորւած իր յարաբերութիւնները սուլթանի հետ: Այդ պատճառով Վոզնիցինը Սպահանում սառը ընդունելութիւն գտաւ: Աւելին, նրա նկատմամբ վերաբերւեցին արհամարհանքով ստիպելով շահի առջեւ ծնկաչոք լինել եւ նոյնիսկ չհարցրին ցարի առողջութեան մասին: Շահը կտրականապէս հրաժարւեց պատերազմ սկսել Թուրքիայի դէմ: [246]

Միջազգային յարաբերութիւնները էլ աւելի սրւեցին: 1672 թ.

հոկտեմբերի 23-ին Թուրքիան խոշոր յաղթանակ տարաւ Ռուսաստանի դաշնակցի՝ Լեհաստանի նկատմամբ եւ ստիպեց նրան հաշտութեան բանակցութիւններ սկսել: Սուլթանը պահանջեց ողջ Աջափնեայ Ուկրաինան եւ Պոդոլիէն: Ռուսաստանի համար աւելի ու աւելի ակներեւ էր դառնում, որ Իրանի մասնակցութիւնը հակաթուրքական դաշինքին կարող էր շատ բան փոխել: Այդ պատճառով 1672 թ. շահի մօտ ուղարկուած դեսպաններ Անդրէյ Պրիկլոնսկուն եւ Այէքսէյ Բոգդանովին յանձնարարուած էր կարգաւորել վերոյիշեալ հարցը: Սակայն այս դեսպանութեան գործունէութիւնը եւս ոչ մի արդիւնք չտուեց, որովհետեւ այս անգամ եւս շահը կտրականապէս հրաժարուեց պատերազմ սկսել Թուրքիայի դէմ:

Սպահանում Անդրէյ Պրիկլոնսկին պարզեց, որ Իրանը խիստ դժգոհ է Մոսկուայից: Այդ պատճառով 1673 թ. օգոստոսին ռուսական արքունիքը Իրան ուղարկեց Կոստանդին Խրիստոֆորովին, որը Սպահանում ընկաւ դժուարին կացութեան մէջ: Շահական արքունիքում այդ ժամանակ չափազանց ուժեղացել էր հակառուսական խմբաւորումը Շիխալի խանի գլխաւորութեամբ: Գր. Լուսիկենցը յայտնում է Կ. Խրիստոֆորովին, որ Ստեփան Ռազինի կողմից կողոպտուած իրանական վաճառականները շահին տրամադրում էին Ռուսաստանի դէմ, պնդելով, թէ Ռազինի կողմից կողոպտուած բոլոր ապրանքները յայտնել են ցարական գանձարանում: Գր. Լուսիկենցը նրան յայտնում է նաեւ, որ շահական արքունիքում գործում է ռուսամետ մի խմբաւորում Աղասի բալի Զէյնալ խանի, Միրզա Մուման Մամալիքի եւ ուրիշների գլխաւորութեամբ, որոնք նպատակայարմար չեն համարում ինչ-որ 5000 ռուբլու համար գժտուել ռուսական ցարի հետ: [247]

Չնայած այն հանգամանքին, որ Կ. Խրիստոֆորովի առաքելութիւնը եւս աւարտուեց անարդիւնք, ռուսական կառավարութիւնը յոյսը չէր կտրում, որ վաղ թէ ուշ իրեն կյաջողուի համոզել շահին միանալու հակաթուրքական ռազմական դաշինքին:

Անկասկած ռուս-իրանական քաղաքական յարաբերութիւնների մէջ ստեղծուած լարածութիւնը իր բացասական ազդեցութիւնն էր ունենալու նաեւ առեւտրա-տնտեսական յարաբերութիւնների վրայ: Սակայն անկախ դրանից, 1667 թ. պայմանագրին վիճակուած չէր լայն հնարաւորութիւններ հարթել հայ-ռուսական առեւտրական յարաբերութիւնների ծաւալման համար: Աւելին, կարելի է

անվարան ասել, որ այն գործնական կենսագործում չստացաւ: Դրա պատճառները բազմաթիւ էին: Նախ ռուսական շուկան իրանական հում մետաքսի համար չափազանց նեղ էր: «Իրանի հումոյթը, - իրաւացիօրէն գրում է ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսեանը,- երկրի ներսում սպառելու համար հին Մոսկուան բաւականաչափ պահանջ չունէր: Մետաքսէ գործուածքների գնորդները բարձր դասի ներկայացուցիչներն էին միայն: Չկար պետական կամ մասնաւոր մանուֆակտուրա, որ կարիք ունենար այդ հումոյթին: Մետաքսարդիւնաբերութիւնը Ռուսաստանում սկսել էր Ալէքսէյ ցարի ժամանակ: Սակայն իրանական հումոյթը ծառայում էր գօտիներ, ժապաւէններ եւ նման տեսակի այլ «մանրուք» գործելու համար միայն»: [17, էջ 446]

Բացի այդ, Վոլգա-Կասպեան ճանապարհը XVII դարում դեռեւս լաւ իւրացուած չէր առեւտրի համար: Այն աչքի չէր ընկնում նաեւ ապահովութեամբ: Պատահական չէ, որ փորձելով արդարանալ Ալէքսէյ Միխայլովիչ ցարի առջեւ, որ Նոր Զուղայի Հայկական առեւտրական ընկերութիւնը չի կատարել 1667 թ. պայմանագրով իր վրայ ստանձնած պարտաւորութիւնները՝ հրաժարւելու թուրքական առեւտրական ուղուց եւ ապրանքների արտահանումը իրականացնելու Կասպ-Վոլգեան ուղիով, Գրիգոր Լուսիկովը 1671 թ. իր բացատրագրի մէջ նշում էր, որ երբ լուր ստացաւ, որ Ստեփան Ռազինը կողոպտել է վաճառականներին, Զուղայեցիները մեկնեցին «ռուսերի երկիրը (Թուրքիա Վ.Բ.) ասելով, որ երբ ռուսական հողը մաքրւի, մենք կրկին կգանք ռուսական ճանապարհով»: [222, էջ 72]

Սակայն ամենակարեւորը թերեւս այն էր, որ 1667 թ. պայմանագրի մէջ ընդգրկուած էր հայ վաճառականութեան մի փոքր հատուածը միայն՝ Նոր Զուղայի «Հայկական առեւտրական ընկերութեան» անդամները: Մնացած վաճառականութիւնը, այդ թւում նաեւ Զուղահայ, որոնք կազմում էին իրանահայ վաճառականութեան մեծ մասը, կապուած էր թուրքական տարանցիկ ուղիով կատարւող առեւտրի հետ եւ որեւէ պարտաւորութիւն չունէր Ռուսաստանի հետ առեւտուր անելու վերաբերեալ:

Նոր Զուղայի «Հայկական առեւտրական ընկերութիւնը» խաղում էր առաւել շահագրգռուած միջնորդի դեր իրանա-ռուսական յարաբերութիւնները կարգաւորելու գործում: Պատահական չէ, որ այդ ուղղութեամբ առաջին քայլը կատարւեց հէնց այդ ընկերութեան կողմից: 1668 թ. Մոսկւայից Իրան ժամանեց Մոսկւայում հայկական ընկերութեան ներկայացուցիչ Թոմաս

Բրէյնը: Նա իր հետ բերում էր շահին հասցէագրուած մի նամակ, որտեղ խնդրւում էր նպաստել Ռուսաստանի հետ հայերի առեւտրին:

Համարեա միաժամանակ Սպահանից Մոսկւա մեկնեց Գրիգոր Լուսիկովը որպէս շահ Սուլէյմանի դեսպանորդ: Նա իր հետ տանում էր շահի կողմից Ալէքսէյ Միխայլովիչին հասցէագրուած մի նամակ, որտեղ նշւում էր, որ ինքը համաձայն է հայկական ընկերութեան հետ կնքւած պայմանագրի պայմաններին: [229, էջ 89-90] Գր. Լուսիկովը վերցրել էր նաեւ շահ Սուլէյմանի հրամանագիրը Ռուսաստանի հետ հայ վաճառականների ազատ առեւտրի իրաւունքի մասին:

1672 թ. Յուլիսին Պոսոլսկի պրիկազում գումարւեց մի խորհրդակցութիւն, որտեղ քննարկւելու էր Ռուսաստանի հետ Նոր Ջուղայի «Հայկական առեւտրական ընկերութեան» առեւտրա-տնտեսական յարաբերութիւնների հարցը: Խորհրդակցութիւնում Մոսկւայի վաճառականները յայտարարեցին, որ Հայկական ընկերութեան ունեցած արտօնութիւնները մեծապէս մնասում են իրենց առեւտրին եւ ռուսական պետութեան գանձարանին: Այդ տեսակէտը նրանք հիմնաւորում էին նրանով, որ եթէ նախկինում իրենք էին ապրանքներ գնում հայերից եւ դրանք յանձնում գանձարանին կամ վերավաճառում օտարերկրացիներին, իսկ ստացած հնչուն դրամը՝ արծաթը եւ ոսկին յանձնում էին գանձարանին, որը ձեռնտու էր ե՛ւ իրենց ե՛ւ ռուսական պետութեանը, ապա այժմ Հայկական ընկերութիւնը անմիջականօրէն կապերի մէջ է օտարերկրացիների հետ եւ առանց ռուս վաճառականների միջնորդութեան ապրանքներ է վաճառում նրանց: Բացի այդ, այդ առեւտրից ստացած ոսկին եւ արծաթը մնում են ոչ թէ Ռուսաստանում, այլ հայ վաճառականների կողմից դուրս է բերւում երկրից եւ տարւում է Իրան: Աւելին, ռուս վաճառականները բողոքում էին նաեւ այն բանի դէմ, որ եւրոպական ապրանքները Ռուսաստանի վրայով Արեւելքի երկրներ են արտահանւում դարձեալ հայերի միջոցով, շրջանցելով Մոսկւայի վաճառականներին: Ըստ այնմ ռուսական կառավարութեանը առաջարկւում էր սահմանափակել հայերի առեւտրական արտօնութիւնները եւ «Հայկական առեւտրական ընկերութեանը» թոյլատրել առեւտուր անել միայն Աստրախանում եւ Մոսկւայում, ընդորում միայն գանձարանի ու ռուս վաճառականների հետ, բայց ոչ երբեք օտարերկրացիների հետ: [229, էջ 74-76]

Զնայած Մոսկվայի վաճառականների բողոքներին, ցարը յանձնարարեց Պոսոլսկի պրիկազի նոր ղեկավար Ա. Ս. Մատվեյևին բանակցություններ մէջ մտնել Գր. Լուսիկենցի հետ՝ առևտրական նոր պայմանագիր կնքելու վերաբերեալ: Այդ բանակցություններն աւարտուեցին յաջողութեամբ եւ 1673 թ. փետրուարի 7-ին կնքուեց առևտրական նոր պայմանագիր: [Տե՛ս 229, էջ 110-113. 248] Այն 1667 թ. պայմանագրի համեմատութեամբ կրում էր աւելի սահմանափակ բնոյթ, որովհետեւ նախ հայ վաճառականներին թոյլատրում էր ապրանքներ արտահանել միայն եւրոպական այն երկրները, որոնք «վէճի» մէջ չէին գտնուում Ռուսաստանի հետ, այլ կերպ ասած ռուսական պետութեան հետ գտնուում էին բարեկամական յարաբերությունների մէջ: Անտարակոյս այս վերապահումը հայ վաճառականների առևտուրը կախման մէջ էր դնում Ռուսաստանի արտաքին քաղաքականությունից: Այնուհետեւ պայմանագրում յատուկ շեշտուում էր, որ ապրանքները կարելի է արտահանել արտասահման միայն այն դէպքում, եթէ դրանց չյաջողուի վաճառել Ռուսաստանում:

Վերջապէս վերացուում էին Ռուսաստանից ապրանքներ արտահանելու եւ ներմուծելու վերաբերեալ անժամկէտ արտօնագրերը: Այսուհետեւ վաճառականներին արտօնագրեր էին տրւելու իւրաքանչիւր ուղեւորութեան համար:

Պայմանագրով ռուսական կառավարությունը հայկական ընկերությունից պահանջում էր հաստատուն խոստում տալ այն մասին, որ նրանք իրանական ողջ հում մետաքսը կարտահանեն միայն Ռուսաստան եւ այն չեն վաճառի օտարերկրացիներին ոչ Իրանում եւ ոչ էլ Թուրքիայում: Այդ կապակցությամբ Գրիգոր Լուսիկենցը փետրուարի 7-ին, պայմանագրի կնքման օրը հայերէն աւետարանի վրայ տուեց երդմնաւոր խոստում, Հայկական առևտրական ընկերության անունից խոստանալով, որ հայ վաճառականները այսուհետեւ հրաժարւում են Թուրքիայի վրայով եւրոպական երկրների հետ առևտուր անելուց եւ պարտաւորւում են իրանական ողջ մետաքսը ներմուծել Ռուսաստան եւ այն եւրոպական երկրներ արտահանել միայն Ռուսաստանի վրայով:

Պայմանագիրը սահմանափակող պայմաններից մէկն այն էր, որ ռուսական կառավարությունը հրաժարւում էր ճանապարհներին հայ վաճառականների կողմից կրած վնասները հատուցելու պարտաւորությունից, մի հանգամանք, որը նախատեսւած էր 1667 թ. պայմանագրով:

Այսպիսով հայ վաճառականները զրկւում էին Ռուսաստանի վրայով Արեւմուտքի հետ ազատ առեւտուր անելու իրաւունքից, մի հանգամանք, որը նրանց համար աւելի կարեւոր էր, քան Ռուսաստանի համեմատաբար սահմանափակ շուկայում առեւտուր անելը: Պատահական չէ, որ ռուս վաճառականները տրտնջում էին եւ բողոքում Պոսոլսկի պրիկազին, որ հայ վաճառականները դրժելով իրենց երդումը, իրանական ողջ հում մետաքսը չեն բերում Ռուսաստան, այլ լաւագոյն մետաքսը եւ աւելի մեծ չափերով շարունակում են արտահանել նախկին ուղիներով: Նրանք նոյնիսկ բերում էին կոնկրետ թւեր, որ հայ վաճառականների կողմից հում մետաքսի ներմուծումը Ռուսաստան 1674 թ. չի գերազանցել 100 փթից, որը մի չնչին թիւ է:

Աւելի ուշ, 1676 թ. յուլիսի 17-ին ռուսական կառավարութիւնը հայ վաճառականներին թոյլատրեց Արխանգելսկի վրայով ազատօրէն իրենց ապրանքները արտահանել արեւմուտքի երկրներ: [249, էջ 463] Այս որոշումն ընդունելիս կարեւորագոյն դեր խաղաց նախ այն հանգամանքը, որ 1673 թ. պայմանագրով հայ վաճառականների իրաւունքների սահմանափակումը հանգեցրեց հում մետաքսի եւ արեւելեան այլ ապրանքների կտրուկ կրճատմանը Ռուսաստան, հետեւաբար նաեւ ցարական գանձարանի եկամուտների նւազմանը: Աւելին, Մոսկւայում հաւանական էին համարում նաեւ այն տարբերակը, որ հայ վաճառականները ընդհանրապէս կարող են դադարեցնել հում մետաքսի ներմուծումը Ռուսաստան, որի հետեւանքով անխուսափելիօրէն արեւմտեան երկրների հետ իրանական առեւտրի միջնորդներ կդառնան բացառապէս թուրքական քաղաքները: Վերջապէս ռուսական իշխանութիւնները երկիւղներ ունէին, որ իրանահայ վաճառականների իրաւունքների սահմանափակումը կարող է ազդել ռուս-իրանական քաղաքական յարաբերութիւնների վրայ, եւ բացի այդ, հայ վաճառականների կողմից ռուսական շուկայ հում մետաքսի ներմուծման դադարեցման հետեւանքով կշահի իր ախոյանը՝ Թուրքիան, որը կդառնայ արեւմտեան երկրների հետ իրանական առեւտրի միակ միջնորդը: Վերջապէս, ռուսական կառավարութիւնը չէր ցանկանում վատթարացնել իր յարաբերութիւնները հայ վաճառականների հետ, որոնք ռուս-իրանական քաղաքական յարաբերութիւնների ընդգաւառում խաղում էին միջնորդի կարեւոր դեր, առաւել եւս, որ Մոսկւան լուրջ հիմքեր ունէր համարելու, որ ինչպէս տեսայ պահին, այնպէս էլ ապագայում,

հայերը կհանդիսանան հաւատարիմ յենարան Ռուսաստանի արեւելեան քաղաքականութեան մէջ: Թերեւս այդ էր պատճառը, որ 1673 թ. պայմանագրով առանց մաքսատուրքեր վճարելու եւ արտօնեալ առեւտրի իրաւունք էր տրամադրւում միայն «Հայ առեւտրական ընկերութեան» վաճառականներին: Մինչդեռ իրանական եւ այլ վաճառականների նկատմամբ ռուսական կառավարութիւնը բռնում էր միանգամայն այլ դիրք: Նրանց արգելւում էր առեւտրական նպատակներով Աստրախանից բացի մուտք գործել այլ քաղաքներ: [260] Անշուշտ, սա խոշոր առանձնաշնորհ էր, որ տրամադրւում էր հայ վաճառականներին, որովհետեւ վերջիններս ստանում էին Ռուսաստանի եւ նրա վրայով նաեւ արեւմուտքի երկրների հետ անմրցակից առեւտրի իրաւունք:

Ցարական կառավարութիւնն աշխատում էր առեւտրական պայմանագիրը նման խմբագրութեամբ ձեւակերպելու նախաձեռնող ներկայացնել Գր. Լուսիկենցին, որպէսզի չարի իր յարաբերութիւնները շահի հետ: Ընդ որում, 1673 թ. փետրւարի 21-ին Գր. Լուսիկենցը խնդրում է Պոսոլսկի պրիկազի դեկավար Ա. Ս. Մատւէեւին թաքցնել առեւտրական պայմանագրի կնքման փաստը մինչեւ իր Իրան մեկնելը, որպէսզի այդ մասին ինքը անձամբ զեկուցի շահին եւ այդպիսով թոյլ չտուեն անցանկանալի բարդութիւններ: [260, թ. 246-247] Մի ժամանակ նա խնդրում է, որպէսզի Մոսկւայում թէկուզ եւ մէկ ամսով ձգձգեն իրանական դեսպանի եւ պարսիկ վաճառականների վերադարձը Իրան, որ ինքը կանխի նրանց եւ առաջինը ներկայանա շահին: Բացի այս բոլորից, Գր. Լուսիկենցի խնդրանքով ռուսական կառավարութիւնը հրապարակեց հրամանագիր Աստրախան ժամանած պարսիկ վաճառականներին ու դիւանագէտներին քաղաքական նպատակներով միմեանցից տարանջատելու մասին, այն հաշւով, որ վաճառականները ժամանակաւորապէս գտնւեն մաքսատան աստիճանաւորների հսկողութեան տակ, իսկ դիւանագէտները՝ վոյեւոդային գրասենեակի: [260, թ. 435]

1672 թ. Մոսկւայում բանակցութիւններ վարելու ժամանակ Գր. Լուսիկենցը դեսպանական պրիկազին յայտնում է նաեւ, թէ ինքն ունի «ծածուկ արգ» գաղտնի ասելիք: Ընդ որում, նա հրաժարւում է գրաւոր յայտնել իր ասելիքը, պատճառաբանելով, որ դա կարող է յայտնի դառնալ շահին եւ առիթ տալ, որ նա պատժի իրեն: Այս հանգամանքը վերստին գալիս է հաստատելու, որ շատ յանախ հայ գործիչները փորձում էին Թուրքիայի դէմ Իրանի եւ

եւրոպական պետութիւնների քաղաքական դաշինք ստեղծել, այդ առթիւ յունենալով շահի համապատասխան լիազօրութիւնը՝ նկատի ունենալով բացառապէս հայ առեւտրական կապիտալի շահերը: Դրանով պէտք է բացատրել այն իրողութիւնը, որ յաճախ իրանահայ խոջաներն այդ գաղափարի իրագործման համար չէին խնայում նաեւ իրենց դրամական միջոցները:

Այսպիսով միանգամայն ակնյայտ է, որ Իրանի եւ Եւրոպական տէրութիւնների միջեւ հակաթուրքական դաշինք կնքելու հարցում ստանձնելով միջնորդի եւ դիւանագիտական յանձնակատարի դեր, հայ առեւտրական կապիտալի ներկայացուցիչներն առաջնորդում էին ոչ միայն իրենց առեւտրատնտեսական շահերով, այլեւ հետապնդում էին նաեւ քաղաքական շահեր, մասնաւորապէս օսմանեան լծից Հայաստանի ազատագրման նպատակներ:

Մի անգամայն ակնյայտ է, որ իրանահայ առեւտրական բուրժուազիայի դասը համակելով հայ բնաշխարհի ազատագրական տրամադրութիւններով, XVII դարի 60-ական թւականներին սկսել էր ոչ միայն ուղղութիւն տալ, այլեւ անմիջականօրէն մասնակցել Հայաստանի ազատագրման ուղղութեամբ իրականացող բանավարութիւններին:

1676 թ. յուլիսի 17-ի արտօնագիրը մեծապէս խթանեց հայ վաճառականների առեւտուրը Ռուսաստանի հետ: Եթէ 1673-1674 թ.թ. նրանք դէպքից դէպք էին ժամանում Աստրախան եւ Մոսկւա, ապա 1676 թ. նման այցելութիւնները դառնում էին աւելի կանոնաւոր, ընդորում յաճախ գալիս էին տասը, տասներկու եւ աւելի մարդկանցից բաղկացած վաճառականների խոշոր խմբեր, իրենց հետ բերելով մեծ քանակութեամբ ապրանքներ: Ընդորում հետաքրքրական է նշել, որ 1676 թ. մինչեւ 1686 թ. ընկած շրջանում հայ վաճառականների այցելութիւնների կէսից աւելին ընկնում էր Ռուսաստանի արեւմտեան շրջաններին: [238, էջ 28] Սա աւելորդ անգամ գալիս է հաստատելու, որ ռուսական կառավարութեան հետ առեւտրական պայմանագիր կնքելիս հայ վաճառականների գլխաւոր նպատակն էր առեւտուրը Հոլանդիայի, Շուեդիայի, Անգլիայի եւ արեւմտաեւրոպական միւս երկրների հետ: Ընդորում այդ առեւտրափոխանակութեան ծաւալը վերին աստիճանի չօշափելի ու նշանակալից էր: Այսպէս, 1676 թ. Պոսոլսկի պրիկազի արձանագրութիւնների համաձայն Հոլանդիա մեկնելու թոյլտուութիւն խնդրած հայ վաճառականների միայն մէկ խումբ, որի մէջ մտնում էին Եգուպ Պողոսովը իր տասը ընկերների հետ, Արխանգելսկից

Հոլանդիա էր արտահանել 1170 փութ հում մետաքս: [251] 1679 թ. Խարապետ Մատուէեւը (Հայրապետ Մատթէոսեան) իր ընկերների հետ Արխանգելսկ էր բերել 215 փութ 20 ֆունտ հում մետաքս, այն Հոլանդիա առաքելու համար: [251] 1681 թ. միայն մէկ վաճառական՝ ոմն Ե. Գրիգորեւ Արխանգելսկ էր հասցրել 157 փութ մետաքս: Առանձնապէս վաճառականների մեծ խմբեր էին ժամանել Արխանգելսկ 1683 թ. տօնավաճառին մասնակցելու համար:

Նախկինի պէս հայ վաճառականների առեւտուրը Արխանգելսկում եւ այնտեղից նրանց ուղեւորութիւնները արտասահման առաջ էին բերում ռուս վաճառականական դասի չդադարող բողոքները, որոնք իշխանութիւնների մօտ փորձում էին ապացուցել, որ հայերը իրենց իսպառ դուրս են մղել հում մետաքսի միջնորդ առեւտրից: Սակայն քանի որ այդ առեւտուրը շարունակում էր խոշոր եկամուտներ բերել գանձարանին, ռուս վաճառականների բողոքները ոչ մի ազդեցութիւն չունեցան կառավարութեան վրայ:

Արեւմտեան տէրութիւններից իւրաքանչիւրը փորձում էր հայ վաճառականների հետ արեւելեան առեւտրի մենաշնորհը վերցնել իր ձեռքը: Այսպէս, 1676 թ. Հոլանդացի Ֆոն-Կլենկը աշխատում էր հայ վաճառականներից խոստում վերցնել, որ նրանք Արխանգելսկի վրայով ողջ մետաքսը տանեն միայն Հոլանդիա, բայց ոչ երբեք Անգլիա, Համբուրգ եւ այլն: [249, էջ 458] Մինչեւ 1680 թ. հոլանդացիներին յաջողւում էր ինչ-որ չափով իրագործել այդ քաղաքականութիւնը: Սակայն դրանից յետոյ յայտնուեցին նաեւ այլ մրցակիցներ, որոնց մէջ յատկապէս վտանգաւոր էր Շուեդիան: Վերջինս Բալթիկ ծովը վերածելով ներքին լճի եւ 1648 թ. Վեստֆալեան պայմանագրով ստանալով Պոմերանիան, Օդերի եւ Վեզերի գետաբերանը, եռանդուն կերպով ձգտում էր առեւտուրը Սպիտակ ծովից տեղափոխել Բալթիկ ծով: Դրանով Շուեդիան մտադիր էր նախ հարուած հասցնել Մոսկւայի հետ անգլո-հոլանդական առեւտրին եւ ապա Հնդկաստանի եւ Իրանի հետ Աստրխանի վրայով կատարւող արեւելեան առեւտուրը ֆիննական ծոցի ափերին չադկապել արեւմտաեւրոպական, տեւալ դէպքում շուեդական առեւտրական համակարգի հետ: [224, էջ 20] Ի կատարումն շուեդական դիւանագիտութեան մշակած հեռուն գնացող ու յանահուն ծրագրերի, 1673 թ. փետրուարի 4-ին շուեդական դեսպանորդ Ադոլֆ Էբերշիլդը Պոսոլսկի պրիկազին ներկայացրեց մի զեկուցագիր, որտեղ նշւում էր, որ Շուեդիայի հետ սերտ դաշինք կնքելու դէպքում Ռուսաստանը իրեն կազատէր արտաքին ու

ներքին բարդութիւններից: Միւս կողմից Արխանգելսկի վրայով առեւտուրը տեղափոխելով Բալթիկ ծով, Ռուսաստանը արեւմուտքի հետ առեւտրից կքաղէր մեծ օգուտներ, մանաւանդ որ օտարերկրացիները դէպի Արխանգելսկ մէկ ուղեւորութեան փոխարէն իւրաքանչիւր տարի կկարողանային կատարել երեք ուղեւորութիւն դէպի Բալթիկ ծովի նաւահանգիստներից մէկը: [223, էջ 1] Սա ճշմարտութիւն էր, որովհետեւ արտասահմանի հետ կանոնաւոր առեւտրի համար Արխանգելսկն ունէր որոշ անյարմարութիւն: Նրա նաւահանգիստը նաւերի համար բաց էր միայն տարին վեց ամիս: Մնացած ժամանակ նա սառցակալւում էր:

Սակայն չնայած այդ գայթակղեցուցիչ հեռանկարներին, ռուսական կառավարութիւնը ոչ մի կերպ չէր տալիս իր համաձայնութիւնը: Դա ունէր իր պատճառները, որոնց մէջ թերեւս կարեւորագոյնները հետեւեալներն էին. նախ իր ամբողջ թերութիւններով հանդերձ արտահանման միւս կէտերի համեմատ Արխանգելսկն ունէր մէկ կարեւոր առաւելութիւն. դա այն էր, որ անկախ տեւալ պահին հարեւան երկրների հետ Ռուսաստանի յարաբերութիւնների բնոյթից, նա կարող էր Արխանգելսկի վրայով առեւտրական յարաբերութիւններ պահպանել եւրոպական տարբեր երկրների, այդ թւում նաեւ Շւեդիայի եւ Լեհաստանի հետ: Այնուհետեւ, որ ոչ պակաս կարեւոր էր, Մոսկւայում Շւեդիային դիտում էին, առաւել եւս Հոլանդիայի համեմատութեամբ, որպէս Ռուսաստանի վտանգաւոր ախոյեան ու թշնամի: Եւ շւեդական դիւանագիտութեան առաջարկը Ռուսաստանի օտարերկրեայ առեւտրի կենտրոնը Արխանգելսկից Նովգորոդ կամ մէկ այլ քաղաք տեղափոխելու վերաբերեալ Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան հարցերով զբաղող հիմնարկութիւնում Պոսոլսկի պրիկազում, մեկնաբանում էին որպէս Ռուսաստանի տնտեսական-քաղաքական շահերի հետ անհարիր մի առաջարկութիւն:

Չնայած այդ մերժումներին, շւեդական կառավարութիւնը յամառօրէն շարունակում էր Մոսկւայում արծարծել այդ հարցը: Ի վերջոյ այդ յամառութիւնը տւեց իր պտուղները: 1686 թ. շւեդական դեսպան Ֆարբրիցիուսը ստացաւ ռուսական կառավարութեան համաձայնութիւնը, որպէսզի հայ վաճառականները Արեւմտեան Եւրոպայի երկրներ մեկնեն Նովգորոդից կամ Նարւայից: Ենթադրւում է, որ Ռուսաստանի կողմից այդ զիջման դրդապատճառն այն էր, որ նա յոյսեր էր փայփայում, որ Իրանը, որի առեւտուրը շահում էր այդ քայլի հետեւանքով, անհրաժեշտութեան դէպքում

հանդէս կգայ Թուրքիայի դէմ: Համենայն դէպս Մոսկվայում ենթադրում էին, որ ծայրայեղ դէպքում կարելի է յոյս դնել շահի բարեացակամ չեզոքութեան վրայ: [239, էջ 163] Բայց կային նաեւ զիջման գնալու այլ, աւելի լուրջ պատճառներ: Բանը նրանում է, որ 1686 թ. մայիսի 6-ին ռուսական կառավարութիւնը «յաւերժական խաղաղութեան» պայմանագիր կնքեց Լեհաստանի հետ եւ միացաւ եւրոպական տէրութիւնների «Սրբազան լիգային» Օսմանեան կայսրութեան դէմ պայքար մղելու համար: Այս պարագաներում Մոսկվայում հայերի առեւտուրը Շուեդիայի հետ դիտւում էր որպէս Ռուսաստանի կապերը այդ երկրի հետ ամրապնդող կարեւորագոյն քաղաքական քայլ: Բնաւ պատահական չէ, որ հակաթուրքական դաշինքի մէջ Ռուսաստանի մտնելուն նախորդեց հայերին Նովգորոդի վրայով Շուեդիա մեկնելու իրաւունքի տրամադրումը:

1686 թ. սեպտեմբերի 1-ին ջուղայեցի վաճառականներ Սաֆար Վասիլեւ եւ Անուշ Վարդանովը առաջինն էին, որ թոյլտուութիւն ստացան Նովգորոդի վրայով ապրանքներ տեղափոխել Շուեդիա: [232] Այսուհետեւ հայ վաճառականների առեւտրական գործառնութիւնները արտաքսմանի հետ տեղի էին ունենում հիմնականում Նովգորոդի վրայով, իսկ 1692 թւականից մինչեւ 1697 թ. Պոսոլսկի պրիկազում բոլոր ուղեւորութիւնները արտաքսման արձանագրած են բացառապէս այդ քաղաքի վրայով:

Այսպէս, 1696 թ. յունուարի 21-ին եւ փետրուարի 4-ին Ստեփան Թովչեանց անունով մի վաճառական իր երեսուն ընկերների հետ Ռուսաստանից անցնում է Շուեդիա: «Զկնի որոյ ի 6 մայիսի այնր ամի, Թոմայեանց Նիկողայոս Սիմոնեանց, Սիմէօն Բօղդանեանց, եւ Գրիգոր Աստուածատրեան, եւ ի 22 նոյեմբերի 8ակոր Սերգիով, եւ ի 24 դեկտեմբերի Սաֆար Բարսեղեան գնացին վաճառականութեամբ յայն երկիր»: [61, էջ 176-177]

Նովգորդեան ճանապարհի բացումից յետոյ ոչ միայն մեծացաւ հայ վաճառականների կողմից արտահանւող ապրանքների ծաւալը, այլեւ բազմազան դարձաւ նաեւ տեսականին:

Նարւայի մաքսատան գրքի տուեալներով բազմաթիւ հայ վաճառականներ Նովգորոդի վրայով մեկնում էին ոչ միայն Շուեդիա, այլեւ Լիւբեկ, այնուհետեւ այդ վայրերից թափանցելով Հոլանդիա, Ֆրանսիա, Անգլիա, Դանիա, Գերմանիա, Իտալիա, ինչպէս նաեւ Մերձբալթեան երկրներ: Յայտնի է օրինակ, որ ջուղահայ առեւտրական կապիտալի գործակալ Ֆիլիպ դի Զաղլին լայն գործունէութիւն էր ծաւալել Մերձբալթիկայում: 1696 թ.

սեպտեմբերին նա պայմանագիր է կնքում Լիւոնիայի, Կուրլանդիայի ու Սեկալենի դուքս Ֆրեդերիք Կազիմիրի հետ: [161, էջ 361-426] Պէտք է ենթադրել, որ Մերձբալթեան երկրներում գործող նման հայ վաճառականների թիւը մեծ էր:

XVII դարի 70-ական թուականներից սկսած հաստատուում են նաեւ հայ վաճառականների կանոնաւոր առեւտրական յարաբերութիւններ Բրանդենբուրգի հետ: Դեռեւս XV դարում ձեւաւորուեցին առեւտրական մի շարք ուղիներ Բրանդենբուրգից եւ Սաքսոնիայից Լեհաստանի եւ Լիտուայի վրայով դէպի արեւմտեան եւ հիւսիս-արեւմտեան Ռուսաստան: Առեւտրական ճանապարհների այդ ցանցը սկիզբ էր առնում Լայպցիգում, անցնում էր Պոզնանի, Վարշաւայի, Վիլնիւսի, Պոլոցկի, Սմոլենսկի վրայով եւ հասնում էր մինչեւ Մոսկուա:

1670 թ. Բրանդենբուրգից Մոսկուա է ժամանում հայ վաճառական Յակոբ Սամոկուիլին, իր հետ բերելով բրանդենբուրգեան կիւրֆուրստի նամակը, որտեղ հաւաստիացւում էր, որ նա կիւրֆուրստի մօտ ընդունել է ծառայութեան որպէս գործակալ Ռուսաստանի վրայով Պրուսիա ներմուծելու համար հում մետաքս եւ իրանական այլ ապրանքներ: Նամակում խնդրւում էր հայ վաճառականին տրամադրել այդ հնարաւորութիւնը: [239, էջ 153]

Ռուսական կառավարութիւնը սիրով ընդառաջեց այդ խնդրանքին, որովհետեւ առեւտրական ու տնտեսական տեսակէտից թոյլ Բրանդենբուրգը չէր կարող սպառնալ Ռուսաստանի շահերին: Բացի այդ, Բրանդենբուրգի հետ առեւտուրը որոշակիօրէն հարուածում էր Գանգայի միութեանը, որը հանդէս էր գալիս որպէս ռուս վաճառականութեան լուրջ մրցակիցներից մէկը:

Բրանդենբուրգի, ինչպէս նաեւ Լեհաստանի հետ հայ վաճառականները սովորաբար առեւտուր էին անում Սմոլենսկի վրայով, որն այդ ժամանակ հանդիսանում էր Ռուսաստանի արեւմտեան ցամաքային սահմաններին հարող երկրների հետ առեւտրի հիմնական կէտ:

Ուշագրաւ փաստ է, որ եթէ իրանա-ռուսական առեւտրում բացի հայ վաճառականներից մասնակցութիւն էին ցուցաբերում նաեւ պարսիկները, աղրբէջանցիները եւ այլն, ապա Ռուսաստանի վրայով Արեւմտեան Եւրոպայի հետ տարանցիկ առեւտրով զբաղւում էին բացառապէս հայ վաճառականները:

Նովգորոդեան ճանապարհի բացումից յետոյ ոչ միայն մեծացաւ հայ վաճառականների կողմից արտահանւող ապրանքների

ծաւալը, այլեւ բազմազան դարձաւ նաեւ տեսականին: Բացի հում մետաքսից եւ իրանական արտադրութեան բազմապիսի աւանդական ապրանքներից նրանք Արեւմտեան Եւրոպա էին արտահանում նաեւ հնդկական եւ արեւելեան այլ երկրների ապրանքներ, ինչպէս օրինակ մարգարիտ, թանկարժէք քարեր, ներկեր, ուղտի բուրդ, համեմունքներ, թանկարժէք մետաքսեայ եւ բամբակեայ կտորեղէն եւ այլն: Իսկ արեւմուտքի երկրներից ռուսական տարանցիկ ճանապարհով Իրան էին ներմուծում գլխաւորապէս անգլիական, հոլանդական եւ համբուրգեան մահուդ, զանազան կտորեղէն, ճենապակեայ ամանեղէն, հայելիներ, դանակներ, պատուաքաղներ, մկրատներ, մոմակալներ, ակնոցներ, սաթ, ներկեր, շաքար, մեղր, կապար, կողպէքներ, գրքեր, զարդեղէն, արհեստական մարգարիտ, խաղաթղթեր, ասեղ, ուլունքներ, սրի շեղբեր, հեռադիտակներ, գերմանական սափորներ եւ այլ ապրանքներ: [253] Կոստանդ Ջուղայեցին իր «Աշխարհաժողովում» մէկ առ մէկ յիշատակում է նաեւ այն ապրանքները, որոնք Ռուսաստանից արտահանւում էին Իրան. դրանք էին սամիւր, սեւ աղէս, գոլան (կզաքիս), սընճեթ (սկիւռ), թլաթին (հորթի կաշի), թալքն (թալիա), դունդուզ շարէ (կուղբ), ձկան ատամ (ծովափշի ժանիք), ժիպակ, մեղրամոմ եւ այլն: [122, էջ 157 ա]

Ռուսական կառավարութիւնը մեծ շահագրգռուածութիւն էր դրսեւորում հայ վաճառականների առեւտուրը Ռուսաստանի եւ նրա վրայով Արեւմտեան Եւրոպայի հետ զարկ տալու համար: 1690 թ Աստրախանի եւ Կասպ-Վոլգեան ճանապարհի վրայ ընկած մի շարք այլ քաղաքների վոյեւոդներին ուղարկւեց ցարական հրամարտակ այն մասին, որ նրանք արգելք չհանդիսանան հայ վաճառականների առեւտրին եւ չխախտեն նրանց հետ կնքւած առեւտրական պայմանագրի պայմանները: [229, էջ 212-213] Նոյնիսկ Պետրոս Իի ազովեան արշաւանքի կազմակերպման շրջանում, երբ Ռուսաստանի արտաքին քաղաքական վիճակը խիստ լարւած էր, ռուսական կառավարութիւնը իրանական դեսպան Մոհամմադ Հոսէյն խան բեկի միջոցով 1692 թ. յայտնեց շահին ցարի ցանկութեան մասին ամէն կերպ խրախուսելու եւ զարգացնելու հայերի առեւտուրը: Աւելի ուշ, 1697 թ. Պետրոս Իը հրապարակեց անուանական հրամանագիր Իրանից Ռուսաստան եկած հայ վաճառականներին ամէն տեսակի աջակցութիւն ցոյց տալու մասին: [229, էջ 214-215]

Հետաքրքիր է նշել, որ երբ 1689 թ. ռուսական կառա-

վարութիւնը բոլոր արեւելեան վաճառականներին արգելեց Ռուսաստանի վրայով առեւտուր անել արեւմտաեւրոպական երկրների հետ, բացառութիւն արեց միայն «Հայկական առեւտրական ընկերութեան» անդամների համար:

Այսպիսով չնայած նրան, որ XVII դարի վերջին երկու տասնամեակների ընթացքում հայ վաճառականների առեւտուրը Կասպ-Վոլգեան ճանապարհով ձեռք բերեց չօշափելի ծաւալ, սակայն դրանով հանդերձ սխալ կլինէր գերագնահատել այդ առեւտրական ուղու նշանակութիւնը հայ խոջաների առեւտրի համար: Իրողութիւնն այն է, որ այդ առեւտրական ուղին հայ վաճառականների համար երբեք վճռական նշանակութիւն ձեռք չբերեց: Նախկինի պէս իրանա-եւրոպական առեւտրի գլխաւոր ուղին անցնում էր Օսմանեան կայսրութեան վրայով: «XVII դարում, - գրում է Ե. Ս. Զեւակինը, - ռուս-պարսկական առեւտուրը աւելի նւազ նշանակալից էր, քան Պարսկաստանի առեւտուրը Թուրքիայի, Հնդկաստանի եւ Եւրոպայի հետ: Դա հաստատւում է Պարսկաստանը Թուրքիայի, Հնդկաստանի եւ միւս երկրների հետ կապող բազմաթիւ առեւտրական ճանապարհների առկայութեամբ, ինչպէս նաեւ այն հանգամանքով, որ եւրոպական ճանապարհորդները իրենց նկարագրութիւններում գլխաւոր ուշադրութիւնը դարձնում են Եւրոպայի, Թուրքիայի եւ Հնդկաստանի հետ առեւտրին: Մոսկովեան «հիւրերն» (վաճառականներ Վ.Բ.) ու առեւտրական մարդիկ իրենց «պատմութիւններում» (ուղեգրութիւններ Վ.Բ.) նոյնպէս հաստատում են, որ պարսկական մետաքսի հիմնական մասը ծովով արտահանւում էր Թուրքիայի վրայով»: [239, էջ 157]

Այդ հարցի առթիւ Աշոտ Յովհաննիսեանը կատարում է մի կարեւոր դիտում: Հայ խոջաները «չուկայ չէ, որ որոնում էին Մոսկովեան պետութեան մէջ, այլ տրանզիտի ձեռնտու ճանապարհ»: [17, էջ 448] Յիրաւի, ռուսական չուկան խիստ նեղ էր արեւելեան ապրանքների, այդ թւում նաեւ իրանական հում մետաքսի հսկայական ծաւալը կլանելու համար: Ռուսաստանում համարեա բացակայում էին մետաքսի մանուֆակտուրաները, հետեւարար հումքի պահանջարկը եւս խիստ սահմանափակ էր: Ռուսական պետութեան մէջ արդիւնաբերութեան զարգացման ցածր մակարդակը եւս նշանակալիօրէն կասեցնում էր հարեւան երկրների հետ ապրանքափոխանակութեան ծաւալումը: Այդ մասին է վկայում նաեւ հայ վաճառականների կողմից Ռուսաստանից Արեւելք արտահանւող ապրանքների խիստ սահմանափակ տեսականին:

Այնուհետեւ Կասպ-Վոլգեան ճանապարհը թուրքական առեւտրական ուղու համեմատութեամբ աւելի քիչ իւրացուած ճանապարհ էր եւ աւելի նւազ ապահով:

Վերոյիշեալ պատճառների հետեւանքով, թէեւ Նոր Զուղայի «Հայկական առեւտրական ընկերութիւնը» Մոսկուայի հետ պայմանագիր կնքելիս տւել էր կայուն խոստումներ հում մետաքսի եւ այլ ապրանքների արտահանումը թուրքական ճանապարհով դադարեցնելու եւ այն Ռուսաստանի կողմը ուղղելու վերաբերեալ, սակայն այդպէս էլ չիրականացրեց իր այդ խոստումը, առաջ բերելով ռուս վաճառականների եւ ռուսական իշխանութիւնների մշտական դժգոհութիւնը: Բանը հասաւ նոյնիսկ նրան, որ հայ խոջաների վրայ ճնշում գործադրելու նպատակով Մոսկովեան պետութիւնը սկսեց օգտագործել պաշտօնական-պետական թղթեր: Այսպէս, 1692 թ. ապրիլի 2-ին Պոսոլսկի պրիկազը իրանական դեսպանի միջոցով հայ վաճառականներից պահանջեց ճշտութեամբ կատարել իրենց ստորագրած պայմանագրի կէտերը, այսինքն հրաժարւել թուրքական տարանցիկ ճանապարհներից եւ իրանական ողջ հում մետաքսը արտահանել Ռուսաստան: [251]

Համենայն դէպս, անկախ այդ բոլորից, հայ վաճառականների նախաձեռնութեամբ եւ շնորհիւ նրանց գործադրած եռանդուն ջանքերի, Կասպ-Վոլգեան առեւտրական ճանապարհը ձեռք բերեց միջազգային առեւտրական ուղու նշանակութիւն եւ Ռուսաստանը հնարաւորութիւն ստացաւ անմիջական առեւտրա-տնտեսական յարաբերութիւնների մէջ մտնել Իրանի, Անդրկովկասի եւ նրանց վրայով նաեւ Արեւելքի այլ երկրների հետ:

Հայ վաճառականների առեւտուրը Կասպ-Վոլգեան ճանապարհով XVII դարի վերջին եւ XVIII դարի սկզբներին որոշակիօրէն ունէր զարգացման միտում: Դրան նպաստող հանգամանքների մէջ կարեւորագոյն պատճառներից մէկը այն էր, որ Արեւելեան Հայաստանում եւ Իրանի հայ գաղթօջախներում հայ բնակչութեան համար ստեղծւած տնտեսական եւ քաղաքական անբարենպաստ պայմանների հետեւանքով հայերի հոսքը դէպի Ռուսաստան ընդունեց զանգւածային բնոյթ: «Ելեալ հայք ի յերկրէն Արարատայ» ...յերկրէն Ալանաց, յարքայանիստ Շուշայ, այսինքն՝ Ասպահանայ... ի քաղաքէն Մազանդարանայ, Համադանայ, Ղազուինէ, Թաւրիզէ եւ այլ ուստեքէ եկեալ ի կողմանս Հիւսիսոյ... ի նաւահանգիստ Աստրախան, Ի Ղղլար... ոմանք վաճառականք, ոմանք արհեստաւորք, ոմանք հողագործք եւ այլեւայլ գործք»: [255, թ. 4բ]

Պետրոս Իր արեւելեան քաղաքականութեան ընդհանուր խնդիրների մէջ կարեւորագոյն նպատակներից մէկն էր հայերի միջոցով Արեւելքի երկրների, յատկապէս Իրանի ու Հնդկաստանի հետ առեւտրական յարաբերութիւնների զարգացումը: Մասնաւորապէս նա փայփայում էր Բալթիկ ծովը Կասպից ծովի հետ կապելու, իսկ այնուհետեւ դէպի Հնդկաստան տանող ջրային հաղորդակցութեան ուղիներ գտնելու հեռուն գնացող ծրագրեր:

Պետրոս Իի նիւթական իրաւն էր Ռուսաստանի վրայով բացել Հնդկաստանի հետ եւրոպական առեւտրի ուղի: Ընդորում Պետերբուրգի հիմնադրումից յետոյ կայսրը ձգտում էր, որ մետաքսի ու արեւելեան այլ ապրանքների տարանցիկ առեւտուրը արեւմուտքի հետ իրագործւի իր նորաստեղծ մայրաքաղաքի վրայով: [258] Այս լայնահուն նպատակներն իրագործելու համար անհրաժեշտ էր գործի մէջ ներգրաւել հայ վաճառականութեանը: Պատահական չէ, որ Պետրոս մեծն աշխատում էր նրանց ամէն կերպ սիրաշահել եւ շնորհել ամէն տեսակի արտօնութիւններ ու իրաւունքներ: Այսպէս, 1711 թ. նա Աստրախանի իշխանութիւններին խստիւ պատուիրել էր, որպէսզի հայերի նկատմամբ ոչ մի նեղութիւն եւ արգելք չհարուցեն: Նոյն թւականի մարտի 2-ին նա կարգադրում էր խստօրէն պահպանել հին պայմանագրով սահմանւած որոշումները, թոյլ չտալ Ռուսաստանի հետ առեւտուր անող վաճառականներից անօրինական մաքսագանձումներ ու ճանապարհային տուրքեր վերցնել, ապահովել նրանց փոխադրամիջոցներով, ուղեկցողներով, կացարաններով, պահեստներով եւ բնակարան կառուցելու հողակտորներով: Այդ նոյն ոգով 1711 թ. մայիսի 14-ին որոշում է ընդունել նաեւ սենատը: [257, էջ VII]

Ռուսական կառավարութիւնը արտօնութիւններ ու իրաւունքներ էր շնորհում ոչ միայն իրանահայ վաճառականներին, այլեւ Անդրկովկասի, Թուրքիայի եւ այլ վայրերի առեւտրականներին: Յայտնի է, օրինակ, որ 1712 թ. փետրուարի 5-ին Թիֆլիսեցի վաճառականներ Մամաջանը, Աւթանդիլն ու Յարութիւնը դիմում են Պետրոս Իին եւ խնդրում թոյլ տալ օգտւելու Նոր Ջուղայի վաճառականներին տրւած արտօնութիւններից: Այդ առթիւ 1712 թ. փետրուարի 12-ին սենատը հրապարակում է յատուկ հրամանագիր: [257, էջ 60-61]

Պետրոսը ձգտում էր նաեւ Կովկասի մի շարք նահանգներում, ինչպէս նաեւ Ռուսաստանի հարաւում ստեղծել հայկական վաճառականական գաղութներ: Այդպիսի առաւել աչքի ընկնող գա-

զուիթներից մէկն էր Աստրախանը, որի առեւտուրը ամբողջութեամբ, ինչպէս վկայում են այդ քաղաքն այցելած անգլիացի ճանապարհորդներ Ջոն Էլդրընը եւ Մրնկօ Գրահեմը, գտնւում էր հայերի, մասամբ նաեւ հնդիկների ձեռքերում: [258, էջ 6] Ինչ վերաբերում է այդ քաղաքի ռուս վաճառականներին, ապա նրանք առաւելապէս զբաղւում էին կասպից ծովի եւ Վոլգայի թանկարժէք ձկնատեսակների ու խաւիարի առեւտրով: [258, էջ 6]

Հետաքրքիր է նշել, որ երբ Պետրոս Բը Ամստերդամում էր, այնտեղ ծանօթացել էր նշանաւոր հայ վաճառականների հետ, որոնց մէջ գլխաւոր դեր էին խաղում նշանաւոր Պետրոս Ապրոն, Յովհաննէս Դիրոգոժեանը եւ ուրիշներ: Ռուսական արխիւներում յիշատակութիւն կայ այն մասին, որ 1711 թ. Պետրոսը թոյլատրել է հայ վաճառական Մերկուլ Աղազարովին ընտանիքով Հոլանդիայից տեղափոխուել Մոսկա: [257, փաստ. No 42] Երբ Պետրոս մեծը 1717 թ. երկրորդ անգամ մեկնեց Հոլանդիա, Պետրոս Ապրոն նրան ներկայացրեց մի խնդրագիր Ռուսաստանում ազատ առեւտուր անելու վերաբերեալ: Ընդառաջելով այդ խնդրանքին, կայսրը 1717 թ. յունուարի 28-ին հրապարակում է մի հրովարտակ, որտեղ ասւում էր, որ Զմիւռնիայի հայ վաճառականներին թոյլատրւում է ազատ առեւտուր անել Ռուսաստանում եւ Ռուսաստանի վրայով արեւմտեան Եւրոպայի հետ, վճարելով նոյնքան մաքս, որքան վճարում են Նոր Ջուղայի հայ վաճառականները: Այլ կերպ ասած Պետրոսը Զմիւռնիայի վաճառականների վրայ էր տարածում այն բոլոր իրաւունքներն ու արտօնութիւնները, որոնք մինչ այդ տրամադրւել էին Ջուղայեցի հայ վաճառականներին: Այնուհետեւ 1719 թ. յունիսի 6-ին Պետրոս Բը հրապարակում է մի նոր հրովարտակ, որով Ջուղայի եւ Աստրախանի հայ վաճառականներին իրաւունք էր տրւում հաւասարապէս օգտւել այն բոլոր իրաւունքներից, որից օգտւում էին այլ երկրների առեւտրականները: [183, էջ 41-43]

Պետրոս մեծը յատկապէս մեծ ջանքեր էր գործադրում, որ իրանական ողջ մետաքսը արտածւի Ռուսաստան: Նա իր այդ նպատակի իրականացնելու համար չէր խորշում նոյնիսկ 1715 թ. հրահանգ տալ Իրան մեկնող իր դեսպան Վոլինսկուն, որ եթէ չահին համոզելու սովորական ձեւերը չգործեն՝ որպէսզի նա ստիպի Նոր Ջուղայի հայ առեւտրական ընկերութեանը կատարելու իր պայմանագրային պարտաւորութիւնները ռուսական կառավարութեան առջեւ, անհրաժեշտ է օգտագործել նրան եւ նրա շրջապատի մարդկանց կաշառելու փորձած ձեւը:

Այդ նոյն հրահանգում կարգադրւում էր ամէն կերպ խոչընդոտներ հարուցել հայ վաճառականների կողմից դէպի Զմիւռնիա եւ Հայէպ մետաքսի արտահանմանը: [257, փաստ. No 36, կէտ 7]

Ճանապարհորդելով Ֆրանսիայում, Պետրոսը զարմացել էր, տեսնելով Լիոնում եւ այլ քաղաքներում մետաքսէ գործածքեղէնի արտադրութիւնը: Նրա ցանկութեանը, Ռուսաստանում եւս կազմակերպելու մետաքսեայ գործածքեղէնի արտադրութիւն, առաջինը արձագանքել էր հայազգի Շիրւանովը, որը Ղզլարում հիմնադրել էր մետաքսի ֆաբրիկա: Այնուհետեւ նրա օրինակին հետեւել էին բազմաթիւ այլ ձեռնարկատէրեր: Այսպէս, 1710 թ. մարտի 13-ին հայ վաճառական Սաֆար Վասիլեւը խնդրագիր է ներկայացնում կայսրին, առաջարկելով իրեն տրամադրել յարմար վայրեր եւ աշխատուժ Ռուսաստանի տարածքում մետաքսագործութիւնը զարգացնելու համար: Մի ժամանակ նա թոյլտւութիւն էր խնդրում Իրանից հրաւիրել մետաքսագործութեան գաղտնիքներին տիրապետող մարդկանց: Պետրոսը սիրով ընդառաջում է այդ խնդրանքին եւ այսպիսով Սաֆար Վասիլեւը հիմնադրում է ռուսական մետաքսագործութիւն առաջնեկը հանդիսացող Թերքի գործարանը: Աւելի ուշ, 1720 թ. նոյնատիպ գործարան յայտնւում է նաեւ Աստրախանում: Մասնաւորապէս Իսրայէլ Օրին եւ նրա համախոհ ու գործակից Մինաս Վարդապետը Պետրոսի ցանկութեամբ Իրանից Ռուսաստան են հրաւիրում մետաքսաարդիւնաբերութեան գործի գիտակ մեծ թւով հայերի:

Ռուսական կայսրը խրախուսում էր նաեւ առեւտրական ընկերութիւնների կազմակերպումը, որոնց խնդիրն էր լինելու իրենց ձեռքը վերցնել Ռուսաստանի ողջ արտաքին առեւտուրը եւ գանձարանին չօչափելի եկամուտներ բերելը:

Կայսրի այդ ցանկութիւնը արձագանք գտաւ հայ վաճառականների մօտ, որոնցից առաջինը Մանուէլ Իսախանովն էր, որը կազմակերպեց առեւտրական մի ընկերութիւն, որին յանձնւեց Իրանի հետ առեւտուր անելու ողջ մենաշնորհը, բացառութեամբ ռազմական ապրանքների: Աւելորդ չէ նշել նաեւ, որ այդ ընկերութիւնը հիմնւած էր փայատիրական սկզբունքների վրայ, որը առաջինն էր Ռուսաստանում:

XVIII դարի սկզբներին Ռուսաստանի հետ առեւտրում զբաղւած էին ոչ միայն իրանահայ, այլեւ արեւմտահայ վաճառականները: 1695-1696 թ.թ. պատերազմից յետոյ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ տեղի ունեցող բանակցութիւններում քննարկւող

կարեւորագոյն հարցերից մէկն էր ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կհեշտացնէին ռուս վաճառականների առեւտուրը Կաֆայի, Սինոպի եւ Կ. Պոլսի հետ, ինչպէս նաեւ Թուրքիայի վաճառականների առեւտուրը Ազովի, Կիեւի եւ Մոսկուայի հետ: Սակայն չնայած բանակցութիւնների ժամանակ տուած խոստումներին, օսմանեան կառավարութիւնը վճռականօրէն արգելակում էր ռուսական առեւտրի զարգացումը Սեւ ծովի աւազանում: Անտարակոյս նման պայմաններում դարձեալ առաջնակարգ կարեւորութիւն էր ձեռք բերելու ցամաքային ճանապարհներով առեւտուր անող հայ վաճառականների դերը: Այդ մասին են վկայում բազմաթիւ փաստեր: Այսպէս, գեներալ-Լէյտենանտ Մատիւշկինը 1725 թ. դեկտեմբերի 15-ին դիմում է արքունիքին, խնդրելով որպէսզի թոյլ տրւի ընդունել թուրքահպատակ հայերի բերած արծաթը: 1726 թ. յունուարի 12-ին Հալէպի եւ Դամասկոսի հայ վաճառականները ներկայացնում են մի խնդրագիր այն մասին, որ իրենց թոյլ տրւի Աստրախանի վրայով Ազովեան երկրամասերի հետ առեւտուր անել եւ բերել թուրքական ապրանքներ: Նրանք խնդրում էին նաեւ, որ իրենցից վերցնեն այն չափով մաքսեր, որքան որ վերցուում են ջուղայեցիներից: Ռուսական կառավարութիւնը ընդառաջ գնաց այդ խնդրանքին եւ թոյլատրեց: Այդ ժամանակւանից սկսած հայերը ծաւալեցին իրենց առեւտուրը Կաֆա եւ Տաւրիկեան այլ քաղաքների հետ, որտեղից յաճախակի անցնում էին նաեւ Լեհաստան՝ Կամենից, Լեմբերդ եւ այլ քաղաքներ: [183, էջ 47-48]

Խոջաները Ռուսաստան ապրանքներ տեղափոխելու համար ունեցել են նաեւ իրենց սեփական ծովային նաւերը: Այդպիսի նաւեր ունենալու համար նրանք նախապէս ցարական արքունիքից ստացել էին թոյլտուութիւն: Պետական սենատը 1769 թ. նոյեմբերի 17-ին որոշում է կայացնում «թոյլ տալ Աստրախանի հայերին կառուցելու ծովային նաւեր՝ կասպից ծովի վրայով ապրանքներ փոխադրելու համար»: [234, մաս I, էջ 27]

Չնայած այն հանգամանքին, որ XVIII դարի առաջին քառորդին ռուս-իրանական առեւտուրը դեռեւս գտնւում էր վերելքի վիճակում, սակայն առաջւայ պէս պարսկական արտաքին առեւտրի համակարգի մէջ էական փոփոխութիւններ տեղի չէին ունեցել: Այսինքն Իրանը առաւել սերտ առեւտրական կապերով չարունակում էր կապւած մնալ Թուրքիայի հետ եւ Իրանի հայ վաճառականութիւնը եւս հիմնականում առեւտրական գործառնութիւններ էր կատարում Թուրքիայի եւ Լեւանտի կենտրոն-

ներում: [257, էջ VIII]

Դրան նպաստող հանգամանքներից մէկն այն էր, որ ռուսչեղական պատերազմի սկզբում, մինչեւ 1705 թ. ներառեալ, մետաքսի արտահանումը ռուսական նաւահանգիստներից խստօրէն դադարեցուել էր: Բացի այդ, ինչպէս եւ նախորդ դարում, իրենց ստանձնած պայմանագրային պարտաւորութիւնների ձախողումը հայ վաճառականները պատճառաբանում էին Կասպ-Վոլգեան ճանապարհի անյուսալիութեամբ, ռուսական վարչութեան անօրինական գործողութիւններով եւ գանձւող մաքսատուրքերի չափից աւելի ծանր պայմաններով: Ոչ պակաս կարեւոր խոչընդոտ էր հանդիսանում նաեւ Ռուսաստանի հարաւում համարեա անընդմէջ բռնկւող խռովութիւնները: Հայ վաճառականները յատկապէս մեծ վնասներ կրեցին 1705-1707 թուականներին Բուլաւինի ապստամբութեան ժամանակ: Նման վտանգներ նրանց սպասում էին նաեւ Հիւսիսային եւ Բալթիկ ծովերում, որտեղ նրանք յաճախակի ենթարկւում էին եւրոպական ծովահէնների յարձակումներին: Ռուսական արքունիքին ներկայացրած իր բողոքագրի մէջ հայ վաճառական Սաֆար Վասիլեւը, օրինակ, նշում էր, որ 1705-1706 թ.թ. նման մի յարձակման հետեւանքով ծովահէնները բռնագրաւել են հայ վաճառականների մեծ քանակութեամբ ապրանքներ, ծանր վնասներ հասցնելով եւ՛ նրանց եւ՛ արքունիքին: Այդ կապակցութեամբ Սաֆար Վասիլեւը առաջարկում էր ապրանքների արտահանման եւ ներմուծման համար օգտագործել ոչ թէ Արխանգելսկ նաւահանգիստը, այլ Նովգորոդը եւ Ռուգոդեւը: Այդ բողոքը արժանացաւ ռուսական արքունիքի ուշադրութեանը եւ Պետրոս Իի կառավարութիւնը հրապարակեց մի հրամանագիր, որտեղ նշում էր, որ անհրաժեշտ է ընդառաջ գնալ հայ վաճառականների խնդրանքին եւ թոյլատրել, որ նրանք ապրանքները արտահանեն եւ ներմուծեն Ռուգոդեւի եւ Ս. Պետերբուրգի վրայով, «ինչպիսի նաւերով որ ցանկանան, թէկուզ դրանք լինեն չեղական»: [257, էջ VII]

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ վաճառականները ոչ մի կերպ չեն ցանկանում հրաժարւել թուրքական ցամաքային կարաւանային ճանապարհներից եւ որ ռուսական կառավարութեան կողմից գործադրւած ջանքերը իրանական մետաքսի արտահանումը չեղել բացառապէս դէպի Ռուսաստան միանգամայն ապարդիւն է, շահական կառավարութեան հետ բանակցութիւնների ժամանակ Վոլինսկին փորձում էր հասնել

նրան, որ հակառակ Իրանում գոյութիւն ունեցող արգելքի, ռուս վաճառականներին թոյլատրի Գիլանում եւ Շիրւանում հումմետաքս գնել անմիջականօրէն նրա արտադրողներից, առանց միջնորդների եւ ամենակարեւորը որպէսզի ճանաչի նրանց առաւելագոյն իրաւունքը Իրանում հում-մետաքս գնելու ուղղութեամբ: Անտարակոյս այս առաջարկները անմիջականօրէն ուղղուած էին հայ վաճառականների եւ մանաւորապէս «Նոր Ջուղայի հայկական առեւտրական ընկերութեան» դէմ, որն օգտւում էր իրանական մետաքս գնելու եւ արտահանելու առաւելագոյն իրաւունքից: Սակայն ռուսական դեսպանի վերոյիշեալ առաջարկները ձեռնտու չէին շահ Սուլթան Հոսէյնին եւ վերջինս վճռականօրէն այն մերժեց: Դեսպանին յայտնւեց, որ ռուս վաճառականներին իրաւունք է տրւում Գիլանում եւ Շիրւանում մետաքս գնել եւ մաքսեր վճարելով այն արտածել Ռուսաստան միայն իրանահպատակ վաճառականների հետ հաւասար իրաւունքներ ունենալու պայմաններով: [259]

Ի վերջոյ Իրանում վարած բանակցութիւնները Վոլինսկուն բերեցին այն համոզման, որ 1717 թ. կնքւած ռուս-իրանական պայմանագիրը ի վիճակի չէ կայուն պայմաններ ստեղծել ռուս-իրանական առեւտրա-տնտեսական յարաբերութիւնների հետագայ զարգացման համար: Իրենց հերթին, Նոր Ջուղայի խոյաները եւս բնաւ ցանկութիւն չէին դրսեւորում հաշւի նստել ռուս-իրանական վերոյիշեալ պայմանագրի հետ եւ ամէն կերպ աշխատում էին շրջանցել այն եւ չկատարել նրա պայմանները: [259, No 2 p.p. 586-587]

Հէնց այդ պատճառով Վոլինսկին սկսեց եռանդուն կերպով գործել, որպէսզի ռուսական կառավարութիւնը չեղեալ յայտարարի Նոր Ջուղայի հայ առեւտրական ընկերութեան հետ մոսկովեան կառավարութեան կնքած բոլոր հին պայմանագրերը: Անսալով իր դեսպանի պնդումներին եւ հաւատ ընծայելով նրա բերած փաստարկներին, Պետրոս 1719 թ. յունիսի 6-ին հրապարակեց հրամանագիր՝ չեղեալ յայտարարելով վերոյիշեալ բոլոր պայմանագրերը: Սակայն գործը շահմանափակւեց դրանով: Իական փոփոխութիւն նշմարւեց նաեւ հայ վաճառականների նկատմամբ ռուսական կառավարութեան վարած քաղաքականութեան մէջ: Նրանց ամէն կերպ, «շոյելու», արտօնութիւններ ու իրաւունքներ շնորհելու, ինչպէս նաեւ Ռուսաստանի հետ տնտեսական համագործակցութեան կողմը ներգրաւելու գիծը իր տեղը զիջելու էր դեսպան Վոլինսկու կողմից առաջարկւած նոր քաղաքակա-

նութեանը, որի նպատակն էր արագացնել արշաւանքը դէպի Իրան եւ գաւթել այդ երկրի մերձկասպեան մեծաքաղաք շրջանները եւ նման ճանապարհով արմատապէս լուծել ռուս-իրանական առեւտրա-տնտեսական բարդ յարաբերութիւնների կնճիռը: [257, էջ XIII] Այսպիսով ռուս-իրանական ռազմական ընդհարումն հասունանում էր, որի մէջ իր որոշակի դերն էր խաղում նաեւ օսմանեան Թուրքիան, որին յատկապէս գրգռել էր 1717 թ. ռուս-պարսկական պայմանագիրը: Սպահանում թուրքական դեսպանը ուժեղ ճնշում էր գործադրում շահ Սուլթան Հոսէյնի վրայ, որպէսզի վերջինս ստիպի իրանական վաճառականներին ողջ հում մեծաքանակ արտահանելու դէպի Թուրքիա: Իսկ 1721 թ. օգտուելով նրանից, որ աֆղանները շրջապատել են մայրաքաղաքը՝ Սպահանը եւ շահական կառավարութիւնը գտնւում է անելանելի վիճակի մէջ, թուրքական դեսպանը շահից վերջնագրային ձեւով պահանջեց արգելել եւրոպական վաճառականների մուտքը Պարսից ծոց, դադարեցնել իրանական ապրանքների արտահանումը դէպի Ռուսաստան եւ ողջ պարսկական մեծաքանակ արտահանել եւրոպա բացառապէս թուրքական առեւտրական ճանապարհներով: Մի թաժամանակ կոպիտ կերպով միջամտելով Իրանի ներքին գործերին թուրքական դեսպանը պահանջեց, որ Իրանը ապահովի իրեն սեփական ծովային նաւերով եւ սանձ դնի կասպից ծովում ռուսական նաւարկութիւնը: [260, էջ 68] Օսմանեան կայսրութեան ռազմաշունչ տրամադրութիւնները հարեւան Իրանի նկատմամբ բացատրւում է նրանով, որ 1718 թ. Պասարովիցայում նա կնքել էր խաղաղութեան դաշնագիր Աւստրիայի հետ, իսկ 1720 թ. «յաւերժական պայմանագիրն» էր ստորագրել նաեւ Ռուսաստանի հետ: Այլ կերպ ասած օսմանեան կառավարութեան համար բարենպաստ պայմաններ էին ստեղծւել արեւմուտքում ունեցած տարածքային կորուստների համար փոխհատուցում որոնել արեւելքում, մասնաւորապէս Իրանում, որի մեծաքաղաքներ շրջանները, յատկապէս Գիլանը եւ Մազանդարանը վաղուց ի վեր գտնւում էին թուրքերի սեւեռուն ուշադրութեան կենտրոնում:

Հայ վաճառականութեան նկատմամբ ռուսական կառավարութեան որդեգրած վերոյիշեալ կոշտ քաղաքականութիւնը անհարիր էր Ռուսաստանի տնտեսական շահերին: Եւ պատահական չէ, որ ռուսական զօրքերի կողմից կասպիական ծովափի նւաճումից յետոյ կայսրը իր 1723 յուլիսի 5-ի եւ 1725 թ. յուլիսի 8-ի հրամանագրերով վերստին վերականգնեց հայերի նախկին

առեւտրական իրաւունքներն ու արտօնութիւնները, ինչպէս նաեւ նրանց ազատ առեւտուրը Ռուսաստանում: Ռուսական քաղաքականութեան այս շրջադարձը խոկոն արձագանք գտաւ հայ առեւտրական բուրժուազիայի կողմից:

Ռուսաստանի վրայով հայ վաճառականները լայն առեւտրական կապեր ունէին ոչ միայն Արեւմտեան Եւրոպայի տնտեսապէս զարգացած երկրների, այլեւ Արեւելեան Եւրոպայի համարեայ բոլոր երկրների ու պետութիւնների հետ:

Առանձնապէս աչքի էր ընկնում հայերի առեւտուրը Լեհաստանի հետ: Յայտնի է, որ հայ վերաբնակների առանձին խմբեր Լեհաստանում սկսել են երեւալ դեռեւս VII դարից: Այս վաղ գաղթի պատճառը բիւզանդա-արաբական մօտ երեքհարիւրամեայ աւերիչ պատերազմն էր (VII-X դարերում) զուգակցած բիւզանդական կայսրների ննդ քաղաքականութեամբ, որի նպատակն էր հայերին Հայաստանից տեղահանելը: Զանգւածային գաղթի առաջին փուլը կազմեցին 150 հազար հայեր, որոնք Բալկաններ, Ղրիմ եւ Կովկասեան ծովափ գաղթեցին սելջուկների Անին գրաւելուց եւ հիմնահատակ անելուց յետոյ:

1475 թ. երբ թուրքերը գրաւեցին Կաֆան, քաղաքի հայ բնակչութիւնը, որը կազմում էր մօտ 45 հազար մարդ, ստիպւած եղաւ գաղթել դէպի Լեհաստան, որովհետեւ գաւթիչները կազմակերպեցին հայերի զարհուրելի կոտորած: Ղրիմից հայերի դատարկումը ունեցաւ այն հետեւանքը, որ Սեւ ծովով այլ երկրների հետ կատարւող առեւտուրը, որի մէջ առաջնակարգ դեր ունէին հայ վաճառականները, միանգամայն խաթարւեց:

Հայերի ներգաղթը Լեհաստան շարունակւում էր նաեւ XVI-XVII դարերում: Մասնաւորապէս XVI դարի վերջերին եւ XVII դարի սկզբներին Ջալալիների ապստամբութիւնների հետեւանքով Արեւմտեան Հայաստանից տեղի ունեցաւ զանգւածային գաղթ դէպի Ղրիմ, Ուկրաինա եւ Լեհաստան: Լեհաստանի մի շարք քաղաքներում Լւով (Ռլով), Զամոսց, Ստանիսլաւ, ինչպէս նաեւ Լեհաստանի կազմում գտնւող ռուսական քաղաքներում Վլադիմիր - Վոլինսկիում (Վլոձիմեժ), Լուցկում, Կիեւում (Մանկերման), Ձերկասկում, Ժիտոմիրում եւ այլն ստեղծեցին հայկական համայնքներ: Մասնաւորապէս Լւով, Լուցկ եւ Կամենեց-Պոդոլսկ քաղաքները իրենց հարստութեամբ ու նշանակութեամբ մասամբ պարտական են Արեւելքի ու Արեւմուտքի ցամաքային ուղիների միջեւ առեւտրական միջնորդների դեր կատարած հայ վաճա-

ական՝ներին: Հետագայում Ղրիմի խտալական գաղութների անկումից յետոյ նրանք նոյն դերը կատարում էին նաեւ Սեւ ծովի նաւագնացութեան միջոցով: [262, էջ 221]

Զգալի քանակութեամբ հայեր կուտակուեցին նաեւ Եազլովեց, Բար, Տիմոնիցա, Պոդհայցէ, Զլոչու (Զոլոչեւ), Ժուանեց, Բարեկ, Բրոդի, Բեժեժանի, Անյատին, Լիսեց, Կուտի, Բայտա, Ռաշկով, Մոհիլով, (Մոգիլիով-Պոդոլսկի) բնակավայրերում, ինչպէս նաեւ Վարշաւա եւ Լիւբլին քաղաքներում:

Լեհահայերի գրաղմունքը աչքի էր ընկնում իր բազմազանութեամբ: Սակայն գործունէութեան առաւել տարածուած բնագաւառը առեւտուրն ու արհեստներն էին: Լեհահայերի կազմում առանձնապէս ազդեցիկ էր վաճառականների խաւը, որի ձեռքին էր գտնւում Արեւելքի հետ կատարւող գրեթէ ողջ առեւտուրը: «Հարաւային Ռուսիայի քաղաքների միջին շրջանի պատմութեան մէջ,- գրում է պրոֆեսոր Ի. Լինդիշենկոն,- հայերին շատ նշանաւոր տեղ է պատկանում: Առանց որեւէ չափազանցութեան կարելի է հաստատել, որ հարաւային Ռուսիայի ամենահռչակաւոր առեւտրական կենտրոնները, ինչպիսիք են՝ Լւովը, Լուցկը, Կամենեց-Պոդոլսկը, իրենց հարստութեամբ, փարթամութեամբ եւ նշանակութեամբ մեծաւ մասամբ պարտական են առանձնապէս հայերին: Այս ճարպիկ, աշխոյժ եւ ընդունակ ամենայն ձեռներէցութեանց ժողովրդի շնորհիւ էր յատկապէս, որ հարաւային ռուսաց առեւտրական կենտրոնները միջնորդ դարձան Արեւելքի եւ Արեւմուտքի վաճառականութեան մէջ: Մանօթ լինելով կեանքի պայմաններին Արեւելքում, տեղեակ արեւելեան լեզուներին, քաջ ճանաչելով հաղորդակցութեան ճանապարհներին Արեւելքում, օժտուած անձնական քաջութեամբ եւ զէնք շարժելու վարժ, անհրաժեշտ յատկութիւններ վտանգաւոր ուղեցնացութիւններ կատարելու... հայերը շատ հին ժամանակներից ձեռնամուխ եղան ցամաքային առեւտրին Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ, իսկ խտալական գաղութների անկումից յետոյ Ղրիմում, բոլոր վաճառականութիւնը նոքա իրանց յաջողակ ձեռքը ձգեցին»: [284, էջ 3]

Լեհահայերը գործօն մասնակցութիւն էին բերում նաեւ Սեւ ծովով կատարւող միջազգային առեւտրին, սերտ առեւտրական կապեր պահպանելով յատկապէս Վենետիկի հետ: [283, էջ 9-21]

Լեհական թագաւորները՝ Հենրիկ Վալեզին, Ստեփան Բատորին, Զիգմունդ երրորդը, Եան Կազիմիրը, Եան Սոբեսկին եւ Մանկասյաւ Օգոստոսը բարձր են գնահատել առեւտրի, ար-

հեստների, ինչպէս նաեւ Լեհաստանը Թուրքերից պաշտպանելու ուղղութեամբ հայերի ունեցած ծառայութիւնները, նրանց ժրաջան աշխատանքը եւ հասարակական ակտիւութիւնը եւ ըստ այնմ նրանց շնորհել են տարբեր իրաւունքներ եւ արտօնութիւններ:

Այսպէս, 1505 թ. հրովարտակով Սիգիզմունդ Թագաւորը հայ վաճառականներին ազատում է մաքս վճարելու պարտաւորութիւնից: [264]

Դեռեւս 1519 թ. լուսահայերը լեհական թագաւորին են ներկայացնում այսպէս կոչած «Հայկական օրէնսդրութիւնը», որը չափազանց կարեւոր դեր խաղաց լեհահայերի իրաւա-քաղաքական վիճակը սահմանելու գործում: Դրանով հայերը ստացան դատական ինքնավարութիւն եւ դա այն պայմաններում, երբ այդ ժամանակ Լեհաստանի տարածքում գործում էր արեւմուտքից ընդօրինակած «բնդհանուր իրաւունքը»: Խօսելով Լեհաստանում հայերի ունեցած արտակարգ լայն իրաւունքների մասին, լեհ պատմաբան Զակշեւսկա - Դուբասովան նշում է, որ հայերը, «համարեայ միշտ առաջին տեղն էին գրաւեցնում լեհ աւագանուց յետոյ»: [263, էջ 44] Հայ վաճառականների մէջ եղել են նաեւ դրամատէր այնպիսի մարդիկ, որոնք փոխարինաբար փող են պարտք տուել լեհական թագաւորներին՝ Սիգիզմունդ երրորդին, Վլադիսլաւին եւ ուրիշների:

16-18-րդ դարերում Լեհաստանի արեւելեան առեւտուրը՝ հիմնականում Օսմանեան Թուրքիայի եւ Իրանի հետ, իրագործւում էր Բեսարաբիայով եւ Սեւ ծովով, ինչպէս նաեւ՝ Մոսկովեան Ռուսիայով եւ Անդրկովկասով (կամ Կասպից ծովով): Հայ վաճառականների համար առեւտրական բանուկ ճանապարհ էր յատկապէս Վարշաւա-Լիւբլին-Եաչ-Սեւ ծով-Անդրկովկաս-Իրան երթուղին: Ընդորում այս ճանապարհով աշխոյժ առեւտուր էին անում ոչ միայն պարսկահայ խոջաները, այլեւ լեհահայ միջազգային առեւտրով զբաղւող վաճառականները: [265, էջ 163-173] Այդ մասին կայ հետեւեալ ուշագրաւ փաստը: Գրիգոր Լուսիկովը Մոսկւայում ձգտում էր ռուս-լեհական պայմանագիր կնքելու բանակցութիւնների ժամանակ, կնքուելիք պայմանագրի մէջ մտցնել մի կէտ, որը հնարաւորութիւն կտար Նոր Ջուղայի հայ առեւտրական ընկերութեան անդամներին անարգել ել ու մուտք ունենալ Լեհաստանում, իսկ լեհական վաճառականներին Իրանում:

Ռուսաստանը Մոլդաւիայի եւ Վալախիայի հետ կապող լեհական ճանապարհի վրայ ընկած էին այնպիսի առեւտրական կենտրոններ, ինչպիսիք էին Վարշաւան, Լեմբերգը (Լեմբերգ) եւ

կամենեցը: Այդ քաղաքներում, ինչպէս նաեւ Մոլդավիայում բազմամարդ հայկական գաղութների առկայութիւնը (Սուչաւա, Եասսի) անչուշտ հեշտացնում էր հայ վաճառականների առեւտուրը: Մոլդաւահայերից հիմնականում գնում էին խոշոր եղջերաւոր անասուններ, ապխտած ձուկ, գինի եւ այլն, որոնց մի մասը վերառաքւում էր Գերմանիա: Գերմանացի պատմաբան Գ. Կելլենբենցը յնեւելով արխիւային փաստաթղթերի վրայ վկայում է, որ յատկապէս Լւովում եւ Լիւբլինում հայ վաճառականներն ունէին խոշոր առեւտրական գրասենեակներ, որոնք իրականացնում էին միջնորդական բնոյթի առեւտրական գործառնութիւններ Լեհաստանի ու Ռուսաստանի, Լեհաստանի եւ Թուրքիայի, Լեհաստանի ու արեւմտեան պետութիւնների միջեւ: [267, էջ 9]

Լեհարնակ հայ խոջաներն իրենց ներկայացուցիչներն են ունեցել ժամանակի առեւտրաշատ բոլոր աչքի ընկնող կենտրոններում Պոլսում, Զմիւռնիայում, Սպահանում, Մոսկւայում, Ամստերդամում, Մարսէլում եւ այլն: Սիմէօն Լեհացին խօսելով Լւովի մեծահարուստ հայ վաճառականների մասին գրում է. «... (Նոքա) վաճառականք են մեծ եւ անուանիք, ունին եւ վէքլին Ստանպոլ, Անկուրի, Սպահան, Մօսքով, Կտանսկա, Պորտուկալ եւ այլն: Կան ի միջի նոցա խոճայք, որ ունին ՄՌ (50.000), ԿՌ (60.000), ՁՌ (80.000) եւ ՃՌ (100.000) զուռուշ կամ աւելի: Ունին մուլքեր, պաղ ու պաղչանի, պտղատու ծառեր, պարտէզք, բուրաստանք, ծաղկաստան եւ վարդենիք, այլ եւ բարձր սարայք դարպասանի եւ աղբերք յորդարուղք, եւ լիճք եւ մէջն՝ մեծ եւ լայն, լի ձկամբ, զօր ոմանք եւ աշտարակք եւ սարայնի ունին ի վերայ ջրոյն զարմանաշէն»: [167, էջ 338]

Լեհաստանի հետ առեւտրում ռուսական առեւտրական ուղիների հետ միաժամանակ հայ վաճառականները օգտագործում էին նաեւ թուրքական կարաւանային ճանապարհները: Եւրոպացի ուղեգիրների վկայութեամբ, նրանք ապրանքները Իրանից ցամաքային ճանապարհով բերում էին Կ.Պոլիս եւ այնտեղից այնուհետեւ տեղափոխում Բուդդանիա (Bogdania), այսինքն Մոլդաւիա, Լեհաստանի վրայով ցրելով Դանիա, Շվեդիա եւ այլ երկրներ: Միաժամանակ նրանք նշում են, որ ծախսերի մեծ լինելու պատճառով ստացած շահոյթը շատ քիչ էր «հակառակ աչքը առնուած վտանգի, ինչպէս պատմեցին ինձ մի քանի հայեր, որոնց ես հանդիպեցի Թաւրիզում, եւ յետոյ Տրապիզոնում»: [4, էջ 348]

Այսպիսով Ղրիմի, Ուկրաինայի եւ Լեհաստանի հայ առեւտ-

բականները սերտ կապեր էին պահպանում Թուրքիայի՝ Տրապիզոնի, Թոխաթի, Էրզրումի եւ Կ. Պոլսի, ինչպէս նաեւ Իրանի հետ «օղակ կազմելով արեւելա-եւրոպական երկրների եւ ասիական շուկաների միջեւ»: [17, էջ 426]

Լեհահայերը առեւտրական նպատակներով հասնում էին մինչեւ Չինաստան, իսկ Արեւմուտքում Ջենովա, Փորթուգալիա: Անդրկովկասի առեւտրական կենտրոններից նրանք գերադասում էին Երեւանը, Էջմիածինը, Գանձակը, Շամախին եւ այլն:

Լեհաստանի արեւելեան առեւտուրը վճռական նշանակութիւն ունէր նրա հարաւային հարեւանների՝ Հունգարիայի եւ Ռումինիայի տնտեսական զարգացման տեսակէտից: Զակշեւսկա-Դուբասովան իրաւացիօրէն նշում է, որ «Լեհաստանում արեւելեան առեւտրի համար բնորոշ էր այն, որ այն գրեթէ ամբողջովին գտնւում էր հայերի ձեռքին... Լեհ եւ ռուս վաճառականներին չէր յաջողւում մրցակցել հայերի հետ»: [263, էջ 125]

Վկայակոչելով մի շարք պատմաբանների, նոյն հեղինակը յայտնում է, որ Լւովի հայկական բնակութեան 30-40 տոկոսը զբաղւում էր արհեստագործութեամբ: Նա այն միտքն է յայտնում, որ «արհեստը եւ արեւելեան առեւտուրը կարող էին զարգանալ միայն հայ արհեստաւորների օգնութեամբ»: [263, էջ 148]

Ց. Քիւրդեանը ենթադրում է, որ հայերն էին որ առաջին անգամ Լեհաստան բերեցին մետաքս եւ լեհացիներին ծանօթացրին մետաքսագործութեան հետ: [129, էջ 84] Նրանք Լեհաստան էին ներմուծում արեւելեան համեմունքներ, խունկ, պղպեղ, պերճանքի առարկաներ, թանկարժէք գորգեր, երկնակապոյտ թաւիշներ, կանանց դամասկեան կերպասներ, բոսորագոյն ակնահիւս դիպակներ, քիշմիրի շալեր, մետաքսէ նուրբ գործուածքներ եւ այլն: [199, էջ 84] «Լւովի եւ արեւելեան Լեհաստանի սահմանակից քաղաքներուն մէջ հաստատուած հայերը կը զբաղէին վաճառականութեամբ եւ առեւտրով Լեհաստանի եւ արեւելեան երկրներու միջեւ: Թուրքիայէն, Սիրիայէն, Արաբիայէն, Եգիպտոսէն, նոյնիսկ Հնդկաստանէն ապրանք բերել կուտային: Արեւելեան բոլոր թանկագին վաճառքները իրենց ձեռէն կանցնէին»: [268, էջ 213-214]

Լեհ պատմիչ Վ. Լոզինսկին վկայում է, որ արեւելեան մի շարք ապրանքներ Լւովում անւանում էին «հայկական ապրանք»: Դրանք նախ եւ առաջ պերճանքի առարկաներ էին՝ գորգեր, ոսկեհիւս կտորներ, արծաթէ եւ ոսկէ սպասք, ձիու սարք, զէնքեր՝ զարդարուած փորանկարներով ու թանկագին քարերով եւ այլն, յովսեփ

մորթի: Լեհաստանի մաքսային սակագներում որպէս «հայկական ապրանքներ» են նշուած նաեւ գինին, համեմունքները, այդ թւում պղպեղը, զաֆրանը, մեխակը, չամիչը, բրինձը, հարաւային մրգերը, ձէթը, սուրճը, թէյը եւ այլն: [263, էջ 130] [269, էջ 92] Թէոդոսիայից Զամոսց գաղթած հայազգի Մուրատովիչը ըստ ընձեռնած մենաշնորհի, տեղում կազմակերպել էր պարսկական գորգերի արտադրութիւն: Ի դէպ, Զամոսց քաղաքի հիմնումը ամբողջովին պայմանաւորած էր արեւելեան առեւտուրը եւ արհեստը արմատաւորելու նկատառումներով: Զամոսցի ամենահարուստ վաճառականներից մէկն էր Կիրկորովիչը, որը իր ժառանգորդներին թողեց 900 հազար զլոտի արժողութեամբ ունեցածք: [263, էջ 147]

Լեհ պատմաբանները յայտնել են նաեւ այն տեսակէտը, որ հայերի ներկայութիւնը լեհական քաղաքներում հարստացրեց Ռեչ Պոսպոլիտայի ոչ միայն նիւթական, այլեւ մտաւոր մշակոյթը: [263, էջ 223]

Ինչպէս նշւեց վերեւում, հայ վաճառականները խոշոր առեւտուր ունէին նաեւ Մոլդաւիայի հետ: Այդ երկրով անցնում էին առեւտրական երկու ուղիներ, որոնք Արեւմտեան Եւրոպայի երկրները կապում էին Արեւելքի հետ: Այդ ուղիներից մէկը, որը կոչւում էր Մոլդաւական առեւտրական ուղի, Կրակովը եւ Լւովը կապում էր Սեւ ծովի հետ՝ անցնելով Զեստատի Այրիայից, Սուչաւայից, Սիրեթից եւ Բրոլադից: Միւսը, որ կոչւում էր Թաթարական առեւտրական ուղի անցնում էր Լուկկի եւ Վլադիմիրի վրայով դէպի Ղրիմի նաւահանգստային քաղաքները:

Ռումինացի պրոֆեսոր Ե. Անջէլեսկուն «Ռումինացիների տնտեսութեան պատմութիւնը» խորագրով աշխատութեան մէջ գրում է, -«Եթե ռումինացիներին յաջողւեց իրենց հին առեւտրական ծաղկման շրջանում ճանաչել Սեւ ծովի բոլոր եզերքները, անգամ թափանցել Միջերկրականը՝ նեղուցների ճանապարհով, ապա այդ չպէտք է վերագրել խալացիներին, այլ արեւելքը լաւ ճանաչող ուրիշ առեւտրականների՝ հայերի: Նրանք մեծ դեր խաղացին ռումինական առեւտրի սկզբնաւորման եւ քաղաքային բնակչութեան կազմութեան մէջ: [270, էջ 341]

ԳԼՈՒԽ V

ՀԱՅԵՐԻ ԱՌԵՒՏՈՒՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ, ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԵՒ ՀԱՐԱՒ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՍԻԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

Վաղնջական ժամանակներից սկսած Արաքս գետի հովտի բնակիչները կարեւոր դեր են խաղացել ներքին Ասիայի առեւտրի մէջ: Յատկապէս հնուց անտի հայ վաճառականները առեւտրական յարաբերութիւններ են ունեցել Հնդկաստանի հետ: [271] Հայաստանը գտնւում էր հնդկական առեւտրական մեծ ճանապարհի վրայ եւ այդ պատճառով հայերը հնագոյն ժամանակներից սկսած ծանօթ էին Հնդկաստան տանող ճանապարհներին: Դեռեւս Քսենոփոնը իր «Կիւրոպեդիայում» պատմում է, որ պարսից թագաւոր Կիւրոսը կամենալով դեսպանութիւն ուղարկել Հնդկաստան, դիմեց հայերին, իբրեւ ճանապարհը լաւ իմացող մարդկանց, եւ առաջարկեց այդ դեսպանութեան ուղեցոյցը լինել: [211, էջ 507] Արմէնները յանձն են առնում եւ խոստանում միջնորդել հնդկական թագաւորի առաջ՝ առեւտրական յարաբերութիւններ հաստատելու Պարսկաստանի հետ:

Տեղեկութիւններ կան այն մասին, որ 4-րդ դարում քրիստոնէութիւնը առաջին անգամ Հնդկաստան է մտցրել Մար Թովմա Կանա անունով մի հարուստ վաճառական, որը Մադրասի մօտ կառուցել է մի փոքրիկ քաղաք եկեղեցիներով ու դպրոցներով: [37, էջ 469]

Դեռեւս մինչեւ Հնդկաստանում եւրոպացիների՝ պորտուգալացիների եւ անգլիացիների հաստատուելը, այդ երկրի եւ առհասարակ նրան մօտիկ ու հեռու երկրների միջեւ առեւտրական յարաբերութիւնները իրականացւում էին առաւելապէս ցամաքային ուղիներով եւ կարաւաններով: Այդ առեւտրական յարաբերութիւնների մէջ մեծ բաժին ունէին նաեւ հայերը: Մինչեւ Հնդկաստան տանող ծովային ճանապարհի յայտնագործումը հայերն արդէն թափանցել էին այդ երկրի առեւտրաշատ կենտրոնները եւ ցամաքային կարաւանային ճանապարհներով իրագործում էին լայն

առեւտրափոխանակութիւն: Նրանք մեկնում էին Քաբուլ, որտեղից Հնդկաստան էին ուղեւորւում Ղանդահար - Լահոռ - Դելի առեւտրական ճանապարհով: [272, էջ 205-207]

Տեղեկութիւններ կան այն մասին, որ դեռեւս 12-րդ դարից սկսած հայերը Հնդկաստանում ձեռք էին բերում թանկարժէք քարեր, դեղաբոյսեր եւ այլն եւ հիանալի ծանօթ էին Հնդկաստան տանող ճանապարհներին:

16-րդ դարից սկսած հայ վաճառականները սկսում են պատկառելի խմբերով հաստատւել Իրանի եւ Աֆղանստանի կարաւանային ճանապարհների հանգուցային նշանակութիւն ունեցող քաղաքներում: Կոստանդ Ջուղայեցին Ղազին, Բալխ, Բուխարա, Մեշհեդ, Ղանդահար, Քաբուլ քաղաքները, որոնց վրայով անցնում էր արեւելքի առեւտրական խոշոր զարկերակներից մէկը, յիշատակում է այն քաղաքների թւում, ուր հայ վաճառականները առեւտուր էին անում: [202, թ. 1ա-բ]

1670-ական թւականներին Քաբուլում եւ Ղանդահարում արդէն կային հաստատուն հայ գաղթօջախներ, որոնք բաղկացած էին գլխաւորապէս առեւտրականներից ու արհեստաւորներից: [273, էջ 187] Սակայն խոշորները համարեայ բացառապէս զբաղւում էին հնդկական ապրանքների առեւտրով, քանի որ աֆղանական քաղաքները չէին տալիս արտաքին առեւտրի համար պիտանի արտադրանք: [274, էջ 233]

Հնդկաստանում Մեծ Մողոլների դինաստիայի թագաւոր Ջալալուդդին Աքբարը (1556-1605) ցանկանալով զարկ տալ իր պետութեան մէջ ներքին ու արտաքին առեւտրին, հայ վաճառականներին յատկացրեց մի շարք իրաւունքներ ու արտօնութիւններ [273, էջ 11] ընդհուպ մինչեւ թոյլտւութիւն՝ մտնելու Հնդկաստանի այնպիսի շրջաններ, ուր արգելւած էր օտարերկրացիների մուտքը: Օգտւելով այդ առանձնաշնորհումներից, հայ վաճառականները նորահաստատ մայրաքաղաքում Ակբայում (Աքպարապատ) հիմնեցին առեւտրական հաստատութիւններ, 1562 թ. կառուցեցին մի եկեղեցի եւ այլն: [273, էջ 23] Բացի այդ, նրանք Հնդկաստանի բազմաթիւ քաղաքներում կազմեցին առեւտրական գաղութներ: [273-276] Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովում» բերւում են Հնդկաստանի 30 քաղաքների անւանումներ, որտեղ կային հայ գաղթօջախներ կամ բնակւում էին հայեր: [202, թ. 3ա-3բ]

«Որ յարեւելից գնամք ի յարեւմուտ, - գրում է Կոստանդ Ջուղայեցին, - կալցուք յառաջ Մլթան, 2 Լահոռռ, 3 Սարհնդն, 4

Ջահանապատ, 5 Աքսարապ, 6 Խուրջայ եւ Հնդուան, 7 Բանկալայ, 8 Բիրսրփաթանայ, 9 Բնարիս, 10 Մով, 11 Ղազիսուր, 12 Ջալալիսուր, 13 Շահզադիսուր, 14 Խէրապատ, 15 Դարեապատ, 16 Դովլաթապատ, 17 Սրընջ..., 18 Բեռանիսուան, 19 Սուրաթն, 20 Գուջարաթ, 21 Օվռանկապատ, 22 Շագառն, որ էստոնք տախլ ի Դաքանայ, 23 Հէյտարապատ, 24 Մուչլի պանդարն, 25 Փէկու...» [202, թ. 3ա-3բ]

Աչքի ընկնող հայ գաղթօջախներ են եղել Ագրայում, Սուրաթում, Բուրհանպուրում, Փաթնայում, Ջինսուրում, Բիհարում, Հուկլիում, Քաշմիրում, Բենարեսում, Լահորում, Դելիում, Սէյդարաթում, Մադրասում, Բոմբէյում, Հայդարաբադում, Լակնաուում, Դակկայում եւ բազմաթիւ այլ քաղաքներում: [278, էջ 1-2, 11]

Անգլիացիների Հնդկաստան ներթափանցելուց առաջ հընդկական ներքին եւ արտաքին առեւտրի մի մասը գտնւում էր Հնդկաստանի եւ Իրանի հայ վաճառականների ձեռքերում: [277, էջ 5: 278, էջ 11]

Անհրաժեշտ է սակայն նշել, որ Հնդկաստանի հետ ցամաքային առեւտուրը կապւած էր մեծագոյն դժուարութիւնների հետ: Նախ կարաւանները հսկայական տարածութիւններ պէտք է կտրէին դժուարանցանելի, լեռնային եւ ճանապարհազուրկ վայրերով, որտեղ բնակւում էին բազմաթիւ ռազմաշունչ ցեղեր, որոնց համար կողոպուտը եւ ելուզակութիւնը հանդիսանում էր ապրուստի հիմնական միջոցներից մէկը: Թէեւ Իրանի Սէֆեան շահերը, ինչպէս նաեւ Հնդկաստանի տիրակալները, եռանդուն ջանքեր էին գործադրում այդ ճանապարհները ապահով դարձնելու համար, սակայն դրանք միանգամայն ապարդիւն ջանքեր էին: [279, էջ 172]

Մինչեւ Հնդկաստան տանող ծովային ճանապարհի յայտնագործումը Արեւմուտքի երկրների վաճառականները Հնդկաստանի հետ առեւտուր էին անում հիմնականում արեւելքի, այդ թւում նաեւ հայ վաճառականների միջոցով: Սակայն այդ միջնորդաւորւած առեւտրից օգտւելը բնաւ ձեռնտու չէր նրանց: Հէնց այդ հանգամանքը նշանակալիօրէն արագացրեց Հնդկաստան տանող ծովային ճանապարհների որոնումները:

Պատահական չէ նաեւ, որ այդ ճանապարհի յայտնագործումից յետոյ հայ վաճառականները եւս անմիջապէս սկսեցին հետաքրքրութիւն դրսեւորել այդ նոր ու հեռանկարային առեւտրական ուղու նկատմամբ: Բարեյոյսոյ հրւանդանի յայտնագործումից յետոյ առեւտուրը ցամաքային ճանապարհներից տեղափոխւեց դէպի

Պարսից ծոց, կարմիր ծով եւ Հնդկական ովկիանոս, որի հետեւանքով Միջերկրականի ասիական նաւահանգիստներն ու Մերձաւոր Արեւելքի վրայով կատարւող ցամաքային տարանցիկ առեւտուրը կորցրեցին իրենց նախկին նշանակութիւնը:

Պարսից ծոցի նշանակութիւնը, որպէս Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ առեւտրի միջազգային նշանակութիւն ունեցող ուղի, միանգամից մեծացաւ: Այսուհետեւ հիմնականում այս ճանապարհով պէտք է Արեւմուտք ուղարկէին Զինաստանի, Մալայեան Արշիպելագի եւ Հնդկաստանի արտադրութիւնները:

Դեռեւս 1506 թւականից պորտուգալացիները սկսեցին Պարսից ծոցի առաւել կարեւոր նաւահանգիստների նւաճումը: 1515 թ. անւանի ծովագնաց Ալֆոնսո դ'Ալբուքերքը գրաւեց ծոցի բանային հանդիսացող Հորմոզ կղզին եւ այնտեղ կառուցեց մի ամրոց: Այնուհետեւ իրենց հսկողութիւնը սահմանելով ծոցի եւ առհասարակ ողջ Հնդկական ովկիանոսի նկատմամբ, պորտուգալացիները սկսեցին արգելքներ հարուցել եւրոպական միւս տէրութիւնների նաւագնացութեանը եւ ազատ առեւտրին ծոցի ողջ աւազանում: Առեւտրի նման մենաշնորհացումը ծայրահեղօրէն դժւարացնում էր նաեւ տեղական, մասնաւորապէս իրանական եւ արաբական վաճառականների գործունէութիւնը, յատկապէս խափանելով նրանց առեւտուրը Հնդկաստանի հետ:

Ուշագրաւ տեղեկութիւններ կան նաեւ այն մասին, որ պորտուգալացիների կողմից նոյնանման վերաբերմունքի էին արժանանում նաեւ հայ վաճառականները: Դեռեւս 1563 թ. Դոն Սեբաստիանը ընդունել էր մի օրէնք, որով արգելքներ էր հարուցում հայերի, յոյների եւ պարսիկների այցելութիւններին Պորտուգալիա: [195, էջ 54] Այդ օրէնքում ասւում էր, որ Լիսաբոն քաղաքում կամ թագաւորութեան որեւէ մէկ այլ վայրում «անձեր, որոնք իրենց հագուստով, լեզւով ու սովորութիւններով կթւին բլայ հայեր, յոյներ, արաբներ, պարսիկներ կամ ուրիշ ազգութիւններու պատկանողներ, որոնք հպատակ են թուրքերուն, թող ձերբակալւեն, որպէսզի ստուգւի անոնց ինքնութիւնը եւ պատճառը իրենց այցելութեան եւ իրենց առեւտրին եւ թէ որքան ժամանակ պիտի մնան»:

Իսկ 1596 թ. Իսպանիայի թագաւոր Ֆիլիպ II-ը հրահանգ էր տւել Հնդկաստանի փոխարքայ Ֆրանսիսկո դը Կամային «հսկել Օրմուզի հրամանատարին տրւած հրամանի գործադրութեան, առանց գայթակղութեան տեղի տալու, արգիլելու համար, որ

վենետիկցիներ, հայեր եւ ուրիշ օտարականներ մուտք գործեն Հնդկաստանի մէջ։ [195, էջ 54]

1524 թ. Սէֆեան գահ բարձրացած շահ Թահմասպը (1524-1576) իր գահակալութեան աւելի քան կէս դարի ընթացքում ի վիճակի չեղաւ արդիւնաւէտ պայքար կազմակերպելու պորտուգալացիների դէմ։ [280, էջ 16] Թուրքերի համարեայ անընդմէջ ներխուժումներն Իրան բարենպաստ իրավիճակ էր ստեղծում, որպէսզի Պարսից ծոցում պորտուգալացիները տէր ու տնօրինութիւն անեն։

17-րդ դարի սկզբին Սէֆեան Իրանի տնտեսական եւ քաղաքական շահերը պահանջում էին երկրի արտաքին առեւտրի ուղին թուրքական աւանդական կարաւանային ճանապարհներից տեղափոխել դէպի հարաւ՝ Պարսից ծոց։ Դա շահ Աբբաս Իի նէրիական իդեան էր։ Սակայն շահի բազմաթիւ փորձերը պայմանաւորելու պորտուգալացիների հետ, որպէսզի նրանք անկաշկանդ կերպով թոյլ տան իրանական ապրանքների արտահանումը ծոցով, մնացել էին անպատասխան։ Զուրկ լինելով ռազմական նաւատորմից եւ մանաւանդ վախենալով, որ պորտուգալացիներին պատերազմ յայտարարելու դէպքում Թուրքիան կօգտուի յարմար պահից եւ կվերսկսի պատերազմական գործողութիւնները Իրանի դէմ, շահ Աբբասը խոհեմութիւն էր համարում ձեռնպահ մնալ պորտուգալացիների դէմ վճռական գործողութիւններից։ Նրան զսպում էր նաեւ այն հանգամանքը, որ 1580 թ. Պորտուգալիան եւ Իսպանիան միաւորուել էին թագաւորական ունիայով եւ իրենց շահերը վտանգելու դէպքում այդ երկու հզօրագոյն պետութիւնները հանդէս կգային համատեղ։

Աւելորդ չէ նշել, որ Պարսից ծոցը շահ Աբբաս Իին հետաքրքրում էր ոչ միայն ռազմա-ստրատէգիական, այլեւ առեւտրատնտեսական նկատառումներով։ Մնդիրը նրանումն էր, որ մետաքսի առեւտուրը, որը շահական գանձարանին բերում էր խոշոր շահոյթներ, հիմնականում իրականացւում էր Իրանի ոսերիմ թշնամու՝ Թուրքիայի տարածքով։ Մինչդեռ Օսմանեան կայսրութիւնում յաճախակի տեղի ունեցող ներքին խռովութիւնները, փաշաների եւ մաքսային աստիճանաւորների կամայականութիւնները, կարաւանային ճանապարհների վրայ անվտանգութեան բացակայութիւնը, թուրք-իրանական համարեայ անընդմէջ պատերազմները եւ այլն խոչընդոտում էին Իրանի արտաքին առեւտուրը եւ Սէֆեան պետութեան տնտեսական շահերը կախման մէջ դնում իր ախոյեանի քմահաճոյքից։ Շահ Աբբասի պալատական

պատմիչ Իսքենդեր Մունշին հաղորդում է, որ քիչ չէին դէպքերը, երբ թուրքական իշխանութիւնները բռնագրաւում էին հէնց իր՝ շահի ապրանքները: «Ահմեդ փաշան (Վանի կառավարիչը Վ.Բ.), - գրում է նա, - 1602 թ. գայթակղեցնելով խասսէ-ի շերիֆէ վաճառականներից մէկի գոյքով, սպանեց նրան եւ ձեռք բերեց ամբողջ ունեցուածքը»: [41, էջ 440]

Այս բոլորը մղում էին շահ Աբբասին փնտրել Իրանի արտաքին առեւտուրն իրականացնելու այլ ուղիներ, որոնցից առաւել յարմարն ու արդիւնաւէտը կարող էր լինել Պարսից ծոցի վրայով անցնող ծովային ճանապարհը: 16-րդ դարում թէեւ այն գործող առեւտրական ուղի էր, սակայն թուրքական ճանապարհի հետ համեմատած Իրանի արտաքին առեւտրում ունէր երկրորդական նշանակութիւն: Այդ մասին մենք վկայութիւններ ենք գտնում XVI դարում Իրան այցելած վենետիկցի ճանապարհորդների ուղեգրութիւններում: [4, էջ 348] Ուստի շահը երազում էր փոխել իրերի այդ վիճակը եւ Պարսից ծոցը դարձնել Իրանի համար բանուկ առեւտրական ճանապարհ: Այդ ծրագրի իրագործումը ոչ միայն իրանական գանձարանին կբերէր խոշոր շահոյթներ, այլեւ քաղաքական բնոյթի բազում առաւելութիւններ. մասնաւորապէս Սէֆեան պետութիւնը չօշափելի տնտեսական վնաս կհասցնէր իր ախոյեանին՝ Օսմանեան կայսրութեանը, դադարեցնելով իրանական ապրանքների եւ յատկապէս հում մետաքսի արտահանումը թուրքական կարաւանային ճանապարհներով, որը իր հերթին աւելի կարձակէր Իրանի ձեռքերը իր հարեւանի հետ փոխյարաբերութիւններում: Այնուհետեւ այդ ծրագրի իրականացումը կնշանակէր Սէֆեան պետութեան կենտրոնական նահանգների եւ առաջին հերթին մայրաքաղաքի՝ Սպահանի տնտեսական նշանակութեան արագ աճ, որը հանդիսանում էր շահի ներքին քաղաքականութեան կենտրոնական խնդիրներից մէկը:

Իր մասնաբաներով այս վիթխարի ծրագրի իրագործումը կատարելու էր մի քանի փուլով: Նրա առաջին փուլը հէնց կապւած էր Հայաստանից հայերի բռնագաղթի հետ: Ռուս պատմաբան Ի.Պ.Պետրուշեւսկին իրաւացիօրէն նշում է, որ շահ Աբբասը ցանկանում էր մետաքսի միջազգային առեւտրի կենտրոնը Հին Զուղայից տեղափոխել Իրան եւ այնուհետեւ այդ ապրանքի առեւտրի ուղին Սպահանի վրայով անցկացնել դէպի Պարսից ծոց: [42, էջ 62]

Վերոյիշեալ ծրագրի իրագործման երկրորդ փուլն էր

հանդիսանալու Պարսից ծոցի նաւահանգիստներից եւրոպացիների վտարումը եւ հետեւաբար դէպի համաշխարհային ովկիանոս տանող ճանապարհների բացումը:

Ենթադրւում է, որ Իրանի արտաքին առեւտրի ուղին դէպի Պարսից ծոց ուղղելու քաղաքականութիւնը «ընդառաջում էր նաեւ շահի ռազմաքաղաքական խորհրդատուների՝ անգլիացի Շիրլի եղբայրների նպատակներին եւ գուցէ առանց նրանց յուշարկումների չէ, որ գլուխ բերեց հայերի բռնագաղթը»: [17, էջ 99]

Այս տեսակէտը խարսխւած է հետեւեալ փաստարկումների վրայ. անգլիացիները դեռեւս 15-րդ դարի կէսերից եռանդուն փորձեր էին կատարում ներթափանցելու իրանական շուկայ եւ Իրանի ողջ առեւտուրը կենտրոնացնելու իրենց ձեռքերում: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր նաեւ Պարսից ծոցի շրջանից դուրս մղել պորտուգալացիներին եւ տիրանալ Հորմուզի վրայով կատարւող առեւտրին: [39, հ. III, էջ 68]

Դատելով առկայ փաստերից, շահ Աբբասը պատկերացնում էր իր մտայղացման իրականացման ճանապարհին եղած խոչոր դժւարութիւնները: Նախ, Պարսից ծոցի ճանապարհը թէեւ գործող առեւտրական ուղի էր, սակայն թուրքական ցամաքային ճանապարհի հետ համեմատած Իրանի արտաքին առեւտրի համար դեռեւս ունէր երկրորդական նշանակութիւն: [281, էջ 128-129]

Հետեւաբար անհրաժեշտ էր այն դարձնել բանուկ եւ առաջնակարգ նշանակութիւն ունեցող ճանապարհ: Այնուհետեւ, որպէս կանոն, պարսիկ վաճառականները չէին զբաղւում միջազգային առեւտրով, առաւել եւս ծովային առեւտրափոխանակութեամբ: Այս դժւարութեան յաղթահարման միակ ձեւը, շահի կարծիքով, կարող էր հանդիսանալ հայ վաճառականներին օգտագործելը, որոնք ունէին ոչ միայն միջմայրցամաքային առեւտրի հսկայական փորձ, այլեւ 16-րդ դարից սկսած զբաղւում էին նաեւ ծովային առեւտրով: Սակայն այդ գործը դժւարանում էր նրանով, որ ինչպէս նշւեց, Պարսից ծոցը շրջափակւած էր պորտուգալացիների կողմից:

Իր մտայղացած լայնահուն քաղաքական ծրագրերի իրագործման յոյժ խոչոր կարեւորութեան գիտակցումը ստիպեց շահին խիզախել: Նա ռազմական գործողութիւններ սկսեց պորտուգալացիների դէմ եւ 1601-1602 թ. ընթացքում նւաճեց Բահրէյնեան կղզիները: [282, էջ 14] Հակառակ Իսպանիայի սպառնալիքների, նա այլեւս չվերադարձրեց դրանք: Ցաղողութեան զարգացումը

միաժամանակ ընդհատուեց 1603 թ. Թուրքիայի դէմ Իրանի սկսած հերթական պատերազմի հետեւանքով: Այդ պատերազմը, որի ժամանակ մետաքսի արտահանումը փոքր Ասիայի վրայով մեծապէս դժուարացել էր, վերջնականապէս համոզեց շահին, որ Պարսից ծոցը առեւտրի համար բաց անելու իր ծրագիրը կենսական նշանակութիւն ունի Սէֆեան պետութեան համար:

1604 թ. Հայաստանից հայերի զանգուածային բռնագաղթից եւ իր մայրաքաղաք Սպահանի մօտ հայ առեւտրական կենտրոնի՝ Նոր Ջուղայի հիմնադրումից անմիջապէս յետոյ շահը սկսեց խրախուսել հայ խոջաների առեւտուրը Պարսից ծոցի վրայով: Սակայն գործը դժուարանում էր նրանով, որ ծոցում պորտուգալացիները նախկինի պէս շեշտած թշնամական քաղաքականութիւն էին վարում բոլոր մրցակից վաճառականների՝ այդ թւում նաեւ հայերի նկատմամբ: Մասնաւորապէս նրանց չէին թոյլատրում ուղղակի առեւտրական կապերի մէջ մտնել օտարերկրեայ վաճառականների հետ, նրանցից գանձում էին անօրինական ու կամայական մաքսատուրքեր, երբեմն դիմում էին հալածանքների եւ այլն: [283, էջ 130] Այդ քաղաքականութիւնը նպատակ ունէր վնասներ հասցնել Իրանի առեւտրական շահերին, ստիպել շահին ետ վերադարձնելու Բահրէյնեան կղզիները եւ հայ վաճառականներին պարտադրել կաթոլիկութիւնը՝ նրանց վերածելու համար Իրանում իրենց առեւտրական գործակալների:

Յայտնելով նման անելանելի վիճակի առջեւ, հայ վաճառականները, որոնց շահերը մեծապէս տուժում էին, ստիպուած էին խնդրել էջմիածնի կաթողիկոս Մելիքսէթին, որպէսզի նա դիմի Հռոմի պապին խնդրելով միջնորդել իսպանական թագաւորի առջեւ, որ նա բարեխօսի պորտուգալացիների մօտ հայ վաճառականներից գանձուող մաքսատուրքերը թեթեւացնելու վերաբերեալ: Իր նամակում կաթողիկոսը գրում էր, - «Զի յանուանի շահաստանի անդ յՈրմուտ (Հորմուզ Վ.Բ.) որ ի Պարսից ծոցին կայ, յորում յայլոց քրիստոնեայ վաճառականաց վասն տուրեւառիկ վաճառաց մտիցն եւ ելիցն ի սակ տասանորդի հայն պահանջին, ի նոցունց Հայոց նոյն սակ կրկին չափով որպէս յանհաւատիցն պահանջի, ի մեծ վնաս նոցին եւ իրաց եւ համբաւոյ»: [123, էջ 238]

16-րդ դարի վերջին քառորդին բրիտանական նաւատորմը եռանդուն պայքար ծաւալեց Հնդկական ովկիանոսի աւազանից պորտուգալացիներին դուրս մղելու համար: Առաջին յաջողութիւնը ձեռք բերուեց 1588 թ., երբ անգլիացիները ծոցում պարտութեան

մատնեցին պրոտուգալացիներին։ [284, էջ 418]

Բրիտանական քաղաքականութեան աննախընթաց ակտիւացումը ստիպեց Իսպանիային իր իրանական քաղաքականութեան ընդաւառում կատարել կտրուկ շրջադարձ։ Ֆիլիպպ IIէր երկու անգամ՝ 1602 եւ 1607 թ.թ. դեսպանութիւններ ուղարկեց Իրան, առաջարկելով կնքել դաշնակցային մի պայմանագիր։ Շահ Աբբասին շահագրգռելու նպատակով նա իր դեսպանի՝ Անտոնիո դէ Գուուեայի միջոցով յայտարարում էր, որ Միջերկրական ծովում գործող իսպանական նաւատորմը պատրաստ է ջախջախիչ հարուած հասցնելու թուրքերին։ [50, էջ 207, 467-468] Այնուհետեւ Ֆիլիպպ IIէր Նեապոլում իր դեսպան Քոնդ դէ Բենաւենտի միջոցով շահին ներկայացրեց գրաւոր մի առաջարկութիւն, որտեղ նա հաւանութիւն էր տալիս իրանական մետաքսը Պարսից ծոցով Եւրոպա արտահանելու շահի մտայղացած գաղափարին, միաժամանակ խոստանալով ցուցաբերել աջակցութիւն։ [48, հ. 4, էջ 178]

Առաջարկութիւնը հետաքրքրեց շահին, որը կազմեց մի դեսպանութիւն, նրան լիազօրելով իր անունից բանակցութիւններ վարել իսպանական թագաւորի հետ։ Այդ դեսպանութեան կազմում, որը 1608 թ. մեկնեց Եւրոպա, ընդգրկւեց նաեւ ջուղահայ մեծահարուստ վաճառական Եղիգարի որդի խոջա Սաֆարը։ Վերջինս հանդիսանում էր մետաքսի վաճառահանման հարցերի գծով շահի խորհրդականը եւ շահական ապրանքների վաճառքով զբաղւող արքունի «խասսէ-է շարիֆէ» վաճառական։ [29, էջ 203: 285, էջ 111]

Քանի որ դեսպանութիւնը Իսպանիա էր մեկնելու ծովային ճանապարհով Պարսից ծոցով, շահը Սաֆարին տրամադրեց 50 հակ հում մետաքս, որպէսզի դրանով իսկ սկիզբ դրւի մետաքսի արտահանման նոր ճանապարհին։ Սակայն ծոցի ճանապարհով առեւտրական նոր ուղի բացելու այս անդրանիկ փորձը աւարտւեց կատարեալ ձախողմամբ։ Նախ խոջա Սաֆարի եւ դեսպանութեան անդամներից մէկի՝ Դենգիզ բէգի միջեւ առաջանում է ընդհարում, որի պատճառը կայանում էր նրանում, որ վերջինս բռնագրաւում է փորձնական վաճառքի համար Սաֆարին յանձնւած 50 հակ հում մետաքսը եւ այն նւիրում իսպանական թագաւորին։ Ի նշան բողոքի խոջան բաժանւում է դեսպանութիւնից եւ եւրոպական մայրաքաղաքներում վարում անջատ բանակցութիւններ։

Խոջա Սաֆարի միակ ձեռքերումը լինում է այն, որ նախ նա կարծիք է կազմում Եւրոպայի ընդհանուր իրավիճակի մասին եւ ապա Վենետիկի հանրապետութեան հետ ձեռք է բերում պայ-

մանաւորաւծութիւն հայ վաճառականների առեւտուրը այդ քաղաք - հանրապետութեան հետ ծաւալելու համար: Իսկապէս, փաստերը վկայում են, որ դրանից յետոյ Նոր Ջուղայի վաճառականների այցելութիւնները Վենետիկ դառնում են աւելի յաճախակի: Զգալիօրէն մեծանում է նաեւ նրանց ապրանքափոխանակութիւնը: [37, էջ 419]

Առաջին անյաջողութիւնը չվհատեցրեց շահին: 1615 թ. նա մի նոր դեսպանութիւն է ուղարկում Իսպանիա, այս անգամ անգլիացի Ռոբերտ Շերլիի գլխաւորութեամբ: Սակայն նրա բանակցութիւնները եւս աւարտւում են կատարեալ անյաջողութեամբ:

1615 թ. Սուրաթի մօտ բրիտանական ռազմական նաւատորմը ջախջախիչ պարտութեան մատնեց պորտուգալական «անպարտելի armադային»: [289, էջ 468] Այդ իրադարձութիւնից յետոյ շահ Աբբասը եզրակացրեց, որ պորտուգալացիներն այլեւս ի վիճակի չեն պահպանելու իրենց դիրքերն Արեւելքում եւ ընդհակառակն, ուժեղացող Անգլիան դառնում է այդ աշխարհամասում հիմնական քաղաքական գործօն: Ուստի երբ այդ նոյն 1615 թ. բրիտանական Օստ-Հնդկական ընկերութիւնը Սպահան ուղարկեց իր ներկայացուցիչ Ռիչարդ Ստիլին եւ Ջոն Գրովտէրին առեւտրական համաձայնագիր կնքելու համար, շահը անմիջապէս ընդառաջ գնաց այդ առաջարկին եւ ընկերութեանը տրամադրեց ֆիրման (հրամանագիր Վ.Բ.), որը անգլիական վաճառականներին իրաւունք էր տալիս Ջասկում, Շիրազում եւ Սպահանում բաց անել առեւտրական գրասենեակներ: Այդ նոյն ֆիրմանով անգլիացիներին տրամադրւում էին նաեւ լայն արտօնութիւններ ու իրաւունքներ առեւտրի բնագաւառում: [63, էջ 113, 195] Երեք տարի անց, 1618 թ. շահը բրիտանական Օստ-Հնդկական ընկերութեան ներկայացուցիչներ Ջիլզ Ցոփսի եւ Թոմաս Բարկերի հետ կնքեց առեւտրական պայմանագիր, ըստ որի ընկերութիւնը ձեռք էր բերում Իրանի ողջ մետաքսի գնման ու վաճառահանման մենաշնորհը: [287, էջ 26] Ընդորում անգլիացիները պարտաւորւում էին մետաքսի արտածումն իրագործել բացառապէս ծովային ճանապարհով, դադարեցնելով նրա արտահանումը Փոքր Ասիայի վրայով: Անգլիացիներին տրամադրւում էր նաեւ ապրանքների ազատ տեղափոխման իրաւունք ողջ Սէֆեան պետութեան տարածքում: Նրանք լրիւ ազատւում էին մաքսատուրքեր վճարելուց:

Անգլո-իրանական պայմանագրի ստորագրումից յետոյ Իրանի կողմից մետաքսի վաճառքը իսպանացիներին ու պորտու-

գալացիներին դադարեցնել: [288, էջ 17]

Դժուար չէ նկատել, որ 1618 թ. պայմանագիրը ունէր կապիտուլյացիոն բնույթ: Այն միակողմանի միջազգային բնույթի ակտ էր: Դրանով անգլիացիները լուրջ քայլ էին կատարում իրանական շուկայ ներթափանցելու եւ այն մենաշնորհացնելու ուղղութեամբ: Բրիտանական գործարար շրջանները ենթադրում էին այդ պայմանագրի օգնութեամբ ոչ միայն ձեռք բերել հսկայական շահոյթներ, դառնալ միանձնեայ միջնորդ Եւրոպայի եւ Ասիայի միջեւ ծովային առեւտրի բնագաւառում, այլեւ իրանը վերածել անգլիական ապրանքների վաճառահանման լայնածաւալ շուկայի:

Այսպիսով Պարսից ծոցում փաստօրէն վերանում էր պորտուգալացիների առեւտրական մենաշնորհը եւ կարծես թէ լիովին բացւում էր ծովային ճանապարհը դէպի Հնդկաստան եւ Եւրոպա: Դա անշուշտ ոգեւորելու էր հայ խոջաներին: Սակայն այդ ոգեւորութիւնը շատ կարճատեւ եղաւ: Պարզւեց, որ նրանց համար յայտնւել է նոր, աւելի հզօր ու ճկուն մրցակից՝ Մեծ Բրիտանիան: Պատահական չէ, որ երբ Ջիլզ Ցոփսը եւ Թոմմաս Բարկերը բանակցութիւններ էին վարում շահական ներկայացուցիչների հետ, հայ վաճառականները եռանդուն կերպով միջամտում էին դրանց, փորձելով խափանել անգլո-իրանական պայմանագրի կնքումը: [198, էջ 116-118]

Միւս կողմից խոջաները գիտակցում էին, որ անգլիացիների կողմից իրանական մետաքսի արտահանման մենաշնորհային իրաւունքի ձեռք բերումը ուղղակի մահ է իրենց համար: Բացի այդ, նրանք հիանալի հասկանում էին, որ ծովային ճանապարհների վրայ իրենք չեն կարող մրցակցել հզօր առեւտրական ու ռազմական նաւատորմիղներ ունեցող Անգլիայի հետ: Որ իրենց ուժը ցամաքային կարաւանային առեւտրի մէջ է, որտեղ համարեայ մրցակիցներ չունեն:

Որպէսզի անգլիացիներին ստիպեն հրաժարւել մետաքսի արտահանման մենաշնորհից, խոջաները որոշեցին որպէս ազդու զէնք օգտագործել հում մետաքսի գների կտրուկ բարձրացումը: Նախապէս խոջաները դիմեցին շահին, խնդրելով չեղեալ յայտարարել անգլիացիների հետ կնքած պայմանագիրը, նոյնիսկ երաշխիքներ տալով, որ իրենք կապահովեն իրանական ողջ հում մետաքսի արտահանման ու վաճառքի գործը: Շահը պատասխանեց, որ ով շատ վճարի իրեն, նա էլ կստանայ արտահանման իրաւունքը:

[289, էջ 68,146] Ըստ այնմ 1619 թ. Սեպտեմբեր 14-ին յայտարարուեց աճուրդ, որին մասնակցում էին եւրոպական եւ արեւելեան տարբեր երկրների վաճառականներ:

Այդ աճուրդին մասնակցած Պիետրո դելլա Վալլեն վկայում է, որ բոլոր եւրոպական ու արեւելեան վաճառականների մէջ միայն ջուղայեցի խոջաները իւրաքանչիւր հակ (36 բաթման) մետաքսի համար առաջարկեցին 50 թուման ոսկի: [64, էջ 263]

Շահը անմիջապէս չեղեալ է յայտարարում անգլիացիների հետ կնքած պայմանագիրը եւ ջուղահայ վաճառականներին յանձնում Իրանի մետաքսաբեր շրջանների ողջ մետաքսի գնման ու արտահանման մենաշնորհային իրաւունքը: Մի քանի ժամանակ նա խոջաներին շնորհում է շահական ապրանքներով առեւտուր անող «թաջիրէ-է խասսէ-է շերիֆէ» առանձնաշնորհեալ վաճառականների իրաւունքը: [18, հ. 3, էջ 220]

Այսպիսով խոջաների կիրառած առեւտրական դէմպինգի քաղաքականութիւնը տուեց ցանկալի արդիւնքներ: Այդ յաջողութեամբ էլ աւելի ամրապնդուեց հայ առեւտրական դասի՝ խոջայութեան կապերը շահական արքունիքի եւ Սէֆեան պետութեան քաղաքացիական բիւրոկրատիայի հետ: Ջուղայեցիները դառնում էին շահի պայմանագիր (կոնտրագենտ) վաճառականներ: Վկայելով այդ մասին Տաւերնիէն գրում է, որ դրանից յետոյ «Իրանի արտաքին առեւտուրը ամբողջապէս գտնւում է հայերի ձեռքում, որոնք հանդիսանում են թագաւորի ու մեծամեծերի գործակատարները»: [69, հ. II, էջ 325] Իսկ Պիետրո Դելլա Վալլեն արտայայտւում էր աւելի դիպուկ. «Ջուղայեցիները Իրանի թագաւորի համար այն են, ինչ Ջենովացիները Իսպանիայի թագաւորի համար, առանց թագաւորի նրանք չեն կարող ապրել, ոչ էլ թագաւորը առանց նրանց»: [64, էջ 265]

Այսպիսով անգլիացիների առաջին փորձերը՝ հիմնաւորելու իրանական շուկայում, աւարտուեցին կատարեալ անյաջողութեամբ: Շահը չեղեալ յայտարարեց Օստ-Հնդկական ընկերութեան կողմից կնքած պայմանագիրը:

Ամենազարմանալին այն էր, որ յաղթանակ տանողը հայ խոջաներն էին, պետականութիւնից զուրկ մի ժողովրդի ներկայացուցիչներ, որն ընդամենը մի քանի տարի առաջ պոկել էր իր բնօրրանից եւ բռնի քշել Իրանի խորքերը: Առաջին հայեացքից այս անհասկանալի ու հանելուկային թւացող հարցի պատասխանը կայանում է նրանում, որ նախ միջազգային առեւտրով զբաղւող

հայ վաճառականները, որպէս կանոն, բաւարարում էին ցածր շահոյթով, մինչդեռ բրիտանական Օստ-Հնդկական ընկերութիւնը, որը շփացել էր հնդկական առեւտրից ստացող հսկայական եկամուտներից եւ առհասարակ ունէր չափազանց մեծ ախորժակ, գործարքների մէջ էր մտնում միայն այն դէպքում, երբ վստահ էր, որ դրանք իր համար կապահովեն բարձր շահոյթներ: Օրինակ, տեղեկներ կան այն մասին, որ առանձին ժամանակներում Օստ-Հնդկական ընկերութիւնը առեւտրական գործարքներից ստանում էր 340 %-ի եւ աւել շահ: [290, էջ 8]

Այնուհետեւ, 1618 թ. պայմանագրի գործողութեան մէջ մտնելու առաջին իսկ օրերից շահական կառավարութեան եւ անգլիացիների միջեւ սկսեցին տարաձայնութիւններ, որովհետեւ պարզուեց, որ Օստ-Հնդկական ընկերութիւնը պատրաստւում է մետաքսի համար բոլոր վճարումները կատարել զանազան անգլիական ապրանքներով, մինչդեռ կառավարութիւնը պահանջում է միայն դրամ: Ընդորում, անգլիացիները արհեստականօրէն բարձրացնում էին իրենց ապրանքների գները եւ ընդհանրապէս իջեցնում հում մետաքսի գինը: [75, էջ 10-11]

Շահի դիմադարձ լինելը անգլիացիներից պայմանաւորած էր նաեւ նրանով, որ ժամանակակիցների վկայութեամբ, կարճ ժամանակ պահանջւեց համոզելու համար, որ անգլիացիները չեն արդարացնում իր յոյսերը մետաքսի արտահանումը ծովային ճանապարհով կազմակերպելու ուղղութեամբ: [117, էջ 413-416. 118, էջ 157] Անշուշտ դա ունէր իր պատճառները. նախ առեւտուրը Մոցի վրայով կապւած էր մեծ ռիսկի եւ զանազան վտանգների, հետեւաբար նաեւ խոշոր կորուստների հաւանականութեան հետ, որովհետեւ պորտուգալացիներն ու իսպանացիները շարունակում էին անգլիացիների հետ գտնւել թշնամական առճակատման վիճակում: Այնուհետեւ քանի որ Իրանի մետաքսաբեր շրջանները գտնւում էին բացառապէս երկրի հիւսիսում, անգլիացիների համար մեծ դժւարութիւն էր ներկայացնում հսկայ երկրի տարածքով, այն էլ անապատային վայրերով, այդ ապրանքը հասցնել Պարսից Ծոց: Ի տարբերութիւն հայ վաճառականների, անգլիացիները ոչ միայն չունէին ցամաքային կարաւանային առեւտրի փորձ, այլեւ ընդհանրապէս չէին զբաղւում նման առեւտրով:

Առհասարակ XVII դարի սկզբին անգլիացիները դեռ յարմարւած չէին արեւելքում կատարւող առեւտրի ձեւերին: Պատահական չէ, որ Օստ-Հնդկական ընկերութեան ղեկավարութիւնը

խորհուրդ էր տալիս իր աշխատակիցներին սովորել հայերէն, հայերի առեւտուր անելու ձեւերը եւ այլն: Նոյնիսկ յանձնարարուում էր այդ նպատակով բնակւել Նոր Ջուղայի հայ խոջաների տներում: [291, էջ 370]

Բրիտանական Օստ-Հնդկական ընկերութեան աշխատակից Ջոն Ֆրէյերը հայ վաճառականների մասին գրում էր, որ նրանք կարողանում են 50 շիլինգով ճանապարհորդել այնտեղ, որտեղ անգլիացիները չեն կարող այդ նոյնն անել 50 թումանով: [292, էջ 249-250]

Տարակոյս չի կարող լինել նրանում, որ անգլիացիների ու հայ վաճառականների միջեւ ընտրութիւն կատարելիս շահը պէտք է նախապատուութիւնը տար վերջիններիս: Նախ խոջաները հանդիսանում էին իր հպատակները, մինչդեռ անգլիացիների գործունէութեան նկատմամբ հսկողութիւնը բացառուում էր: Այնուհետեւ, ինչպէս նշւեց վերեւում, շահը հայ վաճառականների հետ կապում էր բազմարնոյթ տնտեսական ու քաղաքական ծրագրեր: Հէնց այդ էր պատճառը, որ ինչպէս Աբբաս Իր, այնպէս էլ նրա ժառանգորդները գերադասում էին հում մետաքսը արտահանել ու վաճառել անմիջականօրէն հայ վաճառականների միջոցով: [293, էջ 86]

Ենթադրութիւններ կան նաեւ, որ հայ վաճառականների օգտին եւ ի վնաս անգլիական Օստ-Հնդկական ընկերութեան, եռանդուն կերպով գործում էին օսմանեան թուրքերի դէմ շահ Աբբաս Իի տարած յաղթանակներում փառաբանած զօրավարներ (ծագումով հայ), բանակի գլխաւոր հրամանատար Այլահվերդի խանը եւ Կարճկա խանը: [44, էջ 21-22]

Գլխաւորապէս այս հանգամանքները ստիպեցին ամենազօր Օստ-Հնդկական ընկերութեանը ժամանակաւորապէս հրաժարւել իրանական մետաքսը Պարսից ծոցով արտահանելու իրենց ծրագրերից:

Այսպիսով, շահ Աբբաս Իի ծրագրերը, իրանական մետաքսի արտահանումը թուրքական ճանապարհներից դէպի Պարսից ծոց փոխադրելու ուղղութեամբ դրական արդիւնք չտւեցին: Անյաջողութեամբ աւարտւեցին նաեւ անգլիացիների առաջին փորձերը՝ հիմնաւորելու իրանական շուկայում: Պաշտպանելով իր առեւտրական շահերը, հայ վաճառականութիւնը օբեկտիւօրէն հանդէս էր գալիս օտարերկրեայ կապիտալի Իրան ներխուժման դէմ:

XVII դարի 20-ական թւականների սկզբներին բրիտանական կառավարութիւնը նոր աւելի հուժկու պայքար ծաւալեց Պարսից

ծոցում իր միանձնեայ տիրապետությունը սահմանելու համար: 1620 թ. դեկտեմբերի 28-ին անգլիական նաւատորմը Ջասկի մօտ նոր ջախջախիչ հարուած հասցրեց պորտուգալական նաւատորմին: Օրակարգում Հորմուզի նաւճումն էր, որը փակում էր Պարսից ծոցից ելքը դէպի ովկիանոս:

Հորմուզը XV դարից սկսած հանդիսանում էր Պարսից ծոցի առեւտրի խոշորագոյն կենտրոնը, որտեղ ժամանակակիցների արտայայտությամբ հանդիպում էին «եօթ տարբեր կլիմաների վաճառականները»: Հորմուզի հարստութեան մասին տեղեակ էր դեռեւս XIII դարում վենետիկցի Մարկո Պոլոն: [294, էջ 65, 184, 194]

Պորտուգալացիներին է պատկանում Հորմուզի մասին հետեւեալ բանաւոր խօսքը. «եթէ աշխարհը լինէր մի ոսկէ մատանի, ապա Հորմուզը կհանդիսանար նրա ադամանդը»:

Հորմուզի գրաւման հարցում Անգլիայի եւ Իրանի շահերը միանգամայն համընկնում էին: Շահ Աբբասը տենչում էր դառնալ Հորմուզի մաքսային հասոյթների տէրը: Մի առիթով նա ասել էր, որ «եթէ նոյնիսկ պէտք լինէր զոհելու իր թագաւորութեան կէսը՝ պէտք գրաւէր Հորմուզը»: [195, էջ 120] 1622 թ. յունուարի 8-ին բրիտանական Օստ-Հնդկական ընկերութեան եւ Իրանի միջեւ կնքուեց համաձայնագիր պորտուգալացիների դէմ համատեղ ռազմական գործողութիւններ ծաւալելու վերաբերեալ: [295, էջ 312] 1622 թ. ապրիլի 22-ին Ֆարսի նահանգի կառավարիչ Իմամ Կուլի Խանի զօրքերը Օստ-Հնդկական ընկերութեան ռազմանաւերի օգնութեամբ գրաւեցին Հորմուզը: [296, էջ 82] Շահ Աբբասը քանդեց Հորմուզի ամրոցը, իսկ առեւտրական նաւահանգիստը տեղափոխեց Գոմբրուն, որը հետագայում ի պատիւ շահի վերանուանեց «Բենդեր-Աբբաս» (Աբբասի նաւահանգիստ):

Այսպիսով Պարսից ծոցը բացուեց բոլոր ժողովուրդների վաճառականների համար: Անգլիացի Թոմաս Հերբերտի վկայութեամբ Գոմբրուն նաւահանգիստը կարճ ժամանակամիջոցի ընթացքում վերածուեց խոշոր առեւտրական քաղաքի՝ շնորհիւ անգլիացի, հոլանդացի, պորտուգալացի, հայ, հնդիկ, արաբ, հրեա, թուրք եւ այլ ժողովուրդների վաճառականների առեւտրի: [297, էջ 43] Պարսից ծոցի բացուելը նոր զարկ հաղորդեց Հնդկաստանի հետ հայ վաճառականների ծովային առեւտրին: [295, էջ 312-313] Մինչ այդ նրանց կապերը այդ երկրի հետ ծովային ճանապարհով իրականացուում էր դիպուածաբար: Այսուհետեւ ցամաքային կարաւանային ճանապարհներն օգտագործելու հետ մէկտեղ իրանահայ

վաճառականները եռանդուն փորձեր էին կատարում նաեւ ծովային ճանապարհը իւրացնելու ուղղութեամբ: [283, էջ 310] Հնդկաստանից բացի նրանք սկսեցին նաւեր ուղարկել նաեւ Մասկաթ, Աֆրիկեան եւ Եւրոպական երկրներ եւ այլն: Հայ վաճառականներին մեծապէս հետաքրքրում էր նաեւ հէնց Պարսից ծոցի աւազանի երկրների հարստութիւնները եւ առեւտրական հնարաւորութիւնները: Այդ կողմերում կար մեծ քանակութեամբ մարգարիտ, գորշ համպար, Հնդկաստանի սահմանամերձ վայրերում՝ զմրուխտ, կարմիր հակինթ, չափիւղայ եւ այլ թանկարժէք քարեր: Տեղեկութիւններ կան, որ այդ հանքերը կապալով շահագործողների թւում կային նաեւ մեծ թւով իրանահայեր: [38, էջ 187-189. 118, էջ 97. 80, V, էջ 398]

Պարսից ծոցի աւազանից հայ վաճառականները դէպի Լեւանտ եւ Եւրոպական երկրներ էին արտահանում նաեւ զանազան համեմունքներ, գորշ համպար, մուշկ, ինչպէս նաեւ տեղական արտադրութեան զանազան ապրանքներ:

Ծոցի շուկաներում՝ Բասրայում, Ֆիշում, Հորմուզում, Մասքաթում եւ այլն վաճառւում էին ոչ միայն իրանական ու արաբական ապրանքներ, այլեւ Եւրոպայի, Աֆրիկայի եւ Հեռաւոր Արեւելքի երկրների արտադրութիւններ: Մասնաւորապէս Եւրոպայից ստացւում էր ապակի, կապար, պղինձ, երկաթ եւ այդ մետաղներից պատրաստւած բազմապիսի ապրանքներ, բրդեայ եւ բամբակեայ կտորեղէն, Աֆրիկայից, Հնդկաստանից եւ Չինաստանից մետաքս, համեմունքներ, փղոսկր, սեւ փայտ, ընկոյզ, բամբակ, թանկարժէք քարեր եւ այլն:

Պարսից ծոցի վրայով հայ վաճառականութիւնը գործօն մասնակցութիւն ունէր նաեւ ոսկեայ եւ արծաթեայ դրամի համաշխարհային փոխանակութեան մէջ: Ֆրանսուա Բերնիէն նկարագրում է առեւտուրը արգասաւորող դրամի համաշխարհային շրջանառութեան ուղիները: Ամերիկայից Եւրոպա մտնող ոսկու մի մասն անցնում էր Թուրքիա՝ այնտեղից ստացւող ապրանքների դիմաց, միւս մասն ուղարկւում էր Իրան մետաքսի դիմաց, քանի որ Թուրքիան կարիք ունէր Եմենից ստացւող սուրճի, իսկ Եմենը, Իրանը եւ Թուրքիան՝ հնդկական ապրանքների, ուստի դրանց դիմաց ստիպած էին կարմիր ծովի եւ Պարսից ծոցի վրայով Հնդկաստան ուղարկել իրենց մօտ գոյացող ոսկու զգալի մասը: [298, էջ 183]

Իրանական առեւտրի համար Պարսից ծոցը բացւելու կապակցութեամբ բանուկ առեւտրական ուղի դարձաւ Սպահան -

Մահեար - Եզդխաս - Շիրազ - Լառ - Բանդար - Աբբաս կարաւանային ճանապարհը, որի վրայով երկրի կենտրոնական շրջանները կապուեցին Պարսից ծոցի հետ: Սպահանը եւ նրա արուարձանն հայաքաղաք Նոր Ջուղան վեր էին ածում Իրանում միջազգային առեւտրի էլ աւելի աչքի ընկնող կենտրոններին: Հնդկահայ վաճառականների գործարար կապերը իրանահայ խոջաների հետ Նոր Ջուղայի հիմնադրումից յետոյ ընդունեցին առանձնակի լայն թափ: Ընդորում ջուղահայ վաճառականները ծովային ճանապարհի հետ համահաւասար օգտւում էին նաեւ Հնդկաստան տանող ցամաքային ճանապարհներից: Նրանք կասպից ծովով գնում էին դէպի Խորասան, այնտեղից կարաւաններով մեկնում էին Ղանդահար եւ Քաբուլ, իսկ այնուհետեւ Դելի:

Սակայն այնուամենայնիւ աւելի բանուկ էր ջուղայեցիների ցամաքային առեւտրի ճանապարհը դէպի Լեւանտի առեւտրական կենտրոնները: Նրանց կարաւանները Սպահանից մեկնում էին Թաւրիզ, որտեղից այնուհետեւ անցնում էին Հալէպ, Բրուսա, Զմիւռնիա եւ այլն:

Այսպիսով հայ վաճառականները հանդիսանում էին կապող օղակ Պարսից ծոցից դէպի Հնդկական ովկիանոս տանող առեւտրական կենտրոնների ու Լեւանտեան առեւտրական հանգոյցների միջեւ:

Իրանա-Հնդկական ծովային առեւտրի հիմնական կենտրոններն էին Պարսից ծոցի Բենդեր - Աբբաս, Բենդեր - Բուշիր, Բասրա, Հնդկաստանի արեւմտեան ծովափին գտնւող Սուրաթ նաւահանգիստները, որոնց միջեւ կանոնաւոր երթեւեկում էին ջուղայեցի վաճառականների առեւտրական նաւերը: [299, էջ 221: 275, էջ 290, 293] Առաւել խոշոր խոջաների տրամադրութեան տակ կային նաեւ ովկիանոսային նաւեր, որոնցից մի քանիսի անունը հասել է մեզ՝ «Մ. Միքայէլ», «Խոլուէլ» եւ այլն:

Տեղեկութիւններ կան, որ մեծահարուստ խոջաների մէջ կային մարդիկ, որոնք հանդիսանում էին իրենց սեփական նաւերի նաւավարները: Դրանցից էին, օրինակ, Հնդկաստանում խոշոր վաճառականի համբաւ ձեռք բերած Յովհան եւ Յովսէփ Մարգարեանները: [275, էջ 304-305, 321]

Ծովային բեռնափոխադրումներ կատարելիս հայ վաճառականները յաճախ օգտւում էին նաեւ Պարսից ծոցի եւ Հնդկաստանի միջեւ երթեւեկող արաբական, մասամբ նաեւ հոլանդական նաւերից: [303, էջ 162]

Հնդկաստանից եկող նաւերը սովորաբար առափնեայ նաւարկութեան միջոցով հասնում էին Օմանի ծով: Այնուհետեւ նրանք Պարսից ծոցով մօտ 2500 կիլոմետր թափանցում էին ասիական մայրցամաքի խորքերը: Շաթթ-էլ-Արաբ գետի սկզբնաւորման մասից մինչեւ Միջագետքի հիւսիսային սահմանները ապրանքները տեղափոխւում էին Եփրատ գետով: Հնդկաստանից Եւրոպա ճանապարհին միակ ցամաքային հատուածը կազմում էր 200 կիլոմետր: Դա Եփրատի եւ Միջերկրական ծովի սիրիական ափերի միջեւ ընկած հատուածն էր: Կարաւանային ճանապարհը էլ աւելի էր կրճատւում, երբ ապրանքները տեղափոխւում էին Միջերկրական ծովը թափող Որոնտես գետով: [300, էջ 31]

Հնդկական ովկիանոսում վխտացող ծովահեններից պաշտպանւելու համար նաւերը զինւած էին նաեւ թնդանօթներով: Այդ նաւերը կանոնաւոր կերպով երթեւեկում էին ոչ միայն Պարսից ծոցի ու Հնդկաստանի միջեւ, այլեւ բեռներ էին տեղափոխում Հեռաւոր Արեւելքի, Հարաւ-Արեւելեան Ասիայի եւ եւրոպական երկրների նաւահանգիստները: Սակայն հայ վաճառականների առեւտրական նաւատորմը բաղկացած էր մեծ մասամբ ոչ մեծ առագաստանաւերից, որոնք վերին ատիճանի շարժունակ էին, արագընթաց եւ ունէին բաւարար բեռնատարողութիւն: Նկատի ունենալով նման նաւերի շահաւէտութիւնը, բրիտանական Օստ-Հնդկական ընկերութեան ղեկավարները յանձնարարում էին վաճառել այդ ընկերութեան տրամադրութեան տակ եղած խոշոր նաւերը եւ մօտիկ տարածութիւններում բեռնափոխադրումներն իրականացնել հայերին պատկանող նաւերով: [301, էջ 140-141]

Ի դէպ, պետականութեան բացակայութեան պայմաններում զուրկ լինելով ազգային դրօշից, հայ նաւատէրերը ստեղծել էին իրենց կարմիր - դեղին - կարմիր գոյնի դրօշը, որի վրայ պատկերած էր գառնուկ: [302, էջ 52]

Հայ վաճառականները չէին սահմանափակւում լոկ Հնդկաստանի ծովափնեայ քաղաքների առեւտրով: Գանդէս գետի վրայով նաւերով նրանք թափանցում էին երկրի խորքերը: [170, էջ 33] Ա. Ալպոյաճեանը իրաւացի է, երբ նկատում է, որ «Եւրոպացիք հայ վաճառականի ոտքին հետքերուն հետեւելով է որ միայն կրցած են յառաջանալ»: [149, էջ 304]

Հնդկաստանի հայ վաճառականների ծովային առեւտուրը գժւարանում էր նրանով, որ շուտով անգլիացիների կողքին յայտնւեցին նաեւ նոր առեւտրական մրցակիցներ՝ հոլանդացիները,

որոնք օգտուելով ովկիանոսային ճանապարհների վրայ Պորտուգալիայի հզօրութեան թուլացումից, նեռուել էին պայքարի ասպարէզ արեւելեան առեւտրի մենաշնորհը ձեռք բերելու համար: 1602 թ. կազմակերպուած հոլանդական Օստ-Հնդկական ընկերութիւնը փորձում էր թափանցել Պարսից ծոց եւ նրա կղզիները վերածել Հնդկաստանի եւ Եւրոպայի միջեւ առեւտրի միջանկեալ կէտերի: 1623 թ. նոյեմբերի 21-ին հոլանդացիները ստացան շահական ֆիրման, որով նրանք իրանում ձեռք էին բերում անգլիացիներին հաւասար իրաւունքներ ու արտօնութիւններ, [191, էջ 74] մասնաւորապէս Պարսից ծոցում հոլանդական նաւերի ազատ նաւարկութեան իրաւունք: Այս պայմանագիրը կնքւեց հակառակ անգլիացիների կատաղի դիմադրութեան: Հոլանդացիներին հակադրելով անգլիացիներին, շահը ցանկանում էր սահմանափակել առաջինների ազդեցութիւնը իրանական առեւտրի վրայ: Իսկ 1626 թ. հոլանդական Օստ-Հնդկական ընկերութեան եւ շահական կառավարութեան միջեւ ստորագրւեց կարճաժամկէտ առեւտրական մի պայմանագիր (ընդամենը երեք տարով), որը նախատեսում էր աննախընթաց կերպով զարկ տալ իրանա-հոլանդական առեւտրին (նրա տարեկան շրջանառութիւնը կազմելու էր 40.000 թուման): [73, էջ 380] Այս պայմանագիրը որոշակի առաւելութիւններ էր ստեղծում նաեւ Նոր Զուղայի խոջաների համար, որոնք աշխուժացրին իրենց առեւտուրը Հոլանդիայի հետ, շատերը որոշեցին մշտական բնակութիւն հաստատել Ամստերդամում, որպէսզի առանց հոլանդացի, հրեայ կամ այլ միջնորդների օգտւեն հոլանդական շուկաներից թէ՛ ապրանքներ ներմուծելու եւ թէ՛ արտահանելու համար: [138, էջ 36-37]

1626 թ. իրանա-հոլանդական պայմանագրին հետեւեց 1631 թ. կնքւած նոր պայմանագիրը, որը մի շարք լրացուցիչ առեւտրական արտօնութիւններ էր յատկացնում Նիդերլանդներին: Վերջինս 1638 թ. ստացաւ նաեւ Իրան համեմունքներ ներմուծելու մենաշնորհը: 1642 թ. հոլանդական Օստ-Հնդկական ընկերութիւնը շահ Սէֆիից ձեռք բերեց նոր ֆիրման՝ լրացուցիչ արտօնութիւններով: Դա ըստ էութեան կապիտուլյացիոն բնոյթի մի պայմանագիր էր: Նրանում մասնաւորապէս ասւում էր, որ իրանական պետական ծառայողները իրաւունք չունեն միջամտելու հոլանդացիների առեւտրական գործերին, որ Իրանում բնակւող հոլանդական հպատակները, ինչպէս եւ հոլանդացիների մօտ ծառայող պարսիկները, հայերը, թուրքերը, բենգալացիները եւ այլն օգտւելու են արտաերկ-

բայնութեան իրաւունքից, այսինքն նրանք ենթակայ չեն Իրանի պետական կամ կրօնական դատարանի կողմից դատուելու, ինչպէս նաեւ օգտուելու են անձի անձեռնմխելիութեան իրաւունքից: Որ հոլանդական հպատակներին տրամադրւում է դաւանանքի ազատութեան իրաւունք եւ այլն:

Վերոյիշեալ պայմանագրերի հիման վրայ հոլանդացիները կարողացան կայուն կերպով հիմնաւորուել իրանական շուկայում եւ ըստ էութեան իրենց բացարձակ տիրապետութիւնը հաստատել ողջ Պարսից ծոցի աւազանի առեւտրի վրայ:

Սակայն չնայած այդ բոլորին, ո՛չ հոլանդացիներին եւ ո՛չ էլ անգլիացիներին, այնուամենայնիւ չյաջողուեց հայ առեւտրական կապիտալը դուրս մղել Իրանի արտաքին առեւտրի մէջ ունեցած առաջատար դիրքերից: Նրանց մրցակցութեան պատճառով տուժում էր միայն հայերի ծովային առեւտուրը:

Տաւերնիէն գրում էր, որ «Առեւտուրը Պարսկաստանում միանգամայն բաժանուած է, ընդ որում երկրի ներսում այն վարում են քրիստոնեաներն ու հրեաները, իսկ արտաքին առեւտուրը ամբողջապէս գտնւում է հայերի ձեռքին»: [69, էջ 510] Այդ նոյնը վկայում են նաեւ Ֆրանսիացի Գաբրիէլ Շինոնը, [74, էջ 225] գերմանացի Ադամ Օլեարիուսը [76, էջ 791] եւ այլն:

XVII դարի երկրորդ կէսին Պարսից ծոցով ծովային առեւտրի բնագաւառում հոլանդացիները համարեայ դադարեցին մրցակից լինել հայ վաճառականներին:

XVII դարի կէսերին բրիտանական Օստ-Հնդկական ընկերութիւնը վերածւեց Եւրոպայի առաւել հարուստ ու հզօր առեւտրական կազմակերպութեան: Միաժամանակ նա դարձաւ Արեւելքում գաղութային տիրապետութեան համար պայքարում քաղաքական գործիք բրիտանական կառավարութեան ձեռքերում:

Անգլիացիները խոշոր վնասներ հասցրեցին նաեւ Իրանում հոլանդացիների ձեռք բերած դիրքերին: XVII դարի 80-ական թւականներին հոլանդական Օստ-Հնդկական ընկերութեան փորձերը, վերականգնելու Իրանում իրենց կորցրած դիրքերը, ցանկալի արդիւնքներ չուեցին: [118, էջ 158-160]

Նիդերլանդների նկատմամբ ձեռք բերած ռազմական եւ տնտեսական յաղթանակներից յետոյ Մեծ Բրիտանիան հետեւողականօրէն փորձում էր արեւելեան առեւտրի մենաշնորհը վերցնել իր ձեռքը: Լոնդոնում դրա իրականացման ուղի էին համարում Լեւանտեան առեւտրի տեղափոխումը դէպի Մեծ

Բրիտանիայի հսկողության տակ գտնվող ծովային ճանապարհները: Դժվար չէ նկատել, որ հեռավոր նպատակներով մշակված այդ ծրագիրը առաջին հերթին ուղղված էր Անգլիայի առևտրական մրցակիցներ Հոլանդիայի եւ Ֆրանսիայի դեմ:

Հնդկաստանի հետ հայ վաճառականների առևտրի աշխուժացմանը մեծապես նպաստում էր այն հանգամանքը, որ շահ Աբբաս Իի կառավարման շրջանում խստիվ արգելված էր Սեֆեան պետության սահմաններում հնդկական վաճառականների առևտուրը, որը կարող էր հանգեցնել տեղական խոջաների սնանկացմանը: Այդ արգելքը դրված էր նաեւ այն պատճառով, որ հնդիկ վաճառականները լայնօրեն զբաղվում էին վաշխառուական գործառնություններով, իսկ շահ Աբբաս Իի ժամանակ վաշխառությունը դաժանօրեն հետապնդվում էր որպես մահմեդական կրոնին ու շարիաթի սկզբունքներին հակասող երեւույթ:

Պարսից ծոցի վրայով ծովային ճանապարհը բացվելուց յետոյ, ինչպես նշվեց, Նոր Ջուղայի վաճառականների մի մասը բացառապես մասնագիտացաւ հնդկական առևտրի մեջ: Նրանք Հընդկաստանի բազմաթիվ քաղաքներում բաց արեցին առևտրական գրասենեակներ:

Ընդորում խոջաները չէին սահմանափակվում լոկ Հընդկաստանի ծովափնեայ քաղաքների հետ առևտրով: Գանգէս գետի վրայով նաւերով նրանք թափանցում էին այդ հսկայ երկրի խորքերը, ակնառու դեր խաղալով նրա ներքին առևտրում եւս:

Մանրակշիռ էր նաեւ նրանց դերը Հնդկաստանից արտահանվող առևտրի մեջ: Հայ վաճառականները Հնդկաստանից արտահանում էին տեղական արտադրության բազմապիսի ապրանքներ՝ բամբակեայ եւ բրդեայ կտորեղէն, թանկարժէք քարեր, համեմունքներ, բուսական ներկեր, որոնք մեծ պահանջարկ ունէին Եւրոպայում:

Հայերից շատերը մասնագիտացել էին բամբակի առևտրի մեջ: Նրանք ձեռք էին բերում հումք, այն տալիս էին մանելու, յետոյ գործելու, իսկ այնուհետեւ պատրաստի կտաւը արտահանում էին:

Հնդկական առևտուրը վերին աստիճանի եկամտաբեր էր հայ վաճառականների համար: Այդ մասին կան բազմաթիվ վկայություններ: Այսպէս, 1666 թ. Նորջուղայեցի վաճառականներ, եղբայրներ Յովհան եւ Յովսէփ Մարգարեանները (որոնք արեւմտեան աշխարհում յայտնի էին Ջոն եւ Ջոզէֆ Դա-Մարկ կամ Դեմարկորա անունով) կազմելով ընկերակցություն, Միլափորում կամ Սան-Թոմում գործ են ձեռնարկում ունենալով 27.500 ռուփի

կապիտալ, իսկ 1697 թ., երբ Յովհանի մահուան պատճառով ընկերակցութիւնը քայքայուեց եւ կատարուեցին վերջնական հաշուարկներ՝ պարզուեց, որ 30 տարուայ ընթացքում ստացուել է երկու միլիոն ռուփի մաքուր եկամուտ: [276, էջ 304-305, 321]

Ակադեմիկոս Լ. Ս. Խաչիկեանը ենթադրում է, որ XVII դարի վերջին Հնդկաստանում առեւտուր անող հայ վաճառականները շահոյթներ էին ստանում 100-120 տոկոսի չափով:

Հնդկահայ վաճառականների մէջ կային մարդիկ, որոնց կարողութիւնը հաշուում էր միլիոններով: Դրանցից մէկն էր, օրինակ, խոջա Պետրոս Տէր Նիկողոսեանը, որը հանդիսանում էր Մադրասում Օստ-Հնդկական ընկերութեան խորհրդի անդամ: Նրա մասին վկայութիւն կայ, որ երբ Քարնատիկի իշխանութեան կառավարիչն այցելում է Մադրաս, Տէր Նիկողոսեանը մետաքս է փռել տալիս այն բոլոր փողոցներում, որոնցով անցնելու էր նաւաբը: [276, էջ 581-582] Իսկ XVIII դարի 90-ական թւականներին մահացած Շահամիր Շահամիրեանը իր ժառանգորդներին թողնում է 52 միլիոն ֆրանկ, չհաշուած զանազան «գործարանները», ծխախոտի պլանտացիաները եւ այլ անշարժ գոյք: [277, էջ 11]

Ի դէպ, տեղեկութիւններ կան, որ Հնդկաստանում հայ վաճառականները զբաղւում էին նաեւ ձեռնարկատիրական գործունէութեամբ: Այդ առթիւ Ֆրանսիացի Աբբա Ռէյնալը վկայում է. «Հայերը գալիս էին Հնդկաստան եւ բամբակ գնելով, այն տրամադրում էին մանածագործներին: Կտորները արտադրւում էին իրենց հսկողութեան ներքոյ: Պատրաստի կտորները Բենդեր-Աբբասի վրայով ուղարկւում էին Սպահան, որտեղից այն առաքում էին Իրանի բոլոր նահանգները, Օսմանեան կայսրութիւն եւ Եւրոպա, որտեղ այդ կտորները անւանում էին «պարսկական», թէեւ արտադրւած էին Կորոմանդէլեան ծովափում:

Ձեռնարկատիրական գործունէութեամբ զբաղելու համար հայ միջին կարողութեան վաճառականները 6-12 %-ով փոխ էին վերցնում աւելի խոշոր վաճառականներից:

Սկզբնական շրջանում բրիտանական Օստ-Հնդկական ընկերութիւնը, որը 17-րդ դարի առաջին կէսին դեռեւս հեռու էր Արեւելքում, այդ թւում նաեւ Հնդկական չուկայում մենաշնորհային դիրք ունենալուց, ստիպւած էր հաշւի նստել Հնդկաստանի տեղական վաճառականների, այդ թւում նաեւ հայերի հետ:

Յանօթ չլինելով տեղական լեզուներին, բարքերին ու սովորութիւններին, ինչպէս նաեւ առեւտրի մեթոդներին, որոնք

այնքան տարբերություն էին ելրոպականից, անգլիացիները ըստ կրոնական շրջանում ստիպված էին առևտուր անել տեղական միջնորդների միջոցով վարկաւորելով նրանց առևտրական գործառնությունները: Օստ-Հնդկական ընկերությունն աշխատում էր հայ վաճառականների միջոցով տեղեկանալ ոչ միայն Հնդկաստանի, այլեւ նրա հարեւան երկրների առևտրական իրադրությունը: Իզուր չէ, որ ընկերությունը իր ծառայողներին խորհուրդ էր տալիս ուսումնասիրել պարսկերէն եւ հայերէն լեզուները հայերի առևտրի մեթոդների հետ ծանոթանալու համար: [275, էջ 288]

Հնդկաստանում առևտուր անող իրանահայ վաճառականների միջոցով անգլիացիներն աշխատում էին տեղեկություններ հաւաքել նաեւ Իրանի ներքին եւ արտաքին առևտրի մասին: 1616 թ., օրինակ, ընկերության ղեկավարներից մէկը՝ Թոմաս Ռոյը յանձնարարում էր իր ծառայողներին Նոր Ջուղայի վաճառականների միջոցով օգտակար տեղեկություններ հաւաքել Իրանի առևտրի, հում մետաքսի արտադրության շրջանների, այն նաւահանգիստների մասին, ուր կարող են մուտք գործել անգլիական նաւերը եւ այլն: [116, էջ 198]

Օստ-Հնդկական ընկերության ղեկավարությունը օգտում էր նաեւ հայերի ծառայություններից տեղական իշխանությունների հետ կապեր հաստատելու համար: Այսպէս, 1651 թ. ընկերությունը մի դեսպանություն ուղարկեց շահ Ջահանի մօտ Բենգալիայում առևտրական արտօնություններ ձեռք բերելու համար: Այդ դեսպանության ղեկավարն էր հայ վաճառական աղա Սարհադը: Բանակցությունների հետեւանքով շահը անգլիացիներին իրաւունք տուեց հաստատուել այն վայրում, ուր հետագայում հիմնադրուեց Կալկաթա քաղաքը: [84, էջ 614]

Սակայն այս բոլորը չէր բացառում, որ հայ վաճառականները միաժամանակ հանդէս գային որպէս Օստ-Հնդկական ընկերության առևտրական մրցակիցներ: Ցիրուի, դէպի Հնդկաստան Անգլիայի գաղութային ներթափանցման առաջին էտապում հայերը հնդկական շուկայում ի թիւս տեղական հնդիկ եւ այլազգի վաճառականների, նոյնպէս հանդիսանում էին անգլիացիների համար անցանկանալի մրցակիցներ: Նրանք մեծապէս խանգարում էին Օստ-Հնդկական ընկերության առևտրական, հետեւաբար նաեւ քաղաքական ներթափանցմանը Հնդկաստան: Այդ պատճառով XVII դարի սկզբից անգլիացիները եռանդուն պայքար ծաւալեցին հայ վաճառականների դէմ, նպատակ ունենալով կամ դուրս մղել նրանց

հնդկական շուկայից, կամ ծայրահեղ դէպքում խարխլել նրանց դիրքերը: Այդ նպատակին հասնելու համար անգլիացիները միջոցների մէջ խորութիւն չէին դնում: Այսպէս, նրանք փորձում էին ստիպել Հնդկաստանի տեղական կառավարիչներին, որպէսզի վերջիններս սահմանափակեն հայ վաճառականներին յատկացրած իրաւունքներն ու արտօնութիւնները: Սակայն քանի դեռ Մեծ Բրիտանիայի քաղաքական ազդեցութիւնը Հնդկաստանում մեծ չէր, ճնշման այդ ձեւը, որպէս կանոն, ցանկալի արդիւնքներ չէր տալիս: Այդ պատճառով անգլիացիները դերադասում էին պայքարի բռնի ձեւերը:

Ցայտնի է, որ իրենց մրցակիցներին դուրս մղելու համար Հնդկական ովկիանոսում անգլիացիները անողոք կերպով բռնագրաւում էին նրանց նաւերը: Հայերի ծովային առեւտուրը ընկճելու համար եւս անգլիացիները ոչ միայն լայնօրէն օգտագործւում էին ծովահէնութիւնը, այլեւ իրենց ռազմական նաւատորմը եւ նոյնիսկ պետական ապարատը: [304, էջ 35] Հայ վաճառականների դէմ ծովային աւազակութեան նպատակով անգլիացիները յատկապէս լայնօրէն օգտագործում էին Ջոն Բարնարիի եւ Սէմուէլ Ուայտի ծովահէնային կազմակերպութիւնը:

Ցայտնի է, օրինակ, որ Սիամի դէմ բրիտանական Օստ-Հնդկական ընկերութեան մղած պատերազմի ժամանակ («Գոլկոնդեան պատերազմ») 1685 թ. նոյեմբերի 21-ին անգլիացիները Մաղապոլամում գրաւեցին Նոր Ջուղայեցի ազդեցիկ վաճառական Յովհան Մարգարեանին պատկանող «Նոր Երուսաղէմ» նաւը, որը բեռնաւորւած էր թանկարժէք քարերով: Այդ նաւը իր բեռով գնահատւում էր 565 հազար ֆունտ ստերլինգ:

Չնայած այն հանգամանքին, որ Մաղապոլամի իշխանութիւնները ուժգին ճնշում գործադրեցին Օստ-Հնդկական ընկերութեան վրայ ի պաշտպանութիւն հայ առեւտրականների, սակայն այդ արարքի համար բրիտանական կառավարութիւնը ոչ միայն չպատժեց ծովահէն կոուիսին, այլեւ նրան շնորհեց ծովակալի կոչում: «Գործի նման ելքը համապատասխանում էր Անգլիայի ծովային քաղաքականութեան հիմնական ուղղութեանը, - իրաւացիօրէն նշում է Յով. Բարսեղովը, - որը ձգտում էր բոլոր հնարաւոր միջոցներով, այդ թւում նաեւ ծովահէնների օգնութեամբ, ծովերի վրայ ազատւել մրցակիցներից, խափանել նրանց բնականոն միջազգային առեւտուրը, զրկել նրանց ծովային տրանսպորտի սեփական միջոցներից»:

Համաբերայ այդ նոյն ժամանակ անգլիական ծովահէնները գաթիում են նաեւ Յովսէփ Մարգարեանին պատկանող «Սանտա կրուզ» առաջնակարգ առեւտրական նաւը: Ի պատասխան բրիտանական վերոյիշեալ քաղաքականութեան, հայ վաճառականները հակում էին դրսեւորում մերձենալ Հնդկաստանում Անգլիայի մրցակից ու քաղաքական ախոյեան Ֆրանսիայի հետ: XVII դարի երկրորդ կէսին ինչպէս աշխարհի միւս շրջաններում, այնպէս էլ Հնդկաստանում, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի միջեւ ծաւալել էր սուր պայքար: 1667 թ. Ֆրանսիական Օստ-Հնդկական ընկերութիւնը իր առաջին ֆակտորիան հիմնեց Սուրաթ քաղաքում: [303, էջ 31-32] Այդ նոյն թւականին Կոյրերի նախաձեռնութեամբ Մադրասկարից Հնդկաստան է ուղարկւում մի փոքրիկ նաւախումբ Արեւելքում յայտնի նաւավար Մ. Քառոնի գլխաւորութեամբ: Նրա պատգամաւորութեան մէջ պատասխանատու անձերից մէկն էր հայազգի Մարգար Աւանէսեանը, որն ունէր կարեւոր յանձնարարականներ: Մասնաւորապէս Ֆրանսիական Օստ-Հնդկական ընկերութիւնը այս վաճառականից ակնկալում էր մեծ գործեր յանուն Ֆրանսիական առեւտրական շահերի: Իսկապէս, շուտով Աւանէսեանը Գոլկոնդայի թագաւոր Արդուլլա Քութուբ շահից ձեռք է բերում մի հրամանագիր, որով Ֆրանսիական Օստ-Հնդկական ընկերութիւնը արտօնութիւն է ձեռք բերում անմաքս առեւտուր անելու թագաւորի տիրապետութեանը ենթակայ բոլոր հողերում: Սա մի այնպիսի արտօնութիւն էր, որի նմանը դրանից քիչ առաջ անգլիացիները կորզել էին մեծ ջանքերի գնով, իսկ հոլանդացիները բնաւ չէին կարողացել ստանալ: Այնուհետեւ Աւանէսեանը մեկնում է Մասուլիպատամ եւ այնտեղ, Կորոմանդէլեան ծովափին, հիմնում է Ֆրանսիական ֆակտորիա եւ որպէս նրա նախագահ Հնդկաստանի այդ մասում սկսում է ղեկավարել Ֆրանսիական առեւտուրը: [275, էջ 318-320. 311, էջ 31-32]

Նկատի առնելով, որ հայ վաճառականների հետ համագործակցութիւնը մեծապէս կարող է ուժեղացնել Ֆրանսիական Օստ-Հնդկական ընկերութեան դիրքերը, անգլիացիները որոշեցին մեղմել հայ վաճառականների հետ ուժի դիրքերից ելնող քաղաքականութիւնը եւ ընդհակառակն, օգտագործել նրանց սիրաշահելու եւ իրենց կողմը ներգրաւելու աւելի հեռանկարային քաղաքական գիծը: Միւս կողմից Հնդկաստանում անգլիացիների դիրքերի աստիճանական ամրապնդումը խնդիր էր առաջադրում վերանայել հայ վաճառականների նկատմամբ Օստ-Հնդկական ընկերութեան

բռնած դիրքորոշումը: Կային նաեւ այլ հանգամանքներ: Այսպէս, 1652-1674 թ.թ. տեղի ունեցած անգլո-հոլանդական երեք պատերազմների հետեւանքով Հոլանդիայի ռազմական հզօրութիւնը խորտակուեց, որին հետեւեց նաեւ այդ պետութեան առեւտրական հզօրութեան անկումը: [306, էջ 97-98] Անգլիան դուրս եկաւ առաջին տեղը որպէս արդիւնաբերական եւ առեւտրական տեսակէտից առաւել հզօր գաղութային տէրութիւն:

Բրիտանական առեւտրական ընկերութիւնները (Մոսկովեան, Մարոկկոյական, Օստզէյական եւ մի շարք ուրիշներ) գործում էին Իրանից մինչեւ Հիւսիսային Ամերիկա, Շեղեիայից մինչեւ Հընդկաստան ու Ցէյլոն ընկած հսկայական տարածութիւնների վրայ:

Անգլիացիների հսկողութեան տակ անցաւ նաեւ Հնդկաստան տանող ովկիանոսային ճանապարհը: Դա իր հերթին որոշակի ուղղումներ մտցրեց Մեծ Բրիտանիայի անդրծովեան քաղաքականութեան մէջ: Վերջինս, որ երազում էր արեւելեան առեւտրի մենաշնորհը վերցնել իր ձեռքը, այժմ մեծագոյն շահագրգռուածութիւն էր դրսեւորում այն ուղղել դէպի իր հսկողութեան տակ գտնուող ովկիանոսային ճանապարհները: Դրա պատճառը նաեւ այն էր, որ Լեւանտում անգլիացիների առեւտրական դիրքերը իրենց մրցակիցների՝ Ֆրանսիացիների եւ հոլանդացիների համեմատ թոյլ էին:

Բազմաթիւ փաստեր վկայում են այն մասին, որ անգլիացիները յստակօրէն գիտակցում էին, որ իր մասշտաբներով այդպիսի վիթխարի ծրագրի իրականացումը մեծապէս կախուած է նաեւ նրանից, թէ արդեօք իրենց կայծոռուի իրանահայ վաճառականութեանը ներգրաւել իր կողմը, նրա առեւտուրը շեղել փոքրասիական ցամաքային ճանապարհներից, Վոլգա-Կասպեան ռուսական ուղուց եւ այլն, դէպի ովկիանոսային ճանապարհները: Ընդորում, անգլիացիները հաշւի էին առնում այն հանգամանքը, որ հում մետաքսի գծով Իրանի ողջ արտաքին առեւտուրը գտնուում է հայ վաճառականների ձեռքում, որ նրանք, արեւմուտքի երկրների օրինակով, միաւորել են իրենց կապիտալները եւ ստեղծել հզօր առեւտրական ընկերութիւններ, որոնք առեւտրական պայմանագրեր էին կնքում եւրոպական մեծ տէրութիւնների հետ: Լոնդոնի գործարար շրջաններին գայթակղեցնում էր նաեւ այն կարեւոր հանգամանքը, որ հայ վաճառականները առեւտուր էին անում հիմնականում իրենց սեփական կապիտալների հաշւին, կարիք չունենալով վերցնել վարկեր ու փոխառութիւններ: [301, էջ 140-141]

վերջապէս անգլիացիներին վստահութիւն էր ներշնչում նաեւ միջազգային շուկաներում հայ վաճառականների վայելած բարձր վարկը:

Այնուհետեւ անհրաժեշտ է նշել, որ XVII դարի 80-ական թւականներին անգլիացիների վիճակը Հնդկաստանում ծայր աստիճանի բարդացել էր: Մեծ մողոլների դահը ստանձնած Աուրանգզեբը, որը վճռական միջոցառումներով աշխատում էր կանխել պետութեան թուլացումը եւ այդ նպատակով ամենադաժան ձեւերով պատժում էր անհնազանդ աւատատէրերին, երկաթեայ կամքով փորձում էր միաւորել երկիրը եւ միաժամանակ ընդարձակել մեծ մողոլների տիրոյթները, սկսել էր պայքարել անգլիացիների աճող ազդեցութեան դէմ: 1686 թ. Աուրանգզեբի հրամանով Բենգալիայում սկսեցին հալածանքներ կազմակերպել անգլիացիների դէմ, կասեցնել նրանց առեւտուրը եւ այլն: Անգլիացիները փորձեցին զէնքի ուժով դիմադրել, բայց դա ունեցաւ այն հետեւանքը, որ նրանց դէմ ուղարկուեց մի բանակ, որը ջարդեց ու վռնդեց անգլիացիներին Բենգալիայից: Մի միաժամանակ կողոպուտի մատնուեցին անգլիական բոլոր ֆակտորիաներն ու առեւտրական տները թէ՛ արեւելեան եւ թէ՛ արեւմտեան ծովափում: Անգլիացիներին մնում էր միայն խոնարհուել ահարկու թագաւորի առաջ եւ իրենց հնազանդութիւնը յայտնել: Այդպէս միայն նրանք կարողացան մնալ Հնդկաստանում: Այս բոլորը մի ապացոյց է, որ անգլիացիները շատ կարօտ էին հայերի աջակցութեանը: [84, էջ 516]

Այս բոլորը պայմանաւորեցին հայ առեւտրական բուրժուազիայի նկատմամբ Օստ-Հնդկական ընկերութեան դիրքորոշման կտրուկ փոփոխութիւնը: Թշնամական առճակատումից այդ ընկերութիւնը անցում կատարեց դէպի առեւտրատնտեսական համագործակցութեան դիրքերը:

Քանի որ անգլիացիների համար դժուար էր ողջ իրանահայ խոջայութեանը լծել իրենց ծրագրին, որոշուեց որպէս առաջին քայլ իրենց կողմը ներգրաւել հնդկական շուկայի հետ կապւած Նոր Ջուղայի վաճառականութեան մի մասին:

1688 թ. յունիսի 22-ին Սուրաթ քաղաքում բրիտանական Օստ-Հնդկական ընկերութեան եւ Հնդկաստանում առեւտուր անող Ջուղայեցի վաճառականների միջեւ ստորագրուեց պայմանագիր: [307, 275, էջ 48-50]

Անգլիացիների կողմից այն ստորագրեցին Օստ-Հնդկական ընկերութեան նախագահներ Բենջամին Բաթրըսթը եւ Ջոշուա

Զայլդը, ինչպէս նաեւ ընկերութեան բարձրագոյն վարչութեան անդամները, իսկ հայ վաճառականների կողմից՝ նրանց ներկայացուցիչ խոջա Փանոս Քալանթարը: Ի նշան երախտագիտութեան, նոյն օրը ընկերութիւնը խոջա Փանոս Քալանթարին յանկացրեց թանկարժէք քարերի առեւտրի մենաշնորհը: Այդ առթիւ հրապարակած շնորհագրի մէջ ասւում էր, որ այսուհետեւ ընկերութիւնը չի գրաւելու նշած ապրանքների առ ու ծախքով եւ ուրիշներին եւս թոյլ չի տալու զրաւել դրանով, լինեն նրանք անգլիացիներ թէ այլ օտարերկրացիներ: [307, No 38, էջ 140]

Պայմանագրին կից հրապարակած Օստ-Հնդկական ընկերութեան խարտիայում հայ վաճառականներին տրամադրւում էին չափազանց լայն իրաւունքներ եւ արտօնութիւններ: Նախ նրանք ստանում էին բրիտանական հպատակներին համահաւասար իրաւունքներ, այդ թւում նաեւ քաղաքացիական պաշտօններ զրաւելու բնագաւառում: Նրանց վրայ էին տարածւում նաեւ այն բոլոր արտօնութիւնները, որոնցից օգտւում էին եւրոպական վաճառականները:

Հայերին ազատ իրաւունք էր տրւում բնակւել Օստ-Հնդկական ընկերութեան իրաւասութեան տակ գտնւող ցանկացած քաղաքում, աւանում, բերդում, ձեռք բերել կալւածներ եւ տներ, առեւտրական շարժական ու անշարժ գոյք, վայելել հաւատի ու դաւանանքի կատարեալ ազատութիւն, ընտրել քաղաքական պաշտօններում եւ այլն: Հարկերն ու տուրքերը հայերի համար սահմանւում էին նոյնքան, որքան անգլիացիների համար: Պայմանագրում նշւում էր, որ եթէ ընկերութեան որեւէ պաշտօնատար անձ, այդ թւում նաեւ նահանգապետը, խախտի պայմանագրի վերոյիշեալ կէտերը կամ խանգարի հայերին տրւած արտօնութիւնների եւ իրաւունքների իրականացմանը, նա պէտք է պատժւի ընդհուպ մինչեւ պաշտօնից հեռացումը:

Օստ-Հնդկական ընկերութիւնը պարտականութիւն էր վերցնում իր վրայ Հնդկաստանում ծառայութեան մէջ չպահել այնպիսի նահանգապետների, որոնք կփորձէին խախտել կամ հաշւի չնստել այն արտօնութիւնների հետ, որոնք ընկերութեան կողմից շնորհւել էին հայերին:

Օստ-Հնդկական ընկերութիւնը հայ-լուսաւորչականներին երաշխաւորւում էր դաւանանքի ազատութիւն եւ պատրաստակամութիւն էր յայտնում իրեն պատկանող հողամասերից մի կտոր յատկացնել հայկական եկեղեցի կառուցելու համար: Նշւում էր

նաեւ, որ ընկերութիւնը պատրաստ է իր միջոցներով հայկական եկեղեցիներ կառուցել այն բոլոր վայրերում, որտեղ ապրում են քառասունից աւել հայեր: [307, էջ 140. 308, էջ 174]

Ընկերութիւնը պարտաւորւում էր նաեւ իր հաշւին հայերի համար կառուցել փայտեայ եկեղեցիներ, իրաւունք տալով նրանց ապագայում ցանկութեան դէպքում նոյն տեղում կառուցելու քարէ եկեղեցիներ:

Պայմանագրում յատուկ նշւում էին ապրանքների այն բոլոր տեսակները, որոնցով առեւտուր կարող էին անել հայ վաճառականները: Դրանք էին. արծաթ, թանկարժէք քարեր, ներկեր, անդիկ, զէնք, մշակած եւ չմշակած երկաթ, թուղթ, գրքեր, սուրճ, հայելիներ, յախճապակի եւ ճենապակի, նիւրենբերգեան զանազան ապրանքներ, մորթիներ, վենետիկեան արտադրութեան սպասք, բրդեա կտորեղէն, կապար, խմիչքներ, չինական եւ բենգալական արտադրութեան զանազան ապրանքներ, մուշկ, իրանական հում մետաքսի տարբեր տեսակներ, Քերմանի բուրդ եւ այլն: [307, No 37, էջ 132-133] Հանդամանօրէն որոշւած էին նաեւ այդ ապրանքների համար գանձւելիք մաքսատուրքերի չափերն ու Օստ-Հնդկական ընկերութեան նաւերով դրանց փոխադրավարձերը: Մաքսատուրքի առաւելագոյն չափ էր սահմանւում 10 %:

Անգլիացիների համար ամենակարեւորը պայմանագրի վերջին յօդւածն էր, որտեղ ասւում էր հետեւեալը. «... Նախկինում հայերը հնդկական ապրանքների հիմնական մասը արտահանում էին ցամաքային տարանցիկ ճանապարհով Իրանից եւ Արաբիայից Թուրքիա: Այսուհետեւ նրանք համաձայնութիւն են տալիս իրենց բոլոր ապրանքները արտահանել անգլիական ճանապարհով» [307, No 37, էջ 132-133] (այսինքն Աֆրիկայի շուրջը ծովային ճանապարհով Վ.Բ.): Ընդորում, հայ վաճառականները պարտաւորւում էին իրենց ապրանքները արտահանել բացառապէս անգլիական նաւերով եւ ոչ մի դէպքում չօգտւել հոլանդական եւ արաբական նաւերից:

Տարակոյս չի կարող լինել նրանում, որ 1688 թ. պայմանագիրը կնքելու հարցում մեծագոյն շահագրգռածութիւն էին դրսեւորում նաեւ հայ վաճառականները: Պայմանագիրը այսուհետեւ նրանց հնարաւորութիւն էր տալիս ոչ միայն օգտւել բրիտանական իշխանութիւնների հզօր հովանաւորութիւնից, այլեւ իրենց առեւտրի իրականացման համար օգտագործել անգլիացիներին պատկանող նաւահանգիստները, պահեստային կառոյցները, բեռնափոխադրումներն իրականացնել անգլիական նաւերով, հետեւաբար նաեւ

ապահովագրել իրենց ծովահէնների յարձակումներից: Վերջապէս հայ վաճառականները ազատ իրաւունք էին ստանում անկաշկանդ ու անարգել ուղղակի առեւտրական յարաբերութիւններ հաստատելու Անգլիայի հետ:

Դժւար չէ նկատել, որ 1688 թ. պայմանագիրը կազմւած էր 1651 թ. «Ծովագնացութեան ակտի» ոգով եւ ուղղւած էր ինչպէս Հոլանդիայի առեւտրական հզօրութեան, այնպէս էլ Անգլիայի առեւտրական մրցակից ու ախոյեան Ֆրանսիայի դէմ: Այդ առթիւ Ֆրանսիացի Ռաֆայէլ Դյու Մանը գրում էր, որ եթէ Իրանի առեւտուրը եւս ամբողջովին ուղղւէր դէպի Հնդկական ովկիանոս եւ իրանական ապրանքները Եւրոպա ուղարկւէին ովկիանոսային ճանապարհներով, ապա Մարսէյլը կարող էր լրիւ կորցնել իր նշանակութիւնը: [36, էջ 361] Հետեւաբար Լիւդովիկոս XIV-ի համար շատ կարեւոր էր, որ հայ խոջան «իր նախկին ճանապարհով գնայ իր առեւտրին, այսինքն Ֆրանսիայի վրայով»: [25, էջ 106]

Անհրաժեշտ է նշել, որ Հնդկաստանի հետ ծովային առեւտուրը մեծապէս վնասեց նաեւ հնդկական ապրանքները ցամաքային կարաւանային ճանապարհներով Միջերկրականի նաւահանգիստները եւ այլուր փոխադրող վաճառականներին, որոնց մէջ կարեւոր տեղ ունէին Նոր Ջուղայեցի հայերը: Ցամաքային փոխադրութիւններին ոչ պակաս չափով վնասեցին նաեւ Իրանի ներքին խռովութիւնները եւ զանազան արշաւանքները, որոնք անապահով դարձրին ցամաքային կարաւանների ճանապարհները: Հայերը հետզհետէ յուսահատւելով ցամաքային ճանապարհները շահագործելուց, իրենք եւս հետամուտ եղան ծովային ուղիներից օգտւելուն:

Ինչ վերաբերում է Հոլանդիային, ապա ովկիանոսային ճանապարհների վրայ բեռնափոխադրումների ընդգաւառում նա դեռեւս գրաւում էր առաջատար տեղ եւ հետեւաբար հանդիսանում էր Մեծ Բրիտանիայի համար լուրջ խոչընդոտ ծովային առեւտրի մենաշնորհը իր ձեռքը վերցնելու եւ առհասարակ ովկիանոսային ճանապարհների վրայ հսկողութիւն սահմանելու գործում:

Հոլանդացիները, ինչպէս եւ պորտուգալացիները, որպէս կանոն հաստատւել էին Հնդկաստանի ծովեզերքներում եւ հայերի հետ պահպանում էին սերտ առեւտրական յարաբերութիւններ: 1636 թ. Բենգալիայում հոլանդացիները հիմնեցին իրենց առաջին առեւտրական կայանը՝ Ջինսուրան կամ Ջիչուրան: Այստեղ յատկապէս աչքի էր ընկնում մեծահարուստ եւ անանի Մարգար ընտանիքը, որի

ամենանշանաւոր դէմքն էր խոջա Յովհաննէս Մարգար Ջուղայեցի Ղարիբը, որը մահւանից յետոյ (1697) թաղւել է Զինսուրայի հայոց եկեղեցու բակում: [275, էջ 37]

Հայերի ծաւալուն առեւտրական յարաբերութիւնները հոլանդացիների հետ հնարաւորութիւն էր տալիս նրանց ազատ ելեւմուտք ունենալու նաեւ հոլանդական տիրապետութեանը ենթակայ բոլոր վայրերում Մալաքքայում, Սումատրայում, Ճաւայում, Խաղաղականի կղզիներում եւ այլն:

1688 թ. պայմանագիրը խիստ ձեռնտու էր անգլիական Օստ-Հնդկական ընկերութեանը: Պատահական չէ, որ մինչեւ XVII դարի վերջը անգլիացիները շարունակում էին հայ վաճառականներին իրենց կողմը ներգրաւելու քաղաքականութիւնը: 1691 թ. Օստ-Հնդկական ընկերութեան Լոնդոնի կենտրոնը հրահանգում էր Հնդկաստանում իր ներկայացուցիչներին ընկերութեան կողմը ներգրաւել հայերին, այդ փորձառու վաճառականներին, որոնք այնքան շատ են նպաստել Հնդկաստանում, Իրանում եւ ողջ Ասիայում Առեւտրի զարգացմանը, Մաղրասում նրանց տրամադրել յատուկ թաղամաս, որոնք այնտեղ կարողանային ապրել ինչպէս իրենք են ցանկանում եւ կառուցէին եկեղեցի: Այդ թաղամասը կարելի էր անւանել Ջուղա, շահ Աբբասի օրինակով, որը նրանց գաղթեցրեց Սպահան: Այդ հայերը հարուստ ժողովուրդ են եւ հանդիսանում են երկրագնդի վրայ ամենափորձառու վաճառականները»: [301, էջ 617]

Անգլիական Օստ-Հնդկական ընկերութեան Դիրեկտորների խորհրդի 1695 թ. սեպտեմբերի 13-ի հաղորդագրութեան մէջ նշւում էր, որ ընկերութիւնը խոշոր վնասներ է կրել միայն այն պատճառով, որ նրա գործակալները փորձել են Մուլթանում եւ Սինդում հաստատել առեւտրական կապեր՝ շրջանցելով հայ վաճառականներին: [275, էջ 242]

XVII դարում անգլիացիները ձգտում էին օգտագործել ոչ միայն հայերի առեւտրական տաղանդը, այլեւ յոյս ունէին օգտւել նրանց ծառայութիւններից յանուն իրենց գաղութակալական նպատակների: Այդ առթիւ առկայ է հետեւեալ ուշագրաւ փաստը: 1661 թ. բրիտանական կառավարութեան յատուկ խարտիան Օստ-Հնդկական ընկերութեանը իրաւունք էր տւել հաւաքագրել զօրքեր: [309, էջ 205] Ընկերութիւնն աշխատում էր իր զինւած ուժերը հաւաքագրել հիմնականում եկւոր տարրերից, որպէսզի տեղական ապստամբութիւնների դէպքում ունենայ իր զօրքերի հաւատար-

մութեան երաշխիքներ: 1692 թ. Օստ-Հնդկական ընկերութեան տնօրէնները դիմեցին խոջա Փանոս Քալանթարին, խնդրելով կազմակերպել Հնկաստանում եւ Իրանում բնակւող հայերի հաւաքագրումը բանակի շարքերը, խոստանալով նրանց տալ բարձր աշխատավարձ եւ անգլիական հպատակների իրաւունքներ: [275, էջ 31, 51-53] Սակայն այդ առաջարկը հայերի շրջանում արձագանք չգտաւ եւ անգլիացիների մտադրութիւնները կատարեալ ձախողման մատնուեցին: Փաստերը վկայում են, որ չնայած անգլիացիների գործադրած բազում ջանքերին, այնուամենայնիւ, նրանց չյաջողուեց հայ վաճառականների առեւտուրը ամբողջապէս ուղղել ովկիանոսային ճանապարհների կողմը: Նրանք չցանկացան կտրել Լեւանտեան եւ Միջերկրածովեան առեւտրական ուղիներից, որոնք ողջ XVII դարի ընթացքում մնացին որպէս միջմայրցամաքային առեւտրի կարեւորագոյն հանգոյցներ:

XVIII դարի կէսերից, երբ անգլիացիների առեւտրատնտեսական եւ քաղաքական տիրապետութիւնը Հնդկաստանում վերջնականապէս ամրապնդուեց եւ իրողութիւն դարձաւ, Օստ-Հնդկական ընկերութեան վերաբերմունքը հայ վաճառականների նկատմամբ, ինչպէս եւ պէտք էր սպասել, ենթարկուեց կտրուկ փոփոխութեան: Անգլիացիներն այլեւս չէին ցանկանում հայերի հետ բաժանել գաղութային առեւտրից ստացած բարձր եկամուտները:

Իսկ հայ վաճառականները, որքան էլ որ կայուն լինէին նրանց դիրքերը հնդկական շուկաներում, եւրոպական աւելի բարձր կազմակերպուած կապիտալի ուժգին նուաճողականութեան պայմաններում, զուրկ պետական հովանաւորութիւնից եւ յոյսը դրած միայն իրենց սեփական ուժի եւ անձնական նախաձեռնութեան վրայ, օգտագործելով գործավարութեան հնացած ձեւերը, չէին կարող մնալ որպէս ինքնուրոյն գործող վաճառականներ:

Բացի այդ Հնդկաստանում հայ վաճառականները գործում էին առանձին-առանձին ցրւած ուժերով, լաւագոյն դէպքում շատ փոքր ընկերակցութիւններով, որը նուազեցնում էր նրանց մրցունակութիւնը: Առաւել եւս, որ նրանք ի վիճակի չէին դիմանալ անգլիական մրցակցութեանը, որովհետեւ նախ ժամանակի ընթացքում նրանց առեւտրի ձեւերը զարգացում չապրեցին եւ նոյնիսկ XVIII դարում շարունակում էին առեւտուր անել նահապետական եղանակներով: Այնուհետեւ հայ վաճառականները հնարաւորութիւն չունէին օգտուելու բանկային կապիտալից, ինչ անում էին եւրոպական վաճառականները: Եւ վերջապէս Օստ-

Հնդկական վիթխարի ընկերությունը օգտուում էր բանակի ու պետական հզօր ապարատի աջակցությունից ու հովանաւորությունից: Նրա կողմից ստեղծուած առեւտրական մոնոպոլիաների, ինչպէս նաեւ գաղութային տնտեսական քաղաքականության այլ ձեւերի իրականացման պատճառով (զանազան կամայականություններ, տուգանքներ, բռնություններ եւ այլն), հայերի վաճառականությունը Հնդկաստանում մատնուեց անկման, բազմաթիւ խոնարհներ քայքայուեցին, ունեզրկուեցին եւ դադարեցին գործելուց: [303, էջ 153]

Անգլիացիները նոյնիսկ չէին խորշում կաշառելու տեղական հնդիկ կառավարիչներին ու ֆէոդալներին, որպէսզի նրանք հալածանքների ենթարկեն հայ վաճառականներին: Այդ քաղաքականության հետեւանքով, օրինակ, բազմաթիւ հայ վաճառականներ ստիպուած եղան արտագաղթել Լահորից: Մարեցին նաեւ Հնդկաստանի բազմաթիւ քաղաքներում եղած ծաղկուն հայ գաղթօջախները: Սկսուեց հայերի զանգուածային արտագաղթ այդ առասպելական հարստության երկրից այլեւայլ երկրներ:

Այդ նոյն ժամանակ համարեայ նոյնանման պատճառներով փոխուել էր նաեւ ֆրանսիական իշխանությունների վերաբերմունքը հնդկահայ վաճառականների նկատմամբ: Այսպէս, երբ 1746 թ. Մադրասը գրաւուեց Ֆրանսիացիների կողմից, վերջիններս աւերեցին եւ հողին հաւասարեցրին խոջա Պետրոս Տէր Նիկողոսեանի քառասունից աւելի տները (չհաշուած նրանք, որոնք գտնուում էին ամրոցում), իսկ նրա շարժական գոյքն ու գանձերը բռնագրաւուեցին եւ ուղարկեցին Պոնդիշերի: [275, էջ 582] Հայ վաճառականների հախուռն դուրս մղումը ասիական շուկաներից մի կողմից ստիպում էր նրանց որոնել եւ իւրացնել նոր շուկաներ, եւրոպացիներին դիմադրաւելու համար փորձել համախմբուել ու կազմակերպուել նրանց ձեւով, սակայն միւս կողմից հայ առեւտրական կապիտալի ներկայացուցիչների մօտ բուռն ու անկասելի ձգտում նկատուեց սեփական շուկայ ձեռք բերել մայր հայրենիքում: Պատահական չէ, որ XVIII դարի երկրորդ կէսին սկսուած հայ ազատագրական շարժման առաջամարտիկ է դառնում առեւտրական բուրժուազիան, որը երազում էր մայր հայրենիքում ստեղծել այնպիսի քաղաքական վարչակարգ, որն ի վիճակի լինէր ապահովել հայ առեւտրական կապիտալի շահերը: [303, էջ 155]

Շահամիր Շահամիրեանը հնդկահայ գաղթօջախում առաջինն էր, որ ձեռնամուխ եղաւ քաղաքական ազատության եւ քա-

դաքական վերակենդանութեան քարոզչութեան: Նա կոչ էր անում ցիրուցան հայութեանը համաշխարհային պանդխտութիւնից վերադառնալ տուն եւ իր ստացածքի տէրը դառնալ: [84, էջ 528]

17-րդ դարում Հնդկաստանը մի հսկայական յենակէտ էր, որի վրայով հայ վաճառականները առեւտուր էին անում նաեւ Ջինաստանի, Հարաւ-Արեւելեան Ասիայի, կենտրոնական Ասիայի, Հեռաւոր Արեւելքի երկրների, Խաղաղ եւ Հնդկական ովկիանոսների կղզիների հետ եւ այլն: Նրանք յատկապէս աշխոյժ առեւտրափոխանակութիւն ունէին Բիրմայի, Սիամի, Տիբեթի (հայ եւ եւրոպական մի շարք աղբիւրներում Տիբեթը յիշատակւում է Բութանդ անուանումով), Ինդոնեզիայի, Նեպալի, Ֆիլիպինների, Մալայեան արշիպելագի եւ բազմաթիւ այլ երկրների հետ:

Նշած եւ այլ վայրերում հաստատուած հայ վաճառականները սերտ յարաբերութիւնների մէջ էին գտնւում Հնդկաստանում գործող հայ առեւտրական մեծ տների հետ: Նրանցից շատերը ընդարձակ գործառնութիւններ ունեցող այդ հաստատութիւնների գործակալներ եւ մասնաճիւղերի պաշտօնեաներ էին:

Ջին ժողովրդի հետ հայերի ունեցած պատմական շփումների ու առնչութիւնների հարցը քննութեան յատուկ առարկայ չի հանդիսացել: Գոյութիւն ունի հաւաստի գիտական տեսակէտ այն մասին, որ Ջինաստանը վաղնջական ժամանակներից ծանօթ է եղել հայ վաճառականներին: Հայերը Ջինաստան են այցելել դեռեւս վաղ միջնադարում, Թան դինաստիայի տիրապետութեան շրջանում (618-907 թ.թ.): [170, էջ 27-28, 316] Աւելի ուշ այդ կապերը դառնում են աւելի ընդարձակ: Ֆրանցիսկեան միաբանութեան անդամ Անդրեաս Պերուջացին 1326 թ. Ջինաստանից գրած մի նամակում յայտնում է, որ Թայանի նեղուցի Ցյուանջոու կոչած ծովածոցի նոյնանուն քաղաքում համեծահարուստ մի հայ տիկին կառուցել է մեծ ու գեղեցիկ մի եկեղեցի, որը արքեպիսկոպոս Զովանի Մոնտեկորվինցի հրահանգով դարձել է կաթողիկէ տաճար: Այդ վկայում է, որ 14-րդ դարի սկզբներին հարաւ-արեւելեան Ջինաստանի ծովափնեայ վաճառաշահ քաղաքներում այնքան յաճախակի է եղել հայերի երթեւեկը, որը եկեղեցի ունենալու անհրաժեշտութիւն է առաջացել: [170, էջ 28]

Յիսուսեան կրօնաւորների վկայութեամբ 16-րդ դարում հայերը վաճառականութեան եւ քրիստոնէութեան ռահվիրաներն են եղել Ջինաստանում: [149, էջ 202] Յիշատակութիւն կայ այն մասին, որ 1603 թ. Յիսուսեան կրօնաւորները ապահովութեան համար հայի

անուն տակ եւ հայկական տարազով մուտք էին գործում Չինաստան: [37, էջ 467]

Որպէս կանոն հայ վաճառականները Չինաստան էին հասնում ծովային երթուղիներով: Սակայն Չինաստանի հետ տնտեսական կապեր էին հաստատած նաեւ կարաւանային այն ճանապարհներով, որոնք անցնում էին Միջին Ասիայով եւ Կաշգարից մտնում Չինաստան: [170, էջ 29]

Այդ մասին վկայող խօսուն փաստերից մէկը Բալխաշ լճի աւազանում, Սեմիրեչիե կոչւող երկրամասի Փիշրէգ գիւղում յայտնաբերւած քրիստոնէական գերեզմանատան այն տապանաքարն է, որի վրայ հայերէն եւ ասորերէն փորագրած է հետեւեալ արձանագրութիւնը. «Տէր Յովհան Հայոց եպիսկոպոս ի թ. Հայոց ՌՃԻԲ (1323) գրեցաւ յիշատակարան»: [311, էջ 344-349. 312, էջ 46. 313, էջ 243-244]

Բրիտանական Օստ-Հնդկական ընկերութեան եւ Հնդկահայ վաճառական խոջա Փանոս Քալանթարի միջեւ 1688 թ. կնքւած պայմանագրի չորրորդ կէտով իրաւունք էր տրւում հայերին՝ անգլիացիներին հաւասար մաքսեր վճարելով առեւտուր անել Չինաստանում: [275, էջ 271]

Հայ վաճառականները Չինաստանի հետ առեւտուր էին անում նաեւ Տիրեթի վրայով: Յովհաննէս Տէր Դաւթեան Զուղայեցին իր «Հաշւետումարում» վկայում է, որ մի շարք հայ վաճառականներ՝ Մատուրը, Մելիքանը, Նիկողոսն ու Դաւութը յաղթահարելով բազմաթիւ խոչընդոտներ, կտրելով լեռնային դժւարանց ճանապարհներ ու անմարդաբնակ տարածութիւններ, Տիրեթից ուղեւորել են Չինաստանի Սինին վաճառաշահ քաղաքը եւ այնտեղից Լհասա առաքել մեծ քանակութեամբ ձոյլ ոսկի, մուշկ, թէյ, «Մընկի շայ» եւ այլ ապրանքներ: [170, էջ 26-27] Որոշ փաստեր հնարաւորութիւն են տալիս ենթադրելու, որ մի քանի հայ վաճառականներ տեւական բնակութիւն են հաստատած եղել Սինին քաղաքում: [170, էջ 27]

Դէպի կենտրոնական Ասիա եւ Չինաստան հայերի ձեռնարկած ուղեւորութիւնների, նրանց գաղթավայրերի եւ հայ-չինական առընչութիւնների վերաբերեալ փաստական հարուստ նիւթեր են պարունակւում Ֆրանսիացի հեղինակ Ժ. Դովիէի գրքում: [314, էջ 1-17]

1675-1678 թ. Չինաստան մեկնած ռուսական դեսպանութեան ղեկավար Նիկոդայոս Սպաթարիոս Միլեսկու հաղորդած տեղեկութեան համաձայն, մետաքսի արտադրութիւնը, թթնանօթ ձուլելու գաղտնիքը, կողմնացոյցի օգտագործումը նաւագնացութեան մէջ եւ

այլ նորոյթներ, չինացիներից սովորելով Եւրոպայում տարածել են հայը Օդորիկոսը (Որդոլինոնցին), Անտոն հայը եւ Մարկո Պոլոն: [315, էջ 24-25: 28, էջ 71-173]

Անտոն Հայի մասին աղբիւրները հաղորդում են, որ նա եղել է նաւապետ եւ ծառայել Վենետիկի հասարակապետութեանը: Պահպանուել է նաեւ նրա կտակը գրած XIV դարի վերջին:

Մաւորուն է եղել նաեւ հայ վաճառականների առեւտուրը Բիրմայի հետ: Կոստանդ Ջուղայեցին այդ երկրում յիշատակում է երկու քաղաքներ՝ Աւան եւ Ռանգունը, որտեղ հաստատուած են եղել հայ վաճառականներ: Անգլիական աղբիւրների վկայութեամբ Բիրմայում եւ նրա հարեւան երկրներում առկայ են եղել հայկական առեւտրական գրասենեակներ (ֆակտորիաներ), որոնք լուրջ մրցակիցներ են եղել եւրոպացիների համար: [316, էջ 264]

Վկայելով այդ մասին, մի ճանապարհորդ, որը 17-րդ դարում այցելել է Բիրմա գրում է. «Հայերը, որոնք հաստատուած են Աւայում եւ ունեն իրենց ինքնուրոյն իշխանութիւնը, բաւականին դժուարացրել են եւրոպական վաճառականների գործը»: [318, էջ 15]

17-րդ դարի սկզբներին Բիրմայում գոյութիւն ունեցած հայկական գաղթօջախների մասին ուշագրաւ տեղեկութիւններ է բերում նաեւ Հ.Գ.Ագոնցը: [319, էջ 152] Մի շարք տեղեկութիւններից կարելի է եզրակացնել, որ հայերը Բիրմայում ունեցել են որոշակի հեղինակութիւն ու կշիռ: Այսպէս, 1692 թ. Մադրասի անգլիական առեւտրական ֆակտորիաների կառավարիչը բիրմայական իշխանութիւնների հետ բանակցելու համար դիմել է Բիրմայի հայերի միջնորդութեանը: [320, էջ 158] 1675-1680 թ.թ. Բիրմա այցելած անգլիական ճանապարհորդ Ստեւնահամ Մասթերը Լոնդոն ուղարկած զեկուցագրում վկայում է, որ «Պեգուի հայերը... ամբողջ Բրմստանի սուտակի վաճառականութիւնը վերցրել են իրենց ձեռքը»: [320, էջ 169] Բնականաբար միայն թանկագին քարերի առեւտրով չէ, որ զբաղւում էին հայ վաճառականները:

Ամենայն հաւանականութեամբ Բիրմայի հայ գաղթականութեան կղզեակները հիմնականում բաղկացած էին հին եւ նոր ջուղայեցիներից, որոնք կամ ուղղակի եկել էին հայրենիքից, կամ էլ Հնդկաստանի հայ գաղթավայրերից՝ Մադրասից, Դաքքայից եւ յատկապէս Բիրմային գրեթէ սահմանակից Բենգալիայից: [166, հտ. Բ, էջ 284]

18-րդ դարի 50-60ական թ.թ. Բիրմայի հայ գաղթօջախները որոշակի աշխուժացում ապրեցին չնորհիւ այն բանի, որ Նոր

Զուղայից այստեղ եկաւ գաղթականութեան մի թարմ հոսանք: Այդ նոյն ժամանակ, երբ անգլիացիները Հնդկաստանում հալածանքներ սկսեցին հայերի նկատմամբ, նրանց մի զգալի մասը եւս տեղափոխուեց Բիրմա, որը այն ժամանակ դեռ չէր գաղութացուել անգլիացիների կողմից:

Տիբեթի հետ հայ վաճառականների առեւտրի մասին մենք ուշագրաւ տեղեկութիւններ ենք գտնում Նոր Զուղայեցի վաճառական Տէր Դաւթի որդի Յովհաննէսի «Հաշուետումարում»: Ի դէպ, Տիբեթը Արեւելքի այն երկրներից է, որը երկար դարեր (մինչեւ 1904 թ.) փակ է եղել արտաքին աշխարհի համար: Ուստի այդ երկրի միջնադարեան շրջանի տնտեսական կեանքի պատմութեան մասին շատ քիչ նիւթեր են պահպանուել: Յովհաննէս Զուղայեցու «Հաշուետումարի» տիրեթեան գրառումները իրենց հնութեամբ, հաւաստիութեամբ եւ մանաւանդ հարուստ բովանդակութեամբ յատուկ տեղ են գրաւում Տիբեթի մասին օտարազգի այցելուների ուղեգրութիւնների շարքում: Յովհաննէս Զուղայեցին համարւում է Տիբեթ այցելած չորրորդ անձնաւորութիւնը, որը գրաւոր յիշատակ է թողել այդ մասին: [Տե՛ս 170]. Նա առեւտրական գործերով այդ երկիրն է այցելել 1686 թ: Նրանից առաջ այդ երկիրը այցելել էին միայն ֆրանցիսկեան քարոզիչ Օդորիկոս Ֆրիուլացին կամ Պորդենոնցին (14-րդ դարում), պորտուգալացի Անտոնիո Անդրադարցին (1624 թ.), աւստրիացի Ճիզիսթ Իոհան Գրիւբերը (17-րդ դարի 60-ական թւականներին): [Տե՛ս 170, առաջաբանը].

Սակայն հաւաստի տեղեկութիւններ կան այն մասին, որ Յովհաննէս Զուղայեցուց առաջ եւս այդ երկիրը այցելել են հայ վաճառականներ: Այդ մասին է վկայում թէկուզ այն փաստը, որ Կոստանդ Զուղայեցին իր «Աշխարհաժողովում» տեղեկութիւններ է հաղորդում Տիբեթում (Բութանդ) կիրառւող չափ ու կշռի միաւորների մասին: [321]

Ինքը Յովհաննէս Տէր Դաւթեան Զուղայեցին իր «Հաշուետումարում» վկայում է, որ երբ 1686 թ. հասել է Լհասա, այնտեղ ի թիւս բազմաթիւ տիրեթցի, նեպալցի, քաշմիրցի եւ այլն վաճառականների հանդիպել է հայ խոջաների: Նա նոյնիսկ թւարկում է նրանց անունները. Ղուկասի որդի Մատուր, Պողոսի որդի Մելիքան, Գազկցի Կարապետի որդի Աբրահամ, Մելիքանենց Մաթոս, Մարտիրոսի որդի Նեկոս (Նիկողոս), Յակոբ, Խումցի աղան, Դաւիթ, Մուրադ, Սարգսի որդի Յովհան, Ակնցի Ասլան, Պետրոս եւ այլն: [170, էջ 26]

Յովհաննէս Զուղայեցին Տիրեթում մնացել է անընդմէջ հինգ տարի, իւրացնելով տիրեթերէն լեզուն եւ մօտիկից ծանօթանալով այդ երկրի ժողովրդի բաքերի ու սովորութիւնների հետ: Նրա «Հաշուետումարը» մեծարժէք սկզբնաղբիւր է Իրան, Հնդկաստան, Նեպալ եւ Տիրեթ ներմուծուող ու արտածուող ապրանքներից գանձուող մաքսերի չափը պարզելու, ապրանքների փոխադրման եղանակները որոշելու եւ յարակից այլ հարցեր լուսաբանելու առումով:

Ինչպէս նշւեց վերեւում, հայ վաճառականները աչքի ընկնող առեւտուր են ունեցել նաեւ Ինդոնեզիայի հետ: Որոշ տեղեկութիւնների համաձայն Նիդերլանդական Հնդկաստանի հայկական գաղութը հիմնադրւել է 1656 թ. խոջա Սոլիմա անունով մի վաճառականի կողմից, որը հաստատւել էր Մագասար քաղաքում: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ Ճաւայում եւ ինդոնեզական միւս կղզիներում եւս հաստատւել էին հայ վաճառականներ: 1747 թ. մարտի 31-ին «Նիդերլանդական Օստ-Հնդկական ընկերութիւնը արձակում է յատուկ հրովարտակ, որով հայերին շնորհւում էր «Ազատ քաղաքացի» իրաւունքը, [322, էջ 6] որով նրանց իրաւունքները հաւասարեցւում էին եւրոպացիների իրաւունքներին: [323, էջ 15]

Մեզ հասած տեղեկութիւններից պարզւում է, որ Նիդերլանդական Հնդկաստանում եւս ոչ նւազ քանակութեամբ հայեր, քան Բրիտանական Հնդկաստանում, վաճառականութեան ճանապարհով տիրացած են եղել մեծ հարստութեան: Դրանցից մէկն էր, օրինակ, Նոր Ջուղայեցի վաճառական Ցարութիւն Զաքարիան, որը ապրել ու գործել է Բատաւիայում: [323, էջ 16]

Կոստանդ Զուղայեցին Հեռաւոր Արեւելեան Մալակկայի, Տիմորի, Մակասի, Ինդոնեզական կղզիների կողքին յիշատակում է Ֆիլիպինների կենտրոն Մանիլան որպէս առեւտրաշատ մի քաղաք, որտեղ լինում են հայ վաճառականներ: [324]

Առեւտրի համար Ֆիլիպիններ եկող հայերը գլխաւորապէս ջուղահայեր էին՝ Հնդկաստանի, Զինաստանի ու արեւելեան այլ երկրների առեւտրականներ: Գ. Ագոնցը Մանիլայի հին գաղթականութեան մասին գրում է, -«...Ոչ ոք, յազգաց, եւ ոչ յեւրոպացւոց կարող է անդ վաճառականութիւն առնել, բայց ի չինաց, Հնդկաց եւ հայոց»: Ղ. Ալիշանը գրում է, որ «ոմանք յստար ազգաց կամեցեալ առեւտրութիւն առնել անդանօր, յանուն հայոց առնեն»: [37, էջ 468]

Մանիլայի հայ փոքրիկ գաղթօջախը այս շրջանում հանդիսանում էր իւրօրինակ մի յենակէտ կամրջակ, կապող օղակ՝ Հեռաւոր Արեւելքի, Չինաստանի հայ գաղթօջախների եւ Հնդկահայոց ու Նոր Ջուղայի միջեւ։ [168, հատ. բ., էջ 323]

18-րդ դարի վերջերին եւ 19-րդ դարի սկզբներին ասիական երկրներում տեղի ունեցած քաղաքական եւ սոցիալական ընոյթի տեղաշարժերը բացասական ազդեցութիւն ունեցան հայ գաղթօջախների ճակատագրի վրայ, որի հետեւանքով անկում ապրեց նաեւ հայ վաճառականութիւնը, փակելով խոջայական կապիտալի պատմութեան երբեմնի փառաւոր էջերը։

ՎԵՐՋ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1- Я.Манандян, О торговле и городах Армении в связи с торговлей древних времен, Ереван, 1954.

2- Տե՛ս Վ.Միքայէլեան, Ղրիմի հայկական գաղութի պատմութիւն, Երեւան, 1964թ.:

3- Տես՝ Վ. Միքայէլեան, Հայ-իտալական առնչութիւններ, Երեւան, 1974.:

4- Հ. Յակոբեան, Ուղեգրութիւններ, Հ.Ա,ժգ-ժզ դար, Երեւան 1932.:

5- Karl Jahn, Täbris ein mittelalterliches kulturzentrum zwischen Ost and West, Wien-Köln, 1968.

6- F. Pegolotti, La pratica della mercatura. Ed. by Evance, Mass. 1936.

7- Yule'. M.Gathay and the way thither, vol, II, London, 1866.

8- «Ժե դարերի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ: Մասն երկրորդ (1451 - 1480թ.թ.): Կազմեց Լ.Խաչիկեան, Երեւան, 1958:

9- Всемирная история, т.3.

10- W. Heyd, Histoire du Commerce du Levant au Moyen-Age, Amsterdam, 1967, t.II

11- Ф.Я. Полянский, Экономическая история зарубежных стран (эпоха феодализма), Москва, 1954.

12- Լեռ, Երկերի ժողովածու, 3-րդ հատոր, Երեւան, 1969:

13- В.А. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в 17 веке. (Роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях), Ереван, 1969.

14- H. Inalcik, The Ottoman Economic Mind and Aspects of the Ottoman Economy,- " Studies in the Economic History of the Middle East, " London, 1970.

15- Иммануил Кант. Сочинения, т.6, Москва, 1966.

16- А.Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в 16-17 веках, Ереван, 1972.

17- Ա. Յովհաննիսեան, Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, գիրք երկրորդ, Երեւան, 1959:

18- Մ.Մաշտոցի անւան Մատենադարան, ձեռագիր № 781, էջ 2-3:

19- P. Bedik, Cehil Sutun, Viennae, 1678.

20- Մ. Մաշտոցի անւան մատենադարան, ձեռագիր № 201, էջ 612 բ:

21- С.В.Тер-Аветисян, Город Джуга, Тифлис, 1937.

22- Hakluytus Posthumus or Purchas his Pilgrimes. Glasgow, 1906, MCMV, VIII.

23- Ա. Դավրիժեցի, պատմութիւն, Վաղարշապատ, 1896:

24- Herbert Busse, Untersuchungen zum Islamischen kanzleiwesen, kairo, 1959, urk. 1

25- Լեօ, Խոջայական կապիտալ, հ.1, Երեւան, 1934:

26- Woods, John E., The Ag-quyunlu. Clan, Confederation, Empire.

27- Վահան Բայբուրդեան, Իրանահայերի մասնակցութիւնը իրանաեւրոպական հակաթուրքական դաշինք ստեղծելու փորձերում (16- 17- դ.դ) Գ-Ա «Լրաբեր հասարակական գիտութիւնների» ամսագիր, 1984, № 9:

28- Ղ. Ալիշան, Հայ- Վենետ, Վենետիկ, 1896:

29- G. Berchet, La Republica di Venezia e la Persia, Torino, 1865.

30- Халил Инальджик.Международные торговые пути и Османская империя.(Доклад на 5-ом международном конгрессе экономической истории в Ленинграде).Москва, 1970.

31- Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ, հատ, II Վենետիկ, 1924:

32- "Chéref-Nameh", par Chéref-Ouddine, S. Petersbourg, 1873, t.II, partie I.

33- Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870:

34- Արտավազդ արք. Սիւրմէյեան, պատմութիւն Հալէպի հայոց՝ հ.3, Փարիզ, 1950:

35- Վահան Բայբուրդեան, Հայաստանի ազատագրութեան խնդիրը եւ ջուղահայ առեւտրական բուրժուազիան 16-17 դարերում:

36- R. du Mans, Estat de la Perse en 1660, Paris, 1890.

37- Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893:

38- И.П.Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в 16-начале 19 в.в., Ленинград, 1949.

39- Richard Hakluyt. The principal Navigations, voyages, Traffics and discoveries of the English Nation, vol II , London, 1913, vol III Glasgow, 1903-1905.

40- John Cartwright, Voyage from Aleppo in Hispahan and back again. «Hakluytus posthumus or Purchase his Pilgrimes, " vol. 8 Glasgow, 1905.

41- اسکندر بیک ترکمان (منشی)، تاریخ عالم آرای عباسی، به سعی و اهتمام میرزا محمود خوانساری، تهران، ۱۳۱۳

42- И.П.Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в 16- начале 19 в.в., Ленинград, 1949.

43- V. Minorsky, Tadhkirad al-muluk, a manual of Safavid administration, London, 1943

44- H.F. Farmayan. The beginnings of modernization in Iran. The Policies and reforms of Shah Abbas I (1587-1629). Salt Lake City, Utah, 1969.

45- ժԷ դարի Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, հատ. Ա, Nº 321

46- В.А.Гордлевский, внутреннее состояние Турции во второй половине 16 в., ,,Труды Института Востоковедения АН СССР,, , сб. 2, 1940.

47-Hekmat [Mohammad Ali], Essai sur l'histoire des relations politiques Irano-Ottomanes de 1722-1747, Paris, 1937.

48- نصرالله فلسفی، زندگانی شاه عباس اول، جلد ۱.۴، تهران، ۱۹۵۲.۱۹۷۲

49- کاظم صدر، تاریخ سیاست خارجی ایران، تهران، ۱۹۴۳

50- A. Gouvea, Histoire orientale des grands progres de L'Eglise catholigue, Bruxelles, 1609.

51- Յարութիւն Տէր-Յովհաննեանց, Պատմութիւն Նոր Ջուղայու, նոր Ջուղա, 1880:

52- A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the 17 and 18 centuries, vol. I London, 1939, vol II London, 1939.

53- Մ. Մաշտոցի անւան Մատենադարան, ձեռ. Nº 2381, թ.թ. 252բ- 253բ:

54- R.W. Ferrier, The Armenians and the East India Company in Persia in the Seventeenth and Early Fighteenth Century. - Economic History Rewiew, 2nd Series, XXVI, 1973.

55- Дневник осады Испагани афганцами, веденный Петросом ди Саргис Гиляненц в 1722 и 1723г.г., СПб, 1870.

56- John Carswell, New Julfa, Armenian Churches and other buildings, Oxford, 1968.

57- Thomas Herbert, Travels in Persia, New York, 1929.

58- باستانی پاریزی، سیاست و اقتصاد در عصر سفاوی

59- J.B. Tavernier, Les six voyages de Jean-Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes, Paris, 1692.

60- Հ. Քիւրդեան, Ջուղայեցի խոջա նազար եւ իւր գերդաստանը, առանձնատիպ:

61- Voyages and Travels of the Ambassadors, London, 1662,

62- Tournefort, Pitton de, Relation d'un Voyage du Levant, Paris, 1718, t. II.

63- Roger Savori, Iran under the Safavids, Cambridge, 1980.

64. Pietro Della Valle, Reiss-Beschrei bung in unterchiedlichen Theilen der Welt, II, Cenf, 1674.

65- Bells travels in Asia. A General collection of the Best and Most interesting voyages and travels by John Pincerton, London, 1811.

66- رشید یاسمی، تاریخ ایران، تهران، ۱۳۲۲

67- Edward Denison Ross, Sir Anthony Sherley and His Persian Adventure, London, 1933.

68- Percy Sykes, A History of Persia, London, 1930, vol, II .

69- Sir Anthony Shirley, His relation of his travels into Persia, London, 1613.

70- L.L. Bellan, Chah Abbas I, Sa Vie, Son Histoire, Paris, 1932.

71- Thomas Herbert, Relation du voyage de Perse et des Indes Orientales, Paris, 1663.

72- Pietro della Valle, Voyages dans la Turquie, L'Égypte, La Palestine, La Perse, les Indes Orientales et autres lieux, t. IV, Rouen, 1745.

73- Niels Steensgaard, The Asian Trade Revolution of the Seventeenth Century. Chicago, 1973.

74- Gabriel Chinon, Relation nouvelle du Levant, Lyon, 1671.

75- Հ. Քիւրդեան, Նիւթեր Վաճառականութեան պատմութեան (Հում մետաքսի առեւտուրը եւ հայերը) , առանձնատիպ:

76- Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 г.г., составленное секретарем посольства Адамом Олеарием, Москваа, 1870.

77- اسکندر بیک ترکمان (منشی) و محمد یوسف مورخ، ذیل تاریخ عالم ارای عباسی بتصحیح سهیلی خوانساری، تهران، ۱۳۱۷

78- И.П.Петрушевский, Народное восстание в Гиляне в 1629г., ,,Ученые записки Института востоковедения,, , т.3, Москва 1951.

79- Գր. Դարանաղցի (Կամախեցի), ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1915:

80- Մ. Մաշտոցի անւան Մատենադարան, ձեռ. Nº 5994, էջ 3ա - 3բ.

81- Ղուկաս Վանանդեցի, Բանալի համատարածի աշխարհացուցին մերոյ նորածնի, Ամստերդամ, 1696:

82- Հ.Ա. Սկրոդեր, Արամեան լեզուին գանձ, Ամստերդամ, 1711

83- «Արարատ» ամսագիր, էջմիածին, 1871թ.

84- Լէօ, Հայկական տպագրութիւն, Երկերի ժողովածու, հ.5, Երեւան, 1986:

85- Կարապետ Եպս. Ամատունի, Ոսկան Վարդապետ եւ իւր ժամանակը, Վենետիկ, Ս. Ղազար, 1975:

86- Chardin, Jean de, Voyage en Perse, Paris, 1811, t. II.

87- Գ. Վ. Գալեմքարեան, Կենսագրութիւններ, Վիեննա, 1915:

88- Մ.Վ. Ուղուրլեան, Պատմութիւն հայոց գաղթականութեան եւ շինութեան եկեղեցւոյ նոցա ի Լիւոռնոյ քաղաքի, Վենետիկ, 1891:

89- P. Harris, An Aleppo Merchant Letter Book,- The British Museum Quarterly, 1960, v,22.

90- K.S. Papazian, Merchants from Ararat, New York, 1979.

91- Early voyages and travels in the Levant, London, 1893.

92- Արտաւազդ արքեպիսկ. Սիւրմէյեան, պատմութիւն Հալէպի հայոց, հատ. Բ., 1946:

93- A.K. Sanjian, The Armenian Communities in Syria under Ottoman dominion, Cambridge, 1965.

94- ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ: Մասն II (1451-1480թ.թ), կազմեց Լ.Ս. Խաչիկեան, Երեւան, 1958:

95- Ա. Սիւրմէյեան, պատմութիւն Հալէպի ազգային գերեզմանատանց եւ արձանագիր հայերէն տապանաքարերու, Հալէպ, 1935:

96- Սիմէոն դպրի լեհացւոյ Ուղեգրութիւն, Վիեննա, 1936:

97- The Travels of Pedro Teixeira, London, 1902:

98- S. Purchas, His Piligrimes, Glasgow, v,8, 1906.

99- Estat de la Perse en 1660 par le P. Raphael du Mans, Superieur de la Mission des Capucins d'Ispahan, publié avec notes et Appendice, par Ch. Schefer, Paris, 1890.

100- Զաքարիա Սարկաւագի պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870:

101- Վ. Փափազեան, Թաւրիզ-Զմիւռնիա առեւտրական մայրուղու Թաւրիզ-Էրզրում հատուածն ըստ Զաքարիա Ագուլեցու «Օրագրութեան»: ԳԱ «Լրաբեր հասարակական գիտութիւնների», 1983, No 8:

102- Զաքարիա Ագուլեցու օրագրութիւնը, Երեւան, 1938:

103- Ա. Ալպոյաճեան, պատմութիւն հայ գաղթականութեան (Քրիստոսէ առաջ Զ դարէն մինչեւ ԺԱ դարը Քրիստոսի), Գահիրէ, 1961:

104- «Բազմավէպ», 1928, No 7-8:

105- R. Mantran, Foreign Merchants and Minorities in Istanbul during the sixteenth and Seventeenth Centuries,- "Christians and Jews in the Ottoman Empire," New York - London, 1982.

106- George Sandys, A Relation of a Journey began A.D. 1610, London, 1627, vol.I.

107- Ա.Ա. Խառատեան, Զմիւռնիայի հայ վաճառականութիւնը միջազգային առեւտրում (17-18-րդ դդ), «պատմա-բանասիրական հանդէս», 1989, No 3 (126):

108- P. Masson, Histoire du Commerce Français dans le Levant au XVII-è siècle, Paris, 1896.

109- Մանր ժամանակագրութիւններ, 13-18-րդ. դդ. հ. I, Երեւան, 1951:

110- K. Knorr, British Colonial Theories 1570-1850, Toronto, 1944.

111- Calendar of state Papers. Colonial ser., 1601-1617, London, 1860-1930, No 590, 1622-1624.

112- G. Noradounghian, Recueil d'actes Internationaux de l'Empire Ottoman, T.I. Paris, 1897.

113- Early English Tracts on Commerce. Cambridge, 1954.

114- W. Scott, The Constitution and Finance of English, Scottish and Irish Joint-Stock Companies up to 1720, vol,2, Cambridge, 1912.

115- M. Epstein, The English Levant Company, London, 1908.

116- احمد تاج‌بخش، ایران در زمان صفویه، تبریز، ۱۹۷۱

117- Poullet, Nouvelles relations du Levant, partie, I, II , Paris 1668.

118- Sanson, Voyage ou Relation de l'état present de Royaume de Perse, Paris, 1694.

119- Figueroa, Don Garcia, Ambassade en Perse, Paris, 1667.

120- Ricaut, Histoire de l'État present de l'Empire Ottoman, Paris, 1670.

121- Э. Бааш, История экономического развития Голландии в 16-18в.в., Москва, 1949.

122- Մ. Մաշտոցի անւան մատենադարան, ձեռ. № 8443:

123- «Հանդէս ամսօրեայ» 1934:

124- Մ. Մաշտոցի անւան մատենադարան, ձեռ. № 3280:

125- Մ. Մաշտոցի անւան մատենադարան, ձեռ № 1149:

126- Մ. Մաշտոցի անւան մատենադարան, ձեռ № 2229:

127- Յովհ. Արթինեան, Նոր Ջուղայեցի հայերուն առեւտուրը ժէ դարուն, «Անահիտ», 1908:

128- Scharer, Histoire du Commerce de tous les Nations, Paris, 1857, t.2.

129- Լեո, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, Երեւան, 1986:

130- H. Inalcik, The Ottoman Economic Mind and Aspects of the Ottoman Economy.- Studies in the Economic History of the Middle East, London, 1970.

131- Türk sanayi ve ticaret tarihinde Bursada ipekçilik Fahri Dalsar, Calisma vecaleti Kurulunda, Istanbul, 1960.

132- M. Herbette, Une Ambassade Persane sous Louis XIV, d'après des documents inedites, Paris, 1907.

133- Очерки истории Италии, Москва, 1959.

134- Н.А. Смирнов, Россия и Турция в 16-17в.в., т.1 ,,Ученые записики,, , вып.94, Москва, 1946.

135- H. Castries, Les sources ine dites de l'histoire du Maroc, T.3, Paris, 1912.

136- J. de Hammer, Histoire de l'Empire Ottoman depuis son origine jusqu'à nos jours, V2, Paris, 1844.

137- P. Pringle, Jolly Roger, New York, 1953.

138- Ա. Սարուխան, Հոլանդիան եւ հայերը ժզ-ժթ դարերում , Վիեննա, 1926:

139- Fr. Macler, Quatre Conferénces sur l'Arménie et les Arméniens Faites en Hollande, Paris, 1932.

140- H. Watjen, die Niederländer im Mittelmeergebiet zur Zeit ihrer höchsten Machtstellung Abhande Z. Verkehrs und Seegeschichte, Bd. II, Berlin, 1909.

141- H. Dunlop, Source pour servir á l'histoire de la compagnie des Indes

Orientales et La Hay, 1930.

142- Н.Г. Куканова, Очерки по истории русско-иранских торговых отношений в 17- первой половине 19 в., Саранск, 1977.

143- Gay de Montanella R. Valoracion hispanica en el Mediterraneo, Marscile, 1952.

144- Ch. Périgot, Histoire du Commerce Français, Paris.

145- G. Tongas, les relations de la France avec l'Empire Ottoman durant la première moitié du XVII siècle, Toulouse, 1942.

146- J. W. Zinkeizen, Geschichte des Osmanischen Reiches in Europa, B, V. Gotha, 1856.

147- Théophil Lavallée, Histoire de L'Empire Ottoman, Paris, 1855.

148- Comte de Saint-Priest, Mémoire sur l'Ambassade de France en Turquie, Paris, 1877.

149- Ա. Ալպոյաճեան, պատմութիւն հայ գաղթականութեան, հատ.գ. Գահիրէ, 1961

150- Fr. Macler, Notes de manuscrits arméniens ou relatifs aux Arméniens, vus dans quelques bibliotéques de la péninsule iberique et du sud-est de la France. "Revue des Etudes Arméniennes", t. II, Paris, 1922.

151- P. Pacifique, Relation du voyage in Perse, Lille, 1632, t. II.

152- H. Samuelian, Les Arméniens, en France depuis les origines, jusqu'à nos jours. Le Foyer, III-ème année, No 35, Paris, 1 er Avril, 1930

153- V. Langlois, Le trésor des chartes d' Arménie, Venise, 1863.

154- R. S. Lopez, Medieval Trade in the Mediteranean World, New York, 1955.

155- П.М. Монтавес, Ислам и христианство в экономике Средиземномория позднего средневековья. Доклад на 13 международном конгрессе исторических наук, Москва, 1970.

156- Ա. Սարուխան, Բելգիան եւ հայերը:

157- Ա. Ալպոյաճեան, պատմութիւն հայ գաղթականութեան, հատ. Բ., Կահիրէ, 1955:

158- Հրանտ Արմէն, Ֆրանսահայ տարեգիրք, 1927:

159- Գ. Յովսէփեան, Յիշատակարանք:

160- G. Clark, The Barbary Corsairse in the 17 century, - Cambridge Historical Journal, v, 8, 1944, no, 1

161- G. Fischer, Barbary Legend. War, Trade and Piracy in North Africa 1415 - 1830, Oxford, 1957.

162- Ю.Н.Барсегов, Дело королевского пирата Кидда , Историко-филологический журнал, 1986, No.3.

163- Н.Адонц, Из истории армянского вопроса, Научно-информационный бюллетень сектора Научной информации

АН Армении, серия 3, Ереван, 1984.

164- R. Gulbenkian, Philippe et Zagly, Marchand Arménien de Julfa et l'établissement du commerce Persan en Courlande en 1696, Extrait de la "Revue des Etudes Arméniennes," Nouvelle série, tome VII, Paris, 1970.

165- Շ. Խաչիկեան, Նոր Զուղայի հայ վաճառականութիւնը եւ նրա առեւտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ 17-18-րդ դարերում, Երեւան , 1988:

166- Ա. Գ. Աբրահամեան, Համառօտ ուրուագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, Ա. հատ. Երեւան, 1964:

167- Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն,-« Հանդէս ամսօրեայ», 1934, № 3-4: Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, Վիեննա, 1936:

168- «Հանդէս ամսօրեայ» 1887:

169- Armenag Sarkisian, Pages d' Art Arménian, Paris, 1940

170- Յովհաննէս Տէր-Դաւթեան Զուղայեցու հաշւետումարը: Կազմեցին Լ. Խաչիկեան եւ Յ. Փափազեան, Երեւան:

171- «Բազմավէպ», 1937:

172- Ch.D. Tékéian, Marseille, La Provence et les Arménien, Marseille, 1929.

173- Missac, Le Père Ottoman (1644-1676).- " Revue d' Histoire Diplomatique", Paris, 17-e année, 1903.

174- P. Pacifique, Relation du Voyage en Perse, Lille, 1632, T. II.

175- Н.Н.Розенталь, История Европы в эпоху торгового капитала, Ленинград, 1927.

176- Ա.Գ.Մ. Մասնակի պատմութիւն հայ մեծատուններու, Ստամբուլ, 1909:

177- A. Aubery, Histoire du Cardinal Mazarin, T. 3, Amsterdam, 1718.

178- E. Lavisse, Histoire de France depuis les origines jusqu'à la Révolution, V.5, Paris, 1911, 1 er part.

179- Р.Ю. Виппер, Четыре века европейской истории, Москва, 1924.

180- N. Rocca, La France en Orient depuis les Rois Francs jusqu'à nos jours: "Aperçu historique," Paris, Chalamel, 1876.

181- P. Clement, Histoire de la vie et de l'administration de Colbert, Paris, 1846.

182- Recueil des réglements généraux et particullires concernant les manufactures, et fabriques du Royaume, T. 1, Paris, 1730

183- Հայկ Տէր-Աստուածատրեանց, Հայ վաճառականութիւնը Ռուսիայում, Պարիս, 1906:

184- Percy Sykes, A history of Persia, vol, II London, 1951,

185- Fr. Macler, Mosaïques Orientales, Paris, 1907

186- Հայկական տպարան ի Մարսէյլ,- «Բազմավէպ», 1891,հ. խթ, յունիս:

187- Հ. Անասեան, 17-րդ դարի ազատագրական շարժումները Արեւմտեան

Հայաստանում, Երեւան, 1961:

188- S. Van Emdre, Historisch Berigt van alle de Gezindheden, Utrech, 1784.

189- S. Van Rooy, Armenian merchant habits as mirrored in 17-18-th century Amsterdam documents. «Revue des Etudes Arméniennes», N.S.P.t. III, 1966

190- R.A. Bekius, The Armenian community in Amsterdam in the 17-th and 18-th centuries. Integration and disintegration. Paper presented at the 1st conference of the Association Internationale d'Études arméniennes "Amsterdam", 1983.

191- H. Dunlop, Source pour servir á l'histoire de la compagnie des Indes Orientales et La Hay, 1930.

192- H. Castries, Les sources inedites de l'histoire du Maroc, T 3, Paris, 1912.

193- W. Monson, The Naval Tracts, London, 1902-1914, v,3.

194- Kr, Glamann, Dutsh-Asiatic trade. 1620-1770, Copenhagen- The Hague, 1958

195- Ռ.Վ. Կիլպէնկեան, Հայ-պորտուգալական յարաբերութիւններ, Երեւան, 1986:

196- R. Gulbenkian, Les relations entre l'Arménie et le Portugal du Moyen Age au 16 siècle.- "Revue des études arméniennes", Paris, 1980. t 14.

197- A History of Oriental Rugs before 1800, London, 1896.

198- K. Bayani, Les relations de l'Iran avec l'Europe occidentale à l'époque Safavide, Portugal, Espagne, Angleterre, Holland et France [avec le document inédit], Paris 1937.

199- Հ. Քիւրտեան, Գորգը հայոց մէջ, Վենետիկ, Ս.Ղազար, 1947.

200- К.Патканов, Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в 17 в., СПб, 1873.

201- Жаклин Пирен, Открытие Аравии, Пять веков путешествий и исследований, Москва 1970.

202- Մ. Մաշտոցի անւան մատենադարան, ձեռ № 5994

203- Н.К.Кривонос, Армянская колония во Львове в первой половине 17в., Львов, 1965.

204- K. Porter, Travels in Georgia, Persia, Armenia, ancient Babylonia, t.I, London, 1821.

205- Бернье Франсуа, История последних политических событий и переворотов в государстве Великого Могола, Москва-Ленинград, 1936.

206- Գ. Ագոնց, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Վենետիկ, 1802:

207- Б.А.Тураев, Из истории армяно-абиссинских отношений, СПб,1912.

208- P. Rocco da Cesinale, Storia delle Missioni del Cappuccini, tomo III, Roma, 1873.

209- Աւետիք Բաղդասարեան Տիգրանակերտցւոյ ուղեգրութիւնը, «Բազմավէպ», 1897, թիւ 10:

210- Ա. Ալպոյաճեան, Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հապէշիստան ժէ դարուն, Կահիրէ, 1946:

211- Լեո, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, Երեւան, 1986:

212- П.П.Бушев, Посольство Артемия Волынского, Москва, 1973.

213- П.П.Бушев, История посольств и дипломатических отношений русского и иранского государств в 1586-1612гг., Москва,1976.

214- В.В.Бартольд, Арабские известия о русах. ,,Советское востоковедение,, , 1, Москва-Ленинград,1940.

215- Казанская история, Москва, 1957.

216- Լ. Ս. Խաչիկեան, Հայերը հին Մոսկւայում եւ Մոսկւա տանող ճանապարհների վրայ, «Բանբեր Մատենադարանի», հ. 13, Երեւան, 1980:

217- Историческое описание древнего Российского музея, Москва, 1807.

218- Библиотека иностранных писателей о Росии, т.1, СПб, 1836.

219- М.В.Фехнер, Торговля русского государства со странами Востока в 16 веке, Москва, 1952.

220- Н.Костомаров, Очерк торговли Московского государства в 16-17 столетиях, СПб, 1889.

221- "Rerum Moscowiticarum commentarii", sowie "Moskowiter Wunderbare Historien", Basel, 1967.

222- T. S. Willan, The early History of the Russia Company 1553-1603, Manchester, 1968.

223- Б.Г.Курц, Сочинение Кильбургера о русской торговле в царствование Алексея Михайловича, Киев, 1915.

224- С.И.Архангельский, Англо-голландская торговля с Москвой в 17 в. ,,Исторический сборник,, , Москва-Ленинград, 1936, No.5.

225- Доненесия посланников республики Соединенных Нидерландов при русском дворе. ,,Сборник Императорского общества,, , т.116, СПб,1902.

226- Хождение купца Федота Котова в Персию, Москва, 1958.

227- Байбуртян В.А., Посредническая роль новоджульфинских купцов в дипломатических отношениях Ирана с западноевропейскими странами в начале 17 в.- ,,Краткие

сообшения Института Народов Азии АН СССР,, , 1964, No. 77.
228- L.L. Bellan, Chah Abbas, Sa vie, Son histoire, Paris, 1932.
229- Армяно-русские отношения в 17 в., сборник документов, т.1,Ереван, 1953.
230- И.А.Смирнов, Россия и Турция в 16 и 18 в.в., Москва,1946.
231- Е.С. Зевакин, Конфликт Росии в середине 17 столетия. ,, Азербайджан в начале 18в.,, , Баку, 1929.
232- Վ. Ոսկանեան, Հայ-ռուսական յարաբերութիւնները XVIII դարում, «Տեղեկագիր» Հ Ս Ս Հ Գ Ա հասարակական գիտութիւնների, 1948, No 1:
233- П.П. Смирнов, Экономическая политика Московского государства в 17 в., Киев, 1912.
234- Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч.2, 1938.
235- В.К.Восканян, Армяно-русские экономические отношения в 17 в.(Роль армянского купечества в персидской торговле Росии). Кандидатская диссертация, Ереван, 1948.
236- Շ. Խաչիկեան, 1667թ. հայ-ռուսական առեւտրական պայմանագիրը եւ Նոր Զուղայի ինքնավար մարմինները: Առանձնատիպ «Հայկազեան հայագիտական հանդէսի» 8 հատորից, Պէյրութ, 1980:
237- М.Чулков, Историческое описание российской коммерции, Москва, 1786, т.2, кн.2.
238- Н.Г. Куканова, Роль армянского купечества в развитии русско-иранской торговли в последней трети 17 в. ,,Краткие сообщения Института Народов Азии,, ,30, 1961.
239- Е.С. Зевакин, Персидский вопрос в русско-европейских отношениях в 17 в., ,, Исторические записки,, , 1940, т.8.
240- Г.А.Зедгинидзе, Из истории польско-русских дипломатических отношений с Ираном. (Деятельность Богдана Гурджицкого). Автореферат кандидатской диссертации, Тбилиси, 1971.
241- Центральный государственный архив древних актов(ЦГАДА) ф.79, 1669г., стб.No.23.
242- ЦГАДА, ф.100/1, кн. No.2,1666-1667.
243- ЦГАДА, ф.77/1, кн. 15.
244- ЦГАДА, ф.77/1, кн.1.
245- История дипломатии,т.1.
246- ЦГАДА, ф.77/1,1697, л.6; ф 77/2, 1673, грамота No. 54; ф. 77/1, кн.16, л.л. 92-93.
247- ЦГАДА, ф.77/1, кн. No.2,1675, л.283.
248- Полное описание законов Российской империи, т.1, No.539.

249- Посольство Кунраада Фан-Кленка к царям Алексею Михайловичу и Феодору Алексеевичу, СПб, 1900.
250- ЦГАДА, ф.100/1, кн. No.2, л.л.418-419.
251- ЦГАДА, ф.100, дело за 1676г.
252- ЦГАДА, ф.100,1686, дело No.5.
253- ЦГАДА, ф.1684, д.3, л.5; д.5, л.л. 1,6.
254- ЦГАДА, ф.77, оп.1,1690-1692, ед.хр.1, л.л. 58-59.
255- Մ. Մաշտոցի անւան մատենադարան, ձեռ, No 7383:
256- Л.А.Никифоров, Русско-английские отношения при Петре 1, Москва, 1950.
257- Армяно-русские отношения в первой трети 18в., том 2, ч.1, Ереван, 1964.
258- Հ. Քիւրտեան, ճան էլդընի եւ Մընկոյ Կրահեմի ուղեւորութիւնը Պարսկաստան 1739թ., առանձնատիպ:
259- ЦГАДА, Сношения России с Персией, 1716-1718г.г., No.2, л.208,233: No.3, л.л. 309-310.
260- ЦГАДА, Сношения России с Персией, 1716-1718г.г., No.3, л.л.318-319.
261- (Ф.И.Соймонов), Описание Каспийского моря и чиненных на оном российских завоеваний, яко часть истории государя императора Петра Великого, трудами тайного советника, губернатора Сибири Ф.И.Соймонова., СПб,1763.
262- И.А.Линниченко, Черты из истории сословий в Юго-западной Галицкой (Руси) 14-15в.в., ,,Ученые записки Императорского Московского университета,, , вып.20, Москва, 1894.
263- Zakvzewska - Dubasova Miroslava, Ormianie W dawney polsce, Widawnictwo Lubelskie, 1982.
264- Ի. Ա. Լինինիչենկո, Լեհաստանի եւ արեւմտեան-հարաւային Ռուսիայի հայերը, Մոսկւայ, 1894:
265- Մ. Լ. Յովհաննիսեան, Ուրուագծեր Լեհաստանի եւ Արեւմտեան Ուկրանիայի հայկական գաղթավայրերի պատմութեան, Երեւան, 1977:
266- F. Bischoff, Urkunde Zur Geschichte der Armenier in Lemberg, Wien, 1864.
267- Г.Келленбенц, Континентальная торговля между восточной и западной Европой в 15в. до начала эпохи железных дорог. ,, 5 международный конгресс экономической истории,, Ленинград, 10-14 августа, 1970г., Москва,1970.
268- Պրոնիսլովա Քեոբրիլեան, Լեհաստանի հայերը, «Սիոն», 1934, Յուլիս:
269- W. Lozinski, Patrycyeti Mieszezanstwo, "Airenik", 7, No 10.

270- Ե. Անջէլեսկու, Ռումիններու տնտեսական պատմութիւնը (ցիտուած է ըստ Ա.Գ. Աբրահամեանի Համառօտ ուրուագիծ հայ գաղթավայրերի պատմութեան աշխատութեան, հ.Ա.)

271- Ռ. Աբրահամեան, Անւանք քաղաքաց Հնդկաց եւ պարսից: «Բանբեր Մատենադարանի», Երեւան, 1958, № 4:

272- Զեյմս Բասսէլ, Հայերէն երկու արձանագրութիւն Պակիստանի Զիարաթ քաղաքից, « Պատմա-բանասիրական հանդէս», 1989, No 3 (126):

273- M. Seth, History of the Armenians in India, Calcutta, 1895.

274- Թ. Գուշակեան, Հնդկահայք, Երուսաղեմ, 1941:

275- M. J. Seth, Armenians in india from the Earlies times to the Present day, Calcutta, 1937.

276- C. Martin, The Armenian Community in India, (ա.տ.) 1958.

277- С.В.Тер-Аветисян, Материалы по истории армянской колонии Индии. ,,Научные труды Ереванского госуд. университета,, , т.13, Ереван,1949.

278- Новая история Индии, Москва,1961.

279- Riazul Islam, Indo-Persian Relations, A Study of the Political and diplomatic relations between the Mughul Empire and Iran, Lahore, 1970.

280- فرهنگ جغرافی ایران، جلد ۳، تهران، ۱۳۳۵

281- Arnold T. Wilson, The Persian Gulf, London, 1954.

282- R. Vadala, Le Golfe Persique, Paris, 1920.

283- ابوالقاسم سحاب، تاریخ زندگانی شاه عباس کبیر، بخش اول تهران، ۱۳۲۵

284- G. N. Curzon, Persia and the Persian Question, Vol. 2, London, 1892.

285- Պ. L. Զեքիեան, Խոջա Սաֆար՝ Շահ Աբբասի դեսպան Վենետիկի մէջ: «Պատմա-բանասիրական հանդէս», 1983, №1:

286- G. Birdwood and W. Foster, The Register of Letters, of the Governor and Company of Merchants of London trading into the East Indes (1600-1619), London, 1893.

287- مقتدم غلام حسین، کلید خلیج فارس، تهران، ۱۳۳۳

288- بایندور، خلیج فارس، تهران ۱۳۱۷

289- نصرالله فلسفی، تاریخ روابط ایران و اروپا در دروا صفویه، قسمت اول، تهران، ۱۹۳۷

290- Гиббинс, Очерк истории английской торговли и колонии, СПб,1899.

291- L. Lockart, The Fall of the Safavi Dynasty and the Afghan Occupation of Persia, Cambridge, 1958.

292- John Fryer, ,A New Account of East India and Persia, 1672-1681, vol, II, Nendeln, Liechtenstein, 1967- vol, II

293- Новая история стран зарубежного востока, т.1.

294- М.Поло, книги Марко Поло, Москва, 1955.

295- W. Foster, England's Quest of Eastern Trade, London, 1933.

296- «The Cambridge History of India», vol, 5, Cambridge, 1932.

297- Thomas Herbert,, Travels in Persia, New York, 1929.

298- Франсуа Бернье, ,,История последних политических событий и переворотов в государстве Великого Могола,, , Москва-Ленинград, 1936.

299- W. H. Moreland, India at the Death of Akbar, An Economic Study, London, 1920.

300- Н.Н.Туманович, ,,Европейские державы в Персидском заливе в 16-19в.в.,, , Москва, 1982.

301- Bruce, Annales of the Honorable East-India Company, Vol 2-3, London, 1810.

302- «Եւրոպա», Վիեննա, 1858:

303- К.З.Ашрафян, К вопросу о просветительском течении среди представителей армянского купечества в Индии в 70-80-х годах 18 в. ,,Проблемы истории Индии и стран Среднего Востока,, ,Москва, 1972.

304- P. Gosse, The Pirates. London, 1877.

305- Ս. Տէր Ս.Գրիգորեան, Հայք ի հարաւային Հնդկաստան, Վենետիկ, Ս. Ղազար, 1922:

306- ,,Всемирная история,, , т.5, Москва, 1958.

307- «Ազգասէր», հ.2, № 37,38, 39, Կալկաթա, 1846.

308- H. B. Morse, The chronicles of the East India company trading to China, Oxford, 1926, V.1

309- К.Н.Татаринова, ,,Очерки по истории Англии,, ,Москва,1958.

310- "The westerners among the figurines of the Tang dynasty of the China", by Jane Gaston Mahler, Roma, XX, 1959.

311- Н.Я.Марр, ,,Надгробный камень из Семиречия с армянско-сирийской надписью 1373г.,, , ,,ЗВОАО,, , том 8.

312- В.В. Бартольд, ,,Очерк истории Семиречия,, , Фрунзе, 1949.

313- L. Խաչիկեան, Հայոց պատմագրութեան անյայտ էջերից: «Պատմաբանասիրական հանդէս», 1972, № 4:

314- "Les Arméniens en Chine et en Asie Centrale au Moyen Age". (Mélanges de sinologie offerts à M. Paul Demieville), II, Paris, 1974.

315- Н.Спафарий, ,,Описание первыя части вселенныя, именуемой Азии, в ней же состоит китайское государство с прочими его городы и провинции,, , Казань,1910.

316- Дж.Е.Холл, ,,История Юго-Восточний Азии,, , Москва, 1958.

317- Л.Х.Тер-Мкртчян и Л.К.Мкртчян, ,,Из истории армянской

общины в Бирме, ,,Народы Азии и Африки,, , No.3, 1961.

318- Մ. Գասպարեան, Բիրմայի հայ գաղութը, «Նոր ազդարար», Հայկարան, 1950, No 1

319- Հ.Գ. Ագոնց, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն I, հ. IV, Վենետիկ, 1805.

320- «Սիոն», Երուսաղեմ, 1959:

321- Մ. Մաշտոցի անւան Մատենադարան, ձեռ, No 10704, էջ 36 ա:

322- G. Paulus, Short history of the Armenian community in Netherlands India, Calcutta.

323- Հորդ. Տէր-Յորդանանեան, Նետրլանդական Արեւելեան Հնդկաստանայ հայ գաղութի պատմութիւնը սկզբէն մինչ մեր օրերը, Երուսաղեմ, 1937:

324- Մ. Մաշտոցի անւան Մատենադարան, ձեռ.No 5684, թ. 2բ:

325- Վ. Բայբուրդեան, Հայերը եւ Լեւանտեան առեւտուրը 17-րդ դարում, ՀՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդէս», 1985, No 2 (109), էջ 103-117

Հեղինակը իր երախտագիտութիւնն է յայտնում պրն. Էդիկ Բաղդասարեանին (Գերմանիկ) սոյն գիրքը հայերէնից պարսկերէն թարգմանելու առթիւ:

Նմանապէս իր խորին շնորհակալութիւնն է յայտնում «Ջադիդ» (նախկին «Մոդեռն») տպարանի պաշտօնէութեանը գրքի հայերէն եւ պարսկերէն զուգընթաց տպագրութեան կապակցութեամբ:

Գրքի հայերէն կամ պարսկերէն տարբերակները ձեռք բերելու, կամ հեղինակի հետ կապուելու համար դիմել հետեւեալ հասցէով՝

C/O JADID (Ex. Modern) **Printing House**
Keshavarz Blvd., 47, North Felestin St.,
P.C. 14158 Tehran - Iran
Tel: 899607 - 898027 Fax: 892897

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0066173

1800 г
1800 гг.
A ii
86405